



Հարգելի՝ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները։ Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները։

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏԱՐԱՆ
ԱՍՏՎԱԾԱՐԱՆՈՒԹՅԱՆ ՏԱԿՈՒԼՏԵՏ

ՊԱԼՅԱՆ Խ. <

**ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆՔ
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑՈՒ**

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՍՏԱՏԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 2005

Տպագրված է պետական պատվերով

Նրատարակության է երաշխավորվել Երևանի պետական համալսարանի աստվածաբանության ֆակուլտետի խորհրդի որոշմամբ

Գրախոս՝ բան. գիտ. թեկ. դոց. **Շ. Ստեփանյան**

Խմբագիրներ՝

բան. գիտ. թեկն. դոց. **Դ. Ավետիսյան**
բան. գիտ. թեկն. դոց. **Շ. Ստեփանյան**

Պ 137 Ժամակարգությունը՝ Դայաստանյաց Առաքելական Ս. Եկեղեցու, Եր.: Երևանի համալս. հրատ., 2005, 160 էջ:

Սույն ձեռնարկն իր մեջ ներառում է Դայաստանյաց Առաքելական Ս. Եկեղեցու բոլոր ինը ժամերգությունների կարգավորությունը, նրանց պատմական գարզացումն ու մեկնությունը։ Ձեռնարկը թեև պատրաստվել է ԵՊՀ-ի աստվածաբանության ֆակուլտետի համար իրու դասագիրք, սակայն այն օգտակար կարող է լինել նաև մեր հոգևոր դպրանոցների սաների, Եկեղեցական, ծիսաբարողական գիտելիքների հարստացման տեսակետից, ինչպես նաև մեր հոգևորականության մեջ նախանձախնդրության ոգի արթնացնելու։ Մեր Եկեղեցու բազմադարյան հարուստ և ինքնուրուսն ծխերն ու արարողությունները անաղարտ պահպանելու գործում։

Պ 0403000000
704(02)05 2005

ԳՄԴ 86.37

ISBN 5-8084-0721-4

© Պայման, Դ., 2005

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐքԻ
ԵՒ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Ժամակարգություն» առարկան ուսումնասիրում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցվո ժամերգությունների կարգավորությունը, նրանց պատմությունն ու մեկնությունը։ Սույն ձեռնարկի մաս պետք է կազմին նաև Հայաստանյայց եկեղեցվո բարեպաշտական այլ ծեսեր և արարողություններ, ակնարկ մեր ծիսական ժողովածուների, ինչպես նաև մեր եկեղեցու սպասների, զգեստների մասին։ Առարկան ունի տեսական ու գործնական մեծ կարևորություն մեր Հոգևոր դպրանոցներում ուսանող սաների և աստվածաբանության ֆակուլտետի ուսանողների եկեղեցական, ծիսական գիտելիքների հարստացման տեսակետից, ինչպես նաև մեր Հոգևորականության մեջ նախանձախնդրության ոգի արթնացնելու։ Հայաստանյայց եկեղեցու բազմադարյան հարուստ ու ինքնատիպ ծեսերն ու արարողություններն անաղարտ պահպանելու համար։

Հայաստանյայց եկեղեցու ժամակարգությունների մասին առաջին վկայությունները մեզ են Հասել 5-րդ դարի մեր մատենագիրների՝ Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Կորյունի, Եղիշեի, Խորենացու և Փարպեցու երկասիրություններից։ Ըստ այդմ չորրորդ դարի երկրորդ կերպին գոյություն են ունեցել կանոնավոր պաշտամունքային կարգեր բոլոր այն վանքերում, որոնց մասին խոսում են մեր մատենագիրները։ Կասկածից վեր է, որ պաշտամունքային որոշ ժամեր գեռևա Լուսավորչի օրերից հաստատված են եղել։

Այս մասին մատենագրական առաջին վկայությունը մեզ է ավանդել Փավստոս Բուզանդը (5-րդ դար)։ «... Վասն զի վաղին Հասելոյ առաւօտուն օրն լուսանայր կիւրակէն։ Եւ յայնմ աւուր դիպեցաւ յիշատակի մեծին Յովհաննու, որ ի Գրիգորէ և ի Տրդատայ յաւանին թագաւանին կարգեալ էր։ ... Եւ յայնմ գիշերի ցայգապաշտուն մեծ եղեւ ի բանակին առ կաթողիկոսին»։

Ա. Որովհետև հաջորդ օրը, որ լուսանում էր կիրակի էր։ Այդ օրն էր հանդիպում մեծն Հովհաննես Մկրտչի հիշատակի տոնը, որ

սահմանված էր Գրիգորից և ս. Տրդատից Բագավան ավանում:

...Եվ այդ գիշեր կաթողիկոսի ներկայությամբ գիշերային մեծ ժամերգություն կատարվեց:

Ցայգապաշտոնը գիշերային ժամերգությունն է: Նույն տեղում պատմիչը հիշում է նաև առավոտյան ժամերգության մասին.

«Իսկ իրբեւ տեսանէր թէ կալան զայր իւր և կապեցին, վաղվաղակի ընթացաւ յեկեղեցախորանն ժողովուրդն, ուր պաշտօն մարդկան բանակին առ Աստուած կատարէր, մինչ դեռ առաւտոփին աղօթքն մատչէին... (Փ. Բուզանդ «Պատմութիւն Հայոց», Դ դպր. ԺԵ):

«Երբ տեսավ, որ իր ամուսնուն բռնեցին ու կապեցին, իսկույն վազեց խորան-Եկեղեցին, որտեղ բանակի մարդկանց համար աստվածային պնդաբանունքն էր կատարվում և մատուցվում էր առավոտյան աղօթքը...»:

Փ. Բուզանդի պատմության մեջ խոսվում է նաև ս. պատարագի խորհուրդի և պատարագամատուցի կամ խորհրդատեսորի մասին.

«Եւ զայս աղօթք մատուցանէր երէցն յառաջ քան զմատուցանելն պատարագին, և յետ այսորդիկ մատոյց կատարեաց զպատարագամատոյցն զամենայն» (Բուզանդ Ե դպր. ԻՂ 28),

Գ. Այս աղօթքն էր մատուցում երեցը մինչև պատարագի մատուցումը, որից հետո մատուցեց, ավարտեց ամբողջ պատարագամատոյցը:

4-րդ դարի կետերին մեզանում գոյություն ունեցող ժամերգությունների և վանքերում ու եկեղեցիներում հաստատված կարգ ու կանոնի մասին խիստ կարևոր տեղեկություններ է Հաղորդում նույն պատմիչը՝ Փակստոս Բուզանդը: Ահա գրանցից մեկը.

«Իսկ յաւուրսն ներսեսի ընդ ամենայն երկիրն Հայոց կարգը պաշտաման եկեղեցւոյն մեծապէս պայծառացեալ էր, և բազութիւն սրբոց պաշտօնէիցն կանոնելոցն, և յիշատակ սրբոց վկայիցն յաւուրս նորա յամենայն տեղիս Հայոց մեծախումբք ժողովովք հանալազ պայծառանայր և պատիւ Հարցն եպիսկոպոսաց յամենայն գնաւառս Հայոց յաճախէր ըստ արժանի իւրեանց. և կարգը վանականաց և ի շէնս և յանշէնս առ Հասարակ ծաղկեալ էին»¹:

Թրգմ. - «Ներսեսի օրերում Հայոց աշխարհում պաշտամունքա-

յին կարգերը եկեղեցիներում մեծապես պայծառացել էին, կային, կարգ ու կանոնի ենթարկված բազմաթիվ սուրբ պաշտոնյաններ:

Նրա ժամանակ սուրբ վկաների հիշատակները Հայաստանի բոլոր վայրերում մեծապես կատարվում էին Հանդիսավորությամբ՝ ժողովրդի հոծ բազմության ներկայությամբ: Եպիսկոպոս Հայրերի պատիվը Հայաստանի բոլոր գավառներում բարձր էր՝ ըստ նրանց արժանիքների: Վանականների կարգերը չեն և անչեն վայրերում ընդհանրապես ծաղկած վիճակում էին»:

Նախագրային կամ նախամեծարույցն շրջանի մեր եկեղեցական կարգերի մասին շահեկան վկայություններ է ավանդում մեզ նաև Ղազար Փարպեցին իր «Հայոց պատմության» մեջ՝ ցուց տալով, թե ինչպես Մ. Մաշտոցը տառապում էր ու տրտում տեսնելով Հայաստան աշխարհի մանուկների դեգերումը հեռու վայրերում, ասորի գիտություն մեռք բերելու համար, որոնք հետագայում այդ լեզվով աստվածապաշտական կարգեր էին վարելու Հայոց եկեղեցիներում:

- Քանզի պաշտօն եկեղեցւոյ և կարդացմունք գրոց ասորի ուսմամբ վարէին ի վանօրայս յեկեղեցիս Հայաստան ժողովրդոց յորմէ ոչ ինչ էին կարող լսել և օգտել ժողովուրդքն այսպիսի մեծ աշխարհի: (Ղ. Փարպեցի «Պատմութիւն Հայոց» Ժ, Էջ 39):

Ա. Քանզի եկեղեցական արարողությունները և Սուրբ Գրքի ընթերցումները Հայաստանյաց եկեղեցիներում և վանքերում ժողովրդի համար կատարվում էին ասորերն լեզվով, որից ոչինչ չէին հասկանում կամ օգտվում այսպիսի մեծ երկրի բնակիչները:

Հայտ Փարպեցու Մաշտոցը երկար ժամանակ մտածում էր, որպեսզի «ինքեան ձայնի», և ոչ մուրացածոյ բարբառով շահել զողիս արանց և կանանց. առ Հասարակ յամենայն եկեղեցիս բազմութեան»:

Բ. Սեփական ձայնով և ո՛չ թե մուրացածոյ լեզվով եկեղեցիներում շահել տղամարդկանց և կանանց և առհասարակ ամբողջ բազմության սրտերը:

Իսկ երբ ս. Մեսրոպի և ս. Սահակի ջանքերը փառքով են պատկան և հրաշագործվում է մեր գիրը և հիմադրվում դպրությունը, նույն Սահակ-Մեսրոպի ջանքերով, «Կարգեցան վաղվաղա-

¹ Բուզանդ, Պատմություն Հայոց, Գլուխ ԻԲ:

կի դպրոցք Հայերէն ուսմանն՝ բազմացան գասք գրչաց...»:

Գ. Շուտով բացվեցին դպրոցներ՝ ուսումնական խմբերի Համար, բազմացան գրիչների խմբերը՝ Սուրբ Եկեղեցիների արարողությունները զարդարվեցին, կանանց ու տղամարդկանց բազմությունները շատացան փրկչի տոներին ու մարտիրոսացածների վկայարաններում:

«Զարդարեցան պաշտամունք սուրբ Եկեղեցւոյ, յորդորեցան բազմութիւնք արանց և կանանց. Ժողովրդոց ի տօնս փրկչին և ի ժողովս մարտիրոսաց...»²:

Այսպիսով, ինչպես տեսանք, Հայաստանյայց առաքելական Եկեղեցու ժամակարգության սկզբնավորման գործում զգալի ներդրում են ունեցել Ս. Գրիգոր Լուսավորիչ և Ս. Ներսես Հայրապետները, որոնց անունները սակայն չեն նշվում Հայոց ժամագրքի տիտղոսաթերթում: Այդ գուցե նրա Համար, որ մեր ժամագրքը կազմավորվել է և կարգավորվել գրերի պյուտից հետո միայն, և ինչպես ցույց են տալիս մեր բոլոր հին ու նոր ձեռագիր և տպագիր ժամագրքերը, նրա կազմողները և կարգավորողները եղել են Ս. Սահակ և Ս. Մեսրոպ, Գյուտ և Հովհան Մանդակունի և Ներսես Շնորհալի Հայրապետները:

Հայաստանյայց Եկեղեցու ժամակարգությանց բարենորոգման և ճոխացման գործում, Համաձայն մատենագրական Հավաստումների, զգալի ավանդ են ունեցել նաև Եղիք և Հովհան Օձնեցի Հայրապետները, ինչպես նաև Ստ. Սյունեցին, Խ. Անձնացին, Ն. Լամբրունացին, Հովհան Երզնկացին, Գրիգոր Տաթևացին և ուղիներ, որոնք գրել են նաև ժամերգությունների մեկնությունները:

Այսպես, 10-րդ դարի պատմիչ Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցին խոսելով Հ. Օձնեցու Եկեղեցական կարգերի բարենորոգչական ջանքերի մասին, գրում է.

«Մեծ իմաստասերն Յովհան գրով դրոշմեալ տայ Եկեղեցւոյ Քրիստոսի զրովանդակ կարգաւորութիւնս պաշտաման ժամուց, Եկեղեցիկ իմն յօրինուածով ճոխացուցեալ և բացայայտեալ ևս զմիոյ միոյ կարգացն զմեկնութիւնս ի միսիթարութիւն կղերց Եկեղեցւոյ...»³: Թարգմ. - Մեծ իմաստասեր Հովհաննը Քրիստոսի Եկեղեցու

պաշտամունքային ժամերի բովանդակ կարգավորությունը գրով դրոշմել է տալիս, գեղեցիկ Հորինումով ճոխացներով և բացահայտելով մեկ առ մեկ այդ կարգերի մեկնությունը՝ ի միսիթարություն Եկեղեցու պաշտոնեալ թյան:

Իսկ Օձնեցու մասին «Հայսմավորքում» կարդում ենք. «Կարգեաց զչորեսին տօնան Կարապետ ճննդեան տօնին, ի փառ Քրիստոսի»:

Խոսքը վերաբերում է չորս ավագ տոններին, որոնց կարգը մեղանում կատարվում է ղեկտեմբերի վերջին օրերին՝ պատշաճ Հանդիսավորությամբ:

Աշա այդ տոնները ըստ տոնացուցի Հաջորդականության.

Ա. Տօն, Սրբոյն Դաւթի Մարգարէին և Յակովրայ Տեառնեղբայր առաքելոյն»:

Բ. Տօն Սրբոյն Ստեփանոսի Նախավկային և առաջին Մարտիրոսին:

Գ. Տօն Սրբոյն Առաքելոցն Պետրոսի և Պողոսի:

Դ. Տօն Սրբոց Որդուոցն որոտման Յակովրայ առաքելոյն և Յովհաննու աւետարանշին...

Ըստ Հայկազյան բառգրքի ժամակարգություն բառը նշանակում է «Կարգաւորութիւն ժամուց և աղօթից Եկեղեցւոյ...»:

Այն կոչվում է նաև ժամերգություն կամ ժամասացություն:

Գրականուրյան տեսություն

Սույն ձեռնարկը կազմելիս Հիմնականում օգտվել ենք Հայաստանյայց Եկեղեցու ժամերգությունների մասին եղած մի քանի կարևոր աշխատություններից: Դրանցից առաջինը կ. Պոլստ Նախկին պատրիարք, Ամենապատիկ Մաղաքիա Օրմանյանի «Միասգիտութիւն Հայաստանեաց Եկեղեցւոյ» գրքույն է, որն իրենից ներկայացնում է բազմարդյուն Սրբազնան Հոր դասախոսությունների շարքը, որ նա ավանդել է Արմաշի Դպրեվանքում՝ իր տեսչության շրջանում: Հիշյալ աշխատությունը Հրատարակվել է Երուսաղեմում՝ Հայրիկ Արքեպ. Ասլանյանի կողմից, 1977 թվականին:

Այն նախագետ Հրատարակվել է նաև «Հայ խոսնակի» էջերում՝ պարբերաբար 1933-1936 թվականներին, պարբերականի տնօրին Արժ. Տ. Զարմայր ավ. քն. Կեղուրյանի նախաձեռնությամբ:

² Ղ. Փարպեցի, «Հայոց պատմություն», ԺԱ, էջ 51-52:

³ Ղ. Դրասխանակերտցի, «Պատմութիւն հայոց», Սուլվա, 1883, էջ 57-58:

Ինչպես երևում է գրքույկի վերջում կցված գրականության ցանկից, Հեղինակը լայնորեն օգտվել է մատենագրության մեջ եղած ժամակարգության վերաբերյալ աղբյուրներից և մենակություններից, ինչպես նաև հին ու նոր «Արատ ժամատեղացի» խմբագրություններից և այլ աղբյուրներից: Անկասկած, այս ամենին Հեղինակը գումարել է նաև իր խորը գիտելիքներն ու երկարամյա փորձը՝ մեր եկեղեցու ծեսի, կարգ ու կանոնի մասին:

Մ. Օրմանյանի հիշյալ գրքույկը պարունակում է մեր բոլոր ժամերգությունների կատարման կարգը՝ ըստ ժամագրքի: Հաջորդաբար ներկայացվում են՝ «Գիշերային, Առավոտյան, կարգ Արևագալին, Երեկոյան ժամ, Խաղաղական ժամ և Հանգստյան ժամ»:

Ինչպես տեսանք, բացակայում են ճաշու երրորդ, վեցերորդ և իններորդ ժամերի կարգը: Յուրաքանչյուր ժամերգություն ներկայացվում է իր ամբողջության մեջ, յուրաքանչյուր բաղադրիչ բացատրվում է առանձին, խոսքը վերաբերում է կանոնի մաս կազմող բաղադրիչներին, քարոզներին, աղոթքներին, մաղթանքներին, շարականներին, Հոգևոր երգերին:

Մ. Օրմանյանի սույն գրքույկն ըստ էության միակն է, որ քիչ թե շատ ուսումնական ձեռնարկի մեջ ունի:

Երկրորդ ուսումնասիրությունը Մայր Աթոռիս միաբան Սահակ ծ. վրդ. Ամատունու՝ «Հայոց ժամակարգությունները հինգերորդ դարում» հոդվածն է, որը լուս է տեսել «Արարատ» ամսագրի էջերում 1902թ. Հունվար ամսվա համարում: Հայաստանյաց եկեղեցվո կարգ ու կանոնին քաջաշմուտ հեղինակը խոսում է մեր ժամերգությունների վիճակի մասին՝ 4-րդ դարից մինչև 5-րդ դարը, երբ կազմավորվում էր մեր ժամագիրքը, մասնավորապես նա կանգ է առնում մեր դպրության զույգ ամոլների: Ս. Սահակի ու Ս. Մաշտոցի ջանքերին, որոնք կարողացան մեր ժամերգությունները ևս հայցնել՝ ճոխացնելով մեր աղոթամատուցը իրենց իսկ ստեղծած հոգեբուխ աղոթքներով ու Հոգեգմալլ երգերով ու կցորդներով.

«Եւ արդարե որպէս Սահակ և Մեսրովք, այսպէս և երկու մեծ Հայրերիս այս երկնակոր փափագանաց՝ ցանկությամբ, մտքով ու սրտով կամակից մեր եկեղեցվո շատ հայեր, տվին ժամագրքիս լուր պայծառությունը, փշեցին նորա երեսին շունչ կենդանի, տեղալով առատապես պշրանք սիրող թագուհու գլխին իրենց թանկագին մարգարիտներն ու զարդերը, - իրենց խնկելի Աղոթքներն ու Քարոզները, որոնց մեծագին լինելը ցույց տալն այստեղ, իմ գրչից դուրս է», - գրում է Ս. Ամատունին իր Հոդվածի վերջում:

Սրբազն պատարագանատոյց Հայոց

Վիեննայի Միհիթարյան ուխտի բազմարդյուն Հայրերից Հայր Հովսեսի Գաթրյանի սույն աշխատությունը հրատարակվել է Հեղինակի մահանից հետո՝ 1897 թվականին:

Հայոց Աղոթացույցի, կամ ժամագրքի մասին եղած ամենաարժեքավոր և ծավալուն աշխատությունն է, որը բաղկացած է երեք մասերից:

Գրքի երրորդ մասը ամբողջացվել է միաբանության Հայրերի կողմից: Գիրքը նախապես լույս է տեսել 1956-1965 թվականներին Հոդվածաշարի ձևով՝ «Հանդես Ամսօրյայի» էջերում:

Գրքի առաջին մասում, որ բաղկացած է 10 գլուխներից, խոսվում է պաշտամունքային ժամերի, նրանց կազմավորման, հասարակաց աղոթքի, եկեղեցու սպասավորների, ինչպես նաև աղոթքի վայրերի մասին:

Գրքի Բ մասը բաղկացած է 8 գլուխներից, որոնցում հեղինակը քննության է առնում ժամագիրքը կամ Աղոթամատույցը, 4-18-րդ դարերը:

Հստ դարաշրջանների խոսվում է ժամագրքի բովանդակության և նրա կրած փոփոխությունների մասին՝ պահպանելով ժամերգությունների հերթականությունը՝ համաձայն ժամագրքի:

Հեղինակը խորը հմտությամբ համեմատում է ներկայացվող նյութը օտար եկեղեցիների համապատասխան արարողությունների հետ:

Երրորդ մասը հիմնականում շշափում է ծիսական հարցեր: Հեղինակն այստեղ կանգ է առնում շարաթվա օրերի, զանազան տոնների ու այլ հարցերի լուսարաննման վրա:

Այս մասն ունի արժեքավոր մի հավելված:

Նա, ուսումնասիրելով հնագույն ձեռագիր մատյաններում եղած վկայությունները, զուրս է հանել ժամատեղաց խրատները, խմբավորել, ամբողջացըրել է դրանք՝ ըստ տեղերի և կցել իր գրքին:

Ինչպես արդեն նշեցինք, անհրաժեշտ և օգտակար համարելով Հիշյալ հրատները մասամբ կցել ենք դրանք մեր սույն ձեռնարկին:

Կարևոր է նաև Միհիթարյան ուխտի Հայրերից Հայոց Վարդան Հացունու «Պատմություն Հայոց Աղոթամատույցին» երկասիրությունը, որը լույս է տեսել 1965 թվականին՝ հեղինակի մահից հետո:

Հայաստանյաց եկեղեցու ժամակարգությունների ուսումնասիրման հարցում որոշակի արժեք է ներկայացնում նաև բանասեր Դ. Խաչկոնցի «Հայոց կրոնական բանաստեղծությունը» ընդարձակ Հոդվածը, որը հրատարակվել է Լուսայի 1901 թվականի էջերում:

Այստեղ թեև ըստ վերնագրի խոսվում է միջնադարյան հայքարեգության հարցերի մասին, սակայն Հեղինակը լայնորեն անդրադառնում է մեր ժամերգություններին, տոներին, նրանցում գործածվող երգերի, շարականների, սաղմոսների, կանոնների, աղոթքների ու մաղթանքների ուսումնասիրման խնդիրներին, սկզբից մինչև մեր օրերը:

Դ. Խաչկոնցի հիշյալ ուսումնասիրությունը ևս օգտակար ու շահեկան կիրառական է աստվածաբանության ֆակուլտետի ուսանողների, այնպես էլ մեր ժամերգությունների հետ առնչվող բանասերների համար:

ՀԱՅԱՍՏԱՆՑԱՅՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ԺԱՄԵՐԸ

Հայաստանյաց եկեղեցու ժամերգությունների թիվը ըստ ժամագրքի ինն է.

1. Գիշերային,
2. Առավոտյան,
3. Արևագայի,
4. Երրորդ ժամուն,
5. Վեցերորդ ժամուն,
6. Իններորդ ժամուն,
7. Երեկոյի ժամուն,
8. Խաղաղական,
9. Հանգստյան:

Հնում այս կարգը վաճառերում և եկեղեցիներում անխափան կատարվել է: Հետագայում այդ կարգը կրել է զգալի փոփոխություն:

Այսօր սովորական է դարձել օրվա ընթացքում կատարել առավոտյան և երեկոյան ժամերգություններ, ըստ որում՝ առավոտյան ժամերգության մեջ մտնում է գիշերայինը՝ հաճախ նաև կից սուրբ պատարագի արարողությունը:

Իսկ կիրակի օրերին և այլ տոներին սուրբ պատարագից առաջ կատարվում է ժամերգության կարգը:

Մնացած փոփոխությունների և այսօրվա սովորություն դարձած կարգի մասին կիսովանի իր տեղում: Տեղին է նշել նաև, որ Հայաստանյաց եկեղեցու ժամերգությանց բարենորոգման հարցը միշտ էլ եղել է անհրաժեշտություն՝ հատկապես 20-րդ դարի սկզբներից: Այդ ուղղությամբ ներկայացվել են զանազան առաջարկություններ և նախագծենք, ինչպես օրինակ երջանկահրշատակ Բարկեն Կյուլեսերյանի (կաթողիկոս Մեծի տանն Կիլիկիո) «Հայ Եկեղեցի» ուսումնասիրությունը՝ հրատարակված երուսաղեմում 1930 թվականին, սակայն մինչև օրս այդ խնդիրը մնում է չըուծված, մի հանգամանք, որը հատկապես մեր օրերում պատճառ է դառնում անտեղի և քմահաճ, երբեմն անիմաստ կրծատումների: Այս տեսակներից խիստ կարևոր է լրջորեն ուսումնասիրել մեր ժամերգությունների կատարման ավանդական կարգը, հանձնարարել հմուտ և քաջատեղյակ մասնագետներին՝ ներկայացնել պատշաճ

նախագծեր, որոնք բխեն մեր եկեղեցու ավանդություններից և այսօրվա պահանջներից, որպեսզի ինչ-որ չափով միօրինակություն սահմանվի մեր եկեղեցիներում կատարվող աստվածապաշտական կարգերի ու ծեսերի մատուցման մեջ:

ԺԱՄԱԳԻՐՔ

Ժամակարգությունների ուսումնասիրության հիմնական աղբյուրը ժամագիրքն է: Վերջինս միաժամանակ մեր ժամերգությունների կատարման հիմնական ուղեցույցն է, որն իր մեջ բովանդակում է բոլոր այն երգերը, աղոթքները, մաղթանքներն ու քարոզները, ընթերցմունքները, որոնք պաշտվում են այս կամ այն ժամերգության ընթացքում՝ բացի պատշաճի շարականներից:

Մեր ժամագրքի հեղինակները...

Մեր ժամագրքի առաջին կազմողները մեր գրավոր դպրության զույգ ամոյներն են՝ Սուլր Սահակ Պարթև և Սուլր Մեսրոպ Մաշտոցը:

Հատ Օրմանյանի՝ «Հավանաբար գործակցությամբ նաև իրենց հաջողագույն աշակերտներուն: Այս տեսությունը ստուգապես կրնա հաստատվիլ ժամագրքի հայերեն լեզվին շնորհիվ, որ ուկեղարյան մաքրությամբ կփայլի առհասարակ»:

Ինչպես երևում է, մեր ժամագրքի տիտղոսաթերթի վերտառությունից, ժամագրքի կազմությանը մասնակցել են նաև Գյուտ Արահեղացի և Հովհան Մանդակունի Հայրապետները:

Գյուտ Արահեղացուն է վերագրվում Արևագալի ժամերգության առաջին քարոզը՝ «Յարևելից մինչև ի մուտս արևու ընդ ամենայն տեղիս...»⁴: Խակ Հովհան Մանդակունին, ըստ Հովհան Իմաստասեր Օձնեցի Հայրապետի, Հորինել է գիշերային ժամերգության «Ճարթոցեալքս» քարոզը, ինչպես նաև «Ճքէն գոհանամք» գեղեցիկ աղոթքը:

Մանդակունուն են վերագրվում նաև Ճայու երրորդ, վեցերորդ և իններրորդ ժամերի աղուհացից հատուկ քարոզները: Հատ Օրմանյանի՝ մեր եկեղեցու ծիսական կարգերի վերջնական մեր կատարել է Հովհան Մանդակունինս⁵: Հատ Հայկապյան բառարանի՝

«Գիրք ժամակարգության, կամ հասարակաց աղօթից, որ լրագոյնն հանդերձ սաղմուսարանաւ, երգովք, և տօնացուցիւ կոչի Մայր կամ Ատենի ժամագիրք»:

Մեզ են հասել բազմաթիվ ձեռագիր ժամագրքեր 11-12-րդ դարերից ամենատարբեր գրիչներից և զյության կենտրոններից:

Եկեղեցական ժողովածուների մեջ (ծիսական ժողովածուներ) ամենատարածվածներից մեկը ժամագիրքն է, աւա թե ինչու տպագրական զյուտից հետո ամենաշատ տպագրված ժողովածուն նույնպես եղել է ժամագիրքը:

Առաջին տպագիր ժամագրքերը մեզանում հրատարակվել են 16-17-րդ դարերում: Ստորև ցույց տանք դրանցից մի քանիսն իրենց տիտղոսաթերթերով:

Տպագիր ժամագրքերից ամենահինը 1568 թվականի հրատարակությունն է՝ «Ժամագիրք և պատարագամատոյց», ցավոք մեզ մոտ՝ Հայաստանում, չունենք այս հրատարակությունից որևէ օրինակ, հետևաբար հայտնի չէ նաև տպագրության վայրը: Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող հնագույն տպագիր օրինակը հրատարակվել է 1642 թվականին նոր Զուղայում և ունի իր մեջ Սաղմոս, Տոնացուց և Շարականի օրհնության քաղվածքները:

Հաջորդը ժամանակագրական կարգով ունի 1673 թվականը: «Գիրք ժամակարգութեան, որ կոչի Ատենի» տպագրվել է Մարտիլիայ քաղաքում, Ոսկան Երևանցու և Թաղեսու երեցի ջանքերով: Ժամագիրքն ունի հետևյալ տիտղոսաթերթը՝ «Կարգաւորութիւն հասարակաց աղօթից եկեղեցեաց Հայաստանեաց, արարեալ սրբոյն Խսահակայ Հայրապետին, Մեսրոպայ վարդապետին, Գիւտայ և Յօհաննու Մանդակունոյ...»:

18-րդ դարում ժամագրքերի տպագրությունն ավելի է բազմանում: Մենքը մյուսի հետևից կ. Պոլսում 1777, 1786, 1795 թվականներին տպագրվում են Ատենի ժամագրքեր: Նկատելի է, որ այս դարերում լույս տեսած ժամագրքերի անվանաթերթերում բացակայում է ն. Ծնորհալի Հայրապետի անունը: Աւա 1786 թվականին տպված ժամագրքի տիտղոսաթերթը՝ «Ժամագիրք Հայոց»-Արարեալ սրբոց Հայրապետացն Խսահակայ և Մեսրոպայ՝ Գիւտայ և Յօհաննու Մանդակունոյ և այլոց վաղագոյն գերապանծ վարդապետացն սրբոց»:

Ժամագրքերը լինում են՝ Ատենի և Առձեռն, կամ Զեռաց: Կան նաև բազմաթիվ, այսպիս կոչված, փոքր կամ Զեռաց ժամագրքեր:

⁴ Տե՛ս Տաշան, Ցուցակ ծեռագրաց, էջ 689:

⁵ Մ. Օրմանյան, «Ազգապատում», Ահաւոր 2001, էջ 353:

Հրատարակված հատկապես վերջին հարյուրամյակի ընթացքում՝ տարբեր վայրերում: Ատենի ժամագիրը՝ մեծածավալ է՝ նրա սկզբում դրված է «Սաղմոսաց գիրք»-ն ամբողջությամբ, իսկ վերջում՝ «Ծոնացուցը», իսկ մեծտեղում՝ բուն ժամագիրը:

Ժամագրքերը իրենց սկզբնամասում պարունակում են «Խրատ ժամատեղաց» կամ «Կարգ ժամասացութեան» էջը: Վերջինս՝ իրու կանոն դրվում է «Հրաժարիմքի» կարգից հետո:

«Խրատ ժամատեղացը» սկսվածքների կարգն է, ըստ որի՝ ավագ երեցի դասը վարում է քահանան, իսկ աշակերտի դասը՝ սարկավագը, այս կարգն ամեն օր փոխվում է:

«Խրատ ժամատեղացը» խմբագրել են Ներսես Շնորհալի Հայրապետը, Թովմա Մեծոփեցին և ուրիշներ: Կարևոր է նաև Գրիգոր Խաթեցու խմբագրած «Խրատ ժամատեղացը»: Վերջինս Հայտնի է Մերենց մականվամբ, որն ապրել է 14-15-րդ դարերում և սպանվել քրոների կողմից 1425 թվականին Խաթ քաղաքում խոր ծերության մեջ: Խաթեցին այն գործ է Հակոբ վրդ. Ղրիմնեցու խնդրանքով, վերջինս Հեղինակ է մի շարք տոմարական, մարդակազմական և այլ աշխատությունների:

1888 թվականին՝ Հարություն պատրիարք Վեհապետոյանի օրոք, Պոլսում տպագրվում է մի գրքույկ՝ «Կարգացուց» վերնագրով, իսկ 1910 թվականին սովոր էջմիածնում օրացույցի միջոցով լույս է տեսնում «Կարգ ժամասացութեանը»: Առենի ժամագիրքը դրվում է բամի մեջտեղ՝ փոքր գրակալի վրա, որտեղ քահանան կարգում է աղոթքները, սարկավագը՝ քարոզները, իսկ դպիրները՝ փոխերը:

Ժամագիրքն իր մեջ ընդգրկում է ինչպես ասկեց մաղթանքներ, քարոզներ, աղոթքներ, փոխեր ու երգեր, բացի պատշաճի շարականներից ու ընթերցումներից:

Հայաստանյաց և կենեցու ժամագիրքը հնուց ի վեր պահպանել է հիմնականում միևնույն վերտառությունը՝

«Ժամագիրք Հայաստանեաց Ս. Եկեղեցւոյ

Արարեալ Արքոց Թարգմանչաց մերոց Սահակայ և Մեարովքայ և երանելի Հայրապետացն մերոց Գիւտոյ և Յովհաննու Մանուկունոյ և Արքոյն Ներսիսի Շնորհալոյ»:

Հրաժարիմքի կարգը

Մեր հին ու նոր ժամագրքերի սկզբում մինչեւ պաշտամունքային ժամերը՝ գրվում է «Հրաժարիմքի» կարգը: Այս կարգը բաղկացած

է չորս մասից.

- ա) Հրաժարիմք, ասվում է երեք անգամ, դեմքը դեպի արևմուտք:
- բ) «Խոստովանութիւն Հաւատոյ», դեմքը դեպի արևելք՝ ձեռնամած:
- գ) Մեղաների բաժին, ծնկաչոք, դեմքը դեպի արևելք, եթե վեղարավոր է, մեղաների ժամանակ վեղարը պետք է հանել:
- դ) «Ողերմեսցի» այս կարգը պարտադիր է օրվա պատարագչի համար, վերջինս պարտավոր է նաև մասնակցելու գիշերային և առավոտյան ժամերգություններին և ընթերցելու աղոթքները, և ավետարանները՝ Տաճարի, Խողաբերիցի և Բժշկութեան:

ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանյաց առաքելական Ս. Եկեղեցու ժամերգությունների մասին առաջին մեկնությունները գրվել են 7-10-րդ դարերում: Այս շրջանից մեզ են հասել Հետեւյալ Հեղինակների մեկնությունները.

- ա. Ստ. Սյունեցի՝ 7-րդ դար,
- բ. Հովհան Օձնեցի՝ 8-րդ դար,
- գ. և. Անձևացի՝ 10-րդ դար:

Ստ. Սյունեցու «Մեկնութիւն ժամակարգութեան» աշխատությունը տպագրվել է «Արարատ» ամսագրում՝ 1915-1917 թվերին:

Ստ. Սյունեցին սովորել է Մաքենոցաց վանքում և աշակերտել է Հարանց Հայր Սողոմոնին:

Ինչպես Հայտնի է, այս ուխտը հենց 7-րդ դարից հոչակված է եղել վանական իր կարգ ու կանոնով, ինչպես նաև Հայաստանյաց Եկեղեցու ժամերգությունների ավանդական կարգերի պահպանաման նախանձախնդրությամբ:

Նա բազմաթիվ աշխատությունների Հեղինակ է, որն ըստ պատմիչի՝ «Մեկնեաց և զխորհուրդ գիշերային պաշտաման»: (Մտեմաննու Օրբելյան «Պատմություն Սիսական աշխարհի»)

Այսպիսակ, Ստ. Սյունեցին մեկնել է Հատկապես Գիշերային ժամերգության բաղկացուցիչ մասերը: Նրան է վերագրվում նաև ութայնեղանակների կանոնավորումը և բազմաթիվ երգերի ու կցորդների հորինումը: Լստ. Ստ. Օրբելյանի՝ Սյունեցին «բաժանեաց և

զութ ձայնան և կարգեաց՝ շարեաց շարականս՝ զՅարութեան օրհնութեան: Երգեաց կցուրդս քաղցրահամս, յարմարեաց և ստողոգին՝ յինանցն եւթն եղանակաւք յոյժ խորհրդաւոր և զպահոցն՝ որ յաղուհացսն երգի»:

Երկրորդ հեղինակը, որ գրել է ժամակարգության մեկնություն, 8-րդ դարի հեղինակ Հովհ. Օձնեցի Իմաստասեր Հայրապետն է: 717-728թ. Հովհ. Օձնեցու «Յաղագս կարգաց եկեղեցւոյ» երկասիրությունը գտնվում է նրա կանոնների մեջ: Օձնեցու վերոհիշյալ մեկնությունները տեղ են գտել ոմն Մովսես վարդապետի կողմից Հավաքված և Հրատարակված գրքում, որն ունի հետեւյալ վերնագիրը՝ «Գիրք որ կոչի մեկնութիւն Աղօթից, Արարեալ երանելույն Խոսրովու Անձևացնեաց Եպիսկոպոսի, եւ այլ սր. վարդապետաց, եւ Հավաքեցեալ ըստ կարգի միում Տըփի ի Մովսիսէ Ումեմնէ Աշխատամէր Վարդապետէ»:

Հովհաննես Օձնեցին խոսում է տարբեր ժամերգությունների մասին, մասնավորպես մեկնում է Արեագալի, ձաշու երրորդ, Վեցերորդ և իններորդ ժամերի աղոթքները, ինչպես նաև երեկոյան ժամերգության մի քանի աղոթքներ:

Աշա դրանցից մի քանի նմուշներ՝ ըստ վերը նշված գրքի.

«Կարգաւորութիւն Հասարակաց Աղօթից Արեագալի ժամուն... Տեառն Յովհ. Հայոց կաթողիկոսի, եթէ զինչ խորհուրդ ունի Ալրագալին Աղօթնա»:

«Այս աղօթն զմիւսանդամ գալուստն Քրիստոսի նշանակէ, և յարութիւն մարդկան ի գերեզմանացն յաւուր միաշարաթօջ յառաջին ժամուն...»

«Կարգաւորութիւն Հասարակաց Աղօթից երրորդ ժամուն...»

«Յովհաննու Հայոց կաթողիկոսի և իմաստասիրի վասն երրորդ ժամու Աղօթիցն»:

Ըստ իմաստասեր Հայրապետի՝ այս կարգը խորհրդանշում է Նախաօր՝ Աղամի Հեշտասիրության և մեղանչելու պահը.

«Իսկ տուընջեանն որոշեալ սահմանք ժամու աղօթիցն, այդ ըստ յանցման ժամու Նախաօրն Հեշտասիրութեան և մեղացն, եւ ի նմին ժամու թժկել զյանցանան չարչարանօք Խաչին Տեառն մերոյ Ճիսուսի Քրիստոսի...»:

Հովհ. Օձնեցին եղել է մեր եկեղեցու ինքնուրույնության, նրա Առաքելահմն ու Լուսավորչահաստատ կարգերի պահպանման ա-

մենանախանձախնդիր Հայրապետներից մեկը: Աշա թե ինչ է գրում նրա մասին 10-րդ դարի կաթողիկոս պատմիչ Հ. Դրապիսանակերտցին. (տե՛ս էջ 1):

Օձնեցին գրել է նաև բազմաթիվ երգեր, կցորդներ, որոնցից Կ. Գանձակեցին հիշում է.

«Եւ կարգեաց շարական Հարցին՝ «Մեղաք յամենայնին և զպատուիրանս քո ոչ պահեցաք..., որ ցայսօր պաշտի եկեղեցին Հայոցն...»:

Խոսքը վերաբերում է ավագ տոներից՝ Դաւիթ Մարգարէի և Հակովոս առաջյալի կանոնի Հարցի շարականին:

Ժամերգությունների երրորդ մեկնիչը 10-րդ դարի մեծ մտածողներից Խ. Անձևացին է, որի աշխատությունն ունի «Մեկնութիւն Հասարակաց աղօթից Հայաստանեայց եկեղեցւոյ» վերնագիրը: Անձևացին իր մեկնութիւնն սկսում է մի գողտրիկ առաջարանով, որից հետո սկսում է խոսել «Ձարթուցեալքս» քարոզի մասին: Ինչպես այս, այնպես էլ իր մեկնած յուրաքանչյուր նախադասություն առանձին: Ապա մեկնվում է գիշերապաշտման աղոթքը՝ «Ձքէն գոհանամքը»: Գիշերային ժամերգության չորս քարոզներն իրենց աղոթքներով ու մաղթանքներով:

Այստեղ Հանդիպում են նաև աղոթքներ, որոնք չկան մեր ժամագրքում: Այդպիսիներից է օրինակ «Կանխեալքս ի ժամ գիշերիս» երկարաշունչ աղօթքը, որի Հանգիստն է՝ «Օրհնեալ ես ամենակալ Աստուած և Հայր Տեառն մերոյ Ճիսուսի Քրիստոսի, որ զարթուցեր զմեզ ի ծանրութենէ քնոյ, և ետուր երգել զերգս Հոգևորս...»:

Գիշերային ժամերգությունից հետո Անձևացին անցնում է Առավոտյան ժամերգության՝ կանգ առնելով յուրաքանչյուր աղոթքի ու մաղթանքի մեկնության վրա:

Անձևացու մեկնությունները գեղեցիկ են ու Համոզիչ, շատ տողեր այսօր էլ զարմացնում են իրենց այժմեականությամբ: Առանձնապես գեղեցիկ են երեկոյան ժամերգության՝ «Յաղագս Օրհնութեան ճրագացն», որ է «Օրհնեալ տէր որ բնակեալդ ես ի բարձունս», մաղթանքը, «Լոյս զուարթը», «Հասեալքս» քարոզը, «Էւուր ճայնից մերոց» աղոթքը և այլն:

Անձևացին Հաճախ է խոսում նաև պահ կամ այն բաղադրիչի հեղինակության Հարցի շուրջ, միստում կամ Հաստատում, թե ով է Հեղինակը:

Անձևացին անդրադարձել է գրեթե մեր բոլոր ժամերգություն-

ներին՝ Գիշերայինից մինչև Ասդաղական կամ Հանգստյան (այս երկուսը Անձնացու մեկնության մեջ նույնացվում են):

Անձնացու մեկնությունները կարդացվում են մեծ հետաքրքրությամբ, ուստի Հանձնարարելի է դրանք ընթերցել Հատկապես նրանց, որոնք զրադարձում են մեր ժամերգությունների ուսումնաժողովականը: Այստեղ կարելի է գտնել բազմաթիվ ու բազմազան Հարցերի Համոզիչ ու սպառիչ պատասխանները:

Ժամակարգությանց մեկնություններ գրել են նաև այլ Հեղինակներ, որոնցից կարելի է նշել Վրթանես Սյունյաց եպիսկոպոսի «Յաղագ կարգաց եկեղեցւոյ», Մաթեոս Դպրի «Մեկնութիւն ժամակարգութեան»-ը: Գրիգոր Վարագեցու «Ժամակարգությունը», Գրիգոր Տաթևացու անդրադարձը՝ ըստ նրա «Հարցմանց» գրքի, Հովհաննես Արճիշեցու «Մեկնութիւն պատարագի» և ուրիշներ: Ավելացնենք նաև, որ վերոհիշյալ Հեղինակների հիշյալ գործերը մինչև այժմ դեռ ըստ արժանիւյն չեն ուսումնաժողովել, մի մասն էլ դեռևս գտնվում է ձեռագիր վիճակում: Առանձին արժեք ունի նաև Ն. Լամբրոնացու «Պատարագի մեկնությունը», որը թարգմանվել է մի քանի լեզուներով:

Պետք է ավելացնել նաև, որ մեր ժամերգությանց մեկնությունները, թեև մեծ թիվ չեն կազմում սակայն, իրենց ինքնուրույն բացատրություններով ու գեղեցիկ Համեմատություններով որոշակի արժեք են ներկայացնում և մեր մեկնողական գրականության գանձարանում գրավում են իրենց արժանի տեղը:

Առանձին արժեք ունի նաև երջանկահիշատակ Վազգեն Առաջին մեծագործ Հայրապետի Հեղինակած «Մեր պատարագը» գրքույկը, որտեղ մանրամանորեն բացատրված են Ս. պատարագի մաս կազմող բոլոր բաղադրիչները: Ըստ Երանաշնորհ Հայրապետի՝ այս գրքույկը նա գրել է քաշանայական ձեռնադրության քառասունքի օրերին, «Երբ պատահարար ձեռքս անցավ Հովհաննես Արճիշեցու «Պատարագի մեկնությունը», որի ազդեցության տակ գրեցի այս փոքրիկ գիրքը, որպեսզի ավելի հասկանալի լինի Հավատացյալներին այն ամենը, ինչ և կկատարվի Ս. Մեղանի վրան գրում է Հոգելոյս վեհափառը:

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ

«ԿԱՐԳԱԿՈՐՈՒԹԻՒՆ ՀԱՍԱՐԱԿԱՅ ԱՂՕԹԻՑ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԺԱՄՈՒ,

ՈՐ ԿԱՑԱՐԻ Ի ԴԵՄՍ ՀՕՐ ԱՍՑՈՒԾՈՅ»

«Գիշերային ժամի հասարակաց աղոթքի կարգը, որ կատարվում է Հայաստանյաց Եկեղեցուն ի դեմս Հոր Աստուծո»

Հայաստանյաց Եկեղեցու ժամերգություններից յուրաքանչյուրը կատարվում է ի դէմս Ս. Երրորդութեան անձերից մեկին.

Գիշերային ժամերգությունը կատարվում է ի դեմս Հոր Աստծո:

Հայաստանյաց Եկեղեցու ժամերգություններից առաջինն է և ամենալրնդարձակը: Ինչպես երևում է գիշերային քարոզից՝ «Զմնացուած գիշերիս խաղաղութեամբ անցուցանել...», մինչեւ լուսաբաց դեռ որոշ ժամանակ կա: Նույն միտքը նկատում ենք նաև առաջին՝ «Զքէն գոհանամք» աղոթքի մեջ.

«Տուր մեզ, Տէ՛ր, աղաչեմք զքեզ, զմնացուած գիշերիս խաղաղութեամբ անցուցանել...»:

Ասենք նաև, որ ամեն մի աղօթք ունի մի հաստատուն սկզբնավորություն. այսպես մեր Եկեղեցին գործածում է «Օրհնեալ Տէ՛ր մերը», որն ուղղված է Քրիստոսին, որպես քրիստոնեական դավանության հիմք:

«Օրհնեալ Տէ՛ր մեր» դավանական ձևը եղել է «Յանուն Հօր և Որդոյ և Հոգոյն Սրբոյ», որը ավելացնական ծագում ունի (տե՛ս և Մաթ. ԻՂ 18):

Հույն Եկեղեցու որդեգրած ձևն է՝ «Օրհնեալ է Տէ՛ր Աստված մեր յամենայն ժամ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն»: Հայունի է, որ «Հայր մեր»-ը Ավելացնում արտացոլված է երկու խմբագրությամբ: Մատթեոսի (Ձ 9-13) և Ղուկասի (ԺԱ 2-4): Հայ Եկեղեցին գործածում է Մատթեոսի ավանդամբը:

«Հայր մեր»-ին հետևում է Սղմ, Ծ-16: «Տէ՛ր եթէ զըրթունս իմ բանաս...» սաղմոսը, վերջինս կրկնվում է երկու անգամ, որին սարկավագը պատասխանում է՝ «Օրհնեալ Տէ՛ր», թեև այժմ հաճախ ասվում է՝ «Օրհնեալ է Աստուծու»:

Սրան Հաջորդող ռեւ ևս խաղաղութեան զՏէ՛ր աղաչեցուք»-ի կարգը, ժամագրքերում գրեթե չի հանդիպում: Նախկինում կա-

տարվող խնկարկությունը կատարել է լուսարարապետը, այն էլ մինչև ժամերգության սկիզբը, այժմ այդ սովորությունը վերացել է. այն կատարվում է կիրակի օրերին և պատարագի օրերին սարկավագի կողմից՝ «Տէր զի բազում» սաղմուն ասելու պահին:

Ժամօրհնողի կողմից արտասանվող «Օրհնութիւն և փառք Հօր» -ից հետո սարկավագն ատյանում ասում է «Տէր զի բազում եղեն նեղիչք իմ» սաղմուը: Այս սաղմուներգությունը բաղկացած է չորս մասերից. ընդամենը 64 տներից: Ահա այդ չորս սաղմուները՝

Սղմ. Գ

Սղմ. Զէ/Տէր Աստուած փրկութեան իմոյ/

Սղմ. ՃԸ - Օրհնեա անձն իմ զտէր

Սղմ. ՃԽԲԻ/Տէր լուր աղօթից իմոց:

Հիշյալ սաղմուների տները խիստ պատշաճում են տվյալ պահին, այսպես, օրինակ. «Ես ննջեցի և ի քուն եղէ, զարթեայ և տէր ընդունելի իմ է, առաւօտու աղօթիք իմ ժամանեցեն առ քեզ...»:

Կիրակի և Հանդիսավոր օրերին «Տէր զի բազում»-ը երգվում է ատյանում խմբով և Հանդիսավոր եղանակով: Այս սաղմուն ունի երգեցողության յուրահատուկ մեղեղի:

Պատարագի օրերին սաղմոսի վերջին տունը՝ «Ողորմութեամբ քով սատակեա» երգելիս ատյանից շարժվում են դեպի դասերը: Վերոհիշյալ վերջին տունը ավագ դասինն է:

Յիշեացուք ի գիշերի

Այս երգը կոչվում է նաև Գիշերապաշտման երգ, որի հեղինակը ներսես Շնորհայի Հայրապետն է: Այն ժամերգության մեջ մուծվել է Ն. Շնորհայու ավագ եղբոր՝ Գրիգոր Պահապունի Հայրապետի օրոք և երգվում է միայն պատարագի օրերին, երբ անհրաժեշտ է կատարել Հակումի պաշտոն:

Կիրակոս Գանձակեցին վկայում է, որ Շնորհային այս երգը հորինել է Հռոմեա բերդը պահպանող Հայ պահպան զինվորների համար.

«Վասն այնորիկ արար նա երգս և ուսոյց այնոցիկ, որ պահէին զբերդն, զի փոխանակ վայրապար ձայնիցն, զայս ասասցեն, որոյ սկիզբն է սաղմուն Դաւթի. «Թիշեցի ի գիշերի զանուն քո, տէր... որ այժմ պաշտի յեկեղեցի...»⁶

Երգը բաղկացած է հինգ մասերից.

ա. Թիշեցուք ի գիշերի (6 տուն):

բ. Փոխ-Զարթիք փառք իմ (10 տուն):

գ. Զարթիր ընդ է՞ր ննջես (3 տուն):

դ. Զարթուցեալքս ի զրաղմանէ... (5):

ե. «Անբաժանելի» կցորդ:

Ամեն ալելուիաների հետ միասին:

Բոլորը կազմում է 31 տուն:

Ըստ Թ. Մեծոփեցու՝ այս երգը բաղկացած է չորս մասից, իսկ «Զարթուցեալքս»-ը Ն. Շնորհալունը չէ, այլ պարզապես իրը Հավելված զրպել է այստեղ հետագայում. Հավանաբար այն վերցվել է Հ. Մանդակունու հայտնի «Զարթուցեալքս» քարոզից:

Երգը երգվում է դաս առ դաս և վերջանում «ամեն» ալելուիաներով:

Կցորդ՝ «Անբաժանելի և համագոյ...»:

Ամենասուրբ Երրորդության երեք անձերին ձոնված այս կցորդը բաղկացած է հինգ տներից:

Կցորդն ունի գեղեցիկ լեզու և խոր աստվածաբանական նկարագիր, Հոգեպարար ու Հարուստ մեղեղի: Այն երգվում է Տաղավար տոներին ինչպես նաև Հանդիսավոր այլ օրերին, եթե դասապետները բարեհած են:

Այս գեղեցիկ երգին հաջորդում է «Զարթուցեալքս» քարոզը:

Զարթուցեալքս քարոզը պատկանում է Հ. Մանդակունու գոչին, այդ մասին վկայում է Հ. Օձնեցին իր կանոնների մեջ:

Քարոզի ընդհանուր իմաստն այն է, որ արթնանալիս գոհություն պետք է տալ Աստծուն՝ գիշերն անվնաս անցկացնելու Համար. «Անարատ վարուք կրոնաւորեալք յայսմ աշխարհի, արժանի լինելոյ յաւիտենական և երկնային խորանացն...»:

Ըստ Խ. Անձեւացու՝ «Կեցո տէր»-ին պետք է ձայնակցի նաև ժողովուրդը: Այժմ այդ պարտականությունը կատարում է դպրաց դասը:

Ծանոթություն

«Զարթուցեալքս»ը կիրակի և այլ Հանդիսավոր օրերին ասվում է ատյանում սարկավագաց խմբով՝ որոշակի եղանակով, իսկ լի օրերին այն ասում է մեկ սարկավագ՝ թիվ:

Աշխարհ ամենայն երգը Ն. Շնորհային Հորինել է՝ պարզապես նպատակ ունենալով ճոխացնել գիշերային ժամերգությունը: Ըստ

⁶ Կ. Գանձակեցի, Պատմություն հայոց, Երևան, 1961, էջ 120:

մեզ հասած ժամագրքերի՝ երգի վերնագիրն է «Ռոբերգութիւն անձին զղացելոյ և բողոք իւրաքանչիւր դիմի խոստովանաբար»:

Անձնական մեղքի գիտակցումն է երգի Հիմնական բովանդակությունը: Այն Հորինվել է «Անձինքի» սկզբունքով, այսինքն՝ Հայերեն այրութենի ՅԵ տառերի Հաջորդականությամբ: Թուրաքանչյուր տառով երեք տող: Երկու տառով վեց տող երգում է միասին, որով ամբողջ «Անձինքն»՝ իրեւ երգ դառնում է 18 տուն:

Աշխարհ ամենայն.

Առ իս նայեցեալ,
ախտակից լերուք,
Բանամ զշրթուն,
Բարբառիմ լեզուաւ,
Բողոքեմ զանձնէս,

տէր ողորմեա, տէր ողորմեա, տէր ողորմեա...

Հայտնի է, որ Ն. Շնորհալին այլ ժամերգությունների կողքին իր Հոգեհոյց երգերով ճոխացրել է նաև գիշերային ժամերգությունը: Այդ երգերից մեկն է «Աշխարհ ամենայնը»: Այն երգում է սրբոց տոններին, ինչպես նաև Տերունի Հիշատակաց օրերին, երբ պատարագ է մատուցվում (Հիշատակաց օրերը Հինգ Տաղավարների մեռլոցի օրերն են): Երգում է նաև Պահոց օրերին, երբ մատուցվում է Ս. պատարագ:

Մեզ են հասել այս «Անձինք» երգի մեղեդու մի քանի տարբերակներ, որոնցից մեկը ողոգոյման ծանր եղանակն է, որով երգում է նաև Շնորհալու գիշերապաշտման մյուս գոհարը՝ «Ալոավու լուսոյ» երգը՝ ավագ Ուրբաթ օրը՝ գիշերային ժամերգության ընթացքում:

«Աշխարհ ամենայն» վերոհիշյալ ծանր եղանակով երգում է նաև ննջեցյալի դին գերեզմանատուն տանելու ժամանակ:

Առաւոտ լուսոյ

Ինչպես ասվեց, Շնորհալու այս երգը ևս Անձինք է, որը երգում է Տերունի տոններին և կիրակի օրերին: Երգի վերնագիրն է «Երգ աղօթական ի դէմս սրբոյ երրորդութեան, նաև իւրաքանչիւր դիմի երրորդութեանն առանձնակի»:

Երգն աչքի է ընկնում բանաստեղծական բարձրարվեատ Հորին-

վածքով, պատկերների ու համեմատությունների ճոխությամբ: Այն պարունակում է նաև դավանական և աստվածաբանական մտածությունը: Պետք է նշել նաև, որ 1877 թ. մեր ժամագիրքը ենթարկվել է անհարկի սրբագրությունների՝ լատին Բարսեղ և Հակոբ Հոլով վարդապետների կողմից, որոնք փոփոխություն մտցրին նաև այս երգի մեջ՝ «Բղիսումն ի Հօրէ և Ցորդոյ»: Այս սրբագրության դեմ Հանդես եկավ Միսիթարյան Հայրերից Հ. Գ. Ավետիքյանը՝ նշելով, որ այդ սրբագրությունն անտեղի է, քանի որ այստեղ՝ «Բղիսումն ի Հօրէ» բացատրությունը Որդույն և ոչ թե Հոգույն է: Այս տեսակետից Ա տունը՝ Հօր, Բ տունը՝ Որդույ, և Գ և Դ տները և «Դուռն ողորմութեան» բացատրությունները նույնիմաստ են: Իսկ 8-րդ տոնից հետո միշտ խոսքն ուղղված է Որդուն: Թեև բանաստեղծական այս մեծարժեք մարդարիտը Հորինված է անձնական, անհատական աղոթքի մնով, սակայն այն գրված է ի դիմաց ժողովրդի: Մեզ են հասել չքնաղ երգի յոթ եղանակային տարբերակներ, որոնցից Հնագույնը և Հարազատը, մեր կարծիքով, էջմիածնական տարբերակն է: Շուրջ 800 տարիներ հայ ժողովուրդը և՝ եկեղեցում, և՝ ժողովրդական զանազան ծեսերի, Հարսանյաց Հանդեսների ու այլ խրախնանքների ժամանակ սիրով երգել է և այժմ էլ շարունակում է երգել այս հոգեապարար երգ-աղօթքը:

Ե՛կ «Ալոավու լուսոյ»-ն, և՛ «Աշխարհ ամենայն»-ը ավարտվում են «Միրոյ Աստուածածնի բարեխօսութեամբ, յիշեա Տէր և ողորմեա» բառերով:

Առաւոտ լուսոյ

Արեգակն արգար

Առ իս լոյս ծագեա:

Բղիսումն ի Հօրէ

Բղիսեա ի Հոգույս

Բան քեզ ի Հաճոյս...

Աղօթք «Զքէն գոհանամք»

Գիշերային ժամերգության մաս կազմող Հոգերուխ այս աղօթքի Հեղինակը Հովհան Մանդակունին է: Նկատելի է, որ «Ճարթութեաքս» քարոզին Հաջորդող այս աղօթքից առաջ մուծվել է Շնորհալու երգը, որովհետև աղօթքները միշտ Հաջորդում են անմիջա-

պես քարոզին: Հստ ավանդության՝ գլխավոր աղոթքը պետք է արտասանի պատարագիչ քահանան: Այդ քահանան կոչվել է նաև ժամարար, ժամօրհնող, ավագ երեց, ժամասաց, կարգավար:

Այժմ դրանք այլ նշանակություն են ստացել. այսպես, ժամարարը պատարագիչ է նշանակում, ժամասաց կոչվում են այն հոգևորականները (վարդապետ, արեղա), որոնք կայուն կերպով նշանակված են որևէ տեղում ժամերգություններին մասնակցելու համար, ժամօրհնող, այն հոգևորականն է, որը, փոխարիննելով երիցագույն հոգևորականին, ժամ է օրհնում, մաղթանքներն է արտասանում:

Ավագերեցը տվյալ եկեղեցու քահանայական դասի գլուխն է՝ գլխավորը: Այսպես, թեև այս աղօթասաց քահանային տրվում է այս կամ այն անունը, ինչպես վերը հիշեցինք, սակայն նրա բուն անունը մնում է կարգավար:

Ահա թե ինչ է գրում Մ. արքեպ. Օրմանյանը.

«Թեև աղօթասաց քահանան որոշված է, այդ օրվա ամեն աղոթքը կատարելու համար չորս քահանայի հարկ կա.

1. Կարգավար,
2. Կարգավարի հաջորդ, որ երկրորդ օրը պիտի պաշտոնավարեալ աշակերտի դասեն,
3. Նախորդը, որ և հաջորդ օրը պաշտոնը լրացուցած է և աշակերտի դասեն է, իսկ 4-րդը է Ավագերեցու դասեն, որ կամ իր պաշտոնը լրացուցած է, կամ պիտի վարէ երկու օր հետո, և կոչվի նախահաջորդ: Արդ այս աղօթքը, որ մեծերեն մին է, կապատկանի կարգավարին, «Որ զայս աղօթս ասէ աւագերեցն նա է» գրված է»⁷:

Հնդունված կարգ է, եթե կանոնագուխ է երգվելու, ապա աղոթքի ավարտին աղօթքը ընթերցող հոգևորականը ասում է Ալելուիա, Ալելուիա և ապա՝ կանոնագուխ, քանզի ամեն սաղմոսից առաջ ասվում է երկու ալելուիա և ապա՝ սաղմոս:

⁷ Սաղմարիա արքեպ. Օրմանյան, Ծիսագիտություն Դաշնաւանյաց Ա. Եկեղեցի, Երևան, 1977, էջ 13:

ԿԱՆՈՆ ԵՎ ԿԱՆՈՆԱԳԼՈՒԽ

Կանոն ասելով՝ այստեղ նկատի ունենք սաղմոսների վերածումը կանոնների և բաշխումն ըստ ութ ձայնների:

Սաղմոսներգությունը կամ սաղմոս քաղելը աղոթելու հնագույն ձևերից է քրիստոնեության մեջ, որը փոխանցվել է երրայական սովորությունից:

Հնում հավանաբար սաղմոսը քաղվում էր ամեն օր՝ օրվա յոթ ժամերգությունների ընթացքում, և քանի որ սաղմոսը բաժանված էր ութ մասերի, ըստ ութ ձայնների պատշաճեցված, գիշերային ժամերգության ժամանակ սավում էր երկու կանոն, իսկ մնացած վեցը քաղվում էր առավոտյան, երրորդ ժամ, վեցերորդ ժամ, իններորդ, երեկոյան և՝ խաղաղականի ժամանակ (վերջինս կոչվում էր նաև Հանգստյան): Հետագայում սաղմոսների գործածության հնագույն այս կարգն աստիճանաբար խափանվում է և պահպանվում է միայն վանքերում:

Սաղմոսի յուրաքանչյուր կանոն այնպես է բաժանված, որ իր մեջ պարունակում է որոշակի թվով սաղմոսներ: Ամբողջ սաղմոսը բաժանվել է ութ կանոնների, որոնք կրում են ութ ձայնների անունները, ինչպես նաև կոչվում են իրենց առաջին բառերով: Ըստ այդմ՝ Դկ. վերջ ձայնի կանոնը կոչվում է նաև «Երանեալ են», Առաջին ձայնը առաջին «Երկինք պատմեն», Ակ, առաջին կողմը՝ «Մի նախանձիր», ԲԶ, երկրորդ ձայնը՝ «Ողորմեա», Բկ, ավագ կողմը՝ «Իրբեւ», ԳԶ, երրորդ ձայնը՝ «Տէր ապաւէն», Գկ, Վառ ձայնը՝ «Խոստովան», ԴԶ, չորրորդ ձայնը՝ «Ի նեղութիւնան»:

Ահա և յուրաքանչյուր կանոնի պարունակած սաղմոսների թիվը.

Վերջին ձայն (Դկ) 17 սղմ. - «ԱՅ - ԺԷ» 1-17

Առաջին ձայն (ԱԶ) 18 սղմ. - «ԺԸ - ԼԵ» 18-35

Առաջին կողմ (Ակ) 19 սղմ. - «ԼԶ - ԾԴ» 36-54

Երկրորդ ձայն (ԲԶ) 17 սղմ. - «ԾԵ - ՀԱ» 55-71

Աւագ կողմ (Բկ) 17 սղմ. - «ՀԲ-ՋԸ» 72-88

Երրորդ ձայն (ԳԶ) 17 սղմ. - «ՋԲ-ՃԵ» 89-105

Վառ ձայն (Գկ) 13 սղմ. - «ՃԶ-ՃԺ» 106-118

Չորրորդ ձայն ԴԶ 29 սղմ. - «ՃԺ-ՃԽ» ՃԺ-ՃԽ 119-147

Այս բոլորի ընդհանուր թիվը կազմում է 147 սաղմոս, իսկ վերջին երեք սաղմոսները կանոնի մեջ չեն մտել:

Սաղմոսի յուրաքանչյուր կանոն իր մեջ ունի ստորաբաժանումներ, ամեն մի կանոն ունի յոթ Գուրղաներ: Գուրղա կամ Գորդա ըստ «Հայկացյան բառզրի», նշանակում է մաս, չափ, «Բաժանումն սաղմոսաց»:

Սաղմոսները բաժանվում են տների. տարբեր Գուրղաներ ունեն տարբեր քանակի տներ՝ 28, 40, 70 և ավելի տներ ունեցող Գուրղաներ կան:

Սաղմոսներգության կամ սաղմոսասացության կարգն այն է, որ կամ թիվ ասվի և կամ ձայնով՝ եղանակով: Թիվ ասելով՝ պետք է Հասկանալ թեթև եղանակավորում: Ասենք նաև, որ քառասնորդական պահոց շրջանում իրրե փոխ ասվող սաղմոսները ընթերցվում են առանց եղանակի:

ԿԱՆՈՆԱԳԼՈՒԽ

Այսպես է կոչվում յուրաքանչյուր կանոնի յոթերորդ գուրղան, և որը ըստ Հովհաննեսու, պետք է երգի «Ձայնիւ»:

«Ձայնիւ» երգելու կարգն արդարացնելու համար Օձնեցին վկայակոչում է Սուրբ Գրքի այն տողերը, որոնք վերաբերում են Հրեաների կողմից երիքովը գրավելու մանրամասներին, ըստ որում՝ Հրեաները վեց անգամ լուռ, իսկ յոթերորդ անգամ բարձրացայն աղաղակեցին երիքովի շուրջ, և որից հետո քաղաքի պարիսպները փլվեցին:

Կանոնագլուխները կառուցվել են ըստ ութ ձայնի:

Կանոնագլուխները բաղկացած են 2 մասից, որոնց առաջին մասը բաղկացած է 6 տներից, իսկ երկրորդ մասը, որը կոչվում է փոխ և նշանակում է Փ տառով, բաղկացած է լինում 8 կամ 10 տներից: Բացառություն են կազմում ԱԿ «Ասաց անզգամն»-ի փոխը, որն ունի վեց տուն և ԴԿ «Սիրեցից զքեզ»-ի փոխը, որն ունի 12 տուն: Ստորև բերում ենք բուն կանոնագլուխները՝ ըստ ութ ձայնի:

ԱԶ - Դատեա տէր զայնոսիկ... փոխ Տէր, յերկինս է...

ԱԿ - «Ասաց անզգամն»... փոխ՝ «Ձի ոչ գոյր նոցա»...

ԲԶ - Ի քեզ, Տէր, յուսացայ... փոխ՝ Երկիր պագցեն նմա...

ԲԿ - Զողորմութիւնս քո, Տէր... փոխ՝ Դարձուցեր զօգնութիւն...

ԳԶ - Խոստովան եղերուք, Տեառն... փոխ՝ Մաստնեաց զնոսա...

ԳԿ - Արարի իրաւունս... փոխ՝ Մերձեսցին խնդրուանք իմ...

ԴԶ - Օրհնեա, անձն իմ, զՏէր... փոխ՝ Գովեա Երուսաղէմ, զՏէր

ԴԿ - Սիրեցից զքեզ, Տէր... փոխ՝ Զգեցուցեր ինձ զօրութիւն...

Սրանք երգիում են հետեւյալ կերպ: Կանոնագլուխ առաջին մասը երգելիս բոլոր առաջին տներում «Ալէլուիան» կրկնվում է երկու անգամ, իսկ այնուհետև յուրաքանչյուր տան վերջում մեկ անգամ, իսկ փոխի տների վերջում երգիում է երկուական «Ալէլուիա»: Երկու Ալէլուիաներով վերջանում են կանոնագլուխի փառք Հօր և Այժմ և Միշտը» և ապա «աջորդում է «Հանգստեան» շարականը միևնույն ճայնեղանակով: Կանոնագլուխների երգեցողությունը վերապահվում է սովորական կիրակի օրերին, և Տերունի օրերին, որոնց հաջորդում է «Պաշտոն»-ի կարգը: Մրբոց և պահոց օրերին կանոնագլուխ չի երգվում, հետեւարար չեն երգիում նաև Հանգստյան շարականները:

Այստեղ պետք է նշել նաև «Բուն Բարեկենդանի» և «Նոր Կիրակիի» (Կրկնազատիկ) կանոնագլուխնը՝ ԴԶ «Օրհնեա անձն իմ, զՏէր»-ը, որի երգեցողությունը տարբերվում է մյուսներից:

Նախ կանոնագլուխը քաղվում է թիվ՝ ատյանում տասը տուն, իսկ փոխը «Օրհնեցից զքեզ գոհութեամբ... երգիում է ԴԿ ձայնեղանակով երեք անգամ, երրորդ անգամ ձայնը բարձրացնելով, ապա երկրորդ մասը, որը սաղմոս է նորից՝ «Օրհնեցէք զՏէր...», դարձյալ թիվ, փոխը - «Քաղցրաացին զքեզ, Քրիստոս...» ԴԿ եղանակով, դարձյալ երեք անգամ, երրորդ կրկներգը՝ այսինքն՝ ձայնը բարձրացնելով: Դարձյալ սաղմոս - «Գովեա Երուսաղէմ՝ զՏէր...» թիվ, իսկ փոխը «Ձքեզ, Քրիստոս, գովէ եկեղեցի...», նույն ԴԿ ձայնեղանակով, որին հաջորդում է Ն. Շնորհալու «Այսօր անճառ» երգը, որին կցվում է «Տարածեալ մեռք ընդ մեռաց» նույն երգի վեց տուն՝ «Տարածեալ»-ի մեղեղին բոլորովին տարբեր է «Այսօր անճառ» երգի մեղեղուց:

Այս կանոնագլուխի երգեցողության մասին տե՛ս Սիմեոնյան տոնացույցի Հրահնագը:

Առանձին կանոնագլուխ ունի նաև Ավագ ուրբաթը՝ «Խշանանք Հալածեցին», և Ավագ շարամթը՝ «Դատեա, Տէր...»: Այս կոչվում է նաև «Բաղման դատեան»:

Ավագ կամ Մեծի ուրբաթու գիշեր ընթերցվող ավետարանների, ինչպես նաև երգվող սաղմուխների ու երգերի մասին ժամագիրքը ցույց է տալիս կարգով:

⁸ Իրեն լուացուցիչ գիտելիք տե՛ս Ս. Արքանիսկուպու Օրմանյան, «Ծիսագիտութիւն», Ե., 1977, էջ 16:

«ՊԱՇՏՈՆ» ԵՎ ՆՐԱ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հստ Հայկազյան բառգրքի՝ պաշտոն նշանակում է. «Բարեկրօն ծառայութիւն կամ սպասարկութիւն Աստուծոյ, աստուածապաշտութիւն, պաշտելն զԱստուած երկրպագութեամբ և պատարագօք և աղօթիք, կրօնք կարգ, հանդէս արարողութեանց և ամենայն սպասաւորութիւն կարգեալ ի պաշտօն Աստուծոյ»:

Կանոնագիրն Հետևում է «Պաշտօն»-ը Հսկման օրերին, այսինքն՝ կիրակի և պատարագի մյուս օրերին: «Պաշտօն»-ը ննջեցելոց կամ Հանգստյան կարգի մի ձև է, որը բաղկացած է լինում շարականից, սաղմոսից, Ավետարանից, երգից, փակման մաղթանքով և քարոզով: Հստ Մ. Արք. Օրմանյանի՝ կարելի է առանձնացնել «Պաշտօն»-ի չորս տեսակ:

Հստ Թ. Մեծօփեցու խրատի՝ նախ պետք է քաղվեն Հանգստյան շարականները, ապա՝ ապաշխարության ողորմյաները, ապա՝ մի շարական ըստ պատշաճի, վերջում երեք պատկեր տնօրինականք, այսինքն՝ Հոգեգալստյան, Աստվածածնի և Խաչի շարականներ: Հանգստյան շարականից Հետո երգվում են ննջեցելոց սաղմոսները, որոնք ժամագրքում տրված են դարձյալ ըստ ությանի:

«Սաղմոսք ըստ ությանիցն նախքան վԱւետարաննա: Ի տէրունի աւուրս երէ ձայն Ա2 է, զայս ասա՛ սաղմոս:»

Տէր, ո՞վ կացցէ ի խորանի քում...

Ա2 - Տէր, մի՛ սրտմտութեամբ քով...

Ա4 - Բարձր առնեմ գքեզ՝ Տէր...

Բ2 - Աստուած, յանուան քում կեցո...

Բ4 - Աստուած, ողորմեա մեզ

Գ2 - Համեցար, Տէր, ընդ երկիր քո...

Գ4 - Տէր, լուր աղօթից իմոց...

Դ2 - Մերձեսցին խնդրուածք իմ...

Դ4 - Տէր, լուր աղօթից իմոց ունան գիր...

Տէրունի աւուրս եթէ ձայնն Դ4 - Իցէ՛ զայս ասա՛ սաղմոսաշ

Ի խորոց կարդացի առ քեզ, Տէր...

Հանգստյան շարականը և ննջեցելոց սաղմոսները երգվում են դաս առ դաս, սրանց սկսվածքները ավագերեցի դասինն է:

ԱՎԵՑԱՐԱՆՆԵՐԻ ԸՆԹԵՐՅՄԱՆ ԿԱՐԳԸ

Այս Ավետարանը առաջինն է օրվա ժամերգությունների ընթացքում ընթերցվող ավետարաններից: Սրանք ևս դասակարգված են ըստ ությանից՝ յուրաքանչյուր երկու ձայնեղանակի համար մեկ Ավետարան: Այսպես:

Մատթ. Բ4 և Դ4

Մարկոս Բ2 և Դ2

Ղուկաս Ա4 և Գ4

Ցովկ. Ա2 և Գ2:

Կիրակի օրերին, բացի Մեծ Պահոց և Խաչի կիրակիներից պետք է ընթերցվեն Տաճարի ավետարաններ:

Այս ավետարաններում խոսվում են երուսաղեմի տաճարի կործանման մասին: Քանի որ Հովհաննեսը չունի տաճարի ավետարան, ուստի կարդացվում է նավակատեաց Հատվածը: Խոկ Տէրունի, բայց ոչ կիրակի օրերին և սրբոց տոններին (պատարագ մատուցելու դեպքում) պետք է ընթերցվեն Հանգստյան ավետարաններ՝ միշտ ըստ օրվա ձայնի:

Ստորև տրվում են այդ ավետարաններն ըստ գլուխների և Համարների:

ԱԻԵՑԱՐԱՆՔ ՏԱՃԱՐԻ

Բ4 - Դ4. Եւ ելեալ արտաքս Յիսուս. Մատթ. իԴ 1-15:

Բ2 - Դ2. Եւ յելանելն նորա ի Տաճարէն. Մարկ. ԺԳ 1-14:

Ա4 - Գ4. Եւ յասել ոմանց զտաճարէն. Ղուկ. ԻԱ 5-20:

Ա2 - Գ2. Եղեն յայնժամ նաւակատիքն. Ցովկ. ԺԲ 22-42:

ԱԻԵՑԱՐԱՆՔ ՀԱՆԳՍՏԵԱՆ

Բ4 - Դ4. Յայնժամ թողեալ Յիսուս. Մատթ. ԺԳ 36-52:

Բ2 - Դ2. Եւ ասէր, այսպէս է արքայութիւն. Մարկ. Դ 18-34

Ա4 - Գ4. Մի՛ երկնչիր հօտ փոքրիկ. Ղուկ. ԺԲ 32-48:

Ա2 - Գ2. Պատասխանի ետ Յիսուս. Ցովկ. Ե-9-30:

ԱԻԵՑԱՐԱՆՔ ԽԱՉԵԼՈՒԹԵԱՆ

Բ4 - Դ4. Եւ հանեալ զնա ի խաչ. Մատթ. Իէ 35-51:

Բ2 - Դ2. Եւ ածեն զնա ի Գողգոթայ. Մարկ. ԺԵ 22 - 37:

Ա4 - Գ4. Իրրե չոգան ի տեղին. Ղուկ. ԻԳ 33-47:

Ա2 - Գ2. Եւ նոքա առեալ տանէին զնա. Ցովկ. ԺԲ 17-30:

Այս վերջին չորս ավետարաններն ընթերցվում են Խաչի տոնե-

րին, ինչպես նաև Քառասնորդական Պահոց կիրակիներին, որոնց համար իրեւ սաղմոս երգիում է «Նշանեցաւ առ մեզ լոյս...»-ը:

Առավոտյան ավետարանին Հաջորդում է Շնորհայի Հայրապետի Հորինած «Աստված Անեղի» շարքը: Սրանք չորս երգեր են, բաղկացած իննական տներից՝ յուրաքանչյուր երկու ձայնեղանակի համար, ինչպես նաև սաղմոսներն ու ավետարանները: «Աստուած Անեղ» երգը ևս Անձինք է և բաղկացած է 36 տներից: Այժմ ընդունված է երգել այս երգերի առաջին երեք տներից: Սրանք ևս երգիում են՝ ըստ օրվա ձայնի: Ահա այդ երգերն ըստ ժամագրքի Հաջորդականության.

ԲԿ և ԴԿ Աստուած անեղ:

ԲՁ և ԴՁ Ժողովեալք:

ԱԿ և ԳԿ Ճանապարհ մոլորելոց:

ԱԶ և ԳԶ Ռահ գործեալ:

Այս երգերին անմիջապես, ըստ ավուր պատշաճի, Հաջորդում են առաւտովա երգերն ըստ պատշաճի ավուր:

Արարիչ և մարդասէր, ի վերինն երուսաղէմ,

Թագաւոր փառաց,

Ի դնել բեմին,

Յորժամ Ընչին,

Աւել խորհուրդ,

Մովսէս աստուածախոս,

Տրտոմահաղորդ չարշարանօք, (Խաչի),

Զարհուրեցան զօրք երկնային, (Խաչի).

Ուրախացան ազգը մարդկան, (Յարութեան).

Աղաշանօք սրբոյ խաչին... (շարաթ օրերի համար)

Առաջաւորաց պահոց «Ես ասացի»

Ես ասացի ի վերանալ...

բ) Մննդ. «Կուսածին մարդացեալ».

գ) Ածած. «Աստուածածին անարատ մայր...»

Վերջին երեք երգերը իրեւ վերջավորություն ունեն՝ «Օգմես և ինձ Քրիստոս այսօր, յառաջին ճանապարհին եւ ի միւսանգամ գալստեանն քո օգնեա ինձ»: Խսկ նախորդ բոլոր առավոտու երգերն ունեն միւսույն վերջավորությունը»:

«Ողորմած Տէր, ողորմեա Հոգուցըն մեր ննջեցելոց»:

«Պաշտօն»-ի այս առաջին մեր փակվում է «Հոգուցն Հանգուցելոց», մաղթանքով, «Վասն Հանգուցեալ, Հոգուցն» քարոզով և «Քրիստոս Որդի Աստուծոյ» աղոթքով:

ԽԱԶԻ ՊԱՇՅՈՒՆ

«Պաշտօն»-ի երկրորդ տեսակն է Խաչի պաշտօնը՝ Հատուկ Խաչի տոներին և Մեծ Պահոց կիրակիներին: Այս վերջինիս հեղինակն ու կարգավորողը ներսեա Շնորհային է, որը Հորինել է «Այսօր անճառ» երգը, որը երգիում է իրեւ «Պաշտօն»-ի շարական: Վերջինս նույնպես անձինքն է և բաժանված վեց երգի՝ վեցական տներից բաղկացած: Այս պաշտօնի սաղմոսն է Դ՝ «Ի կարդալ իմում...», կցորդն է «Նշանեցաւ առ մեզ լոյր»: Խսկ ավետարանը ընթերցվում է Խաչելությանը: Ավետարանից հետո երգիում է Ն. Շնորհալու «Նորոգող տիեզերաց» ծայրակապային երգը՝ կազմված Ներսեսի է «Թանս այս» ծայրակապով:

Չորս երգ չորսական տներով:

ԲԿ ԴԿ Նորոգող տիեզերաց:

ԲՁ ԴՁ Ետուն ըմպել:

ԱԿ ԳԿ Բարբառելով զէլի էլին:

ԱԶ ԳԶ Աղբերացն անապական:

Սրանք երգիում են Հատուկ ողովության եղանակով:

Այս պաշտօնի փակումը ևս նման է առաջինին՝ մաղթանք, քարոզ և աղոթք:

Մանոթություն. «Այսօր անճառ անձինքը ըստ էության Շնորհայի Հայրապետը Հորինել է Ավագ ուրբաթի գիշերային ժամին ընթերցվող վեց ավետարանների համար, խսկ յոթերորդ ավետարանի սաղմոսն է՝ «Նշանեցաւ»...

Այս ավետարանը ընթերցվում է բեմից:

ԵՐՐՈՐԴ ՊԱՇՅՈՒՆ

Պաշտօնի երրորդ տեսակը Հատուկ է Մեծ Պահոց շարաթ օրերին, երբ Հարկ է լինում պատարագ մատուցել: Եվ որովհետև Մեծ Պահոց ընթացքում լուս է Հանգստյան կարգը, Հետևաբար Հանգստյան շարականի փոխարեն երգիում են ապաշխարության ողորմյաներն ըստ օրվա ձայնի, ավելացնելով դրանց վրա երկու տնօրինական պատկեր՝ Աստվածածնի և Խաչի: Ավետարանն ու սաղմոսը ըստ Հանգստյան ձայնի, և ապա փակման մաղթանք, քարոզ և աղոթք:

Թեև Տոնացուցն այս մասին որևէ Հրահանգ չի տալիս, սակայն

որոշ վայրերում սովորություն կա ավետարանի ընթերցումից հետո երգել մեկ տուն՝ «Ես ասացի» երգից կամ «Արարիչ և մարդասէր»-ից:

Պաշտօնի մի չորրորդ մեջ պետք է նկատել այն, երբ երկու Տերունի տոններ զուգադիպում են: Այս դեպքում տերունիներից մեկի կարգը կատարվում է պաշտօնի փոխարքեն: Հանրավոր է նաև, որ սովորական կիրակի օրը զուգադիպի մեկ ուրիշ տերունի տոնի, այդ դեպքում նույնպես օրվա օրհնությունը պետք է երգի Հանգստյան շարականի փոխարքեն: Այսպես, Ավետման տոնը (ապրիլ 7) հնարավոր է, որ պատահի Հինանց շրջանի մեջ՝ նոր կիրակին և կամ ավելի շուտ, այսինքն՝ Ղազարու Հարության տոնից մինչև Զատիկի: Ուստի երբ Ավետումը Հանդիպի Ղազարու Հարության, Ավագ երկուշարթի, Ավ. երեքշարթի և Ավ. չորեքշարթի օրերին, նշված օրերը դառնում են երկրորդական, ուստի դրանց օրհնությունները քաղվում են իրրև Հանգստյան շարական: Իսկ եթե Ավետումը Հանդիպի Մաղկազարդին, Ավագ հինգշարթի, Ավ. ուրբաթ, Ավ. շաբաթ և Զատիկի օրը, ապա Ավետումն է դառնում երկրորդական, ուստի պետք է քաղել օրհնությունը և Հարցը յուր սարոքն՝ իրրև Հանգստյան շարական: Գիրք և ավետարանը Ավետման, քարոզ Ս. զԱստուածածինն և ընկալ Տէր աղոթք:

Հանգստյան շարականները կոչվում են նաև գիշերապաշտման շարականներ:

Պաշտօնները փակվում են «Հայր մեր»-ով և մի մաղթանքով, որն ըստ Մադ. Արք. Օրմանյանի՝ նոր շարադրված մաղթանք է, որն ընդհանրացել է ավելի ուշ, քանի որ այն բացակայում է ժամանակի հին տպագրությունների մեջ: Ահա այդ մաղթանքը՝

«Քրիստոս Աստուած մեր, անձառելի մարդասիրութեանդ շնորհիր և բարեխօսութեամբ օրհնարանեալ անարատ ծնողիդ սրբուհու Աստուածածին և միշտ կուսին, լուսաւորեալ պայծառացող գհողիս Համօրէն Հաւատացելոց յուսով ի քեզ ննջեցելոց, եւ այնոցիկ որք ընդ հովանեաւ սրբոյ տաճարիս են Հանգուցեալն»:

Ծանոթություն. շարականային կանոնի մասին.

Շարականային կանոնի կարգը մեր եկեղեցում Հաստատվել է 8-րդ դարում Բարսեղ Ձոն վարդապետի կողմից, որի Համար էլ մեր շարակնոցը կոչվել է նաև Ձոնքնտիր:

Ցուրաքանչյուր շարականային կանոն բաղկացած է ութ շարականներից. ահա դրանց անվանումները՝

ա. Օրհնութիւն

- բ. Հարց Գործ կամ Գործատուն
- գ. Մեծացուսցէ
- դ. Ողորմեա (թիւնա) (Ռ.)
- ե. Տէր յերկնից (Տ.)
- զ. Մանկունք (Մնկ)
- է. Ճաշու շարական (Ճ. Ճրկ)
- ը. Համբարձի (Հմբ)

Սկավածքներ

Կանոնի բաղադրիչներն ունեն Հատուկ սկավածքներ՝

Օրհն. Օրհնեցուք զՏէր զի փառօք է փառաւորեալ, Հրց. «Օրհնեալ ես Տէր Աստուած Հարցն մերոց,

Օրհնեալ փառաւորեալ անուն քո յաւիտեան

Գործ. «Օրհնեցէք ամենայն գործք Տեառն զՏէր օրհնեցէք և Բարձր արարէք զնա յաւիտեան»

Մեծ. «Մեծացուսցէ անձն իմ զՏէր և ցնծասցէ Հոգի իմ Աստուծով փրկչեալ իմով».

Ողորմ. «Ողորմեա ինձ Աստուած, քաւեա զանօրեննութիւնս իմ»:

Տ. յերկն «Օրհնեցէք զՏէր յերկնից օրհնեցէք զնա ի բարձանց»:

Մնկ. «Օրհնեցէք մանկունք զՏէր և Օրհնեցէք զանունն Տեառն»:

ճշ. «Տէր թագաւորեաց զվայելզութիւն զգեցաւ» (Կիրակի և Տէրունական):

Գովեա երուսաղէմ զՏէր «Յարութեան և Ցինանց.

Աստուածածին և Մննդեան տոններին՝ մեծացուսցէ անձն իմ...

(Սրբոց տոններին) «Սիրեցի զի լուիցէ Տէր զձայն աղօթից իմոց»:

Հմբ «Համբարձի զայս իմ ի լերինս, ուստի եկեսցէ ինձ օգնութիւն»:

Ծանոթություն.

Այն Հոգեւոր երգերը, որոնք այս սկավածքներով են երգվում և շարականային ութ բաղադրիչներից են, կոչվում են շարական:

Շարականային կանոնի բաղադրիչները հետևյալն են՝

Օրհնութիւն, Հարց, Մեծացուսցէ, ողորմեա ինձ Աստուած, Տէր յերկնից, Մանկունք (մնկ.), Ճշ. Ճաշու շարական, Համբարձի:

Օրհնութիւն - Կանոնի այս միավորը համարվում է կանոնի ուժի բաղադրիչներից առաջին և հիմնական երգը, օրվա խորհուրդը հիմնականում արտահայտվում է օրհնության միջոցով, ինչպես նաև հարցի շարականի միջոցով։ «Օրհնութիւն» բառն իրեւ կանոնի միավորի անուն վերցվել է մարգարեական երգերի առաջին բառից, օրինակ «Օրհնութիւն Մովսիսի»։ Այսպես են սկսվում բոլոր օրհնությունները։

«Օրհնեցուք զՏէր, զի փառօք է փառաւորեալ»։

Մեր շարակնոցում առկա են քառասունչորս օրհնության շարականներ, որոնք ունեն երկու պատկեր՝ երեքական տներից բաղկացած։ 15 օրհնություններ թեև ունեն երկու պատկեր, բայց տների թիվը մի քիչ պակելի չատ է։

Վեց օրհնություններ ունեն երեքական պատկեր, դրանք են։

«Խորհուրդ մեծ և սքանչելի» - Դկ, կանոն ծննդյան առաջին աւուր։

«Հոյս ի լուսոյ» - ԴԶ, կանոն Անուանակոչութեան Տեսառն մերոյ Հունվար 13։

«Երանելի Ս. Առաքեալք» - ԳՁ, կանոն Երկուտասան առաքելոց։

«Պարզևատուն Ամենեցուն» - ԲՁ, կանոն աւագ շարաթի։

«Հրաշակերտ և զօրեղ» - ԱՁ, կանոն Գիւտ Խաչի։

«Անեղանելի բնութիւն» - ԳՁ, կանոն Ս. Մննդյան Ութօքքի։

«Վերաձգողն երկնից» Ավագ հինգչարթի օրհնությունը, բաղկացած է վեց պատկերներից, 18 տուն, որի պատճառով այն չտնի քաղվածք։

Կան օրհնություններ, որոնք պատկերների բաժանում չունեն, բայց ունեն չատ տներ, օրինակ՝ «Ամենասուրբ երրորդութեան», Ս. Սարգսի Ակ,

«Նորահրաշ պսակաւոր»։ Վարդանանց օրհնությունը Դկ, ունեն տասական տներ, վերջինիս ծայրակապն է Ներսեսի երգ։

Շարակնոցում կան նաև օրհնություններ, որոնք ունեն կցորդ պատկեր այլ ժայնեղանակով։ Այսպես՝ Տեսառնդառաջի օրհնությունը ԱՁ «Մարմնացեալք» ունի նաև մեկ այլ օրհնության պատկեր ԴՁ «Այսօր անսկզբնական»։

Ասենք նաև, որ Տեսառնդառաջի տոնն ունի մեկ այլ Օրհնութիւն և «Այսօր ի Տաճարն» Դկ՝ իր հատուկ քաղվածքներով։

Ս. Ստեփաննոսի «Նահատակ բարի» ԳԿ Օրհնությունը ունի «Առաքեալ և նախավկայ» Դկ կցորդ պատկերը, կամ «Խաչն կենարար» ԲԿ վեց տներից բաղկացած։ օրհնությանը կցված է Ստե-

փանոս Ապարանեցուն վերագրվող «Սրբութիւն սրբոց» ԳՁ գեղեցիկ ծայրակապային։ օրհնությունը բաղկացած ինը տներից, որի ծայրակապն է «Ստեփաննոս»։ Վերջինս հայտնի է նաև Ստեփանոս Մոկացի անունով։

Կցորդ շարականները, Հորինել են այլ հեղինակներ, որը կցվել է մինչ այդ նույն տոնի համար Հորինված այս կամ այն օրհնությանը։

Երբեմն երկու տարրեր օրհնություններ միաժամանակ երգելու մասին Տոնացույցում պահպանվել են հատուկ հրահանգներ։ Այսպես, օրինակ Կրկնազատկի կամ նոր կիրակիի «Նորոգեալ կղզիք» օրհնությունը, որի հեղինակը, ինչպես ցույց է տալիս նրա ծայրակապը, Ներսես Լամբրոնացին է, Տոնացույցը հրահանգում է «ՊՅաղթականն զհետն ասա»։ Այս վերջինիս հեղինակն է 8-րդ դարի եկեղեցական մեծ գործիք և փիլսոփա Ստ. Միունեցին, որը ինչպես հայտնի է Հորինել է Հարության Ավագ օրհնությունները, բացի ԳԿ օրհնությունից, որն, ըստ մատենագրական վկայակոչումների, Հորինել է Ներսես Շնորհալին (տե՛ս Գանձակեցու վկայությունը)։

ԿԱՐԳ ԱԻԱԳ ՕՐՀՆՈՒԹԵԱՆՑ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՑԵՍՈՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՄԾ ՔՐԻՍՏՈՍՈՒԻ

Յաւուրս Յինանց և ամենայն կիրակէից ի վերայ Ութ Ճայնից, որ ըստ Ճայնի Եկեղեցւոյն յոր Ճայն և իցես՝ ասա.

ԱՁ Երգեսցուք երգ նոր...

ԱԿ Երգեցէք տեսառն երգ նոր...

ԲՁ Օրհնեցուք ըզտէր...

ԲԿ Փարաւոն Հանդերձ կառօքն...

ԳՁ Օգնական ընդունելի եղեւ իմ տէր...

ԳԿ Երգեցէք տեսառն երգ նոր...

ԴՁ Օրհնեցուք ըզտէր և զյաղթող...

ԴԿ Յաղթական քեզ օրհնութիւն...

ՔԱՂՈՒԱԾՈՅ ՕՐՀՆՈՒԹԵՐԻՆ

Այսպես են կոչվում այն օրհնությունները, որոնք բացառապես կազմված են Տեր Հերկնիցներից և Ողորմյաներից։

Քաղուածոց ՕրՀնությունները լինում են չորս տեսակ.

Յարութեան

Մարտիրոսաց

Պահոց կամ Ապաշխարութեան

Հանգստեան

ա) Յարութեան քաղուածոց օրՀնությունները բաղկացած են վեց «Տէր Յերկնիցներից», որոնց վրա ավելանում են չորս պատկեր՝ տնօրինական շարականներ, որով կազմվում է տասը պատկերներից բաղկացած մի օրՀնություն:

Տնօրինականները պետք է լինեն Հոգեգալստյան, Հանգստյան, Աստվածածնի և Խաչի. որով Հոգեգալստյան և Հանգստյան պատկերները բոլոր ութ ձայների համար կան, Աստվածածնի համար կարող են վերցվել եկեղեցու կամ Վարդապառի շարականներ:

Յարութեան քաղվածոց օրՀնությունները երգվում են ըստ օրվա ձայնի, Զատկին հաջորդող շարաթիվա վեց օրերին, բացի կիրակի օրվանից, որովհետև այդ կիրակին Կրկնազատիկ է և ունի իր հատուկ օրՀնությունը «Իւր ապօքն»:

Ահա այդ օրՀնությունները.

Ակ. Առաքեցար ի Հօրէ:

Բջ. Ի գերեզման քո կանխեցին:

Բկ. Քո յարութեանդ փառք վայել է:

Գջ. Իւղաբեր և սուրբ կանայքն:

Գկ. Յարեաւ տէրն ի գերեզմանէն:

Դջ. Փառարանակից հօր որդի:

բ) Մարտիրոսաց քաղուածոց օրՀնությունները կազմվել են հինգ Տեր Յերկնիցներից, և քանի որ ոչ բոլոր ձայներն ունեն անհրաժեշտ քանակի Տեր Յերկնիցներ, ուստի պակասը լրացվել է Մարտիրապոսաց Ողորմյա կամ Ճաշու շարականներով:

Հայաստանյայց Եկեղեցին շարաթիվա յուրաքանչյուր մեկ օր հատկացրել է մի հիշատակի, այսպես.

ԲՇ - Երկուշարթին նվիրված է Հրեշտակաց:

ԳՇ - Չորեքշարթին՝ Մարգարէից:

ԴՇ - Չորեքշարթին՝ Աստուածածնին:

ԵՇ - Հինգշարթին՝ Առաքելոց:

Ուր- Ուրբաթը՝ Խաչին:

ՇԲ - Շարաթ՝ Մարտիրոսաց և Ամենայն սրբոց:

Կիր - Կիրակին՝ Յարութեան:

Եվ քանի որ չորեքշարթի, ուրբաթ և կիրակի օրերին Մարտիրոսաց տոնն չի կատարվում, դրա համար էլ մարտիրոսաց մի պատկերը փոխվում է ըստ օրվա (աւուր) և ըստ ձայնի:

Մարգարեիցի հետ տոնվում է Յովհաննու Կարապետի տոնը:

Ահա Մարտիրոսաց օրՀնություններն ըստ ուժ ձայնի՝ Հաջորդարար:

Կանոն համօրեն Մարտիրոսաց.

ԱԶ - Ժողովեալքս ի յիշատակ

13 պատկեր:

ԱԿ - Յամենայն ժամ

13 պատկեր:

ԲՋ - ՕրՀնեն զքեզ Աստուած

12 պատկեր:

ԲԿ - Ծնորհեա մեզ Քրիստոս

13 պատկեր:

ԳՋ - Զարիական մահ սրբոց

13 պատկեր:

ԳԿ - Այսօր Հրեշտակաց դասքն

13 պատկեր:

ԴՋ - Այսօր յիշատակ սրբոցն

13 պատկեր:

ԴԿ - Ի յիշատակը վկայից քոց

13 պատկեր:

գ) ՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՄ ԳԻՇԵՐԱՊԱՇՏՍԱՆ ՇԱՐԱԿԱՆՆԵՐ

Սրանք՝ իրեն օրՀնություն, չեն երգվում երբեք, այլ երգվում են իրեն Հանգստեան շարականներ՝ մաս կազմենով պաշտօնին:

Հանգստյան սույն օրՀնությունները բաղկացած են Հետևյալ պատկերներից:

Կանոն Համօրեն ննջեցելոց

ԱԶ Քեզ վայել է Աստուած օրՀն.

10 պատկեր:

ԱԿ Զեռք քո արարին

10 պատկեր:

ԲՋ Հրեշտակային ձայնին

10 պատկեր:

ԲԿ Քեզ վայել է Աստուած

10 պատկեր:

ԳՋ Ի ձայն մեծի զուարթնոյն

10 պատկեր:

ԳԿ Լոյս ի լուսոյ

10 պատկեր:

ԴՋ Քանզի զքեզ օրՀնեն իշխանութ.

10 պատկեր:

ԴԿ Հայր անսկիզբն բարեխնամ.

10 պատկեր:

**Դ) ՊԱՀՈՅ ԿԱՄ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ՔԱՂՈՒԱԾՈՅ
ՕՐՀՆՈՒԹԻՒՆՆԵՐ**

Այս օրհնությունները կազմվել են չորսից վեց պատկեր ապաշխարության ողորմյաններից, որոնք վերագրվում են Մեսրոպ Մաշտոցին: Այստեղ ևս պահասող (ողորմյանների) պատկերները լրացվում են Տեր Հերկնիցներով: Վառ ճայնը ունի ընդամենը երկու հարց, ուստի այստեղ ոչ միայն ավելանում են Տեր Հերկնիցները, այլ նաև Մեծ Պահոց Դիկրակի Ողորմյան և Տեր Հերկնիցը:

Տնօրինականները Պահոց օրհնությունների մեջ դրվում են մեկական տուն, որոնց վերջին երկու տները, այսինքն՝ «Փառքը և Այժմ և Միջտը», Աստվածածնի և Խաչի են, իսկ առաջինը՝ «Փառք Հօրը», ընդհանրապես վերցվում է Մեծ Պահոց կիրակիների օրհնությաններից: Ապաշխարության կամ Պահոց այս օրհնություններն երգվում են առանց սկսվածքի:

Ահա ապաշխարության օրհնությունները, ըստ ութ ճայնի, համաձայն 1888 թվականի Վաղարշապատում հրատարակված շարակնոցի:

**ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՊԱՀՈՅ ԶՈՒԹՆ ԶԱՅՆԻ
ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ՈՂՈՐՄԵԱՅՔՆ**

Աջ	Հայր բազումողորմ	6 պատկեր
Ակ	Մով կենցաղոյս	7 պատկեր
Բջ	Դարձո զցասումն քո	5 պատկեր
Բկ	Յամենայն ժամ	8 պատկեր
Գջ	Զերծո զիս յորոգայթէ	7 պատկեր
Գկ	Քրիստոս Աստուած	7 պատկեր
Դջ	Համբառնամ առ քեզ տէր	8 պատկեր
Դկ	Քրիստոս Աստուած յոյս	7 պատկեր

		48 պատկեր

Շարականների երգեցողությունը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հնում յուրաքանչյուր շարականի տուն կրկնվել է մյուս դասից, բացի հարցի շարականից, որի տները կրկնվել են երեք անգամ, իսկ գործատունը՝ երկու անգամ: Սրա լավագույն ապացույցն է այն, որ Զայնքաղ շա-

րակնոցները տնօրինական պատկերներից հետո «Փառք և Այժմ և Միջտ»-ի համար դնում են միայն մեկ տուն:

Այժմ այդ սովորությունը գրեթե վերացել է: Մինչև վաթունական թվականների վերջը Ս. Էջմիածնի մայրավանքում սովորություն էր կրկնել շարականի առաջին տունը, եթե այն ուներ կենտ տներ՝ երեք կամ հինգ, մանավանդ Մեծացուսցէ, Ողորմեա, Տէր Յերկնից, Մանկունք և Համբարձի շարականների երգեցողության ժամանակ, բացի Ստեղի շարականներից:

Այժմ Ս. Էջմիածնում վերացել է վերոհիշյալ Հնավանդ սովորությունը:

ԱՑՅԱՆ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

Ասյան դուրս գալու մասին Տոնացույցն ունի հատուկ հրահանգ, այս նշանակում է, որ մի շարք տոներին երկու կողմի դամերը գալիս են ատյան և միասին դաս առ դաս երգում երգվելիք երգերը, ինչպես «Տէր զի բազում»-ի կամ «Փառք ի բարձունս»-ի ժամանակ:

Այժմ, երբ ատյան են դուրս գալիս, օրվա շարականները երգվում են դաս առ դաս:

Ասյան դուրս գալու սովորությունը պայմանավորված է նաև Հետեւակ շարական երգելով:

Հստ Միմեռնյան տոնացույցի՝ տարվա ընթացքում ատյան պետք է դուրս գալ ութ անգամ: Ահա այդ տոները.

1. Տեառնընդառաջին

2. Մաղկազարդին

3. Համբարձման

4. Երկրորդ Մաղկազարդին

5. Հոգեգալստյան

6. Վարդավառին

7. Վերափոխման

8. Խաչվերացին:

Սրանցից Հետեւակ շարական ունեն Տեառնընդառաջը «Մարմնացեալդ»: Աջ, որը Տեառնընդառաջի տոնին՝ փետրվարի 14-ին, երգվում է իրեն Հետեւակ շարական, իսկ նախատոնակին՝ փետրվարի 13-ին, այն երգվում է իրեն Համբարձի:

ՄԱՂԹԱՆՔ

Մաղթանք նշանակում է աղաջանք, աղերս, պաղատանք, աղոթք, միջնորդություն... Հայկացյան բառզիրքն ավելացնում է նաև հետևյալը՝ «Ի ժամագիրս մաղթանք կոչին- աղօթք զօրաւորք ի բերանոյ աւագ երիցուն»⁹: Բացի այդ, մաղթանքը ցուց է տալիս նաև օրվա ընդհանուր խորհուրդը կամ իմաստն արտահայտող բացարություններ: Տաթևացին վկայում է, որ մաղթանքները կոչվել են նաև «Փառել», այսինքն փառարանություն: Հնում մաղթանքները ժամերգության ընթացքում ասում էին բարձրաստիճան Հոգևորականները՝ իրեն պատիվ, այժմ այդ պարտականությունը վերապահվում է ժամօրհնողին:

Մաղթանքները ունեն գրեթե բոլոր ժամերգությունները, խորհուրդներն ու ծննդեր:

Մաղթանքը հաջորդում է օրհնության շարականին՝ ըստ պատշաճի աւուր:

Մաղթանքները լինում են երեք տեսակ՝

1. Տերունական,
2. Սրբոց,
3. Պահու.

Մաղթանք Տէրունական Տօնից

Փառք հրաշափառ Ծննդեան քո, Տէր. զօրհնեալ եւ զիտաւուրեալ, զհրաշալի եւ զյաղթող զԾնունդդ քո սուրբ օրհնեմք եւ փառաւորենք...

Եւ իրեն երկրորդ մաս ունի հետևյալը՝ «Մարդասէր Տէր, վասն սրբունույ անարատի մօր քո եւ կուսի, եւ վասն խաչի քո պատուականի՝ ընկալ զաղաչանս մեր եւ կեցո զմեզ»:

Այստեղ մաղթանքի առաջին մասում հիշվում է օրվա պատշաճը՝ Ցարութեան, Քառասնօրեայ գալստեան ի Տաճարն, Ծաղկազարդին՝ «Գալստեան յերուսաղէմ»: Աւագ երկուշարթի, Աւ. երեքշարթի, Աւ. Զորեքշարթի եւ Աւ. Հինգշարթի Համար՝ «Գալստեան ի շարշարանս», Վերափոխման տոնին՝ «Գալստեան ի փոխումն մօր քո և կուսի»: Տէրունական տոների Համար տես ժամագրքի Խրատը:

⁹ Բազիրը Յայկազեան, Բ հատոր, 1856, Վենետիկ, էջ 199:
Գ. Ավետիքյան, «Բացարուրիմն շարական», Վենետիկ, 1814:
Ս. Օրմանյան, Ազգապատմ, Դաշնոր Ա. Սայր Արոռ Ա. Էջմիածին, էջ 553, 2004 թ.:

Լատին եկեղեցին Աստվածածնի տոներին մաղթանքն ուղղում է տիրամորը, այսպես՝ «Փառք հրաշափառ մօր քո»: Հայ եկեղեցու Համար այս ձևուննելի լինել չի կարող, քանի որ Աստվածածնի տոները տերունի են լոկ այն պատճառով, որ տոնվում են «ի դէմս Որդույն Աստուծոյ»:

Մաղթանք ի Տօնս Սրբոց

«Բարեխօսութեամբ սրբունույ Աստուածածնին, և Ցովհաննու Մկրտչին, սրբոյն Ստեփաննոսի Նախավկային, և սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորիչին: Ցիշատակաւ եւ աղօթիւք սրբոց (այս անուն), որոց այսօր է յիշատակ: Եւ վասն խաչի քո պատուականի, Տէր, ընկալ զաղաչանս մեր, և կեցո զմեզ»:

Առաջին մասում, ինչպես տեսանք, պետք է հիշել օրվա սրբին կամ սրբերին, սակայն նախ միշտ հիշվում են սուրբ Աստվածածնը, Ցովհաննու Կարապետը, Ստեփաննոս Նախավկան և Ս. Գրիգոր Լուսավորիչը:

Առաջին երեքի անունների հիշատակությունը բացատրվում է նրանով, որ Ս. Էջմիածնի, Գլակա և Բագրևանդի մայր տաճարների ավագ մեղանները նվիրված են Ս. Աստվածածնին, աջակողմյան մատուռը կամ խորանը՝ Ս. Ստեփաննոսին, իսկ ձախակողմյանը՝ Ցովհ. Կարապետին: Այս մասին տե՛ս Մ. Օրմանյան «Միսագիտություն», Երուսաղեմ 1977, էջ 28:

Ըստ Հնավանդ սովորության՝ նախքան օրվա սրբոց հիշատակությունը, պետք է հիշել նախ այն սրբերին, որոնց տաճարում պաշտոն է մատուցվում և որոնց միջոցով փառավորվում է Աստուծու անունը: Իսկ Ս. Գրիգոր Լուսավորչի անվան հիշատակությունը հավանաբար ավելի ուշ պետք է ավելացված լինի:

Մաղթանք Պահու

Պահոց մաղթանքներն ութն են՝ ըստ ութ ձայնի և կամ ըստ սաղմուաց 8 կանոնների: Ցուրաքանչյուր Պահոց մաղթանքի առաջին մասը կազմված է Համառոտ մաղթողական բացատրություններից, ինչպես՝ օրինակ.

Քրիստոս է իմ Աստուած...

Բարձրացաւ եղջիւր իմ յԱստուած Քրիչ իմ:

Խաղաղութեանց տուող Քրիստոս:

Տուք փառա Աստուեց:

Իսկ յուրաքանչյուր սաղմոսի երկրորդ մասը նույն «Մարդասէր Տէրն» է, որն արդեն վերը հշեցինք:

Ենթադրվում է, որ մաղթանքների գործածությունը հնում եղել է ամենօրյա, և որոնք մաս են կազմել սաղմոսասացության՝ որպես կանոնի փակման ձև:

Այս մաղթանքներն ամենայն Հավանականությամբ պետք է Հորինված լինեն Սահակ Պարթևի կողմից, որին Օձնեցին վերագրում է նաև կանոնի աղոթքներն ու քարոզները:

Ահա Պահոց մաղթանքները՝ ըստ ուժ ձայնի և ըստ սաղմոսի կանոնի անվան:

Մաղթանք Պահոց

ԴԿ Երանեալին.

Քրիստոս է իմ Աստուած, եւ փառաւոր առնեմ զսա: Աստուած, Հօր իմոյ, և բարձր արարից զնա: Մարդասէր Տէր, վասն սրբությունանատի մօր քոյ և կուսի և վասն խաչի քո պատուականի ընկալ դաղաշանս մեր, և կեցո զմեզ:

ԱՉ Երկինք պատմեն-ին

Տուք փառա Աստուծոյ, տուք օրհնութիւն մարդասերին թագաւորին յաւիտենից, որ փրկէ զծառայս իւր և կեցուցանէ: Մարդասէր Տէր:

ԱԿ ՄԻ ՆԱԽԱՆՃԻՐ-ին

Դու ես Տէր, մեր, դու ես Քրիստոս փրկիչ մեր, զքեզ օրհնեն ան ձինք մեր: Մարդասէր Տէր...

ԲԶ. Բարձրացաւ եղիսր իմ յԱստուած փրկիչ իմ, Հաստատեցաւ սիրտ իմ ի Տէր տէրամբ հաւատով մարդասէր տէր վասն...

ԲԿ. Խաղաղութեանց տուող Քրիստոս, զխազաղութիւն և գերկնային ողորմութիւն քո պարգևեա յարաբածն քո... Մարդասէր Տէր...

ԳՁ. Յոյս կենդանութեան, յոյս և ապաւէն փրկութեան, Տէր Ժխուս փրկիչ, փրկեա և փարատեցո զցաւս անձին իմոյ...

ԳԿ. Եկեսցեն աղօթք մեր ի տաճար սուրբ քո, խոնարհեցի ունկն քո ի խնդրուածն մեր...

ԴՁ.Ի Նեղութեան-ին

Լուր մեզ, Տէր, լուր մեզ, աստուածային ողորմութեամբ եւ գթութեամբ քով խնայեա յարաբածն քո: Մարդասէր Տէր...

Քարոզ - աղօթք

Գիշերային ժամերգության կարեւոր մասը Հանդիացող այս քարոզներն ու աղոթքները չորսն են՝ Հորինված ըստ ուժ ձայնի, յուրաքանչյուր երկու մայնեղանակի համար մեկ քարոզ և մեկ աղօթք իր «Հանգիստ»-ով: Յուրաքանչյուր քարոզ կազմված է հինգ տներից՝ մինչև «Վասն Հոգոցն» տունը:

Գեղեցիկ են քարոզների լեզուն, բովանդակությունը, որոնք ունեն հինգերորդ դարի մեր դասական լեզվի բոլոր հատկանիշները՝ հարուստ բառապաշար, պատկերների առատություն, լեզվի բացառիկ մատչելիություն և քնարականություն: Այս ամենը հիմք են տալիս Ենթադրելու, որ այս քարոզներն ու աղոթքները հորինվել են մեր դպրության մեծ երախտավորների և նրանց չնչի տակ սնված ու դաստիարակված երանելի վարդապետների կողմից:

Հ. Օձնեցին ևս իր հե (25) կանոնի մեջ սուրբ Սահակին է վերագրում վերոհիշյալ քարոզներն ու աղոթքները: Օձնեցին վկայակոչում է նաև աղոթքներ, որոնք փոքր-ինչ տարրերվում են մեր խնդրու առարկա աղոթքներից: Այսպես, թկ և ԴԿ համար «Հանգիստ», «Շնորհալու բարեաց», իսկ ԱԿ և ԳԿ համար մեջ է բերում «Անկեալք եմք առաջի», ԲԶ և ԴՁ համար «Որհնեալ ես Տէր Աստուած», Հանգիստ «Թեզ յանձն առնեմք»: Սրանցից «Տէր Աստուած մշտնջենաւոր»-ը կարելի է նույնացնել Արևագալի «Աստուած մշտնջենաւոր» աղոթքի հետ, իսկ «Անկեալք եմք»-ը՝ «Ճաշու իններորդ ժամի «Անկեալք առաջի քո» աղոթքի հետ: Առաջնը, Աստուած մշտնջենաւոր» ն. Շնորհալունն է, իսկ երկրորդը՝ Հովհան Մանդակունի հայրապետինը:

Օձնեցու մեջբերած այս աղոթքներից վերջին երկուսն են, որ

ամբողջովին առկա են Օձնեցու իԵ (25) կանոնի մեջ: Ա. Անձնացին նույնպես հիշում է նման մի աղոթք, ստորև մեջ ենք բերում այն իր «Հանգիստ» -ով.

«Կանխեալք ի ժամ գիշերիս՝ աղաչեմք զմարդասիրութիւն քո, որ բացեր զբերանս մեր ի փառարանութիւն ամենասուրը անուանդ քո: Եւ մեք այսուհետև սրբնացուք զանձինս մեր ի խղճէ և ի չար գործոց, Համարարձուք ի գիշերի գձեռս մեր առանց բարկութեան և երկմտութեան, Հաւատով խնդրեացուք զթողութիւն մեղաց մերոց, խոստովանելով զգաղտնիս սրտից մերոյ ծածկագիրիդ Աստուծոյ: Մտցեն աղաչանք մեր առաջի մեծի տէրութեանդ քո: Բացցին դրունք մարդասիրութեան քո ի վերայ ժողովրդեան քո: Զի դու ես բարերար և բազումողորմ Աստուած: Եւ քեզ վայել է փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից Ամէն»:

ՀԱՆԳԻՍՏ

«Օրհնեալ ես Ամենակալ Աստուած, և Հայր Տեառն մերոյ Յիատուի Քրիստոսի, որ զարթուցեր զմեզ ի ծանրութենէ քնոյ, և ետուր երգել զերգս Հոգեորս, քեզ ի գովութիւն և ի փառարանութիւն, մեզ ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց: Արդ աղաչեմ զբարերութիւնդ քո որ զայսքան բարիս շնորհես, զմնացուած գիշերիս շնորհեա խաղաղութեամբ անցուցանել, և Հասանել ի պաշտօն առաւոտուն, յերկրագութիւն և ի փառարանութիւն ամենասուրը երրորդութեանդ, որում վայել է փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յավիտեանս յաւիտենից Ամէն»:

Հետաքրքիր է իմանալ նաև, որ Անձնացին չի հիշում այս աղոթքները, որ Օձնեցին մեջ է բերում: Ասենք նաև, որ Անձնացու հիշալ աղոթքը ընդհանուր շատ նմանություններ ունի գիշերապաշտման աղոթքների հետ, որոնք ցույց է տալիս Օձնեցին: Այս աղոթքի առաջին մասը շատ նման է Մանդակունուն վերագրվող «Զարթուցեալքս» նշանավոր քարոզին:

Ահա և Օձնեցու իԵ (25) կանոնում մեջբերած աղոթքը իր Հանգիստ-ով.

«Օրհնեալ ես Տէր Աստուած մեր, որ և զմեզ զմեղաւորս արժանի արարեր, փառաւորել զբեզ, ընկալ, բարերար և մարդասէր Տէր, զամենեցուն մեր աղաչանս, զիսնդրուածս, զիսոստովանու-

թիւնս, զգոհացողութիւնս, չնորհեա ամենեցուն մեզ զքո առատ ողորմութիւնդ և զթութիւնդ: Մի թողոր, Տէր զժողովուրդս քո, և մի մատներ իսպառ վասն անուան քո. մի ըստ մեղս մեր առնել մեզ, և մի ըստ անօրէնութեան մերում հատուցաներ մեզ, այլ արա առ մեզ զողորմութիւն քո ի հազարս և ի բիւրս:

Զերծ զմեզ յամենայն մեղաց, յանուն միածնիդ քո Տեառն մերոյ Յիատուի Քրիստոսի:

ՀԱՆԳԻՍՏ

«Քեզ յանձն առնեմք զանձինս մեր, Աստուած ամենակալ, Հայր Տեառն մերոյ Յիատուի Քրիստոսի, որ ի բարձունս բնակեալ ես, և զխոնարհս տեսանես յերկինս և յերկրի: Նայեաց, Տէր, յազօթս մեր և ի պաղատանս, մի ցրեր զուխտ քո, և մի մերժեր զմեզ ի ժառանգութենէ քումմէ, այլ ըստ առատ քում բարերարութեանդ արժանաւորիս արա զմեզ զծառայս քո անճառ լուսոյդ երկնից արքայութեանդ Յիատուի Քրիստոսի Տեառամք մերով, ընդ որում քեզ Հօր և Սուլր Հոգույդ վայել է փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից Ամէն»:

Այժմ, երբ տեսանք մեր ժամագրքերից դուրս մնացած այս աղոթքները, որոնք իրենց լեզվական սահունությամբ և շարադրանքով որոշակիորեն տարբերվում են մեր ժամագրքի աղոթքներից, այսինքն՝ ժամագրքում արտացոլվածներից, զիջում են իրենց արվեստով: Սակայն պետք է կարծել, որ զրանք երթևէ օգտագործելով են իրեւ գիշերային ժամերգության աղոթքներ մեր եկեղեցում, միգուցե և հինգերորդ դարում թարգմանվել են ասորերենից և կամ Հունարենից:

Մեր ասածը Հաստատվում է նրանով, որ Օձնեցին և Անձնացին իրենց մեկնություններում մեջ են բերում այդ աղոթքները՝ առանց որևէ Հավելյալ բացատրություն տալու: Անձնացին հիշում է նաև, որ այդ աղոթքների երկրորդ մասին նախորդող «Խաղաղութիւն ամենեցուն» -ը աղոթասացինն է և ոչ թե եպիսկոպոսինը:

Ահա և կանոնի քարոզներն ու աղոթքները՝ ըստ Հայատանյաց Եկեղեցու ժամագրքի և Առարով Անձնացու ԱՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ -ը:

Քարոզ - ԲԿ ԴԿ Վասն ի վերուստ...

Աղօթք - Տէր տուընջեան...

Հանգիստ - Ջքեզ՝ որ յամենայնի գիշած...

Քարոզ - ԱԶ ԴԶ Վասն ի գիշերի և ի տուընջեան...

Աղօթք - Ի գիշերի և ի տուընջեան...

Հանգիստ - Հովիտ քաջ, Հովիտ բարի...

Քարոզ - ԱԿ ԳԿ Վասն ուղղելոյ, զգնացս մեր...

Աղօթք - Տէր երկնի և երկրի...

Հանգիստ - Քում ամենազօր և յաղթող...

Քարոզ - ԲՁ ԴՁ Վասն գտանելոյ մեզ...

Աղօթք - Գոհանամք զքէն...

Հանգիստ - Կենդանարար զօրութիւն...

Այս քարոզները կիրակի օրերին երգվում են խմբով՝ հատուկ եղանակավորումով, իսկ մեծ պահոց կիրակիներին ասվում են սարկավագի կողմից թիվ, իսկ լի օրերին պարզ և սահուն եղանակով՝ փոխի նման: Թիվ ասվելու դեպքում կեցո Տէր, չնորհեա տէր նույնպես ասվում է թիվ ժամօրհնողի կողմից:

ԱԼԵԼՈՒՔ ԵՎ «ԹԱԳԱԽՈՐՔ»

Այս երկու երգերն էլ պետք է, որ ունենան բավականին հինգործածություն: Երկուսն էլ հաջորդում են գիշերային աղոթքին անմիջապես:

«Թագաւոր յաւիտեան» -ը բաղկացած է երեք մասերից.

Ա. Թագաւոր,

Բ. Սաղմոս,

Գ. Փոխ,

Ենթադրվում է, որ Թագավորն ու Փոխը շարադրվել են եկեղեցական հայրերի կողմից: Թագաւոր անունը վերցվել է իր վերնագրից «Թագաւոր յաւիտեան»-ից, որը կոչական է՝ ուղղված երկնավոր թագավորին: «Թագաւոր յաւիտեան»-ներն ըստ ժամադրքի երկուսն են՝ Ապաշխարության և Մարտիրոսաց:

ԹԱԳԱԽՈՐՔ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

Սրանք հորինվել են չարաբթվա հինգ օրերի համար, քանի որ շաբաթ և կիրակի օրերին տոներ են լինում, ուստի Պահոց չեն կարող լինել այդ օրերը: Պահոց «Թագաւոր յաւիտեան»-ները բաղկացած են իննական տներից, այսպես՝ երեք տուն թագաւոր թ., երեք տուն սաղմոս Սղ. երեք տուն փոխ Փ: Բացառություն է կազմում ուրբաթ օրվա «Թագաւոր յաւիտեան»-ը, որն ունի նաև մեկ փոխ ավելի՝ իրրե ննջեցելոց: Եվ քանի որ Մեծ Պահոց օրերին ննջեցելոց կարգ չի կատարվում, ուստի Մեծ Պահոց վեց ուրբաթներին երգիւմ է «Որ լուսատու ես տիեզերաց»-ը: «Թագաւոր յաւիտեան»-ների մեջ ավելի հները համարվում են Ապաշխարության «Թագաւորները», քանի որ հնում եկեղեցում նախ Ապաշխարության և Հանգստյան կարգերն էին կատարվում: Սրանց հնության մասին վկայում են նաև նրանց լեզվի և ոճի վսեմությունը: Պետք է ավելացնել նաև, որ սրանք իրենց բառապաշարով և հորինվածքով շատ նման են Մաշտոցին վերագրվող «Ապաշխարության ողորմյա» շարականներին: Պահոց «Թագաւոր»-ներն աչքի են ընկնում անկեղծ զղջումի, անձնական մեղքի գիտակցումով: Սրանք միաժամանակ հոգեցունց աղոթքներ են ու պաղատանքներ:

Գր. Տաթևացին Ապաշխարության «Թագաւոր յաւիտեան»-ները վերագրում է Մեսրոպ Մաշտոցին: Առանձնապես գեղեցիկ և հոգեւոյց է հինգշաբթի օրվանը.

«Ապաշխարութեան արտասուս աւագան լինի, եւ լուսայ զրագմութիւն մեղաց. սովաւ չնորհեա՝ յառաջ քան զվախման զքաւութիւն և զմեծ քո զողորմութիւն»:

Սղ. «Մարաւի է անձն իմ առ քեզ, Աստուած Հզօր եւ կենդանի. Ե՞րբ եկից երևեցայց երեսացդ Աստուեցյ: Եղեն ինձ արտասուք իմ կերակուր ի տուէ և ի գիշերի. և այն զի ասէին ցիս զօրհանապազ. Թէ ու՞ր է Աստուած քո. սովաւ չնորհեա՝ յառաջ քան...»:

Թ. «Ճիս որ ի նաւի՛ աշխարհի ալեկոծն մեղք իմ, նաւահանգիտ ապաշխարութեան չնորհեա ինձ բազումողորմ և կեցո՛ք»:

Թ. «Դու ես Քրիստոս, աղրիւր կենաց, բղխումն ողորմութեան չնորհեա», փրկիչ, անձանց մերոց զթողութիւն մեղաց մերոց»:

Այս երգերն ունեն նաև ինքնատիպ և հոգեպարար հարուստ

մեղեղիներ, որոնք ավանդաբար մեզ են հասել դարերի հոլովոյ-թով:

Ավելացնենք նաև, որ «Պահոց Թագաւոր յափտեանների», ինչ-պես նաև մեր եկեղեցում երգվող սաղմոսների մեղեղիներն ազատ են մեր ութ ձայնեղանակային համակարգի շրջագծից: Սակայն նրանք ունեն մարդկային հոգու խորին ծալքերը թափանցելու և ներազելու մի անբացատրելի խորհուրդ: Ըստ մեծն կոմիտասի՝ չի բացառվում, որ մեր սաղմոսասացության մեջ պահպանված լինեն նաև մասսամբ հրեական սաղմոսների հնագույն մեղեղիներից որոշ տարրեր:

Ահա Պահոց «Թագաւոր յափտեան»-ներն ըստ շաբաթվա հիմք օրերի.

Երկուշաբթի

Էռ' մեզ Աստուած փրկիչ մեր...

Երեքշաբթի

Երկայնամիտ ես, Տէր, առ ամենենեան...

Չորեքշաբթի

Տէր իմ, բազում են անօրէնութիւնք, անձին իմոյ...

Հինգշաբթի

Ապաշխարութեան արտասուս աւագան լինի...

Ուրբաթ

Ի տաճարի սրբութեան քում...

ԹԱԳԱՒՈՐ Ք ՄԱՐԳԻՐՈՍԱՅ

Սրբոց կամ Մարտիրոսաց «Թագաւոր յափտեան»-ները թվով ութին են՝ ըստ ութ ձայնի, և բաղկացած են երեք տներից, այն է՝ Թագաւոր Ք, Սաղմոս Սղ. Ս և Փոխ Փ.

Առաջին տան մեջ կատարվում է օրվա սրբի հիշատակությունը և ապա հայցվում նրա կամ նրանց բարեխոսությամբ մասն և բաժին, ողորմություն և թողություն «յանցանաց մերոց», «Հաղածեղ

զիսաւարն և լուսաւորել զանձինս մեր»:

Երկրորդ տունը սաղմոս է, որն ընտրվել է ըստ պատշաճի, որին նորից կցվում է առաջին տան վերջին՝ «բարեխոսությամբ սրբոց»... Հատվածը:

Երրորդ տան փոխի մեջ խոսվում է նրանց կրած տան-ջանքների, նահատակության մասին և ապա հայցվում նրանց բա-րեխոսությունը մեզ՝ իրենց հիշատակը տոնախմբողներիս համար:

Ա2 - Թագաւոր յափտեան սրբոց

«Բարեխոսութեամբ սրբոց (այս անուն), աղաչեմք զքեզ. Թողութիւն չնորհեա՛յանցանաց մերոց, բարեկար Քրիստոս»:

Սղ. Մերձ է Տէր առ այնոսիկ որք մաշեալ են սրտիւք, և զիսո-նարհս հոգուվ կեցուցանէ:

Բազում նեղութիւնք են արդարոց, յամենայնէ փրկէ տէր եւ պահէ զամենայն ուկերս նոցա և մի ի նոցանէ ոչ կորիցէ, թողու-թիւն չնորհեա՛յանցանաց...

Փ. Որ յաղթող զօրութեամբ ի հանդէս ճգնաւորական՝ անարատ պահեացէ զիսաւակունող վկայս քո, Քրիստոս Աստուած, տո'ւր մեզ զօգնութիւն ի նեղութեան մերում, բարեխոսութեամբ սրբոց մար-տիրոսաց, և կեցո:

ԱԿ - Զողորմութիւն քո, Տէր...

ԱՂ - Փրկութիւն արդարոց...

Փ - Որք զտանջանս և զմահ...

ԲԶ . - Բարեխոսութեամբ... պարզեաւ մեզ...

ՍՂ. - Աքանչելի է Աստուած...

Փ. - Մարտիրոսք երանեալք...

ԲԿ. - Դու ես, Քրիստոս, ազդիւր կենաց...

ԱՂ. - Աստուած փառաւորեալ է...

Փ. - Որ շնորհօք Սուրբ Հոգույն...

ԳԶ, ԳԿ - Զճնութիւն սրբոց...

ՍՂ, ԳԶ - Լոյս ծագեաց արդարոց...

ՍՂ, ԳԿ - Փատուական է առաջի Տեսոնն...

Փ - Հանդիսացեալք ի մարտորս...

ԴԶ - Որք ի խորանս սրբութեան եմք...
ՍՂ - Մերձ է Տէր...

Առաքելոց՝ Մարգարէից

ՍՂ - Ոչ են բանք և ոչ են խօսք...
Փ - Նահատակք եւ վկայք...

ԴԿ - Ձերեքսրբեան տէրութիւնդ քո...
ՍՂ - Ուրախ լիցին ամենեքեան...
Փ - Տօն է այսօր Եկեղեցի սուրբ...

ԱՅԽՈՐ ԴԱՍՔ (Սրբոյն Ստեփանոսի)

Այսօր դասքը՝ իրու «Թագաւոր յաւիտեան», Հորինվել է Հաւտուկ սուրբ Ստեփաննոսի տոնի Համար, բայց Հետագայում, այն ավելի ծավալվելով, սկսել է երգվել նաև այլ տոններին:

Տոնացույցը այս մասին առանձին հրահանգ ունի, որը վերաբերում է Ավագ տոններին, այն է՝

1. Սրբոյն Դաւթի մարգարէին և Յակովրայ Տեառնեղբայր առքելոյն:
2. Սրբոյն Ստեփաննոսի Նախավկայի և առաջին մարտիրոսին:
3. Սրբոց առաքելոցն Պետրոսի և Պողոսի:
4. Սրբոցն Որդուցն Որոտման՝ Յակովրայ առաքելոյն եւ Յովհաննու Աւետարանչին (այս չորից տոնիցս եւս, Թագաւոր յաւիտեան՝ Այսօր դասք հրեշտակացն ասա): Այս կարգադրության Հեղինակը մեր կարծիքով Սիմէոն Երևանցի Հայրապետն է:

Տոնացույցը հրահանգում է «Այսօր դասք» երգել նաև Լուսավորչի զոյց տոններին, ինչպես նաև մեր առաջին լուսավորիչների՝ Ս. Թագէոսի և Ս. Թարդուղիմէոսի տոններին: Դժվար է ասել, թե ե՞րբ է սկսել «Այսօր դասք» երգել Վարդանանց և այլ տոններին: Այս, որ «Այսօր դասք»-ը նախապես Հորինվել է Սուրբ Ստեփաննոսի տոնի Համար, վկայում է ինքը՝ երգի կառուցվածքը, որի բոլոր տներում էին և նոր ժամապրերում գերանունն արտահայտված է եղակի թվով՝ «Թանգի գոչէ Եկեղեցի քո Քրիստոս զյաղթանակ մարտ Հեղման արեան սորա...», կամ՝ «Թագում Համարձակութիւն

է սորա...», «Քանզի յօժարութեամբ մատնեաց զանձն իւր...», «Քանզի արհամարհելով անսրգեաց զանցաւոր զկեանս աշխարհս... և այլն:

«Այսօր դասք»-ը բաղկացած է ութ տներից, որոնք բոլորն էլ հրմականում երգվում են Հանդիսավոր, ծանր եղանակով:

«Այսօր դասք»-ի կատարման կարգը՝ ըստ Մ. Օրմանյանի (էջ 32-33), երբ Ավագ դասն սկսում է երգը՝ «Թագաւոր յաւիտեան»-ը, ժամարարն ավետարանով և սաղավարտով, սպիտակ շուրջառով, սարկավագի և զոյց մոմակաների ուղեկցությամբ դուրս է գալիս ավանդատնից և բարձրունում է բեմ ու կանգնում է բեմի աջ կողմում՝ դեմքը դեպի ժողովուրդը: Երբ երգվում է երգի երկրորդ տոննը՝ «Բազում Համարձակութիւն»-ը, սարկավագը մոմակաների հետ իջնում է աջակողմյան աստիճաններով և գալիս դեպի ատյան, որտեղ բուրգառը փոխանցում է եպիսկոպոսին կամ ավագերեցին. վերջինս օրհնում է խունկը և ապա խնկարկում Ավագ խորանին և ապա նորից մտնում է դաս և գալիս ատյան, խնկարկում է քահանայից, դպրոց դասին և ժողովրդին: Խսկ երբ դպիրներն սկսում են երգել վերջին տունը և «յորժամը», Հնչում են քշոցները: Եպիսկոպոսը այդ պահին բուրգառը հանձնում է սարկավագին և Համբուրելով խաչը՝ կանգնում է իր տեղում: Սարկավագը բարձրանում է բեմ և այսօր Դասքի վերջին տունը երգելուց հետո թափորապետ եպիսկոպոսը կամ ավագ երեցը բարձրաձայն ասում է «Այսօր դասք Հրեշտակաց»-ի առաջին տունը, որից հետո լսվում է սարկավագի բարձրաձայն քարոզը՝ Զուարձացեալքս մածաւ ուրախութեամբ... քարոզի ավարտին սարկավագը, զոյց մոմակիրները և ժամարարը ավետարանով իջնում են և գնում դեպի ավանդատուն, Հանգցնում են ջաները: Խսկ եթե քահանան միայնակ է, նույն թափորով բարձրանում կանգնում է սեղանի աջ կողմում՝ ավետարանը մեղքին, և երբ երգվում է «Բազում Համարձակութիւն»-ը, ավետարանը դնում է սեղանին, խնկարկում, ապա վերաբերում է ավետարանը, մնացածը՝ վերը գրված կարգով:

«Այսօր դասք»-ի այսօրինակ կատարման կարգի մասին որևէ չին ավանդություն մեզ չի հասել, բայց թափորի ձև ստացած այս Հանդիսավոր արարողությունը գեղեցիկ է իր ամբողջության մեջ:

Այսեղ առանձնապես պետք է ընդգծել այս սքանչելի երգի մեղեղային հարուստ կառուցվածքի մասին, որը մեզ է հասել Վաղարշապտում երջանկահիշատակ Գևորգ Դ կաթողիկոսի ջանքերով՝ ձայնագրված ժամապրերի միջոցով:

ԹԱԳԱԽՈՐ ՅԱԻՒՏԵԱՆ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՑ

Երկինք - երկիր

Այս կատարվում է միայն Հրեշտակապետաց տոնին և բաղկացած է Ալէլուիայից և «Թագաւոր յաւիտեան»-ից: Մրա Ալէլուիան, որ առաջին մասն է «Ո՞ արար զՀրեշտակս իւր յոդիս...», իսկ փոխն է՝ «Օրէնեցէք զՏէր յերկնից» (Տէր յերկնիցի փոխն է): «Փառք եւ երկրպագութիւն» այժմ և միշտ», և ապա՝ երեք Ալէլուիա, որին կցվում է «Դասք Հրեշտակաց օրէննեն զքեզ, Քրիստոս, ալէլուիա, մարդկան ազգ սաղմոսեն քեզ. ալէլուիա, ալէլուիա»:

Տոնացույցը հրահանգում է իր կցորդ սրան «Թագաւոր յաւիտեան», «Երկինք և երկիր»-ը.

Սղ. Երկինք երկնից, ջուրք որ ի վերայ...

Փոխ. Երկինք և երկիր հանապազ զքեզ գովեն...

Այսպիսով, ինչպես տեսանք, Հրեշտակապետաց Թագավորը յավիտեանը կրկնությունն է Պահոց երկուշարթի օրվա Թագավորքի վերջին երեք տների: Հին և նոր տոնացույցների ու ժամագրքերի մեջ նկատվել է մի տարրերություն, այսպես Հները՝ «Երկինք երկնից» և «Զի նա ասաց» սաղմոսների փոխարեն դնում են «Օրէնեցէք զՏէր յերկինս» և «Օրէնեցէք զնա ամենայն Հրեշտակը» սաղմոսի տները:

Այժմ, ըստ Սիմեոնյան կարգադրության, այս վերջինները դարձել են երկրորդ՝ Ալէլուք, իսկ «Դասք Հրեշտակացն», որ Հների մեջ երկրորդ Ալէլուք է, այժմ դարձել է կցորդ՝ «Փառք և երկրպագութիւն»-ի համար:

Ալէլուք գիշերային Տէրունական տօնից կարգաւ ըստ պատշաճի աւուրց եւ ըստ ուր ձախից

Ալելուիաներն ըստ ութ ձայնի վեց խումբ են, իսկ ըստ պատշաճի աւուրց՝ 13:

Ըստ 8 ձայնի 6 ալելուիաներն են.

1. Ծննդեան և Աստուածածնի,
2. Յարութեան, Յինանց և Յարութեան կիրակիների Համար,
3. Համբարձման,
4. Հոգեգալստեան,
5. Խաչ,

6. Եկեղեցւոյ:

Խաչի ալելուկները երգվում են նաև Համաձայն Սիմեոնյան տոնացույցի հրահանգի՝ Մեծ Պահոց կիրակի օրերին:

Ըստ պատշաճի աւուրց տասներեք ալելուիաներն են.

1. Ալէլուք ճրագալուցի Ծննդեան,
2. Ալելուք Տեառնընդառաջի,
3. Յարութեան Ղազարու,
4. Ծաղկազարդին,
5. Ալելուք Աւագ Երկուշարթի,
6. Աւագ Երեքշարթի,
7. Աւագ Չորեքշարթի,
8. Աւագ Հինգշարթի,
9. Աւագ Ռւրբաթ,
10. Աւագ Շաբաթ,
11. Վարդապառ,
12. Բ օր Վարդապառի,
13. Գ օր Վարդապառի:

Փրկչի Այլակերպության տոնը մեր եկեղեցին տոնախմբում է երեք օր՝ կիրակի, երկուշարթի և երեքշարթի: Այս երեք օրերն ունեն իրենց հատուկ շարականային կանոնները:

Ալելուիաների երգեցողության կարգը հետևյալն է. երեք անգամ կրկնվելով՝ երգվում է երկու տուն սաղմոս, երկրորդ անգամ մյուս դասի երեք ալելուիաներից հետո երգվում է երկու տուն սաղմոս ևս, ապա՝ փառք և երկրպագություն, և երգն ավարտվում է դարձյալ երեք ալելուիաներով:

Ժամագիրը հրահանգում է նաև, «Զկնի ամենայն Տէրունական տօնից յորժամ, ձայնն ԱԶ լինի զԴասք-ն ասաւ»:

Սա նշանակում է, որ երբ Տէրունի տոներին օրվա ձայնը ԱԶ լինի, իրեւ կցորդ պետք է երդմի՝ «Դասք Հրեշտակաց»-ը, որի երգեցողության կարգի մասին ասված է Հրեշտակապետաց Ալելուքի առթիվ:

Ալելուիաների սաղմոսներն ընտրելիս առաջնորդվել են սաղմոսի իմաստն օրվա տոնին պատշաճնեցնելու սկզբունքով:

Ինչպես Ծննդեան, այնպես էլ Փրկչի Հրաշափառ Հարության ալելուիաների սաղմոսները հաճախ կրկնվում են այս կամ այն ձայնի մեջ: Այսպես՝ ԱԶ ժ երկրորդ սաղմոսի փոխը՝ «հիջէ որպէս զանձրն ի վերայ գեղման»-ը, ԲԶ ձայնի ալէլուքի առաջին տունն է:

ԲԿ - ի փոխը՝ «Լնդ քեզ է սկիզբն աւուր գօրութեան ի վայելչութիւնն...», ԳԿ - ի ալէլուքի առաջին տունն է: Կամ ԳԿ-ի փոխը՝

«Տէրասաց ցիս Որդի իմ ես դու», ԴԿ-ի Ալեկուքի առաջին տունն է:
Նույնը կարելի է տեսնել նաև Հարության և Խաչի, Համբարձման և Հոգեգալստյան և Եկեղեցվո Ալեկուիաների մեջ:

Նշված Ալեկուիաներն ունեն նաև մեղեղային առանձնահատկություններ: Մեզ են հասել Ծննդյան, Հարության, Խաչի կամ Եկեղեցու և Ողոգոյան եղանակներ: Ողոգոյան՝ երգվում է Ավագ Բ, Գ, Դ, Ռ, Օրերին, այսինքն՝ երկուշարթի, երեքշարթի, չորեքշարթի, հինգշարթի և ուրբաթ օրերին:

ա. Ալեկուքներ ըստ 8 ձայնի, չի նշանակում, որ դրանք երգվում են շարականների ութ ձայնեղանակների, այլ ըստ ձայնի են կոչվում, որովհետև դրանց մեծ մասը երգվում է ութ և ավելի օրեր: Ինչպես, օրինակ՝ Ծննդյանը, Հարության, խաչի կամ Եկեղեցու ալեկուքները: Զայները՝ ԱԶ, ԲԶ կամ ԲԿ, ԳԿ և այլն, պարզապես երգվող ալեկուքների սաղմոսները իրարից բաժանելու և դրանց Հաջորդական երգեցողությունը կանոնավորելու նպատակով է նշվում ձայնեղանակների անուններով, ճիշտ այնպես, ինչպես գիշերային ժամերգության մաս կազմող Ծնորհալիական երգերի Տաճարի կամ Ցուղարերից Ավետարանների, քարոզների և նրանց աղոթքների գույգ ձայնեղանակների նշման պարագան՝ ԱԶ-ԳԶ, ԱԿ-ԳԿ, ԲԶ -ԴԶ, ԲԿ -ԴԿ կարգով: Այսպիսով «Ալեկուքների» և «Թագաւոր յափտեանների» մեջեղիները, ինչպես ասվեց անկախ են՝ մեր 8 ձայնեղանակային Համակարգից, սակայն ունեն Հոգեպարար և Հոգեգմայլ եղանակներ՝ գեղեցկորեն ներդաշնակված նշված երգերի բառերի հետ: «Թագաւոր յափտեան»-ից և Ալեկուիաից հետո Կանոնի քարոզներն ու աղոթքներն ունեն փակման մի մաղթանք՝ դարձյալ ամեն երկու ձայնի համար մեկ մաղթանքի սկզբունքով: Թեև այդ մաղթանքները դրվում են աղոթքներից հետո, բայց քանի որ Հայաստանյայց Եկեղեցու յուրաքանչյուր ժամերգություն, իրըն հաստատուն կարգ, վերջանում է փակման աղոթքով կամ մաղթանքով՝ քահանայի կողմից, այս իսկ պատճառով հիշյալ փակման մաղթանքներն ասվում են, Թագաւոր յափտենից, կամ Ալեկուիաներից հետո, և որոնցով փակվում է գիշերային ժամերգությունը, և «Հայր մերով» սկսվում է առավոտյան ժամը:

Ահա փակման չորս մաղթանքները.

1. ԲԿ, ԴԿ - Սաղմոսիք և օրհնութեամբ...

2. ԱԶ, ԳԶ - ի Գիշերի եւ ի տուրլնջեան...

3. ԱԿ, ԳԿ - Ցեղաք օրհնութեան և ի ձայն...

4. ԲԶ, ԴԶ «Գուութեամբ և ճշմարիտ խոստովանութեամբ ան-

դադար փառաւորեմք գհայր և զՈրդի և զՍուրբ Հոգիո, այժմ».

Գիշերային ժամերգության ու նրա մեկնության մասին նայել հետևյալ աղբյուրները.

Ստեփանոս Սյունեցի,

Հովհան Օձնեցի՝ «Յաղագս կարգաց Եկեղեցւոյ»,

Խոսրով Անձնացի՝ «Մեկն. ժամակարգութեան»,

մեկնությունները, տե՛ս մեր սույն աշխատության ցանկում:

ԿԱՐԳԱՒՐՈՐՈՒԹԻՒՆ ՀԱՍՏԱՐԱԿԱՅ ԱՂՕԹԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑՑ
ԵԿԵՂԵՑԻՈՅ ՈՐ ԿԱՑԱՐԻ ՅԱՌԱՒՈՑՈՒ ԺԱՄՈՒ Ի ԴԵՄՍ ՈՐ-
ԴԻՇՅՆ ԱՍՑՈՒԾՈՅ, ՈՐ ԵՐԵՒԵՑԱԻ ԻՒՂԱԲԵՐԻՑՆ

«Առավոտյան ժամի հասարակաց աղոթքի կարգը, որ կա-
տարգում է Հայաստանյայց Եկեղեցում ի գենս Որդվույն Աստուծո,
որ երեաց Յուղաբերներին»

Առավոտյան ժամերգությունը կատարգում է «Ի դէմս Որդույն
Աստուծոյ»:

Ինչպես մեր պաշտամունքային մյուս ժամերը, առավոտյան ժա-
մերգությունը ևս սկսվում է Տերունական աղոթքով, թեև այս մա-
սին որևէ հին հիշատակություն չի պահպանվել: Սակայն Խ. Ան-
ձնացին և այլ մեկնիչներ վկայում են, որ գիշերային և առավոտյան
ժամերգությունների միջև պիտի կատարվեն «Ընթերցմունք», իսկ
թե ինչ է ընթերցվել, այդ մասին ոչինչ հայտնի չէ: Հավանաբար
հնում ընթերցվում էին Ս. Գրքի մեկնություններ, որովհետև ավելի
ուշ, ինչպես հայտնի է, հարցից առաջ սովորություն է եղել ընթեր-
ցել «Յայսմաւուրք»:

Այժմ այդ սովորությունը գրեթե խափանված է:

Եվ այսպես, թեև որևէ վկայություն չկա այն մասին, թե առա-
վոտյան ժամերգությունը «Հայր մեր»-ով է սկսվել, բայց պետք է
ենթադրել, որ այդպես է եղել, որովհետև այժմ ևս, երբ գիշերայի-
նին կցվում է Առավոտյան ժամը, այդ կցումը կատարվում է «Հայր
մեր»-ով և զանգահարությամբ:

«Հայր մեր»-ին անմիջապես հետևում է սաղմու ՁԹ (89) -ի 14-
17 Համարները՝ «Լցաք առաւօտու ողորմութեամբ քով, ցնծացաք
և ուրախ եղաք զամենայն աւուրս կենաց մերոց», սարկավագը
շարունակում է ժամօրհնողին. «Խրախ եղաք փոխանակ աւուրցն՝
յորս խոնարհ արարեր զմեզ եւ ամացն՝ յորս տեսաք զշարչարան:

Հայեա, Տէր, ի ծառայս քո եւ ի գործս ձեռաց քոց, և առաջնոր-
դեա որդւոց նոցա. եղիցի լոյս Տեառն Աստուծոյ ի վերայ մեր:

Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ, **Տէր**, և զգործս ձեռաց մերոց յաջողեա մեզ»:

ԺամօրՀնողն ասում է. «Փառք Հօրը, իսկ սարկավագը, -Այժմ և միշտ և... Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք...»:

ԺամօրՀնողն՝ Օրհնութիւն եւ փառք»:

Հնում սրան Հաջորդել է «Օրհնութիւն երից մանկանցն», Օրհնեալ ես, **Տէր** Աստուած Հարցն մերոց... փոխը՝ վեց տուն ձայնով, իսկ մնացածը փոխասացները քաղել են մրմունջով մինչև Հարցի շարականի ավարտը:

Այժմ ասվում է այդ փոխից մեկ կամ երկու տուն միայն, որին ժամօրՀնողը պատասխանում է մի կարճ մալթանքով՝ «Օրհնեցէք, ամենայն արարածք գարարին արարածոց...», ապա՝ Հարցի շարականը:

Հարցի վերռհիմալ փոխը վերցվել է Դանիելի գրքից (Գ զիմ 26-45 և 52-86 Համարները):

ՀԱՐՑԻ ՇԱՐԱԿԱՆՆԵՐ

Հարցի շարականը Համարվում է կանոնի Հնագույն միավորը, որն արտահայտում է օրվա խորհուրդը:

Հարցի շարականը բաղկացած է երկու մասից.

1. Բուն Հարց:

2. Գործատուն:

Հարց - նշանակում է Հայրենի:

Հարցերը Հիմնականում երեք տներից են բաղկացած: Հնում Հարցի յուրաքանչյուր տունը կրկնվել է երեք անգամ, իսկ Գործատունը կրկնվելով դարձել է չորս տուն: Այսօր Հարցերը երգվում են Հիմնականում հինգ տուն: Գործատունի հետ միասին:

Միայն Հարության ԴԿ-ի երրորդ Հարցը՝ «Փառաւորեալ է», ունի ճ տուն ունեցող Գործատուն: (Տես Շարակնոց: Վաղարշապատ 1888, էջ 282):

Հարցի շարականի երգեցողության մեջ օրվա ձայնի հետ որևէ կապ գտնել դժվար է, բացառություն են կազմում Հատուկ օրվա Համար Հորինված Հարցերը:

Հարցերի ընդհանուր թիվը Շարակնոցում 190 է: Նշանակում է, որ ընդամենը երկու անգամ կրկնվելով Հարցերը բավարարում են ամբողջ տարվան: Ասենք նաև, որ կանոնի միավորների մեջ Հարցերը քանակով ամենաշատն են:

Ստորև տրվում է մեր եկեղեցում Հարցերի ընդհանուր պատ-

կերը և նրանց գործածության կարգը՝

- | | |
|-------------------------|-----|
| 1. ՏԵՐՈՒԽՆԻ ՀԱՐՑԵՐ | 54: |
| 2. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ | 42: |
| 3. ՄՐԲՈՑ ՀԱՏՈՒԿ ՀԱՐՑԵՐ | 26: |
| 4. ՄԱՐՏԻՐՈՍԱՅ ՀԱՐՑԵՐ | 15: |
| 5. ՊԱՀՈՑ ՀԱՐՑԵՐ | 45: |
| 6. ՀԱՆԳՍՏՅԱՆ ԿԱՄ ՆՆՁԵՑ. | 8: |

ՀՆԴԱՄԵՆԸ

190 Հարց:

Տերունի Հարցերից յուրաքանչյուրը մեկ օրվա Համար է:

Կրկնվող Հարցերն են «Որ զնախագրեալսն» ԴԿ (էջ 9), որը երգվում է Աստվածածին երեք տոներին,

Տապանակի՝ «Այսօր ընծան»-ը, ԴՉ Հարցը (էջ 335) երգվում է նաև Վերացման Խաչի հինգարթի օրը և այլն:

Իսկ Տերունի Հատուն Հարցեր երգվում են տարին մեկ անգամ՝ ըստ պատշաճի ավուր:

ՀԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Խնչածա վերը նշվեց, սրանք 42-ն են.

Այսպես ԱԶ - 5 Հարց, ԱԿ - 5, ԲՁ-6, ԲԿ-5, ԳՁ-5, ԳԿ-3, ԴՁ-7, ԴԿ-6 Հարց:

Հարության Հարցերի երգեցողության կարգն այսպես է. սկսում են երգվել Զատկին Հաջորդող երեքշաբթի օրվանից, քանի որ երկուշաբթի օրը մեռելոց է և երգվում է Հանգստյան Հարց, ԱԶ: «Օրհնեալ ես դու, Քրիստոս» (իւր սարօքն): Իսկ Հարության Հարցերի երգեցողության երկրորդ շրջանն սկսվում է ԶԿնի Հոգեգալստեան Գ կիրակիից, Հաշված այն կիրակիները, որոնք Հատուկ տոներ են և ունեն Հատուկ կանոններ: (իւր սարօքն) այսինքն իրենց բաղադրիչներով:

Ցինանց շրջանում Հարության Հարցեր չեն երգվում. նաև Հետպայլ օրերին՝ Զատկին Հաջորդող 7-րդ օրը՝ Շաբաթ, որ Հովհաննու Մկրտչի պիտաման տոնն է և ունի Հատուկ Հարց ԱԶ: «Նախայաւիտեան բանին պատմող...» (էջ 217), 8-րդ օրը՝ կրկնագատիկ է կամ նոր կիրակի, 15-րդ օրը՝ Աշխարհամատուան կամ Կանաչ կիրակին է, որն ունի Հատուկ Հարց ԴՉ «Երկրպագենք քեզ...» իւր սարօքն: 25-րդ օրը՝ երեսան Ա. Խաչի տոնն է երգվում է Հարց Խաչի ԴՉ: «Այսօր ընդ ամպս», 40-րդ օրը՝ Համբարձման տոնն է, որն ունի Հատուկ կանոն սարօքն, Հարցն է ԴԿ «Օրհնեացի

պսակ քաղցրության քո **Տէր»** (Էջ 273): 43-րդ օրը՝ Կիր. Երկրորդ Մաղկազարդն է, որի Հարցն է ԴԿ «Այսօր արարիչդ...»

Եղիականից մինչև Խաչի բարեկենդան պետք է երգվեն ԱԶ և ԴԶ առաջին երկու Հարցերը, իսկ եթե կիրակիների թիվը պակաս լինի՝ մեկական Հարց զեղչվում է: Ս. Խաչի բարեկենդանին պետք է երգվի ԳԿ-ի առաջին Հարց՝ «Անճառելի բնութիւն» (Էջ 263), իսկ Խաչից Հետո մինչև Յինանց չ պետք է երգվեն չորս ԴԶ և երկուսից երեք ԴԿ Հարցեր Յիսնակաց:

Մննդյան պահի մեջ Հանդիպած Կիրակի օրը պետք է երգվի ԴԶ Հինգերորդ Հարցը՝ «Միաժին Որդի» (Էջ 270), իսկ Մննդյան ութօրեթից Հետո Հանդիպող առաջին կիրակին՝ ԴԶ-ի վեցերորդ Հարցը՝ «Մագումն միածնի» (Էջ 274): Իսկ եթե մինչև առաջավորաց ուրիշ կիրակիներ Հանդիպեն, պետք է երգվեն ԲԶ, ԲԿ, ԳԶ, ԳԿ-ի երրորդ Հարցերը, որոնք չեն երգվել:

Հարության Հարցերը շարակնոցում զրադեցնում են 240-270 և 280-285 էջերը:

ՍՐԲՈՅ ՀԱՏՈՒԿ ՀԱՐՑԵՐ

Թարգմանչաց «Աքանչեղափործ» ԴԶ Հարցը դարձել է ընդհանուր բոլոր Վարդապետաց տոներին, բացի Թարգմանչաց տոնից կրկնվում է մեկ կամ երկու անգամ:

Անտօն Անապատականի «Նախասկիզբն միանձանց» ԱԶ Հարցը կրկնվում է երեք անգամ մգնավորաց տոներին: Թէոդոսի թագաւորի «Օրհնեմք զքեզ...» ԱԶ Հարցը՝ չորս թագավորաց տոներին, Հովհաննես Մկտրչի «Զուարճանայ այսօր» ԴԶ և Լուսավորչի «Որ առաքեցեր» ԲԶ Հարցերը կրկնվում են իրենց տոներին: «Որդոց և թոռանց «Որ զլյոս աստուածային» ԱԿ Հարցերը և Հոփախմեանց «Այսօր զանյաղըլի» ԴԿ Հարցը կրկնվում են իրենց ընկերակիցների տոներին, իսկ Հայրապետաց «Որ էիր յառաջ քան զյափտեանս» ԳԶ Հարցը կրկնվում է տիեզերական երեք ժողովների տոներին: Մասցած 14 Հարցերը երգվում են առանց կրկնվելու՝ տարվա մեջ մեկ անգամ:

ՄԱՐՑԻՐՈՍԱՅ ՀԱՐՑԵՐ

Մարտիրոսաց Հարցերը թվով տասնչինքն են: Այսպիս, ԱԶ մեկ Հարց, ԱԿ 2 Հարց,

ԲԶ 2 Հարց,

ԲԿ 2 Հարց,

ԳԶ 2 Հարց,

ԳԿ 1 Հարց,

ԳԶ 3 Հարց,

ԳԿ 2 Հարց:

ԱՀա Մարտիրոսաց Հարցերը. (Էջ 488-489):

ԱԶ «Զքեզ արդար և ուղիղ»:

ԱԿ «Սուրբ Աստուած արարիչն...»:

ԱԿ «Որ բարձրեալդ ես...»:

ԲԶ «Անոխակալ և բարեգութ...»:

ԲԶ «Ընդ սուրբը քո բարեբանեմք...»:

ԲԿ «Օրհնեմք զքեզ Տէր...»:

ԲԿ «Որք ի մարտի...»:

ԳԶ «Որք զտանջանս...»:

ԳԶ «Զինորութիւնք»:

ԴԶ «Յուսացեալքն յանուն քո...»:

ԴԶ «Սուրբ ես Տէր...»:

ԴԶ «Որք Հաղորդեցան...»:

ԴԿ «Ալո քեզ Աստուած Հարցն մերոց...»:

ԴԿ «Որ ըզհրաշափառ քո...»:

Եկեղեցական ավանդությունը մարտիրոսաց կարգի Հորինումը վերագրում է Գետրոս Գետաղարձ Հայրապետին:

Մարտիրոսացն և զԱռաւուու երգերն Տէր Պետրոս կաթողիկոսն ասաց...

ԶՀանգստեանն և զմարտիրոսացն Պետրոս Գետաղարձն, և զբազում ի մանկութեացն:

Գր. Տաթևացի:

Արար սա ճառս գեղեցիկս, շարագրեաց և զշարականս ընտիրս զմարտիրոսացն...

Մ. Զամյան, Բ Հատոր, Էջ 896..

Այս մասին տես նաև: Ս. Ամատունու կարծիքը Հին ու Նոր Պարականոն շարականներ, Էջ 64-85: 1911թ., Վաղարշապատ:

Մ. Աբեղյան, Հայ Հին գրականության պատմություն, Հատոր Գ:

Մ. արքեպ. Օրմանյան, Ազգապատում (Հանձնարարվում են իրեն օժանդակ աղբյուրներ): Խսկ Մարտիրոսաց Հարցերի կարգի մասին տես տոնացույցի հատուկ հրահանգը: Վաղարշապատ, Տոնացույց, 1906, էջ 114:

ա. Եւ վասն Մարտիրոսացն Հարցիցն այսպէս գիտեա:

Յայսմ Հինգչարթիս սկիզբն արա յառաջին ձայնէն մինչև ի վերջ ձայնն, և կարգաւ ասա. և ի վերջանալն վերատին սկսիր, բայց ԳԶ. որ զանչափ, ԳԿ Զինուորութիւնք և ԴԶ: Որք Հաղորդեցան, զայս երեք Հարցու ի կարգին մի ասեր, զի յատուկ օրերին:

Մանոթություն. վերոհիշյալ հինգչարթին վերաբերում է Կաթողիկէ էջմիածնի տոնին Հաջորդող հինգչարթիին (Խ. Պ.)

ԱՊԱՀԱՄՐՈՒԹԵԱՆ ԿԱՄ ՊԱՀՈՅ ՀԱՐՑԵՐ

Պահոց Հարցերը քառասունհինգն են:

ԱԶ	6 Հարց,
ԱԿ	6 Հարց,
ԲԶ	4 Հարց,
ԲԿ	6 Հարց,
ԳԶ	6 Հարց,
ԳԿ	2 Հարց,
ԴԶ	7 Հարց,
ԴԿ	7 Հարց:

Մրանք տարվա ընթացքում երգվում են 2 անգամ, խսկ Մեծ Պահոց մեջ երգվում են 30 Հարցեր՝ 6 շաբաթների ընթացքում սկսելով ԱԶ -ի առաջին Հարցից մինչև վերջ ձայնի Հարցերը կարգով, բացառությամբ տասնչորս Հարցերից, որոնք «Յաղցմի» են, մեկը ԴԿ ստեղի է:

«Աղցմի» նշանակում է «Յաղցիսն» մի ասէր: Սա նշանակում է, որ այս Հարցերը Մեծ Պահոց շրջանում (Աղ ու Հացին) չպետք է երգվեն:

Ստորև մեջ ենք բերում տոնացույցի հրահանգը Պահոց Հարցերի երգեցողության վերաբերյալ.

«Զկարգ ապաշխարութեան Հարցիցն այսպէս պահեա: Ի յայս չորեքշարթէս սկսեալ ի յամենայն չորեքշարթէն և ի շաբաթամա-

Հոց յորս ոչ իցեն տօնք, ասա կարգաւ գամենայն ապաշխարութեան Հարցան բացի յերկուց, թկ և ԴԿ ստեղեացն: (Այսինքն, բացի յԱստուած Հօր և ի յԱնուն քոյ յաւիտեան Հարցիցն): Եւ ի վերջացուցանելդ, վերըստին սկսեա զալցմիսն միայն ասել՝ մինչև Հասանիցիս ի սուրբ Սարգսի կիւրակէն: Զայս և տարեգիրն ևս ցուցանէ քեզ»:

Այսպիսով Պահոց Հարցերը, բացի Քառասնորդաց Պահքի օրերից, երգվում են՝ սկսած Հոգեգալաւայան տոնից հետո՝ Հանդիպող Աշորեքշարթի օրվանից երգվում են նաև Շաբաթապահոց Երկուշարթի, Երեքշարթի և Հինգչարթի օրերին, երբ տոներ չեն լինում: Նույն կարգով՝ միայն այն տարբերությամբ, որ այս դեպքում երգվում են նաև Աղցմի Հարցերը ևս, բացի թկ և ԴԿ ձայների վերջին երկու Հարցերից, որոնք ստեղի են:

Երբ վերջանան Հարցերը, դարձալ սկսում են կրկնվել Աղցմիները, որոնք Մեծ Պահոց շրջանում չեն երգվել: Կրկնության այս կարգն սկսում են Ա. Մննոյան Պահոց օրերից, այսինքն՝ դեկտեմբերի 30 կամ 31 -ից: Պահոց այս օրերի Համար Տոնացույցն ավելացնում է նաև Հետևյալ հոգումը, պահոց օրերի օրհնությունների, Երեկոյան մեսեղիների ու Համբարձի շաբակաների մասին

«Խսկ զօրհնութիւնն այսպիսեաց և ուրբաթուց զապաշխարութեան ողորմեայսն ասա ի ձայնէն:

Նոյնպէս և յերեկոյեան զՄեսեղին և զՀամբարձին ապաշխարութեան ասա ի ձայնէն»:

ԱՀա և Պահոց Հարցերն ըստ ութ ձայնի.

ԱԶ 1 «Որ Հայիս քաղցրութեամբ»:

2 «Որ Համագոյից ես Հաստիչ...»:

3. «Որ յամենայնի ես կարող...»:

4. «Աղցմի երգէին մանկունքն...»:

5. «Բարձրեալ ես թագաւոր անմահ...»:

6. «Բարերանեալ ես յաւիտեան...» Միայն մեկն է Աղցմի:

ԱԿ 1. «Ճանուն քո Քրիստոս օրհնեմք...»:

2. «Որ խոնարհեցար...»:

3. «Աստուած Հարցն մերոց...»:

4. «Որհնեալ և փառաւորեալ...»:

5. «Աղցմի «Փառաւորեալ յաւիտեան...»:

6. «Ճանճառ էութիւն...» մեկ Հարց Աղցմի:

թջ 1. «Օրհնեալ Տէր...»:

2. Հ Աղջմի «Որ ապրեցուցեր...»:

3. Հ Աղջմի «Որ ահաւոր քոյով...»:

4. «Ուղիղ են ճանապարհը քո...»:

5. Աղջմի «Փառաւորեալ յափտեան...»: Երեք Աղջմի

Թկ 1. Հ Աղջմի «Հարցըն մերոց, օրհնեալ ես...»:

2. «Որ Հարցըն մերոց Աստուած...»:

3. «Մանկունքըն գերեալք...»:

4. Հ Աղջմի «Տէր Աստուած Հարցըն...»:

5. Հ Աղջմի «Մանկանցն ըգձայնն քեզ...»:

6. Հարց ստեղի «Անուն քո յափտեան...»: Երեք Աղջմի և Սեկ ստեղի Հարց:

Հարցք ապաշխարութեան ԳԶ

1. «Փառաւորեալ անուն քո յափտեան...»:

2. «Փառաւորեալ է անուն քո...»:

3. Հ Աղջմի «Օրհնեալ ես Տէր եւ...»:

4. «Հարցըն մերոց Աստուած...»:

5. Հ Աղջմի «Օրհնեալ ես Տէր եւ Աստուած...»:

6. «Օրհնեալ ես Տէր եւ...»: Երկու Աղջմի:

Հարցք ապաշխարութեան ԳԿ

Գկ 1. Հ Աղջմի «Սուրբ Աստուած Հայր...»:

2. «Աստուած բարձրեալ ահաւոր...»: Երկու Աղջմի:

Հարցք ապաշխարութեան ԳԶ

Դջ 1. «Հարցըն մերոց Աստուած...»:

2. «Հարցըն մերոց Աստուած...»:

3. Հ Աղջմի «Օրհնեալ ես յափտեան...»:

4. «Որ յամենայնի ցուցեր զքո...»:

5. «Ճշմարտապէս գոհանամք զքէն...»:

6. «Տէր Աստուած մեր...»:

7. Հ Աղջմի «Որ զերիս մանկունս...»: Երկու Աղջմի Հարց:

Հարցք ապաշխարութեան ԳԿ

Դկ 1. «Աստուած Հարցըն մերոց...»:

2. Հ Աղջմի «Օրհնեալ ես յափտեան...»:

3. «Հարցըն մերոց օրհնեալ ես...»:

4. «Օրհնեալ Տէր Աստուած օրհնեալ...»:

5. «Օրհնեալ ես Տէր Աստուած...»:

6. Հ Աղջմի «Աստուած Հարցըն մերոց...»:

7. Հ Ստեղի «Անուն քո յափտեան....»: Երկու Աղջմի և մեկ ստեղի Հարց: Վերջին Ստեղի այս Հարցն ունի 2 ողորմեա, 2 տէր յերկնից և մի մանկունք՝ Ցոյս իմ: Պահոց այս Հարցերը ևս վերաբրդվում են Մեսրոպ Մաշտոցին: Մրանք կոչվում են նաև Երից մանկանց երգաշարք...

Ապաշխարութիյան Հարցերը շարակնոցում զբաղեցնում են 98-167 էջ: Ըստ որում այս էջերում են տեղադրված Քառասնորդաց պահոց շարաթ և կիրակի օրերի կանոնները (Նարակնոց, Վաղարշապատ, 1888):

Հանգստեան կամ ննջեցելոց հարցեր

Հանգստյան կամ ննջեցելոց Հարցերն ութն են ըստ ութ ձայնի և երգիւմ են միայն ուրբաթ օրերին, բացի Առաջավորաց ուրբաթից, որը Հովհանն մարգարեի տոնն է և ունի Հատուկ Հարց՝ Դկ Ստեղի՝ «Որ զանճառելի ծածկապէս խորհուրդ տնօրէնութեան...»:

Հանգստյան Հարցերի երգեցողութիյան կարգը հետևյալն է:

Եթե օրվա ձայնը ԱԶ է, Հարցը՝ ԳԶ է:

Եթե օրվա ձայնը ԱԿ է, Հարցը՝ ԳԿ է:

Եթե օրվա ձայնը ԲԶ է, Հարցը՝ ԳԶ է:

Եթե օրվա ձայնը ԲԿ է, Հարցը՝ ԲԿ է:

Եթե օրվա ձայնը ԲԿ է, Հարցը՝ ԲԶ է:

Եթե օրվա ձայնը ԳԶ է, Հարցը՝ ԲԶ է:

Եթե օրվա ձայնը ԳԿ է, Հարցը՝ ԱԶ է:

Եթե օրվա ձայնը ԴԶ է, Հարցը՝ ԱԿ է:

Եթե օրվա ձայնը ԴԿ է, Հարցը՝ ԱԶ է:

Եթե օրվա ձայնը ԴԿ է, Հարցը՝ ԳԿ է:

Հանգստյան Հարցերի Համար տև և տոնացույցի Հրահանգը՝ էջ 110.

«Եւ զՈւրբաթ աւուրց Հարցսն՝ այսպես ասա: Յորժամ աւուր ձայնն ԱԶ լինի Հանգստեան ԴՋ ասա, որ փառօք հօր: Եւ յորժամ

ԳԶ լինի աւուր ձայնն դու ԱԶ ասա: Օրհնեալ ես դու Քրիստոս: Նոյնաէս երբ աւուր ձայնն ԱԿ լինի, դու ԳԿ ասա, Բանդ Աստուած: Եւ յորժամ ԳԿ լինի ձայնն, դու ԱԿ ասա: Գոհարանեմք: Նոյնպես յորժամ աւուր ձայնն ԲԶ լինի, դու ԳԶ ասա Օրհնեմ զքեզ Հայր: Եւ յորժամ ԴԶ լինի ձայնն, ասա, Որ թագաւորդ, իսկ յորժամ աւուր ձայնն ԲԿ լինի, կամ ԴԿ դու զաւուր ձայնին ասա, ԲԿ Արարիչ և մարդասէր, և ԴԿ յափտենից Աստուած»: (Տօնացուց. Երուաղէմ 1970 էջ 160):

ԱՀԱ և Հանգստյան Հարցերի գործածության կարգը:

Հանգստյան Հարց երգվում է նաև Զատկի մեռելոցին, իսկ ԱՍարգայից Հետո եկող չորեջարթի և ուրբաթ օրերին, անկախ օրվա ձայնից, երգվում են ԳԶ «Օրհնեմք զքեզ Հայր...», ԳԿ «Բանդ Աստուած, որ «ի ծոց Հօր...» և ԴԿ «Յափտենից աստուած և արարիչ...» Հանգստյան Հարցերը:

Կանոն Հանգստեան հարցից ըստ ուրն ձայնից կարգաւ.

Հ. ԱԶ «Օրհնեալ ես դու Քրիստոս...»:

Հ. ԱԿ «Գոհարանեմք զքեզ...»:

Հ. ԲԶ «Որ թագաւորդ ես...»:

Հ. ԲԿ «Արարիչ և մարդասէր...»:

Հ. ԳԶ «Օրհնեմք զքեզ...»:

Հ. ԳԿ «Բանդ աստուած որ ի ծոց Հօր...»:

Հ. ԴԶ «Որ փառօք Հօր...»:

Հ. ԴԿ «Յափտենից աստուած...»:

Շարակնոցում Հանգստյան Հարցերն անմիջապես Հաջորդում են Հանգստյան շարականներին և զրադեցնում են էջ 490-525: (Շարակնոց, Վաղարշապատ, 1888թ.):

«Եկեալքս» քարոզը և «Մեծացուացէ» շարականները

Հարցի շարականին Հետևում է «Եկեալքս» քարոզը և ապա՝ մաղթանք ըստ պատշաճի: Տերունական մաղթանքը փոխվում է՝ ըստ օրվա խորհրդի, ինչպես գիշերայինի պարագային.

«Հզօր յաղթող սքանչելագործ սուրբ մեծի...»

Մարտիրոսաց և Պահոց մաղթանքը նույնն է, փոխվում է միայն,

վերջավորությունը.

- Ցողեա Տէր գցող բարերար ողորմութեան քոյ ի մեղուցեալ անձինս մեր շիջո՞ զրոց Հնոցի յանցանաց մերոց, և փրկեա զմեզ ի յափտենական Հրոյն:

Արա՝ արժանի ընդ երիս մանկունսն և ընդ երանելի սուրբ վկայսն օրհնել զքեզ, գովել եւ քեզ գոհութիւն և փառս մատուցանել, Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ, այժմ...»

ՄԱՂԹԱՆՔ ՊԱՀՈՅՑ

Այս մաղթանքը կրկնվում է նույնությամբ մինչև «Օրհնել զքեզ...», ապա վերջին մասը փոխվում է. «Գովել եւ ասել. Աստուած, քաւե՛ա զիս զմեղաւորս ի մեղաց, և կեցո՛»:

«Եկեալքս» քարոզի և Հաջորդող մաղթանքների մասին գեղեցիկ մեկնություն ունի Խ. Անձևացին իր «Մեկնութիւն աղօթից» աշխատության մեջ, էջ (132-140):

ՄԵԾԱՑՈՒՄՑ

Հստ Մ. Օրմանյանի՝ մինչև 13-րդ դարի վերջերը «Մեծացուացէն» առանձին կարգ չի եղել, այլ «Յուղաբերից» կարգի մաս է կազմել, նշանակում է, թե այն Կիրակի օրերին է միայն երգել:

Այս մասին ավելի պարզորդ գրում է Օձնեցին իր 24-րդ (ի՛դ) կանոնի մեջ.

«Վասն աւուր միաշաբաթուն» ճառում: «Վասն Է՞ր ասեմք զինի Հարցին՝ զմեծացուացէն...»: «Ճմեծացուացեն սուրբ կոյսն Մարիամ Աստուածածինն է ասացեալ, վասն այն յետ Հարցին՝ Մեծացուացէ է կարգեալս» գրում է Խ. Անձևացին՝ կրկնելով Օձնեցու վերոհիշյալ ճառի խոսքերը:

Նույնը ավելի ուշ կրկնում է Մատթեոս դպիրն իր «Ժամակարգութիւն» աշխատության մեջ՝ 36-րդ էջում:

Իսկ Գ. Ավետիքյանն իր «Բացատրութիւն շարականաց» գրում գրում է այսպես. «Մեծացուացէ է շարական յարմարեալ առ երդ Ա. Աստուածածինն, որ պաշտի յառաւոտեան ժամուն, և ի ընումն ասէին միայն ի Կիրակէս և յայլ տերունական տօնս, իսկ այժմ յամեննայն օր»:

Մեզ Հայտնի է նաև, որ «Մեծացուացէ»-ի ամենօրյա գործածության կարգը մտցրել է Գր. Անապարզեցին (1294-1307): Վերջինս

գրել է նաև բազմաթիվ մեծացուսցէ շարականներ, որոնք հետագյում դուրս են մնացել շարակնոցից, իրրև պարականոն երգեր: Այդ «Մեծացուսցէները» մեկտեղված են Սահակ Ամատունու «Պարականոն կամ անվավեր շարականներ» աշխատության մեջ՝ Հրատարակված 1911թ. Վաղարշապատում:

Մինչև Մեծացուսցէ շարականի երգեցողությունը ասվում է «Մեծացուսցէ» փոխը, որը բաղկացած է հետևյալ երեք մասերից.

1. Երգ Մարիամ Աստուածածին՝ ըստ Ղուկասի Ավետարանի (Ա. 47-55),

«Մեծացուսցէ անձն իմ զՏէր, և ցնծասցէ Հոգի իմ Աստուծով փրկչաւ իմով» (8 տուն):

2. Օրհնութիւն Զաքարիայի Հօրն Յովհաննու Մկրտչի. Օրհնեալ Տէր Աստուած Խպրայելի, որ յայց ել եւ արար փրկութիւն ժողովրեան իւրոյ...

(10 տուն): Ղուկաս Ա 68-79:

3. Սիմէոնի օրհնութիւնն՝ ըստ Ղուկաս Բ 29-32.

- Արդ արձակեա զծառայս քո, Տէր, ըստ բանի քում ի խաղաղութիւն, զի տեսին աչք իմ զփրկութիւն քո, զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդոց:

Հնում այս փոխը լրիվ ասվել է, այժմ ասվում է մեկ կամ երկու տուն միայն, որին Հաջորդում է «Մեծացուսցէ» շարականը:

Ահա մեր կանոնական «Մեծացուսցեների» ընդհանուր պատկերը:

Ա2 ունի 11 Մեծացուսցեներ.

1. Յանձառ փառաց: Խոնարհեցար, էջ 98:
2. Այսօր նոր ժողովուրդք (Դարձուած), էջ 76:
3. Որ ընտրեցար ի սկզբանէ (Դարձ.) էջ 88:
4. Որ զաւետիս Հոգւոյն... էջ 99:
5. Մեծացուսցանեմք (Դարձուած), էջ 100:
6. Ո՞ր զհրեշտակին (Դարձուած), էջ 100:
7. Ըզքեզ երևեալ դուռն... էջ 101:
8. Ո՞ր ըզբանն աստուած բաւական... էջ 102:

9. Երանելի աստուածասէր (Դարձ.), էջ 59:

10. Յարուցելոյն ի մեռելոց... էջ 506:

11. Ուրախ լեր յոյժ... էջ 173:

ԱԿ Անծացուսցեներ 6

1. Ուրախ լեր Աստուածածին... էջ 109:
2. Անարատ տաճար... էջ 110:
3. Ո՛վ գերահազ ծաղիկ... էջ 111:
4. Զանձառելի ըզլոյս... էջ 111:
5. Որ ըզկեանքն անմահարար... էջ 113:
6. Նոր խորանիդ արեգականն... էջ 222:

Բ2 Մեծացուսցեներ 6

1. Ըզքեզ կոյս և մայր... էջ 120: 4 տուն.
2. Բանն առաքեալ ի Հօրէ... էջ 121:
3. Զքեզ Հայր յառաջ քան... էջ 251:
4. Ըզկուսութիւնդ քո Աստուածածին... էջ 152:
5. Որ ըզկեանքն անմահարար... էջ 120:
6. Նոր խորանիդ արեգականն... էջ 253:

ԲԿ Մեծացուսցեներ 5:

1. Որ ողորմեցար ի մեղըս ծնեալ... էջ 124:
2. Սին լուսոյ և ամայ Հովանի... էջ 123:
3. Ուրախ լեր մայր լուսոյ Մարիամ... էջ 125:
4. Ըզքեզ Աստուածածին... էջ 126:

Գ2 Մեծացուսցեներ 6:

1. Զանձառելի լուսոյ մայր... էջ 134:
2. Ուրախ լեր Աստուածածին յոյս... էջ 135:
3. Սուրբ զաստուածածինն օրհն... էջ 135:
4. Լոյս լուսոյ մայր և կենարար... էջ 136:
5. Անըսկզբանական բանին Հօր (Դարձ) էջ 137:
6. Աստուածածին երկնային դուռն... էջ 138:

ԳԿ Մեծացուսցեներ 6:

1. Աստուածածին խորան լուսոյ... էջ 28:
2. Ամենագովելի և քան զերկինն... էջ 265:

- Աստուածատունկ խնկաբեր ծառ:
- Մայր և կոյս, աղախին Քրիստոսի... էջ 266:
- զԱստուածածինն և զմիշտ կոյսն... էջ 264:
- Լեառն վիմածին աղբիւր յորդառատ... էջ 517:

ԴՉ Մեծացուացեներ 16:

- Նոր Սիօն ծրնեալ մանկունք... էջ 10:
- Առաւոտ խաղաղութեան և արուսեակ... էջ 13:
- Որ ի բարձրութիւնս երկնից... էջ 14:
- Ուրախ լեր Մարիամ... էջ 17:
- Մագումըն հրաշալի որ անյայտ... էջ 21:
- Ըգեեզ օրհնութեամբ մեծացուցանենք... էջ 146:
- Անարատ կոյս Աստուածածին... էջ 148:
- Աստուածածին մայր լուսոյ... էջ 149:
- Ուրախացիր Աստուածածին վեր... էջ 149:
- Ուրախացիր Աստուածածին... էջ 151:
- Աստուածածին գերագոյն... էջ 151:
- Խորանայարկ կամարանման ... էջ 353:
- Աստուածածին գերագոյն... էջ 363:
- Մայր լուսոյ Մարիամ սուրբ կոյս... էջ 394:
- Աթոռ Քրովբէական... էջ 53:
- Բազմերամք վեհագունից (Դարձ.)... էջ 519:

ԴԿ Մեծացուացեներ 14:

- Նահապետացն Աբրահամու... էջ 9:
- Աստուածածին սուրբ կոյս.. էջ 22:
- Աստուածածին սուրբ կոյս անհարս.. էջ 162:
- Ըգեեզ Աստուածածին աղբիւր... էջ 163:
- Աստուածածին և սրբուհի... էջ 164:
- Որ անտես և անքննին... էջ 36:
- Աստուածածին պայծառ քան զերկինս... էջ 161:
- Աստուածածին մայր և կոյս... էջ 162:
- Որ զանձառելին ծընար... էջ 165:
- Ի քեզ եմք ապաւինեալ... էջ 165:
- Աստուածածին տաճար լուսոյ... էջ 204:

12. Աստուածածին մայր լուսոյ... էջ 279:

13. Աստուածածին ամպ լուսաւոր... էջ 359:

14. Մարգարէն ի փորոյ կիտին... էջ 221:

Այս «Մեծացուացէների» մեջ նկատելի են այնպիսիք, որոնք հատուկ են այս կամ այն տոնին միայն: Կան նաև այնպիսիները, որոնք տարվա ընթացքում երգվում են բազմաթիվ անգամներ:

Աջ Մեծացուացէներից Հատուկ են Հոգեգալատոյանը՝ «Այսօր նոր ժողովուրդք», Բուն Բարեկենդանինը՝ «Որ ընտրեցար», Մաղկազարդինը՝ «Ուրախ լեր յոյժ», Գյուտ Խաչինը՝ «Երանելի աստուածասէր», իսկ «Յարուցելոյն ի մեռելոց»-ը Հանգստոյանն է:

Ակ երեք «Մեծացուացեներ» Հատուկ են նոր Կիրակիի, Վարդագափի և Աղուհացից Բ Կիրակիի Համար: Ահա այդ «Մեծացուացէները»՝ «Նոր խորանիդ արեգականն», «Զանձառելի ըզլոյս...», «Որ ըզկեանքն անմահարար...»:

Բջ երեք «Մեծացուացեներ» Մննդեան շարականներ են՝ «Ըգեեզ Հայր յառաջ», «Բանն առաքեալ ի Հօրէ», «Զքեզ կոյս և մայր...»:

Բկ «Որ ողորմեցար»-ն Աստուածածին ծննդյան ողորմյան է, «Սիւն լուսոյ» Մննդյան շարական է, իսկ «Ուրախ լեր մայր լուսոյ Մարիամ»-ը Աղուհացից Գ Կիրակիին է:

Գջ Մեծացուացեներից «Զանձառելին», «Ս. զԱստուածածինն» և «Անսկզբնական»-ը ձաշու շարականներ են:

Գկ Մեծացուացէներից՝ «Ամենագովելին»-ն ձաշու շարական է, «Լեառն վիմածին»-ը Հանգստոյան շարական է, իսկ «Աստուածատունկ խընկաբերը» Հատուկ է Մեծ Պահոց Գ Կիրակիին:

Դջ-ից մեկը Տեառնընդառնի մէծացուացեն է՝ «Աթոռ քրովիէական», մյուսը՝ «Աստուածածին գերագոյն»-ը Մեծ Պահոց Կիրակիի Մեծացուացէն է, երկուսը՝ Վերափոխման շարական է, իսկ «Մարգարէն ի փորոյ զետին»-ը վերցվել է Սյունեցու Դկ Ավագ օրհնունից «Որ անտես»-ը՝ Մննդյան է:

Մեծացուացէներն այժմ Հարում են Հարցի ձայնին, բացառություն են կազմում միայն երկուսը՝ Մաղկազարդի՝ «Ուրախ լեր յոյժ»-ը Աջ և Գյուտ Խաչի Մեծացուացեն՝ «Երանելի աստուածասէր», Աջ, իսկ Հարցը, «Որ «Փափագելի տենչչամբ», Բջ:

Թողոր Մեծացուացէները բազկացած են մեկ պատկերից՝ Կրեք-

տներով: Բացի թշ «Զքեզ կոյս»-ից, որն ունի չորս տուն: Մայր Աթոռում մինչև 1965 թվականի վերջնորը Մեծացուստէի առաջին տունը ևս կրկնվում էր:

Քարոզ Ս. գլուխուածածինն և աղոթք «Ընկեալ տէր»-ը, լի օրերին հաջորդում են Մեծացուստէ շարականին, իսկ կիրակի օրերին Մեծացուստէին հաջորդում է քարոզ Յուղաբերիցի «Վասն սուրբ տեղւոյս»-ը համապատասխան եղանակով:

Խողաբերից կարգը

«Յուղաբերիցի կարգը» հնուց ի վեր կատարվում է միայն կիրակի օրերին:

Խոսրով Անձնացու մեջքերած քարոզի և մեր ժամագրքի նույն քարոզի մեջ կանանչան տարրերություններ:

Հաստ Խ. Անձնացու «Վասն սուրբ տեղւոյս շինութեան և բարեկարգութեան ուխտիս տէր աղաչեացուք»: «Սուրբ տեղի ասէ եկեղեցւոյն շինութիւն է ժողովրդոցն յաճախութիւն, և որ ի ժողովրդոցն ուղղութիւնք ըստ խրատու գրոց սրբոց...»:

Տե՛ս Խ. Անձնացու՝ «Մեկնությունը», էջ 142-143: Քարոզից հետո կա մի կարծ աղոթք՝ «Դու ես թագաւոր յափառեան յափառենից, Քրիստոս Աստուած մեր», որին հաջորդում է մի փոխ, իբրև ավետարանի սաղմոս, որ է՝ «Եղիցի անուն տեսառն օրհնեալ...», և ապա՝ «Փառք և երկրպագութիւն»:

«Յուղաբերիցի» հիմնական երգերից է նաև, «Արի տէր, օգնեա մեզ»-ը՝ երկու տներից բաղկացած: Վերջինն նույնպես սաղմոս է: Այս երգերի ավարտից հետո երգվում է «Թագաւորեացէ տէր յափառեան»-ը, և ապա Սարկավագը ձայնում է՝ Օրթի:

Քւն. Խաղաղութիւն ամենեցուն:

Դպր. Եւ ընդ Հոգուոյդ քում:

Մրկ. Երկիրածութեամբ լուարուք և այլն, ըստ կարգի, և ապա ընթերցվում են Խողաբերից ավետարաններն ըստ աւուր պատշաճի:

ԲԿ - ԴԿ Մատթ. ԻՂ 1-20: Եւ Յերեկոյի շաբաթուն:

ԹԶ - ԴԶ - Մարկ. Եւ իբրև երեկոյ եղեւ. ԺԵ 42-ԺԶ-8:

ԱԿ - ԳԿ Ղուկ. ԻԳ 50 ԻԴ 12. Եւ ահա այր մի անուն...

ԱԶ - ԳԶ - Ցով. ԺԹ 38 -Ժ 18: «Յետ այսորիկ աղաչեաց...»:

Ցինանց յոթ կիրակիներին, Զատկից մինչև Հոգեգալուստ, պետք է ընթերցվի միայն սրանց Հարության մասը՝ զանց առնելով:

Թաղման մասը: «Յուղաբերից» կոչված ավետարանը իր մեջ ամփոփում է նաև, Տաճարի, Հանգստյան, Թժկության, Խաչելության, Թաղման, Դոնքացեքի և այլ պատշաճի ավետարաններ:

Հարության սովորական կիրակիներին, ինչպես նաև Տերունի տոնախմբություն կատարվող կիրակիներին բացի Խաչի տոներից, ընթերցվում են Յուղաբերիցի ամրողական մասերը՝ Թաղման և Հարության: Իսկ Խաչի և Մեծ Պահոց կիրակիներին ընթերցվում են միայն Թաղման մասերը: Մեծ Պահոց շրջանում կատարվող «Յուղաբերիցի» կարգը կրում է որոշ փոփոխություններ: Այսպես՝ Քարոզը «Վասն սուրբ տեղւոյս»-ը, ասվում է թիվ, «Արի տէր»-ը և «Թագաւորեացէ» երգերը երգվում են թեթև եղանակով, իսկ ավետարանին հաջորդող՝ «Փառք յարութեան քո տէր» երգի փոխարեն երգվում է «Զամենայն աւուրս» երգը, որը կրկնվում է երեք անգամ, վերջին անգամ ձայնը բարձրացնելով, և ապա՝ «Ի գիշերի» և «Ամստ օրհնեցէք»-ը թիվ: Մրանք բոլորը սաղմուներ են:

Հարության կիրակիներին ավետարանի ընթերցումին հաջորդում է, ինչպես ասվեց, երգ՝ «Փառք յարութեան քո տէր»: Զարկին սրան կից երգվում է նաև «Լուսապայծառ Հրեշտակն», Հանդիսավոր եղանակով՝ գեղեցիկ երգը:

Ահա և ուրիշ տոների համար գրված երգերը.

Մաղկազարդի - «Դասք լուսեղեն գուարթնոցն...»

Համբարձման - «Համբարձէք իշխանք...»:

Գալստեան Ս. Հոգւոյն - «Իջեալ Հոգին...»:

Վարդավառին - «Թնծա թափորու...»:

Խաչի - «Այսօր եկեալ կամաւ տէրն ի Խաչ...»:

Մննդեան - «Հոյլք Հոգեղէնք ընդ Հովհիւն...»:

Տեպոնդառաջի - «Քառասնօրեայ տղայ...»

Այս երգերից հետո սարկավագն աղդարարում է «Զուարճացեալք», ապա Աղոթք «Ամենակեցոյց ճշմարիտ...»: Մրանով փակվում է «Յուղաբերից»-ի կարգը:

Յուղաբերիցի կարգը հնուց ի վեր ունեցել է կատարման հատուկ հանդիսավորություն: Աշխատենք ցուց տալ այդ կարգի կատարման կերպը:

Երբ աշակերտի դասն սկսում է երգել «Թագաւորեացէ»-ն, ժամարարը մոմակալների և բուրվառակիր սարկավագի ուղեկցությամբ սպիտակ շուրջառով, ավետարանը ձեռքին, դուրս է զալիս

ավանդատնից և բարձրանում Ավագ Խորան Խնկարկությունը կատարվում է երեք անգամ, նախ՝ դուրս գալու պահին, երկրորդը՝ բեմի վրա, երրորդը՝ ժողովրդին:

Ըստ «Արարողութիւնք ժամատեղեաց Մաքենեաց ուխտին» «Ժամարարն տայ զխաղաղութիւն Աւետարանաւն և ապա դնէ զայս ի վերայ գրակալին»:

Ուրեմն «Յուղաբերից» ավետարանն ընթերցվում է գրակալի վրա, վերջինս դրվում է խորանի աջ կողմում: Ավետարանի ընթերցումից հետո սարկավագը պետք է խնկարկի հոգևոր դասին, որից հետո բարձրանում է սեղան՝ կանգնելով ժամարարի կողքին՝ դեմքը դեպի արևելք և «Զուարճացեալք» քարոզը բարձր ձայնով արտասանի. իսկ ժամարարը ասում է «Ամենակեցոյց» աղոթքը, որից հետո նույն թափորով իջնում են և գնում դեպի ավանդատուն:

«Յուղաբերիցի» մեկնությունն ըստ «Ժամատեղաց» -ի:

«Իւղաբերիցի մասն այն զկնի Մեծացուսցին գրեցաւ, որպէս ծնաւ ի կոյս ի մօրէ դարձեալ յարեաւ ի կոյս գերեզմանէն: Իսկ զԱւետարանսն ի խորանէն դուրս բերեմք խնկօք և լապտերօք, զի խորանն՝ գերեզմանի նշանակ է և երկոքին լապտերքն՝ զերկուս հրեշտակս նշանակեն, և խունկ՝ զանուշահոտութիւն Քրիստոսի նշանակէ, իսկ զԱւետարանին Համբուրեն այսպէս իմանամք, զի յորժամ մետասան աշակերտքն տեսին զՏէրն ի Գալիլիա երկրպագին նմա...»:

Խ. Անձնացին գեղեցկորեն մեկնում է «Զուարճացեալքս» քարոզը և «Ամենակեցոյց» աղոթքը, որը Անձնացու մոտ գրված է՝ «Ամենապայծառ և ճշմարիտ Յարութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ»: (Խ. Անձնացի, «Մեկնութիւն աղօթից», էջ 144-147):

Յուղաբերիցի կարգի մասին հոգեշնորհ Տ. Խաժակ վարդապետը՝ (այժմ Արքեպիսկոպոս) գրել է պատմական մի ակնարկ, որն իրեւ օժանդակ աղբյուր դնում ենք մեր աշխատության վերջում:

«ՊՂՈՐՄԵԱ» սաղմու և շարական

Ըստ հնագույն սովորության՝ «Ողորմեան» հետևում էր հարցին: Այսօրվա սովորության համաձայն՝ «Ողորմեան» սովորական օրերին հաջորդում է «Մեծացուսցէ» շարականին, իսկ կիրակի օ-

րերին՝ «Յուղաբերիցին»:

Փոխը Սաղմու Մ-ն, է որը բաղկացած է քսան տներից, իսկ շարականը՝ «Ողորմյան», կանոնի չորրորդ միավորն է, և պետք է ենթադրել, որ այն նաև հնագույն միավորներից է, ինչպես հարցի շարականը: Սրա վառ ապացուցն է Մաշտոցին վերագրվող Ապաշխարութեան երգերի այն խումբը, որոնք Նարակնոցում դրված են իրեւ Ողորմյաներ և միաժամանակ՝ իրեւ Քաղվածոց օրհնություններ Պահոց օրերի համար:

Ողորմյաները հիմնականում մեկական պատկերից են բաղկացած՝ երեք տներով: Ունենք նաև չորս կամ հինգ տներից բաղկացած պատկերներ:

Չորս տներից բաղկացած ութ՝ «Ողորմնաներ» կան, իսկ հինգ տներից բաղկացած՝ հինգ «Ողորմեաներ»: Ինչպես նաև երկու պատկեր ունեցող երեք Ողորմեաներ: Աւա այդ Ողորմեաները.

ա) Պահոց թի. ստեղի հարցի Ողորմեան:

«Եկեսցէ տէր ի վերայ մեր... և»

«Տէր ըզուր միւսանգամ քո գալստեանդ...»

Պահոց ԴԿ. ստեղի վերջին հարցի Ողորմյան.

Ողորմ. «Զարհուրեալ դողացաւ ամենամեղ անձն իմ»:

Ողորմ. Ամենակալ քաւեա զմեղս իմ...

Երկուսն էլ երգվում են ծանր՝ ստեղի են և երգվում են Մեծ Պահոց վերջին ուրբաթ օրը՝ ատյանում՝ ծնկաչոք:

գ) Յովնանու Մարգարէի հարցի Ողորմեան.

Ողորմ. ԴԿ. «Ողորմութեանց բաշխող Քրիստոս...»

Ողորմ. «Կանխաեալ Յովնանու առաքելով...»

Որոշ հին ձեռագիր շարականոցներում հաճախ «Ողորմյա» շարականը նշվում է՝ «Թիւնս իմ»: Այս հապավումը, որը վերցվել է Մսաղմուի առաջին տան՝ («Քաւեա զանօրենութիւնս իմ») տողից, հետագայում տեղ է գտել նաև մեր տպագիր շարականոցներում: (Տե՛ս Նարակնոց, 1888 թիվ, Վաղարշապատ, էջ 113, 119, 124):

Այսպես՝ հանդիպում ենք նաև «Տէր յերկնից» սաղմոսի առաջին տնից՝ ի բարձանց ձեւը:

«Ողորմեա» շարականը ձայնով ընդհանրապես հարում է հարցին: Բացառություն են կազմում հետևյալ հարցերը, որոնց «Ողորմյա» և «Տէր հերկնից» շարականները ձայնը փոխում են.

1. Ստեղականնոսի հարցը՝ «Հնդ երկնային»-ը ԳՁ, իսկ Ողորմեան՝

- «Առաքեա ի մեզ տէր»-ը և Տէր յերկնից՝ «Ով երջանիկ ճառագայթ» Գկ են:
2. Մաղկազարդի կանոնի Հարցը՝ «Որ ի Քրովքական» -ը Դկ է Ողորմեան՝ «Ուրախ լեր եկեղեցի սուրբ»-ը և Տեր Հերկնիցը՝ «ՊՔրիստոս թագաւորն» Բկ ստեղի են:
 3. Ավագ Հինգամբթիի կանոնի Հարցը՝ «Լոյսդ ի հայրական»-ը՝ ԲԶ է, իսկ Ողորմեան՝ «Առկողդ ըզոյս» - և Տեր Հերկնիցը՝ «Որ անսկիզբն» է ԳԶ են:
 4. Վարդապառի կանոնի Հարցը՝ «Զանճառելի խորհուրդ»-ը ԱԿ է, Ողորմեան՝ «Ի թափոր ի լերինն»-ը և Տեր Հերկնիցը՝ «Քրիստոս ԱՄ» ԴԶ են:
 5. Ծննդյան ուժօրեքի վեցերորդ օրվա կանոնի Հարցը՝ «Որ խոնարհեցար»-ը ԴԿ է, իսկ Ողորմեան՝ «Հրաշափառ ծնունդ»-ը և Տեր Հերկնիցը՝ «Այսօր յայտնեցաւ»-ը ԳԿ են:
 6. Աստվածածնի ծննդյան կանոնի Հարցը՝ «Որ գնախազրեալսն յառաջապյն» ԴԿ է, իսկ Ողորմեան՝ «Որ «Ողորմեցար»-ը և Տեր Հերկնիցը «Այսօր ցնծան» -ը ԲԶ են:
 7. Ծննդյան ծրագալույցի Հարցը՝ «Որ դասուց երկնաւորացն»-ը ԴԶ է, իսկ Ողորմեան՝ «Անկանիմք առաջի քո»-ն և Տեր Հերկնիցը՝ «Թրչնեմք զքեզ»-ը ԲԶ են:
 8. Խաչի յոթիներորդ օրվա Հարցը՝ «Այսօր զենար»-ը ԴԶ է, իսկ Ողորմյան՝ «Ով քարաթեն»-ը և Տեր Հերկնիցը՝ «Ով պահապան»-ը ԳԿ է:
 9. Բեթղեհեմի մանկանց Հարցը՝ «Այսօր անմեղ»-ը ԴԶ է, իսկ Ողորմյան՝ «Այսօր տղամք»-ը և Տեր Հերկնիցը՝ «Այսօր ընդ Դասս» -ը ԳԶ են:
 10. Հրեշտակապետաց Հարցը՝ «Անըսկիզբն Հայր»-ը ԳԿ է, իսկ Ողորմյան՝ «Որ ի Հրեղէն» -ը և Տեր Հերկնիցը՝ «Անմահ արքային» ԴԶ են:
 11. Վարագա խաչի կանոնի Հարցը՝ «Որ ըզոյս անճառելի»-ն ԳՅ, իսկ Ողորմյան՝ «Քեզ Քրիստոսի»-ն և Տեր Հերկնիցը՝ «Հրաշափառ տեսութիւն»-ը ԳԶ են:
 12. Ղազարոսի Հարության կանոնի Հարցը՝ «Աստուածային կոչմաք ԲԶ է, իսկ Ողորմյան՝ «Որ ի չորեքերպեան կենդանեաց...»-ը և

Տեր Հերկնիցը՝ «Աղբիւր անմահութեան»-ը ԴԶ են:

13. Խաչի երկրորդ օրվա կանոնի Հարցը՝ «Այսօր պատուական խաչիւ քո»-ն ԳԿ է, իսկ Ողորմյան՝ «Փայտ կենաց»-ը և Տեր Հերկնիցը՝ «Անուանեալ փայտ գիտութեան» -ը ԳԶ են:

Իսկ Մեծն Ներսեսի կանոնի մեջ՝ «Այսօր տօնէ եկեղեցի» Հարցը ԴԶ է, փոխվում է միայն Տեր Հերկնիցը՝ «Այսօր զուարճացեալ տօնեն երկնայինք» ԳԶ դարձված է:

Այսպիսով, Ողորմյա շարականը կանոնի կարևոր և հնագույն միավորներից է, որն իր մեջ հիմնականում արտացոլվում է օրվա խորհուրդը:

Հնագույն ողորմյաները մաշտոցյան Ապաշխարության շարականներն են, որոնք ոչ միայն գործածվում են իրեւ Պահոց Հարցերի Ողորմյաներ, այլ նաև միանալով իրար հետ կազմում են Ապաշխարության Քաղվածոց օրհնություններ և երգվում են պահոց օրերին, իրերև օրվա օրհնության շարականներ՝ ըստ օրվա ձայնի առանց սկսվածքի:

Քարոզ «Երկրապահեմք Քեկ Տէր Աստուած մեր»

Ողորմեա շարականին հաջորդում է «Երկրապահեմք Քեզ Տէր Աստուած մեր» քարոզը:

Այս քարոզը, ըստ Օրմանյանի ավելի շատ ունի աղոթքի նկարագր, քան հրամայականի, ինչպես սարկավագին վերապահված ուրիշ քարոզներ:

«Երկրապահեմք» քարոզի նման են նաև Ս. պատարագի «Գուութիւն» երկարաշունչ քարոզն ու երեկոյան «Հասեալքս ի ժամ երեկոյիս» քարոզը:

Խ. Անձնացու մեկնության մեջ այս քարոզի մասին կարգում ենք հետևյալը. «Երեք են վասն որոյ երկրապահել ասէ. 1) Զի պահեաց յերկարութիւն գիշերին. 2) և զի կանուխ գալի ի սուրբ եկեղեցի արժանացոյց. 3) և զի յառաւօտին պաշտօն ժամանեցոյց...»:

Քարոզի յուրաքանչյուր պարբերություն գեղեցկորեն մեկնվում է: Եկեղեցին, հետևաբար կառուցվել է տիրոջը խոստովանելու և գուարանություն մատուցելու նպատակով: Ավելի մանրամասն մեկնությունը տես. Խ. Անձնացու «Մեկնութիւն աղօթից», էջ 150-151:

Երկրապահեմք քարոզին Հարում է նաև մի մաղթանք՝ Պահոց, Արքոց և Տերունի տոների համար

Մաղրանք Տէրունական տօնից

- Ողորմած, գթած՝ ճշմարիտ սուրբ մեծի Յարութեանն-Քրիստոսի Աստուծոյ մերոյ, վայել է փառք...

Մաղրանք պահոց

- Ողորմութեամբ և գթութեամբ քով, լուր մեզ, Տէր և ողորմեա, ներեա, քաւեա և թող զմեղս մեր: Արժանաւորեա գոհութեամբ փառաւորել, զհայր և զմրդի և զՍուրբ Հոգիդ, այժմ և միշտ...

Մաղրանք Տօնից Սրբոց.

- Բարեխօսութեամբ և եղօթիւք Սրբոց Մարտիրոսացն՝ որոց այսօր է յիշատակ...

Փոխ Տէր յերկնից

Այս փոխը կազմված է երեք սաղմուներից՝ դրանք են ՃԱՂ (148), ՃԽԹ (149) և ՃԽ' (150) ընդամենը 28 տներ: «Օրհնեցէ՞ք զՏէր յերկնից» փոխից առաջ մաղթանքի ավարտին աավում է Ա-Լէլուխա, Ալէլուխա և ապա՝ փոխը:

Տէր յերկնից սաղնու և շարական

Փոխին հաջորդում է «Տէր Հերկնից» շարականը, այն հիմնա-կանում մեղեղիով հարում է հարցի շարականին և ունենում է երեք տուն, թեև կան Տէր յերկնիցներ, որոնք ունեն չորս հինգ, երրեմն նույնիսկ վեց տներ:

Մեր շարակնոցում, ինչպես «Ողորմյաներից» կազմված, այն-պես էլ «Տէր յերկնիցներից» բաղկացածք քաղվածոց օրհնութիւններ են կազմվել, օրինակ՝ Հարության քաղուածոց օրհնութիւնները, որոնք բաղկացած են վեցական պատկեր «Տէր Հերկնիցներից»: Սրանք երգիում են, որպես օրհնութիւններ տարին մեկ անգամ, այն է՝ Զատկին հաջորդող երեքշարթից մինչև շարաթ օրը ներառյալ: Այդ օրը տոն է Ս. Հովհաննու Կարապետի գիշատման, իսկ հաջորդ օրը Կիրակին կոչվում է Կրկնազատիկ կամ Նոր Կիրակի: Իսկ Մարտիրոսաց քաղվածոց օրհնութիւնները նույնպես կազմված են «Տէր Հերկնիցներից» և երգիում են բոլոր Սրբոց տոններին, եթե նրանք ըստ պատշաճի օրհնութիւններ չունեն:

Տէր Հերկնիցի մասին Ա. Անձնացին ունի հատուկ մեկնություն:

«Վասն օրհնութեան զըկնի Տէր յերկնիցին» վերնագրով: (Էջ 152)

Փառք ի բարձունա

Ժամագրքում այս օրհնությունը կոչվում է նաև «Օրհնութիւն առաւոտու» կամ «Օրհնութիւն զկնի Տէր յերկնիցին», ասացեալ յանմարմնոց, այլ եւ ի կոստանդնուպոլիսոյ սրբոյ ժողովոյն ՃՄ. (150) Հայրապետացն»:

Առաքելական ծագում ունեցող այս փառարանությունը գործածում են բոլոր քրիստոնյա եկեղեցիները: Երգի առաջին պարբերությունը, ըստ Ղուկասի Բ գլխի 14, առաջին անգամ երգել են Բեթղեհեմի երկնակամարում հրեշտակները՝ Հովհիվներին ավետելով Փրկչի հրաշափառ Ծննդյան Ավետիար: Նարունակությունը, ըստ ավանդության, ավելացվել է առաքյալների կողմից: Թեև այն կապվում է Կոստանդնուպոլիսո սուրբ ժողովի հետ (381թ.) սակայն այդ երգի մասին ավելի հին վկայություններ են հասել:

Խ. Անձնացու մեկնության մեջ ավելի քան հիսուն էջեր են նվիրված «Փառք ի բարձունսին»: Ինչ վերաբերում է այս երգի երկրորդ մասին՝ «Եւ յամենայն ժամ»-ին, այն վերապրվում է Եփեսոսի սուրբ ժողովին (431թ.): Լատին եկեղեցին չունի այս երկրորդ մասը: Նկատելի են նաև առաջին մասի լատին և Հայ եկեղեցու շարադրանքներում առկա տարրերությունները:

Ըստ լատին եկեղեցու շարադրանքի՝ «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն ի մարդիկ բարի հաճութեան գովեմք զքեզ, բարեբանեմք զքեզ, երկրպագեմք քեզ, մեծաւ քահանայապետու: Զքեզ Աստուծ անժնն, անհասանելի և միայն վասն մեծի փառաց քոց: Տէր, թագաւոր երկնային, Աստուծ հայր Ամենակալ: Տէր Աստուծ Հայր Քրիստոսի, գառին Անարատի, որ բառնայ զմեղս աշխարհի, ընկալ զաղաշանս մեր: Որ նատիս ի քերովքս, զի դու միայն սուրբ, դու միայն Տէր, Ցիստի Քրիստոսի Աստուծոյ ամենայն ստեղծեալ բնութեան, թագաւորին մերոյ, որով Քեզ փառք, պատիւ և երկրպագութիւն, Ամէն:

Այս տարրերակը կոչվում է հին լատինական կամ լատին առելական:

ԱՀա և երկրորդ լատին շարադրանքը, որը լատին եկեղեցու այժմյան գործածու տարրերակն է. «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն ի մարդիկ բարի հաճութեան, գովեմք զքեզ, օրհնեմք զքեզ, գոհանամք զքէն վասն մեծի փառաց քոց: Տէր

Աստուած թագաւոր երկնաւոր, գոհանամք զքէն վասն մեծի վառաց քոց: Տէր Աստուած թագաւոր երկնաւոր, Աստուած Հայր Ամենակալ, Տէր. Որդի միաժին Յիսուս Քրիստոս Տէր Աստուած Գառն Աստուծոյ որդի Հօր, որ բառնաս զմեղս աշխարհի, ողորմեաց մեղ, որ նստիս ընդ աջմէ Հօր ողորմեաց մեզ: Զի դու միայն Սուրբ, դու միայն Տէր, դու միայն բարձրեալ Յիսուս Քրիստոս ընդ Սրբոյ Հոգւոյն ի փառ Աստուծոյ Հօր. Ամէն»:

Համեմատության համար ստորև մեջ ենք բերում նաև Հայաստանյաց առաքելական եկեղեցու տարբերակը. որն այսօր գործածվում է.

«Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն: Եւ օրհնութիւն քեզ ի բարձունս, օրհնեալ ես, Տէր Աստուած մեր. օրհնեմք զքեզ և գովեմք զքեզ: Խոստովանիմք, Տէր, զքեզ և երկիր պատանեմք քեզ. փառաւորեմք զքեզ. գոհանամք, Տէր, զքէն, վասն մեծի փառաց քոց: Տէր թագաւոր, սուրբ երկնային, Աստուած և Հայր ամենակալ: Տէր և որդի Հօր միաժին Յիսուս Քրիստոս և սուրբ Որդի: Տէր Աստուած, Գառն Աստուծոյ և Որդի Հօր, որ առեր զմերս ի կուսէն: Ողորմեացր, բարձեր զմեղս աշխարհի. եւ արդ ընկալ զաղաշանս մեր: Սուրբդ, որ նստիս ընդ աջմէ Հօր, ողորմեաց մեզ: Զի դու միայն սուրբ, դու միայն բարձրեալ ես, դու միայն, Տէր մեր Յիսուս Քրիստոս: Տէր եւ Հոգի սուրբ որ ի փառ Աստուած ընդ Հօր. Ամէն»:

«Փառք ի բարձունսի» մասին Խ. Անձնացու մեկնության մեջ խոսվում է էջ 157-200-ում: Խսկ «Եւ յամենայն ժամ»-ի մասին, որք Եփեսոսի ծոլովի կողմից է խմբագրվել, խոսվում է 201-208 էջերում: Ըստ որում Անձնացու ստվարածավալ մեկնության մեջ բացատրվում է յուրաքանչյուր պարբերություն առանձին-առանձին: Համախ միայն մի մտքի Համար Հաջորդաբար տրվում է մի քանի մեկնություն:

Հանդիսավոր օրերին «փառք ի բարձունսը» երգվում է ատյանում՝ ծանր եղանակով, իսկ սովորական լի օրերին երգվում է դասերից, ավելի թեթև եղանակով:

«Փառք ի բարձունսին» Հաջորդում է մի կարծ մաղթանք՝ «Փառք պատիւ եւ երկրագութիւն...»: Ապա երգվում է երկու տուն սաղմոսից, որ տոնացույցն անվանում է «Առաւոտու երգ», սակայն «Առաւոտու երգ» կոչվում է նաև «Փառք ի բարձունս»-ը, այդ իսկ պատճառով Օձնեցին վերոհիշյալ երկու տուն սաղմոսները

անվանում է կցորդ, այսինքն, իրը Հավելված նախորդ երգին: Այս կցորդների մասին Օձնեցին իր ի՞Դ (24) կանոնի մեջ գրում է. «Արժան է ի Կիւրակէս զկնի փառք ի բարձանցն յարութեան ասել», որ է զջարութիւն Փրկչին օրհնեացուք, Փրկչին մերոյ օրհնեացուք ըզ յարութիւնն...»:

Օձնեցին այս կցորդների մասին գրում է նաև, որ դրանք հաստատում են ըստ շաբաթվա օրերի: Նույնը կրկնում է նաև Անձնացին՝ երկրորդելով Օձնեցու ասածները: (Տե՛ս, Օձնեցի, «Մեկնութիւն յաղագս կարգաց եկեղեցւոյ», էջ 87):

Պետք է ենթադրել նաև, որ Հիշյալ կցորդները շատացել են նաև 12-րդ դարում՝ Շնորհալու ժամանակներում: Հայաստանյաց եկեղեցին Տերունի տոների Համար այժմ ունի չորս կցորդ, որոնցից յուրաքանչյուրը երկու ամյնի Համար է, ըստ որում՝ բոլորի առաջին տները նույնն են և փոխվում են միայն երկրորդ տները: Այսպես, Յարութեան ԱԶ-ԱԿ Զյարութիւն փրկչին օրհնեացուք. զփրկչին մերոյ օրհնեացուք զյարութիւն:

Յարեալ Աստուած, և ցրուեցան ամենայն թշնամիք նորա:

ԲԶ - ԲԿ. Զյարութիւն զփրկչին օրհնեացուք.

Զյարուցեալն զ Քրիստոս օրհնեացուք.

և Զյարութիւն նորա փառաւորեացուք.

ԳԶ-ԳԿ. Զյարութիւն փրկչին օրհնեացուք...

Որ ելն ի բարձունս և գերեաց զգերութիւն, էաու աւար, բաշխեաց պարզեան եւ ետ որդուց մարդկան:

ԴԶ-ԴԿ. Զյարութիւն փրկչին օրհնեացուք...

Որ Համբերեաց խաչի եւ եղաւ ի նորափոր վիմի, և ատառածային յարութեամբն զմահացեալսն վերաբերեաց ի կեանս:

Ինչպես տեսանք, ձայների դասակարգումը տարրերվում է քարոզների, աղոթքների ու Ավետարանների կարգից: Այստեղ պարզապես տրված են Հաջորդաբար՝ ԱԶ-ԱԿ, ԲԶ-ԲԿ և այլն:

Համբարձնան

Զյարութիւն փրկչին օրհնեացուք... Համբարձաւ Աստուած օքնութեամբ և Տէր մեր ձայնիւ փողոյ:

Գալստեան Հոգւոյն Սրբոյ:

Զգալուստ Հոգւոյն օրհնեացուք... Յեկեղեցիս բարեբանեցէք զԱստուած, եւ զՏէր յաղերեացն Խսրայելի:

Ազուհացից եւ այլոց աւուրց պահոց,

Երկուշաբքի

Հյու տուր, Տէր, աչաց իմոց, զի մի՛ երբէք ննջեցից ի մահ:

Մի՛ ասասցէ թշնամին թէ յաղթեցի նմա, կամ նեղիչը ին ցնծացեն թէ ես սասանեցայց:

Երեքշաբքի

Ի քէն է, Տէր աղքիւր կենաց, և լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս:

Ծագեա՛ զողորմութիւնս քո որք ճանաչեն զքեզ, զարդարութիւնս քո որք ուղիղ են սրտիւք:

Չորեքշաբքի

Ես ասացի, Տէր, ողորմեա ինձ. թժկեա զանձն իմ, ես մեղայ քեզ: Երանի որ փարհի զաղքատն եւ զտնանկն, յաւուր չարի փրկէ զնա Տէր:

Հինգշաբքի

Ես առ քեզ, Տէր, աղաղակեցի, առաւօտու աղօթք իմ ժամանեցեն առ քեզ:

Հնդէ՞ր, Տէր, մերժես զանձն իմ, կամ դարձուցանես զերեսս քո ի յինէն:

Ուրբար

Մտցեն աղօթք իմ առաջի, քո, Տէր, խոնարհեսցի ունկն քո ի յինդրուածն իմ:

Տէր Աստուած փրկութեան իմոյ,

Ի տուէ կարդացի եւ ի գիշերի առաջի քո:

Ղազարու

Տէր, Հաներ ի դժոխոց զանձն իմ...

Բարձր առնեմ զքեզ, Տէր, զի Ընկալար զիս, և ոչ ուրախ արարեր զթշնամին իմ յիս:

Ծաղկապարդի

Այսօր մտանէ թագաւորն մեր Քրիստոս յԵրուսաղէմ...

Հնդառաջ եին ծերքն ոստովք ձիթենեօք, և զԱստուածորդին փառաւորէին:

Աւագ Երկուշաբքի

Ի սկզբանէ, Տէր, զերկիր Հաստատեցեր...

Նորա կորնչին և դու կաս և մնաս յախտեան:

Աւագ Երեքշաբքի

Տարցին թագաւորի կուսանք զհետ նորա...

Ածցին ցնծութեամք և ուրախութեամք,

և տարցին ի տաճար թագաւորի:

Աւագ Չորեքշաբքի

Խորհեցան և խօսեցան զչարութիւն...

Եղին յերկինս զբերանս իւրեանց, և զկեզուս իւրեանց ամէին զերկրաւ:

Աւագ Հինգշաբքի

Որսացան զանձն արդարոյ, և զարիւն անրիծ պարտաւոր առնէին,

Եղեւ Տէր ապաւէն իմ, Աստուած օգնական յուսոյ իմոյ:

Աւագ Ուրբար

Մատնեցայ և ոչ ելանէի...

Աղաղակեցի առ Տէր զօրհանապազ և...

ԿՅ. Փոխանակ սիրոյ իմոյ մատնէին զիս...

Փ. Աստուած օրհնութեան իմոյ, մի լոեր...

Աւագ Շաբար

Եղին զիս ի զրի ներքնումն' ի խաւարի...

Ցիս Հաստատեցաւ սրտմտութիւն...

ԿՅ. Եղին զիս ի զրի ներքնումն...

Փ. Տէր Աստուած փրկութեան իմոյ...

Դարձ, անձն իմ, ի Հանգիստ քո, զի Տէր...

Փ. Սիրեցի, զի լուիցէ Տէր զձայն աղօթից իմոց...

Եկեղեցւոյ

Տան քում վայել է սրբութիւն, Տէր...

Տէր թագաւորեաց զվայելզութիւն զգեցաւ...

Ցապանակին եւ Վերափոխան

Արի՛, Տէր ի Հանգիստ քո. դու եւ...

Ցիշեա', Տէր, զ Դաւիթ և զամենայն...

Վարդավառի

Քո են երկինք եւ քո է երկիր...

Զհիւսիս եւ զհարաւ դու արարեր...

Ծննդեան եւ Աւետման

Իջցէ որպէս զանձրեւ ի վերայ...

Աստուած, զիրաւունս քո արքայի տուր...

Խաչի

Եսուր երկիւղածաց քոց նշան...

Որպէս փրկեցան սիրելիք քո. կեցո՛ աջով քով և լուր մեզ:

Հրեշտակապետաց

Օրհնեցէ՞ք զՏէր յերկինս. օրհնեցէ՞ք զնա ի բարձունս:

Օրհնեցէ՞ք զնա, ամենայն Հրեշտակը նորա...

Առաքելոց

Ոչ են բանք և ոչ են խօսք, որոց ոչ լսին ձայնք նոցա:

Ընդ ամենայն երկիր էլ բարբառ նոցա...

Մարգարէից

Ոչ են բանք և ոչ են խօսք, որոց ոչ լսին ձայնք նոցա:

Ցեկեղցիս բարերանեցէք զԱստուած...

Հայրապետաց

Քահանայք քո զգեցցին զարդարութիւն...

Ցիշեա', Տէր, զ Դաւիթ, և զամենայն Հեղութիւն նորա:

Մարտիրոսաց

Պարծեսցին սուրբքն փառօք, և ցնծասցեն...

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր..

Ս. Ստեփանոսի եւ Ս. Հոփիսիմեանց

Առաքեա', Տէր, զլոյս քո եւ զնձմարտութիւնս քո.

Ցո՛յց մեզ, Տէր, զողորմութիւն, եւ քո ծառայիցս լեր օգնական...

Ձի սոքօք առաջնորդեալ ելցուք ի լեառն սուրբ, եւ ի յարկս քո...

Յայտնութեան եւ Տեառնընդառաջի

Արեգակն արդարութեան այսօր յայտնեցար ազգի մարդկան.

Մարդ եղեալ սրբեցեր զջուրս...

Ի վայելլութիւն փառաց սրբութեան քոյ, յարդանդէ յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ. մարդ եղեալ սրբեցեր զջուրս...

ՔԱՐՈՉ ԵՎ ԱՂՕԹՔ

Առավոտյան այս կցորդներին հաջորդում են քարոզները, որոնք թվով վեցն են: Ժամագրքում նրանք ունեն հետևյալ հերթականությունը.

1. **Քարոզ-Կիւրակամտից, Կիւրակէից ու Յինանց «Ասացուք ամեննեքեան» (13 տուն):**
2. **Վասն սրբոց Հոփիսիմեանց. այլ եւ վասն Առաքելոց եւ Մարգարէից.**
«Աստուած մեծ, իզօր» (5 տուն):
3. **Քարոզ Հայրապետաց և վարդապետաց:**
Առաջնորդք եղեն մեկ ուղիղ գնացիք... (4 տուն)
4. **Մարտիրոսաց եւ Ճգնաւորաց.**
«Զճանութիւն սրբոց մարտիրոսացն» (4 տուն):
5. **Քարոզ «Ծննդեան Քրիստոսի». եւ Աւետեաց. եւ փոխման Աստուածածնին եւ Տեառնընդառաջին.**
«Մայր սուրբ», (7 տուն):
6. **Քարոզ Պահոց- «Փառաւորեսցուք»:**

Այս քարոզներից երկուսը Տերունական են, մեկը՝ «Մայր սուրբ»-ը՝ Ծննդյան և Աստվածածնի մյուս տոների «Ալսացուք»-ը, Հարության և այլ Տերունի տոների Համար, ինչպես նաև կիրակամուտի՝ այսինքն՝ շաբաթ օրերին: Մեծ պահոց շաբաթ և կիրակի օրերին՝ երեկոյան, այն ասվում է թիվ՝ առանց եղանակավորման:

Իսկ երեք քարոզները՝ Սրբոց տոների Համար են, ինչպես ցույց են տալիս նրանց վերնագրերը, իսկ «Փառաւորեսցուք»-ը՝ Պահոց օրերի Համար է:

Բացի այս վեց քարոզներից Տոնացույցը երբեմն անվամբ, երբեմն էլ առանց անվան Հիշատակում է «Գանձ» ասել: «Գանձ» բառը ենթադրվում է, որ պետք է վերցված լինի առաջն անդամ

Հորինված քարոզի առաջին բառից, որը ինչպես հայտնի է, պատկանում է Նարեկացու գրչին, որը հատուկ քարոզներ է հորինել «ՓՍուրբ Հոգին, ի Սուրբ եկեղեցին և ի Սուրբ խաչն», որոնք ունեն միևնույն ծայրակապը, որ կազմում է Նարեկացու անունը: Ըստ Օրմանյանի՝ Նարեկացուց հետո բոլոր ըստ պատշաճի քարոզ հորինող հեղինակները՝ Նարեկացու օրինակով դրանք անվանեցին «Գանձ»:

Քարոզ Ասացուք ամենեցեան

Տոնացույցը և ժամագիրքը Տերունի տոների համար թելադրում են ասել այս քարոզը: Քարոզի հորինման ժամանակի մասին որոշակի տեղեկություն չի պահպանվել: Օրմանյանի կարծիքով՝ այն պետք է հորինված լինի մյուս քարոզների հետ միաժամանակ: Նկատելի է, որ «Անասցուք» քարոզը օրվա պատշաճից անկախ է և հորինվել է հավատացյալների, ամենայն խաղաղութեան աշխարհի, և հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ, բարեպաշտ թագավորների, աստվածասեր իշխանների, գերության մեջ գտնվող հայրերի ու եղբայրների, հիմանդների, ուխտավորների և անօրենների ձեռքը մատնվածների համար: Ինչ վերաբերում է Հայրապետի համար եղած հիշատակությանը և այն հավելումին՝ «Կենաց և փրկութեան հոգւոյ նորին», ըստ Օրմանյանի, կապ չունի քարոզի ընդհանուր կառուցվածքի հետ: Իսկ թագավորաց համար եղած աղոթքը, որ այժմ հոգնակիով է դրվում ժամագրքերում, հնում եղել է եղակի և հիշատակվել է միայն ժամանակի թագավորի անունը: Դատելով քարոզի բովանդակությունից՝ կարելի է ենթադրել, որ այն պետք է հորինված լինի կամ Բագրատունյաց շրջանում՝ 9-10-րդ դարերում, և կամ 11-14-րդ դարերի ընթացքում՝ Կիլիկյան թագավորության ժամանակաշրջանում: Այս մասին է խոսում նաև Հայոց Ոչին թագավորին պատկանող ձեռագիր ժամագրքում եղած վերոհիշյալ քարոզի մեջ արքած հիշատակությունը, որը վերաբերում է Հայոց թագավորին:

Այստեղ ուզում ենք մեջ բերել Հովհաննես Դարդելի «Ժամանակագրութիւն Հայոց»-ից հետևյալ տողերը, որը նույնպես հաստատում է վերոհիշյալ ենթագրությունը. «Թէպէտ և ոչ յոյժ հաւատարիմք իցեն Հայք տէրանց իւրեանց, այլ այլ է նոցա առանձին ինչ բարւօք սովորութիւն զի քահանաք ամենայն աղօթեն ի սուրբ

պատարագին և յայլ մաղթանսն հանապազօրեայս վասն թագաւորացն Հայոց վախճանելոց և յականէ յանուանէ վասրն թագաւորին, որ կենդանի է»:

Մանոթություն. Այս հեղինակը, որն ապրել 14-րդ դարում և մեծ ջանքեր է գործ դրել Լևոն Զ Լուսինյան թագավորին եղիպատական գերությունից ազատելու համար, պատմում է նաև, որ հակառակ բոլոր տեսակի սպառնալիքներին ու արգելքներին:

«Ոչ դադարնեցին հայք աղօթել վասն թագաւորին իւրեանց, որպէս սովորեալ իսկ էին»: (Հ. Դարդելի սույն ժամանակագրությունը ֆրանսերենից Հայերեն է թարգմանել Խորեն արքեպո. Նարպելը, իսկ Նորայր Բյուզանդացին կատարել է բնագրային համեմատություն՝ մի շարք բնագրային ճշգրտումներ անելով):

Այն հրատարակել է Կ. Եղյանը Ս. Պետերբուրգում 1891 թվականին: «Անասցուք» քարոզն ունի նաև միջանկյալ մի մաղթանք՝ «Բարեխօս ունիմք սուրբ զՄարիամ զԱստուածածինն...»: Լատին եկեղեցին այս մաղթանքը սկսում է՝ «Սուրբ զՄարիամ զԱստուածածինն»-ով, և կապում քարոզի շարունակությանը՝ «Ֆիշեաջիք»-ին:

«Անասցուք» և «Փառաւորեսցուք» քարոզները եղբափակվում են մեծ քարոզներին հատուկ վերջավորությամբ, որոնց առաջին տան մեջ «Զառաւոտս լուսոյ...» տողը, ցույց է տալիս, որ այն երգին է առավոտյան:

Քարոզ «Մայր սուրբք»

Այս գեղեցիկ քարոզի առաջին երկու տոների մեջ արծարծվում են դավանարանական խնդիրներ.

- Մայր սուրբ սքանչելի լուսոյն, որ զԱստուածն ամենայն յաւիտենից յորովայնի քում կրեցեր, և ցնծութիւն աշխարհի ծնարգանն Աստուած, աղաչեմք:

Մայր սուրբ, բարեխսոսեա:

- Աղաչեա՛... Որ խոնարհեցաւ ի Հայրական ծոցոյ, էատ մարմին ըստ մարդկային բնութեանս՝ առնել խաղաղութիւն յերկինս և յերկրի...

Եվ ապա Հայցվում է Աստվածամոր բարեխսությունը, «Ներելու և անտես առնելու մեր Հանծանքները» և տալու՝ «օգնականութիւն ընդիմակաց լինել Հակառակամարտիցն ի պատերազմի...»

Զի լոեսցին պատերազմունք, դադարեսցին յարձակմունքը թշնամեաց, տնկեսցի սէր և արդարութիւն ի յերկրի...»

Աճեցուանել յերկրի մերում զքաղցր բղխումն աղքերաց, զառատ պտղաբերութիւն բուսց և տնկոց...

Զի միաբանեացէ զեկեղեցի իւր սուրբ, շինեալ ի վերայ հիման առաքելոց և մարգարէից, պահել անարատ մինչև յօր երևելոյ գալստեան իւրոյ...»:

Լեզվի ու ոճի գեղեցկությամբ, պատկերների առաստությամբ և զգացմունքների անկեղծությամբ և ջերմեռանդ սիրով հորինված այս պահնչելի քարոզը հիշեցնում է Հանգստյան ժամերգության մաս կազմող՝ «Փառք քեզ Տէր Աստուած մեր» հին և գողտրիկ քարոզը, որն ի դեպ պետք է արտասանի ոչ թե սարկավագը, այլ ավագ երեցը, իսկ Ս. էջմիածնի մայր տաճարում՝ Վեհափառ Հայրապետը կամ ձայնել միարաններից մեկը:

Այս քարոզներին հաջորդող աղոթքը «Գոհանամք զքէն Տէր Աստուած մեր»-ը, ըստ Անձնացու, ունի «Աղօթք նախքան զՍուրբ Աստուածն» վերնագիրը:

Այն մեկնված է Խ. Անձնացու մեկնության 218-223 էջերում: Աղոթքի հանգիստն է «Խաղաղութիւն մեր և կեանք»....:

Սուրբ Աստուած կամ «Երեքսրբեան»

«Արժան է յերեկոյին և յառաւօտինս, զկնի ամենայն պաշտաման նուագել զՍուրբ Աստուածն, և ապա զհետ բերել յերեկոյինս զհանգստեանն սաղմոս», -այսպես է գրում Օձնեցին իր ԺԹ (19) կանոնի մեջ «Սուրբ Աստուած»-ի մասին:

Ժամագրերում այս երգարանությունը դրվում է առավոտյան աղոթքից անմիջապես հետո: Քրիստոնյա եկեղեցու ամենահին և կարևորագույն երգերից է, որը դարեր շարունակ առիթ է Հանդիսացել եկեղեցիների միջև երկարատև վեճերի, որովհետև Քրիստոնյա մյուս եկեղեցիները այս երգը երգելիս երեք անգամ կրկնում են՝ «Սուրբ Աստուած, սուրբ Հզօր, սուրբ անմահ, ողորմեա մեզ»:

Հայաստանյայց առաքելական ս. եկեղեցին ունի նաև շաղկապն ու Որ խաչեցար վասն մեր Հավելվածը և ըստ պատշաճի այլ տնօրինական հիշատակություններ, որոնց թիվը տառն է: Ահա այդ հիշատակությունները.

1. Պահոց, Սրբոց, Խաչի և եկեղեցվո և այլ ոչ կիրակի օրերին Հանդիպող Աստվածածնի փոքր տոներին՝ «Որ խաչեցար»:
2. Հինանց քառասուն օրերին, սովորական կիրակիներին և կիրակնամտի համար՝ «Որ յարեար ի մեռելոց»:
3. Ավագ Ուրբաթ առավոտյան՝ «Որ մատնեցար»:
4. Ավագ Շարաթին և իր նախատոնակին՝ «Որ թաղեցար վասն մեր»:
5. Վարդապառի երեք օրերի համար՝ «Որ յայտնեցար ի թափոր լերինըն»:
6. Ավետյաց, ծննդյան և թղփատության՝ «Որ ծնար եւ յայտնեցար»:
7. Տյառնընդառաջին, Մաղկագարդին և Ավագ շարաթի չորս օրերին՝ «Որ եկիր և գարոցդ ես»:
8. Վերափոխման ինն օրերի համար՝ «Որ եկիր ի փոխումն մօր քո և կուսի»:
9. Համբարձման համար՝ «Որ համբարձար փառօք առ Հայր յերկինս»:
10. Հոգեգալստյան համար՝ «Որ եկիր և Հանգեար յառաքեալսն, ողորմեա մեզ»:

Մաշտոցում պսակի ս. խորհուրդի համար ունենք նաև՝ «Որ մարմնացար վասն մեր» Հավելվածը: «Սուրբ Աստուած»-ի համար մեր եկեղեցին ունի նաև մի կցորդ՝ «Փառաւորեալ և օրհնեալ»-ը՝ ուղղված Աստվածամորը: Ըստ հին ավանդության՝ այս կցորդի հեղինակը Թովմաս առաքյալն է:

Օձնեցին այս մասին ունի հիշատակություն իր հԲ (22) կանոնի մեջ՝ Յովհաննու Օձնեցւոյ վասն երեքսրբեան երգին.

Զհետ որոյ և խորհրդաբար կարգեալ է երից սրբասացութեանցն երգ ըստ տեսլեան մարգարէին և մեկնութեան աւետարանչին: Զի զիառու խաչին ետևս եսայի և խօսեցաւ վասն նորա: Զնոյն և Հայրականն յայտնեաց զբարբառ, փառաւոր արարի՝ և դարձեալ փառաւոր արարից: Եւ ինքն յաղագ իւր վկայէ յասելն, այժմ փառաւորեցաւ որդի մարդոյ. Վասն որոյ ո՛չ վայրապար մեք ի կիր առնումք զինաչեցարն ի գլուխ սրբասացութեանցն:

Եւ քանզի սուրբ է Որդի և Հզօր և անմահ, և կամօքն Հզօր և Հաճութեամբ Հոգեոյն եկն նա ի չարչարանս խաչին. և նովաւ իսկ

ժանեաք զՀայր և զՀոգին: Եւ մի պախարակեսցեն այլապես խորհեցողքն զերից սրբասացութեանս երգ. որք և ամօթ և վարկանին զփրկութեան մերոյ անօթ... Եւ շուրջարկեալ է ի գլխաւորական աղօթս առաւօտի, և խորհրդական ժամուն երրորդի, և երեկոյի: Երիցս անգամ յաւուրն զնոյն եռակի կրկնելով:

Եվ զի զիսաշին երախտիքն ծանեաք, ընդ նմին և զմայրն լուսոյ յիշատակեմք և աղերսնմք ի բարեխօսութիւն առ այն որ համեցաւն բնակիլ յորովայնի նորա և խաչին սրբով փրկել զմեզ:

Իսկ 24-րդ կանոնում Օձնեցին ավելացնում է, որ «Սուրբ Աստուած» պետք է երգի աղոթքից հետո: Իսկ Անձնացին այս մասին չի հիշում Առավոտյանի մեջ, այլ միայն երեկոյանի:

Հստ Հովն եկեղեցու՝ «Սուրբ Աստուածի» երգեցողությունն ուղղած է ի դեմս ս. երրորդության, և այն եկեղեցու հին սովորությունն է: Ինչ վերաբերում է «Խաչեցար»-ին, այն եղիկյան Հավելված է Անտիռքի եկեղեցու մեջ Տիմոթեոս Կուզի ժամանակվանից, և որն իր մեջ ունի աստվածաշարչարության վարդապետությունը:

Հայ եկեղեցին միշտ արտահայտել է այն տեսակետը, որ ինքը Ս. Գր. Լուսավորչից հաստատված երգում է այն «Ի դէմս Որդույն Աստուծոյ»: Մեր եկեղեցու այս տեսակետի հաստատումը բացի Օձնեցուց և Անձնացուց, կարելի է տեսնել նաև Ծնորհալու «Ընդհանրական»-ում (էջ 138, երուսաղէմ), ինչպես նաև Ն. Լամբրոնացու «Պատարագի մեկնության» մեջ (էջ 48):

«Սուրբ Աստուած»-ի մեղեդիները բազմաթիվ են, որոնք ամենուրեք գրեթե երգվում են միատեսակ: Գեղեցիկ են կիրակամտից ծանր և հոգեթով եղանակները:

Կիրակի երեկոյան երգվող ավանդական տարրերակը առավել սահուն է, ավելի սահուն են ամենօրյա երգեցողության տարրերակները, իսկ Ս. Պատարագի Ավագ շարաթի ողոգոմյան և Խաչի տարրերակները տարրեր մեղեդիներ ունեն:

«Սուրբ Աստուած»-ի երգեցողության մի հատուկ ձև է «Վերացման խաչի» թափորի ժամանակ երգվող տարրերակը, որի մասին տոնացույցն ունի հատուկ հրահանգ՝ «Եւ առնուցուն նոյն կարգաւն զսուրբ խաչն ի խորանէն. և բարձրացուցեալ քահանայիցն՝ երթիցեն ի կողմն արևմտից՝ ասելով Սուրբ Աստուած.

Երիցս անգամ: Սուրբ և Հզօր նոյնպէս: Սուրբ և անմահ նոյնպէս: Զկնի՛ որ խաչեցար վասն մեր ողորմեա մեզ»:

Մաղթանք՝ քարով կկնի Ս. Աստուածի

«Սուրբ Աստուածին» հաջորդում է «Փրկել զմեզ ի փորձութենէ և յամենայն վտանգից մերոց» մաղթանքը և ապա քարոզ՝ «Վասն լսելի լինելոյ»: Կիրակի օրերի համար այստեղ ժամագրքերը դնում են սաղմոս՝ «Եղիցի անուն Տեառն օրհնեալ...», որը երգվում է դաս առ դաս և ապա Բժշկութեան Ավետարաններ՝ Հետևյալ կարգով.

Թէ Դէ ըստ Մատթէոսի՝ գլ. ԺԵ. 22-28

«Եւ եկեալ անտի Յիսուսի գնաց...»:

ԹԶ ԴԶ ըստ Մարկոսի՝ գլ. Է. 31-37

«Եւ եկեալ միւսանգամ ի սահմանացն...»:

ԱԿ ԳԿ ըստ Ղուկասու գլ. Թ. 37-44

«Եւ եղեւ ի վաղին...»:

ԱԶ ԳԶ ըստ Յովհաննու գլ. Դ. 46-54

«Եկն դարձեալ ի Կանա Գալիլիացւոց...»:

Այս ավետարաններին հաջորդում է Ծնորհալու «Նորաստեղծանեալ» երգը, որի ծայրակապն է Ներսէս: Այս երգը երգվում է միայն կիրակի օրերին¹⁰:

Մեծ Պահոց կիրակիներին՝ Մաղկագարդի կիրակին ներառյալ, համաձայն Սիմեոնյան տոնացույցի, պետք է երգվեն առաջին երկու տները միայն:

Այս երգին հաջորդում է «Խնդրեացուք հաւատով միաբանութեամբ» քարոզ՝ ճայնով, «Կեցո տէր» և երեք տեր ողորմյա և աղոթք «Քում ամենազօր», «Հայր մեր» և արձակում:

Պահոց օրերի արձակնան կարգը

«Սուրբ Աստուած»-ի կարգից հետո կարդացվում է սաղմոս ՃԽԲ (142): «Որհնեցէք մանկունք զՏէր» և ապա՝ շարական «Մանկունք»: «Մանկունք»-ի շարականները երգվում են ըստ օրվա ճայնի: Պահոց «Մանկունքները» վերագրվում են Մաշտոցին և Թվով ուժին են: «Մանկունք»-ի շարականները մեծ մասամբ վերագրվում են Պետրոս Գետաղարձ կաթողիկոսին: Ահա Տաթևացու վկայությունն այդ մասին. «Ձհանգստեանն և զՄարտիրոսացն

¹⁰ Ղանծնարարել վերոհիշյալ հեղինակների անդրադարձումներից՝ լուցուցիչ օժանդակ նյութ (Խ. Պ.):

Գետրոս Գետաղարձն, և զբագումս ի մանկտեացն...»: Իսկ Մ. Զամյանը գրում է...՝ «Արար և զոմանս ի շարականաց, որք կոչին մանկունք»: (Չամյան, «Պատմ. Հայոց, Հռ. Բ, էջ 900): «Մանկունք» շարականների մասին տե՛ս մեր «Շարականագիտություն» ձեռնարկը՝ Պ. Գետաղարձնին ընծայված գլխում: «Մանկունք»-ից հետո՝ քարոզ «Վասն խաղաղութեան» և աղոթք՝ «Սուրբ ես Տէր»: Այս աղոթքը մեկնել է Խ. Անձնացին (տես էջ 223-225):

«Սուրբ ես Տէր» աղոթքին հետևում է սաղմոս Ե «Քանից իմոց»-ը և ապա՝ Երգ Արարչական ըստ ավուր: Արարչական երգը ևս հորինել է Շնորհալի Հայրապետը, այն Անձննք է՝ բաղկացած երեսունվեց տներից, յուրաքանչյուր վեց տունը շարաթվա մեկ օրվա համար:

Երկուշարթի ԲՇ

Երեքշարթի ԳՇ

Չորեքշարթի ԴՇ

Հինգշարթի ԵՇ

Ուրբաթ Ուր.

Շաբաթ Շր

«Արարչական»:

«Էական բանն որ ընդ Հօր»:

«Խաւարն անգոյ»:

«Ճառագայթեալ Բանն ի Հօրէ»:

«Ջրհանդուրժեալ»:

«Տէրն յետ ստեղծման»:

Արարչական երգին հաջորդում է մաղթանք՝ «Խաչ քո եղիցի մեղ ապաւէն», ապա՝ քարոզ «Աղաչեսցուք», աղոթք՝ «Թզնեա մեղ» (Ավագինն է), քարոզ «Յիշեա Տէր զպաշտօնեայս» աղոթք՝ «Բարերար և բազմողորմ Աստված», «Հայր մեր» և արձակում՝ «Յորհնեալ եղերուք»:

Իսկ սրբոց տոներին «Սուրբ Աստուած» -ի կարգից հետո սաղմոս ձժԴ է՝ (114) «Միրեցի զի լուփցէ», (ավագ), Երգ Արարչական, մաղթանք «Քրիստոս Աստուած մեր» (ձայնով), ապա՝ քարոզ՝ «Սուրբ ճգնաւորօքն» աղոթք՝ «Որ ընտրեցեր և ընկալար»: Այս աղոթքն ասվում է Առաքելոց, մարգարէից, Հայրապետաց և Վարդապետաց տոներին՝ ավագինն է:

Մարտիրոսաց, ճգնաւորաց և Կուսանաց տոների աղոթքն է՝ «Պասկիչ սրբոց»-ը: Մնացած մասը Պահոց արձակման նման է:

Այստեղ պետք է նշել, որ բացառություն են կազմում Տապանակի, Շողակաթի և Նավակատյաց սուրբ Խաչի Գ, Դ և Ե օրերը, երբ քարոզն է «Սուրբ եկեղեցեաւս», իսկ աղոթքն է «Առ դրանն»:

Աղօքք Մանասէի բագաւորին

Ժամապիրքն այստեղ դնում է «Տէր ամենակալ»-ի կարգը: Այն սկսվում է Մեծ Պահոց առաջին չորեքշարթի օրվանից և շարու-

նակվում մինչև Մաղկագարդի ուրբաթ օրը՝ շուրջ երեսուն օր: Այս աղոթքը չին կոսակարանից է, այն թեև պարականոն է, բայց ընդունված է ինչպես մեր, այնպես էլ քրիստոնյա այլ եկեղեցիների կողմից: Սակայն մեր եկեղեցում այն կատարվում է ավելի մեծ հանդիսավորությամբ և յուրահասուկ կերպով: Ըստ Աստվածաշնչի այս գեղեցիկ աղոթքի՝ Հեղինակը Հուղարի Մանասէ թագավորն է, որը գերի է տարվել Ասորեստան և ապա ապաշխարելով վերադարձել և տիրացել իր թագավորական գահին և մնացած կյանքն անցկացրել է սրբությամբ: / Բ Մնաց. ԼԳ-18 և Դ Թագ. (21):

«Տէր ամենակալ»-ը բաղկացած է տասնութ տներից, աղոթքն ունի նաև մի կցորդ՝ «Աղաչեսք և խնդրեմք»-ը՝ տասը տներից բաղկացած, որը բաժանվում է առաջին մասից «Փառք Հօր» -ով: Կցորդը, անկասկած, քրիստոնեական եկեղեցու կողմից կատարված խմբագրություն է:

Կցորդին հաջորդում է Երկարաշունչ մի քարոզ՝ «Եկեալքս ի խոստովանութիւն ապաշխարութեան» և աղոթք՝ «Տէր Աստուած փրկութեան մերոյ»: Վերջինս սերտորեն կապված է կցորդին:

Երրեմն մասնավոր կերպով ապաշխարողի համար կատարվող այս կարգն այժմ գործածվում է քառասնորդական պահոց շրջանում՝ համայն ժողովրդի համար:

Միմեռնյան տոնացույցն Ակագ շարաթի առաջին երեք օրերի համար չի հրահանգում «Տէր ամենակալ»-ի կարգն ասել, բայց, ինչպես ցույց են տալիս հին ժամագրքերը և տոնացույցները՝ այս կարգն, իրեւ ապաշխարողաց կարգ, կատարվել է մինչև ավագ Հինգշարթի ցերեկ՝ այսինքն՝ մինչև տնօրինական հիշատակների սկիզբը:

Մանոթություն - Ընդունված կարգ է, երբ պատարագիչը միայնակ է, սուրբ պատարագի մուտքին, «Ողորմեսցի»-ի փոխարեն սարկավագն ասում է «Եկեալքս ի խոստովանութիւն» քարոզը և կամ քարոզի Երկրորդ մասը՝ «Արդ Եկալք ամենեքեան, խոնարհեալ անձամբ, բեկեալ սրտիք...» և ապա՝ պատարագիչը պատասխանում է. «Ազատեաց և զձեզ մարդասէրն Աստուած...»:

Անդաստանի կարգը

Տարվա ընթացքում առավոտյա տասնմեկ անգամ կատարվում է անդաստանի կարգը: Ինչպես ցույց է տալիս Տոնացույցը, անդաստանի կարգը ձգվում է գարնանից մինչև աշուն, այդ կարգը կատարվում է իրեւ օրհնություն պտղոց և բուսաց:

Անդաստանի օրերը.

1. Մաղկազարդ,
2. Զատիկ,
3. Աշխարհամատուան կիրակի,
4. Երևան խաչի կիրակի,
5. Համբարձում,
6. Երկրորդ Մաղկազարդ,
7. Հոգեգալուստ,
8. Տօն Կաթողիկէ Ս. Էջմիածնի,
9. Վարդապառ,
10. Վերափոխման տոն,
11. Խաչերաց:

Անդաստանի կարգը կարելի է բաժանել երեք մասի.

- ա) Նախ սաղմոս կամ գիրք և Ավետարան:
- բ) Անդաստան կամ Տեառնագրութիւն:
- գ) Անդաստանից հետո Ավետարան և փակման կարգ:

Անդաստանը սովորաբար կատարվում է եկեղեցու ատյանում: Այն սկսվում է երկու տներից բաղկացած քարոզով՝ «Վասն ի վերուստ խաղաղութեան և փրկութեան» և ապա՝ տյառնագրություն «ի չորիս կողմանս» հետեւյալ կարգով.

1. Արեեղեան կողմն աշխարհիս և Հայրապետութիւն Հայոց:
2. Արևմտեան կողմն աշխարհիս Հայրապետութիւն Հայոց:
3. Հարավային կողմն աշխարհիս երկիրս անդաստանս և պտղաբերութիւն տարւոյս:
4. Հիւսիսային կողմն աշխարհիս՝ վանքս անապատս, քաղաքս և գիւղս, և բնակեալ ժողովուրդս ի նոսսա:

Փակումը լինում է «Օրհնութիւն և փառք»-ով, ապա քարոզը՝ «Սուլր խաչիս» և աղոթք՝ «Պահպանեա»:

Տոնացուցը թելադրում է նաև անդաստանից հետո կատարել ննջեցելոց պաշտոն կամ կարգ հետեւյալ տոներին՝ Մաղկազարդին, Զատիկին, Հոգեգալուստյան, Ս. Էջմիածնի և վերափոխման: Կան նաև անդաստանին Հաջորդող այլ հավելվածներ վերոհիշյալ տոներից՝ Աշխարհամատուան կիրակի, Երևան խաչի և Համբարձման տոների համար:

Հավելված ունեն նաև Մաղկազարդի, Հոգեգալուստյան և Վար-

դավառի օրերը: Այս հավելվածների մասին տե՛ս Տոնացուցի հրա- Հանգները հիշյալ օրերին:

Անդաստանի թափորի արարողությունը յուրատեսակ կերպով կատարվում է Խաչվերացի երեկոյան: (Տե՛ս Տոնացուց, 1906, Վա- ղարշապատ, էջ 156-160):

Անդաստանի մասին գոյություն ունի հատուկ տպագիր տետր:

Այստեղ պետք է նշել նաև մի հատուկ արարողություն, որը կոչվում է նաև «Խաչի քո Քրիստոսի» կարգ: Վերջինս նվիրված է խաչի փառաբանմանը. ըստ Տոնացուցի այս կարգը տարվա մեջ կատարվում է չորս անգամ:

1. Ավագ ուրբաթ, այսինքն՝ մատնության և չարչարանաց գիշերը, որով և ավարտվում է այդ ժամերգությունը:
2. Ավագ ուրբաթ՝ Քրիստոսի թաղման կարգի ավարտին:
3. Ավագ շաբաթ առավոտյան՝ ժամերգության վերջին:
4. Զատկի առավոտյան՝ ժամերգության վերջին: Այս կարգը կա- տարվում է նաև Խաչվերացի առավոտյան՝ ժամերգության ար- ձակումից առաջ:

Կարգը բաղկացած է հետեւյալ շարականներից՝

1. ԲԿ - «Խաչի քո Քրիստոս» 3 անգամ:
 2. Կցորդ՝ «Փառք սուլր խաչիդ» և 3 անգամ:
 3. «Խաչն կենարար» 3 տուն:
- Քարոզ՝ «Սուլր խաչիւս»:
- Աղոթք՝ «Պահպանեա»:

Նարականի երգեցողության ժամանակ ավագ երեցը խնկարկում է չուրջանակի:

ԿԱՐԳ ԱՐԵՒԱԳԱԼԻ

Կարգաւորութիւն հասարակաց աղօրից Արևագալի ժամուն, որ կատարի ի դեմս հոգւոյն Սրբոյ, այլ՝ ի դեմս Յարութեան Քրիստոսի, որ երևեցաւ աշակերտացն.

Արևագալի հասարակաց աղոթքի ժամը, որ կատարվում է ի ժմս Սուլր Հոգու, այլև ի դեմս Հարության Քրիստոսի, որ երևաց աշակերտներին:

Քրիստոնյա մյուս եկեղեցիները ունեն յոթ ժամերգություն.

**Մեր ժամագիրքը պարունակում է ինը ժամերգություն, վերո-
հիշյալ յոթին ավելանում են Արևագալի և Խաղաղականի ժամեր-
գությունները.**

1. Գիշերային,
2. Առավոտյան,
3. Արևագալի,
4. Երրորդ ժամու,
5. Վեցերորդ ժամու,
6. Իններորդ ժամու,
7. Երեկոյան,
8. Խաղաղական
9. Հանգստյան:

**Քրիստոնեական եկեղեցու՝ օրվա ընթացքում յոթ ժամերգու-
թյուն կատարելու համար հիմք է Հանդիսացել ձժԸ (118) սաղմոսի
«Եօթն անդամ յաւուր օրհնեցից զքեզ» տունը:**

**Աւա թե ինչ է գրում Հ. Օձնեցին իր հԴ (24) կանոնի վերջում.
«Եւ զկնի ամենեցուն զԱրևագալն նուագել սաղմոս զոր «Եղիշի
անուն Տեառն» ասել ակսեալ են ի ժամանակացն Եղիշի կաթողի-
կոսի»: Այս խոսքերից դժվար չէ եղրակացնել, որ «Եղիշի անուն
Տեառն» սաղմոսը, որով սկսվում է Արևագալի կարգը, հաստատվել
է 7-րդ դարում, իսկ թե ուրիշ ինչ բաժին ունի Եզր կաթողիկոսը
այս կարգի մեջ, դժվար է ասել, քանի որ Արևագալի կարգի այսօր-
վա ձեզ հիմնականում պատկանում է Շնորհալի Հայրապետին,
Հատկապես այս կարգի Հոգեպարար շարականները, քարոզներն ու
Հոգեբուխ աղոթքները: Այսպիսով, մեր եկեղեցու պաշտամուն-
քային ժամերգությունների մեջ Արևագալի կարգը թվով երրորդն է,
և ինչպես մյուս ժամերգությունները, այս ևս սկսվում է տերունա-
կան աղոթքով:**

Աւա Արևագալի կարգի մաս կազմող բաղադրիչները.

Ժամօրհնող՝ սղմ. Եղիշի անուն Տեառն...

Սրկ. - Ի նա օրհնեցին և Օրհնեալ Տէր Աստուած Խարայելի...

Ժամարար - Փառք և այժմ. օրհնութիւն...

**Երգ Յարեւելից - Մինչ ի մուտս Յորդորակ. «Յարեւելից»
յարեւմուտս... երկուական տուն:**

Քարոզ՝ Յարեւելից մինչև ի մուտս...

Աղօթք Յարեւելից մինչև ի մուտս...

Հանգիստ՝ «Աստուած մշտնջնաւոր...»:

Փոխ. Սաղմոս «Աղաղակեցէք առ Տէր...»:

Երգ «Ճգնաւորք Աստուեծոյ...» 5 տուն:

Յորդորակ «Ճգնաւորք Ճշմարիտ...» 5 տուն:

Մաղթանք «Աղաշեմք ողորմեաց...»:

Քարոզ «Սուրբ Ճգնաւորօքն...»:

Աղօթք «Սուրբ ես, Տէր...»:

Քարոզ «Ցիշեա, Տէր, զպաշտօնեասն...»:

Աղօթք «Բարերար և բազումողորմ...»:

Փոխ. Սաղմոս «Աստուած, Աստուած իմ...»:

Երգ «Լոյս, արարիչ լուսոյ...» 4 տուն:

Յորդորակ «Անեղանելիդ Աստուած...» 5 տուն:

Մաղթանք «Լուսովդ քո...»:

Քարոզ «Փառաւորեացուք...»:

Աղօթք «Զառաւատու աղօթս...»:

Փոխ. Սաղմոս «Տէր Հովուեսցէ զիս...»:

Երգ «Ճանապարհ և ճշմարտութիւն...» 2 տուն:

Յորդորակ «Ճանապարհ բարի...» 2 տուն:

Մաղթանք «Տէր, ուղղեա զգնաց մեր...»:

Քարոզ «Աղաշեսցուք զամենակալն...»:

Աղօթք «Առաջնորդ կենաց...»:

**Աղօթք «Աւուրց Պահոց, յորս տօն ոչ լինի» - «Օրհնեալ ես, Տէր
Աստուած, փրկիչ մեր»:**

**S. Յովհաննու Հայոց կաթողիկոսի, եթէ զինչ խորհուրդ ունի
Արևագալի Աղօթսն:**

**«Այս աղօթս զմիւսանգամ գալուստն Քրիստոսի նշանակէ, զյա-
րութիւն մարդկան ի գերեզմանացն յաւուր միաշարաթող յառաջին
ժամուն: Վասն զի յայնմէ ժամու լինելոց է յարութիւն մարդկային
ընութեանս, թէալիս և զիերի ասի ըստ տերունական առակին: Այլ
նա է առաւօտ և սկիզբն ծագման արեգականն արդարութեան: Եւ
լինելոց է այն յառաջին ժամուն մեծի աւուրնա:**

**«...Քանզի յետ անցանելոյ ձրմերայնոյն և լինելոյ գարնանոյն և
Հաւուցն լինելոյ մերձ յառաւօտն, ձայնքն զյարութիւն մարդկան
նշանակին. Վասն այսորիկ սթափել ի ժամուն յայնմիկ աղօթնն.
ակն ունելով վերըստին նորոգման յարութեանն մնոելոց... Վասն
այնորիկ կարգեցան ի ժամուն յայնմիկ աղօթք: Իրքև արժանի լինի**

մեծի առաւտուի լուսոյ ծագմանն, և գտէրն փառաց առանց ամօթոյ տեսանել:

Իմաստասեր Հայրապետը խոր հավատով ու համոզիչ կերպով մեկնում է Արևագալի ժամի հոգեբուխ աղոթքները՝ վկայակոչելով Սուլրը գրքից բազում հավաստումներ, ինչպես նաև բնությունից վերցված բազմաթիվ պատկերներ ու համեմատություններ: Օձնեցու այս և ուրիշ բազմաթիվ այլ մեկնություններ աչքի են ընկնում իրենց ինքնատիպ բացահայտումներով:

Արևագալի կարգին, բացի Օձնեցու անդրադարձել է նաև Ա. Անձնացին առանձին մեկնությամբ՝ «Մեծին Խորովու վասն քարոզին Արեւագալի»: Անձնացին հանգամանորեն մեկնում է «Յարեւելից մինչև ի մուտս» քարոզը, «Յարեւելից մինչև ի մուտս» աղոթքը և Հանգիստը «Սուրբ Ճգնաւորօքն» քարոզը, Հակիմը կերպով և նրան հաջորդող «Սուրբ ես Տէր» աղոթքը, «Փառաւորեսցուք» քարոզը, «Զառաւոտու աղօթս» աղոթքը, «Աղաչեսցուք զամենակալն Աստուած» քարոզը, «Առաջնորդ կենաց» և «Օրհնեալ ես Տէր Աստուած» աղոթքները»:

Անձնացին իր մեկնության սկզբում մեջ է բերում Օձնեցու «Եթէ զինչ խորհուրդ ունի առաւտին Աղօթքն, որ ընդ Արևագալն կատարեն»-ից մի հատված, որը Օձնեցու «Յաղագս կարգաց եկեղեցոյ» գործի շարունակությունն է, բայց Անձնացու մեջ բերած հիշյալ հատվածում եզրի անունը չի հիշատակվում:

Անձնացու Արևագալի կարգի վերը թվարկած բաղադրիչների մեկնությունը զբաղեցնում է նրա գրքի 242-254 էջերը:

Ըստ Մ. Օրմանյանի՝ Արևագալի ամբողջ կարգը կարելի է բաժանել չորս մասի:

Առաջին մասը, սկսվելով «Եղիցի անուն Ֆեառն» սաղմոսով, շարունակվում և ավարտվում է «Յարեւելից» աղոթքով՝ իր «Ամստուած մշտնջնաւոր» Հանգիստով:

Երկրորդ մասի սաղմոսն է՝ «Աղաղակեցէք»-ը / ՂԹ/99/, որին հաջորդում է «Ճգնաւորք» երգն իր հորդորակով, ապա՝ «Աղաշեմք» մաղթանքը, քարոզն ու աղոթքը մինչև «Բարերար և բազում ողորմ Աստուած» աղոթքը:

Երրորդ մասն ընդգրկում է Աստուած, Աստուած իմ» (սաղմոսից ԿԹ (1-11) և ԿԳ (1-10)) մինչև «Զառաւոտու աղօթս» աղոթքը:

Իսկ չորրորդ մասը ներառնում է «Տէր Հովուեաց» (սաղմոսից

(ԿԹ 1-8, ՃԽԹ 9-14, Խէ 1-11, ԿԹ 1-6 և ԶԵ 15-16)) մինչև «Օրհնեալ ես Տէր» աղոթքը:

Այս կարգի մաս կազմող փոխերը, մաղթանքները, քարոզներն ու աղոթքները գործածվում են նաև Մեծ Պահքից դուրս, իսկ Մեծ Պահոց շրջանում սրանց հետ երգվում են նաև Արևագալի երգերն ու շարականները: Այս մասին տես Մ. Օրմանյանի «Միսագիտութիւն Հայաստանեաց սուլրը եկեղեցւոյ» (Էջ 64-65):

Արևագալի կարգն այժմ առավել հանդիսավորությամբ կատարվում է Մեծ Պահոց չորեքշաբթի և ուրբաթ օրերին, երբ երգվում են այս կարգի հոգեզմայլ երգերի ծանր տարրերակները: Սովորություն է նաև վերջում ծնկաչոք երգել «Տէր ողորմեա» երգը: Այս երգը նույն ձևով երգվում է նաև երեկոյան՝ «Խաղաղական»-ից կամ Հսկումի արարողությունից հետո:

Հայաստանյաց եկեղեցվո ամենահոգեարար և հավատացյալների կողմից սիրված ժամերգություններից է Արևագալի կարգը: Առանձնապես գեղեցիկ են այս կարգի «Յարեւելից», «Ճգնաւորք» և «Լոյս» երգերը և՝ իրեն մեղեդի, և՝ իրեն բանաստեղծական խոսք:

Ծնորհալին հատկապես այս երգերում մեծ վարպետությամբ և համարձակութեն օգտագործել է մեր հնագույն, հեթանոսական շրջանից ավանդաբար գոյատևած մեր տոհմիկ երգ-երաժշտության մեղեդիների տարրերը, որոնք զգալիորեն տարրերվում են մեր եկեղեցու հիմնական ձայնեղանակներից:

Առանձնապես գեղեցիկ են էջմիածնական տարրերակները, որ տեղ են գտնել Վաղարշապտում 1880 թ. Հրատարակված ձայնագրայի ժամագրքում, այն մշտապես երգվում է Մայրականքում:

Խրատ Արևագալին

«Իսկ Արևագալի եղիցի Սաղմոսն թէ պատուաւորք ոք չլինի, աշկերտի դասուն է, և Օրհնութիւն և Փառքն և Արևագալի կանոնի սկսանելն աւագերիցու դասուն է: Արևելից շարականն և իր տաղն և քարոզ աւագ երիցու դասուն է: Աղօթքն՝ երեկօրեայ աւագ երիցուն դասուն է. շարականն աւագ երիցուն է: Աղաղակեցէք սաղմոսի սկսին՝ աւագերեցու դասուն է: Նարականն աւագերեցուն է. Ճգնաւորքին մաղթանքն հասարակաց է. քարոզն աւագերեցու դասուն է. Աղօթքն աւագերեցուն է: Աստուած, Աստուած իմ սաղմոսի սկսին աշակերտի դասուն է. նոյնպէս և շարականն: Լոյս Ա-

րարչն և մաղթանքն Հասարակաց է, քարոզն աշակերտի դասուն է. աղօթքն նախորդ աւուր երիցուն է: Տէր Հովուեսցէ սազմոսին սկսիլն և շարականն ճանապարհ և իւր աղօթքն աւագերիցու դասուն է կամ վեհագունին: Իսկ ի սրբոց տօնսն յետին աղօթքն զԱռաջնորդ կենացն ասա: Եւ ի պահոց աւուրն, Օրհնեալ ես Տէր Աստուած փրկիչ: Հայր մեր որ յերկինս ես: Եւ արձակելն աւագերիցու դասէն է: Ի վճարելն մինչ զՀայր մերն ասա. նախ ասա, Օրհնեալ Տէր մեր և փրկիչ Թիսուս Քրիստոս և ապա Հայր մեր» (Մ. Օրմանեան, «Միասագիտութիւն Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ, 1977, էջ 63):

ՃԱՇՈՒ ԺԱՄ

Կարգաւորութիւն հասարակաց աղօթից Հայաստանյաց եկեղեցու երրորդ ժամուն, որ կատարի ի դէմս իշնան Հոգուոյն Սրբոյ:

Հայաստանյաց եկեղեցու հասարակաց աղոթքի ձաշու երրորդ ժամի կարգը, որ կատարվում է ի դէմս Սուրբ Հոգու իշնան:

Հայաստանյաց Առաքելական և. Եկեղեցու ինը ժամերգություններից երեքը ճաշու ժամերգություններն են, որոնք մեր ժամագրքում դրված են Արևագալի կարգից Հետո և ունեն Հետևյալ Հաջորդականությունը.

Երրորդ ժամ,
Վեցերորդ ժամ,
Իններորդ ժամ:

Ճաշու ժամերգությունների այս կարգը պետք է Հաստատված լինի 4-5-րդ դարերում, երբ առավել կայունացվում ու պայծառանում էին Եկեղեցական բարեկարգությունները: Ճաշու ժամերգությունների կարգը Հնում, անկասկած, կատարվում էր կանոնավոր կերպով ամեն օր և՝ Եկեղեցիներում, և՝ վանքերում, և՝ անպատճերում՝ որոշակի ժամերին: Ինչպես մյուս ժամերգությունների պարագայում, ճաշու այս երեք ժամերը ևս կրել են զգալի փոփոխություններ, ճոխացվել ու Հարստացվել են 12-13-րդ դարերում: Սրա վառ ապացույցն է գեղեցիկ ու բարձրարվեստ Հոգեւոր երգերի առկայությունը այս ժամերգությունների մեջ, որոնք ներմուծվել են Շնորհալու օրոք, և որոնց Հեղինակը ինքը՝ Շնորհալի Հայրապետն է:

Ինչ վերաբերում է այս կարգի Հեռության խնդրին, կարելի է

վկայակոչել Օձնեցի Հայրապետի գեղեցիկ մեկնությունները, որոնք նվիրված են երրորդ, Վեցերորդ և Իններորդ ժամերի աղօթքների խորհուրդներին: Օձնեցին «Յաղագս կարգաց եկեղեցւոյ» աշխատության մեջ չի խոսում երգերի և այլ բաղադրիչների մասին, որոնք մաս են կազմում այս երեք կարգերին:

«Երրորդ ժամու աղօթից խորհուրդս ի վեր է քան զմեր կարողութիւն:

Բայց ինձ այսպէս թուի, եթէ տեսառն մերոյ Յիսուս Քրիստոսի ՚ի կրիցն ՚ի ներգործութեանցն կարգեալ, զոր կատարեաց յայսմ ժամու ՚ի կենարար չարչարանս իւր. յասել երանելւոյն Մարկոսի, եթէ աէր ժամ երրորդ և հանին զնա ՚ի խաչ»:

Իսկ թէ ինչու Հատկապես այդ ժամին է նա Եկել բարձրանալու խաչին: Օձնեցին ասում է. «Քանզի յայնմ ժամու, որպէս յառաջն ասացաք, գերեալ լինի նախաստեղին ՚ի բանսարկուէն տրփական կերակրօքն ՚ի ժառոյս մահաբեր և ՚ի չար խորհուրդն...»:

Այնուհետև Օձնեցին վկայակոչում է մի շարք այլ զուգահեռներ Սուրբ գրքից և ավելացնում: «Այս է պատճառ երրորդ ժամու աղօթիցն...»:

Ինչ վերաբերում է Երրորդ ժամի մեծ և փոքր քարոզներին ու աղօթքներին. դրանք Հանգամանորեն մեկնել է Ա. Անձնացին՝ (տե՛ս մեկնություն էջ 257-269):

Այս մեկնություններում խնդրու առարկա քարոզները՝ Հատկապես մեծ քարոզներն ու նաև աղօթքները, անկասկած, հին են՝ Հավանարար Հորինված 5-րդ դարում՝ Հովհ. Մանդակունու կողմից:

Ահա ճաշու Երրորդ ժամի բաղադրիչներն ըստ Հաջորդականության.

Հայր մեր

Օրհնեալ Հոգին U. Աստուած ճմարիտ:

Սղ. Ծ. - Ողորմեա ինձ Աստուած:

Երգ Երրորդ ժամու աւուրն «Օրհնեմք ըզքեզ...»:

Մաղթանք - Յամենայն ժամու աղաչանք իմ:

Քարոզ Մեծի Պահոց «Միաբան ամենեքեան»:

Աղօթք - Որ ի քրովքական...:

Հանգիստ - Որ էիր յառաջ քան...:

Սղմ. - Տէր Աստուած օրհնեալ՝ 3 տուն:

Քարոզ - Խնդրեացուք Հաւատուվ:

Աղօթք - Առաջնորդեա մեզ...:

Քարոզ - Ցիշեա՝ Տէ՛ր, զպաշտօնեայսն...:

Աղօթք - Բարերար և բազումողորմ....:

Փոխ Սղմ. - Տէր Հովուսցէ զիս...:

Քարոզ - Գուշաբանելով աղաչեսցուք....:

Աղօթք - Խաղաղութեամբ քով....:

Այսուել մեջբերվեց երրորդ ժամն ամբողջությամբ, որից սովորական և Պահոց օրերին, եթե անհրաժեշտ է կատարել ճաշու ժամ, կարդացվում են միայն կարծ քարոզներն ու աղոթքները, իսկ Մեծ Պահոց շրջանում կատարվող ճաշու ժամերգության ընթացքում կարդացվում են բոլորն անխտիր՝ և՛ քարոզները, և՛ երկար աղոթքները՝ նրանց հետ նաև կարճերը: Այս կարգը վերաբերում է նաև Վեցերորդ և իններորդ ժամերին՝ ըստ ժամագրքում դրված կարգի:

ՃԱՇՈՒ 6-ՐԴ ԺԱՄ

Կարգաւորութիւն հասարակաց աղօթից Հայաստանյաց
եկեղեցւոյ որ կատարի ի դէմս Հօր Աստուծոյ:

Ահա Վեցերորդ ժամի բաղադրիչների կարգը.

Տերունի աղօթք, Հայր մեր, Օրէնքալ Հայր ս. Աստուած ճշմարիտ:

Սղմ. Ծ - Ողորմեա ինձ Աստուած:

Երգ - «Խաւարեցաւ լոյսն արևուն...»՝ 3 տուն:

Մաղթանք - «Յամենայն ժամու...»:

Քարոզ - Մեծի Պահոց - Արթուն մտօք:

Աղօթք - Զգեցո մեզ...:

Հանգիստ - Երկնային խաղաղութեամբ քո:

Սղմ. - Տէր, մի յիշեր զմեղս մեր....:

Քարոզ - Վասն հիւանդաց....:

Աղօթք - Փարատեա զցաւս:

Քարոզ - Ցիշեա տէր զպաշտոնեայսն....:

Աղօթք - Բարերար և բազումողորմ:

Սղմ. - Երանի որ խորհի զաղքատն:

Քարոզ - Խնդրեսցուք հաւատով ի Հօրէ....:

Աղօթք - Հայր զթութեանց....:

Ինչպես տեսանք, Վեցերորդ ժամի կարգը հիմնականում նույնն է, ինչ երրորդ ժամի կարգը, փոխվում են ինչպես քարոզները, այնպես էլ աղոթքները և երգը, որը նույնպես երեք տուն է և երգիսում է միևնույն ԳԶ ձայնեղանակով, ինչպես «Օրէնքմբ զբեզպ»-ը և իններորդ ժամի «Զարչարակցեալ» երգը:

Այս ժամի երգի քարոզների և աղօթքների տողերում ևս, ինչպես երրորդ ժամի, խոսվում է այդ ժամին պատահած դեպքերի և իրադարձությունների մասին՝ ըստ Ավետարանի:

ՃԱՇՈՒ 9-ՐԴ ԺԱՄ

Կարգաւորութիւն Հասարակաց աղօթից Հայաստանեայց եկեղեցվոյ, որ կատարի ի դէմս Որդույն Աստուծոյ:

Իններորդ ժամը, ինչպես ցույց է տալիս վերնագիրը, ուղղված է Աստուծու Որդուն: Կարգը նույնն է: Տերունի աղոթքից և Ծ սաղմոսից հետո երգիսում է երգ իններորդ ժամի՝ «Զարչարակցեալ քեզ տիւ լուսոյ...» ապա նույն հաջորդականությամբ.

Քարոզ - «Մեծի Պահոց» Սուրբ սրտիւ:

Աղօթք - Տէր զօրութեանց....:

Հանդիստ - Բազումողորմ Աստուած....:

Սղմ. - Տէր, մի մատներ:

Երգ ԲԶ - Նահապետին Աբրահամու....: Այս երգի ծայրակապն է ներսես:

Քարոզ - Աղաչեսցուք զկենսատու....:

Աղօթք - Անկեալ առաջի քո....:

Քարոզ - Ցիշեա Տէր....:

Աղօթք - Բարերար և բազումողորմ:

Ժամագրքում սաղմոսից հետո հասարակ և Հարության կիրակի օրերին ճաշու ժամերի համար դրված են Հանգատյան շարականներ՝ ըստ ութ ձայնների:

ՇԱՐԱԿԱՆՔ ՀԱՆԳԱՏԵԱՆ ՏԵՐՈՒՆԵԱՅ ԵՒ

ՄԱՐՑԻՐՈՍԱՅ ԸՍՏ ՈՒԹ ԶԱՅՆԻՅ

ԱԶ - Որ ստեղծմամբ...՝ 4 տուն:

ԱԿ - Արարիչ Աստուած...՝ 4 տուն:

ԲԶ - Որ կոչեցեր առ քեզ Տէր...՝ 4 տուն:

ԲԿ - Որ որդիդ ես և բանդ Աստուած...՝ 4 տուն:

ԳԶ - Հայր բարեգութ...՝ 4 տուն:

ԳԿ - Ցանակզրնական ծոցոյ...՝ 6 տուն (Մայրակառը Յակովը է):

ԴԶ - Ցործամ Հարկանի փող՝ 4 տուն:

ԴԿ - Որ թագաւորդ ես յաւիտ՝ 4 տուն:

Արանք երգիսում են ըստ օրվա ձայնի, ատյանում՝ խմբով, ապա

ասվում է «Հոգւոցն» հանգուցելոց և այլն, որից հետո եթե պետք է ս. պատարագ մատուցվի, ժամօրհնողը ասում է «Հայր մեր» և «Զաւաղմուսերգութիւնս» մաղթանքը և «Խորհուրդ խորին» շարական հանդերձի: Շարականի հեղինակը Խաչատուր Տարոնացին է:

Մեծ Պահոց օրերին, քանի որ Հանգույան շարական չի երգվում, «Սիրեցի» սաղմուից հետո ասվում է Արարչականը: Ըստ Հնագանդ սովորության՝ Ս. Էջմիածնի Մայրավանքում Մեծ Պահքի օրերին, բացի շաբաթ, կիրակի օրերից, ճաշու ժամերգությունը կատարվում է ժամը 11-ին: Ողորմյաների կարգի հետ կցվում է նաև Երեկոյան ժամը՝ Համբարձիով և վերջում ատյանում ծնկաչոք երգվում է «Տէր ողորմեան»:

Ինչպես Հայտնի է, Երեկոյան ասվող «Հասեալքս» քարոզի և նրան Հաջորդող աղոթքի մեջ Երեկոյիսի փոխարեն ասվում է «Հասեալքս ի ժամ միջօրէիս»...

Ճաշու երեք ժամերգությունների մասին խոսելիս տեղին է նշել սրանց մաս կազմող երկար քարոզների և աղոթքների լեզվառնական բարձրարվեստ արժանիքների մասին:

Դրանք հորինված են խոր ջերմեանդությամբ, անկեղծ զղումի և ապաշխարության ոգով:

ՄԵԼԱԿՈՒԹՅԻՆ

Վեցերորդ և իններորդ ժամերգությունների ու քարոզների մեկնությունը հանգամանորեն կատարել է Հ. Օձնեցին, իսկ Խ. Անձնացին մեկնել է «Զգեցո մեզ տէր Աստուած մեր զէն արդարության աղոթքը և իր «Երկնաւոր խաղաղութեամբդ քո» Հանգիստը՝ «Նորին Խոսրովու Սակս աղօթիցն» (Էջ 276-280), իսկ իններորդ ժամից Խ. Անձնացին մեկնել է «Սուրբ սրտիւ և Հաստատուն Հաւատով» մեծ քարոզը և «Տէր զօրութեանց» աղոթքը և իր «Բազումողորմ Աստուած և Հաստիչ խաղաղութեան» Հանգիստը (Էջ 290-297, 297-304):

ԵՐԵԿՈՅԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ

«Կարգաւորութիւն Հասարակաց աղօթից Հայաստանեայց եկեղեցւոյ Երեկոյան ժամու, որ կատարի ի դէմս Որդւոյն Աստուածոյ, որ էջի խաչէն և պատեալ պատառակալաւ եւ եղաւ ի գերեզմանի»

Երեկոյան ժամերգությունը երրորդ գիշավոր ժամերգությունն է Գիշերային և Առավոտյան ժամերից հետո: Ինչպես պաշտամուն-

քային մյուս ժամերը, Երեկոյան ժամերգությունը ևս սկսվում է «Հայր մեր»-ով, որին Հաջորդում է մաղթանք «Ես առ Աստուած կարգացի», ապա՝ «Սպասէի Աստուածոյ իմոյ», «Փառք Հօր»: Եվ ևս խաղաղութեան... Օրհնութիւն. և ապա՝ փոխ «Խոնարհեցո»՝ որ է սղմ. ՁԵ (85) 1-16, երկրորդ փոխը՝ «Ապրեցո զիս Տէր», սղմ. ՁԼԹ (139) 1-14, ՁԽ (140) 1-10, ԽԱ. (41) 1-8: Այս երկու փոխերի միջն կամ մի փոքր մաղթանք՝ «Փառք քեզ Աստուած, փառք քեզ, յաղագս յամենայնի տէր, փառք քեզ», և ապա նորից «Եւ եւս խաղաղ. և օրհնութ»:»

Լի օրերին փոխին հետևում է երեկոյան փառը կամ մաղթանքը՝ «Օրհնեալ Տէր, որ բնակեալդ ես ի բարձունս», իսկ կիրակնամտին՝ փոխին հետևում է «Լոյս զուարթ» գեղեցիկ երգը, որը նույնպես կազմությամբ նման է մաղթանքներին: Այն կոչվում է նաև «Երդ կիրակնամտից կամ Օրհնութիւն ճրագաց»:

«Լոյս զուարթ»-ը Մեծ Պահոց շաբաթ օրերին ասվում է թիվ՝ մաղթանքի նման: Բացի սովորական շաբաթ օրերից, այս երգն երգվում է նաև Տյառնընդառաջի նախատոնակին, փետրվարի 13-ի երեկոյան, ինչպես նաև Աստվածհայտնության ճրագալուցին, և եթէ կիրակնամուտ լիցին, այսինքն՝ եթե օրը շաբաթ լինի, գրում է Տոնացույցը: Քրիստոնյա եկեղեցու հնագույն երգերից է «Լոյս զուարթ»-ը, որ ամենայն հավանականությամբ թարգմանվել է Հունարենից՝ Հինգերորդ դարում՝ ուրիշ երգերի, աղոթքների ու քարոզների հետ: Երգի հունարեն բնագիրն ունի «Երգաբանանութիւն ի վերայ երանելի երրորդութեան, արարեալ Սաֆրանիսի պատրիարքին Երուսաղէմայ» վերնագիրը:

Հունարեն բնագիրը Հայերենի համեմատ ունի զգալի տարբերություն:

ՀՈՒՆԱՐԵՆ ԲՆԱԳԻՐ

«Լոյս զուարթ Սուրբ փառաց

Անմահի Հօրն երկնաւորի

Սրբոյ Երջանկի, Ցիսուս Քրիստոս:

Եկեղեցս ի մտանել արեգական

տեսեալ զլոյս երեկոյան

օրհնեմք զՀայր, զՄորի և զսուրբ Հոգին»

**Արժանի ես յամենայն ժամանակս Աստուած
Օրհնել ձայնիք զուարթութեան,
Որդի Աստուծոյ, տաս զկենդանութիւն տուող,
Վասն որոյ աշխարհս քեզ փառաւորէ...»:**

Հայկական տարբերակ՝

Աշակերտի դաս

**Հոյս զուարթ սուրբ փառաց անմահի
Հօր երկնաւորի, Սրբոյ Կենարարի Յիսուս Քրիստոս:**

Ավագ

**«Եկեալքս ի՞նքանել արեգական
Տեսաք զլոյս յերեկոյիս:
Օրհնեմք զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգիոյ Աստուծոյ.
Եվ ամենեքեան ասեմք Ամէն:**

**Արժանաւորեա զմեզ յամենայն ժամ օրհնել ձայնիւ երգով
գանուն փառաց ամենասուրբ երրորդութեանդ, որ տայ զկեն-
դանութիւն. վասն որոյ և աշխարհս զեզեզ փառաւորէ»:**

Ինպես տեսնում ենք, սա սովորական և սոսկ Հունարենից կատարված թարգմանություն չէ, այլ այն ենթարկվել է պատշաճ խմբագրության, նկատելի և տեղին Հավելումներով այն դարձել է Հայադրոշմ: Վերոհիշյալ թնագրով «Հոյս զվարթը» մեզ է հասել 11-12-րդ դարերից: Բնագրի Հայացման սույն երևույթը մեզանում սկսվել է դեռևս 5-րդ դարում: Հունական ժամագրքից հապճեպ կատարված թարգմանությունները, լինեն դրանք երգեր, քարոզ-ներ, մաղթանքներ և աղոթքներ, հետագայում առավելագույն չափով Հայացվել են՝ ենթարկվելով Հայերենի լեզվամտածողության կանոններին՝ ինչպես նաև Հայ եկեղեցու ուղղափառ դա-
վանության ու աստվածաբանության սկզբունքներին:

«Հոյս զուարթ» երգի մասին ավելի մանրամասն տե՛ս «Հանդես Ամսօրյա», Լե, էջ 447, «Բագմավեպ», 1914, էջ 142-143, Գաթրջան, «Սրբազն պատարագամատուց», էջ 296, Հայր Վ. Հացունի «Պատմութիւն Հայոց Աղօթամատուցին» Վենետիկ 1965, էջ 203-204, 269-276, 294:

Քարով Հասեալքս

Երեկոյան ժամերգության առաջին քարոզն է «Հասեալքս ի ժամ երեկոյիս», և քանի որ քարոզը պահանջում է նաև աղոթք, ուստի նրան հաջորդում է նույնանուն համառոտ մի մաղթանք, որի գոյությունը ևս բավականին հին է, ինչպես և «Հասեալքս» քարո-
զինը: Մեր ասածի վառ ապացուցն այն է, որ դրանք 10-րդ դարում տեսել և մեկնել է Խ. Անձնացին:

Բովանդակությամբ և ոճով «Հասեալքս»-ը նման է առա-
վույան ժամերգության «Երկրպագեմք քեզ Տէր Աստուած մեր» քարոզին: Այս երկու քարոզները ոչ հրավերի ձևով են ուղղված Աստծուն: Անձնացին այն կոչում է «Գոհութիւն երեկոյին», «Ապա վերածայնէ սարկաւագն գերեկոյին գոհութիւնն ըստ նմանութեան առաւօտին և պատարազին գոհարանութեան և ասէ այսպէս...»

«Հասեալքս» կարծ մաղթանքին հաջորդում է «Մեսեղի և Ռող-
ղեսցի»: «Մեսեղի» Հունարեն նշանակում է «միջանկալ երգ»: Այն վերցվել է Հունարեն աղոթմամատուցից, որտեղ նույն երգերը կան նույնպես երկուական սաղմոսներից՝ ըստ ավուր պատշաճի, որոն-
ցից շատերը համընկնում են մեր ժամագրքի մեսեղիներին: Ինչպես կրակնամտիցը՝ «Աստ օրհնեցէք... Ո կայք ի տան տեառն», Տէր թագաւորեաց... Զգեցաւ տէր զօրութիւն, Տէր լուիցէ... ի կարողալ իմում, Օգնութիւն ինձ ի տեառնէ. Համբարձի զաքս իմ...»:

Ինչ խոսք, մեր մեսեղիները այս շրջանում՝ մանավանդ Ծձնեցու օրոք, (Ը դար), ավելի ճոխ էին ու բազմաթիվ, քան Հունականները, որոնք ինչպես երևում է մեր 1285 թվականի Լոնդոնի մանրուսումի հնագույն օրինակից, բաժանված էին ըստ Տերունական տոների, ըստ Մարտիրոսաց և Ապաշխարության օրերի: Ինչ վերաբերում է «Ուղիղ եղիցին աղօթք իմ» («Ռողղեսցին» սաղմոսատունին (Ճի 2) (140), այն հիշատակված է Առաքելական սահմանադրության մեջ (ԲԾԹ 259), այս վերջինը հաճախ է հանդիսում մեր մանրուսում-ներում՝ խազագրված վիճակում: Խազագրված լինելու հանգա-
մանքը ցույց է տալիս, որ դրանք ասվել են ձայնիվ, այսինքն երգվել են: Այդ մասին է վկայում նաև Մաքենոցաց իրատը, որը թեղադ-
րում է, թե մեսեղին ասվում է «Ի ձայն կամ ի թիւ»:

Նույն Մաքենոցաց խրատի համաձայն, Մեսեղի և «Ռողղես-
ցին»-ը ավագ երեցի դասինն է:

Քարով «Աղաչեսցուք»:

Հին ժամագրերում երեկոյան բուն քարոզը «Աղաչեսցուքն» է:

Ամենայն հավանականությամբ այս քարոզը եղել է ոչ միայն Պահոց օրերի համար, այլ նաև Սրբոց տոների, քանի որ իրու երեկոյան քարոզ հիշվում է միայն «Մայր Սուրբ»-ը, «Աղաջեսցուքից» բացի: Անձնացին այս քարոզն է միայն մեկնել (տե՛ս էջ 336). «Այնպիսի ջերմ մէր պարտիմք ունել առ ամենայն աշխարհի խաղաղութեան հոգալ և աղաչել զԱստուած...»

- Եւ որպէս վասն աշխարհի խաղաղութեան գամենայնն յաւելու, նոյնպէս և վասն եկեղեցւոյ զկաթողիկէն ի վերայ թերէ, այսինքն է տիեզերական: Զի վասն ամենայն տիեզերաց եկեղեցեաց աղաջեսցուք զԱստուած՝ Հաստատուն պահել յառաքելադիր սահմանան: Եւ զի զամենայն եկեղեցիս, որք ըստ առաքելոցն են դավանութեան՝ մի եկեղեցի Համարեսցուք»:

Անձնացին վկայակոչում է Եպիփան Կիպրացուն, որը սաղմոսների մեկնության մեջ հիշում է, թե «վասն այնորիկ միայնոյ միասնական եկեղեցւոյ ասեմք, զի ամենայն կաթողիկէ եկեղեցի աստուծոյ ի ծագաց մինչև ի ծագս երկրի մի և միայն ասի»: Անձնացին ընդարձակ կերպով մեկնել է այս գեղեցիկ քարոզը: «Աղաջեսցուք»-ի մեջ Հայցվում է ամենուրեք խաղաղություն եկեղեցու, պետության ու նրանց պաշտոնյաների համար, որպեսզի «Ամենայն ուրեք խաղաղութիւն մեզ և մերոց լինիցի, և նոքա առ մեզ, և մեք առ նոսա խաղաղացեալ լիցուք և ազատեալք յամենայն խոռոշութեանց ի խաղաղութեանց Աստուծոյ, որ կարողն է առ ամենայն պատերազմուն Հաղթութիւն տալ..».

Թեև հին ժամագրքերում «Աղաջեսցուք» Հանդիպում է, իսկ «Ասացուք» քարոզը՝ իրու կիրակնամտից, սակայն դժվար չէ նկատել, որ այս վերջինը «Աղաջեսցուք» քարոզի տնատված ձևն է՝ այն տարբերությամբ, որ «Ասացուքի» մեջ առանձին հիշատակվում են:

1. Վասն Հայրապետին մերոյ...
2. Վասն բարեպաշտ թագաւորացն և աստուածամբ իշխանաց... Յաղագս ճանապարհորդաց և նաւորդաց...
3. Վաղագս հիւանդաց և ամենայն վշտացելոց՝ փութապէս առողջութեան...

Յաղագս բարեխառնութեան օդոց՝ անձրեաց քաղցրութեան և պտղոց առատութեան...

Յաղագս ուխտաւորաց և պտղաբերից ի սուրբ եկեղեցի Աստուծոյ...

«Ասացուք» քարոզը ունի նաև միջանկյալ մի մաղթանք՝ «Բարեխոս ունիմք սուրբ զՄարիամ զաստուածինն...», որտեղ հիշատակվում են նաև սուրբ Հովհաննես Մկրտիչը, Ստեփաննոս Նախավկան, առաքյալներն ու մարգարեները, արի և Հաղթող սուրբ վկաները և Հայաստան աշխարհի մեծ լուսավորիչ սուրբ Գրիգորը: Մաղթանքից հետո շարունակվում է «Ասացուքի» մնացած մասը:

Աղօքք «Լուր ձախից մերոց»

Երեկոյան ժամերգության մեծ աղոթքն է այս, որի հանգիստն է «Քեզ երկիր պագանելով»: Մեր ժամագրքի հնագույն աղոթքներից է, որի մասին թեև Օձնեցին լուռմ է, սակայն Անձնացին այն մեկնել է մանրամասնորեն: Հետաքրքիր է, որ աղոթքի առաջին մասի մեկնության մեջ՝ «Յաւել ի մեզ տէր ամենակալ...», Անձնացին գրում է «Հաւատաս խնդրեցին յաւելով առաքեալքն և մեք ի նոցանէ խրատեալք զնոյն աղաջեսցուք...»:

Իսկ մերն ըստ Անձնացու միավորում է Աստծուն մարդկանց հետ. «Եւ զամենայն գործն առաքինութեան... Առաքինության գործերն ըստ մեկնիչի, բխում են Հավատքից, Հույսից և սիրուց, և եթե կարողանանք ստանալ այդ երեքը, ապա «Դիտաւ զամենայն առաքինութիւն ուղեցենք և կամարարք Աստուծոյ լինիցիմք»: Այս կերպ մեկնվել է նաև աղոթքի հանգիստը:

Այս աղոթքը ավագ երեցի դասինն է, հնում այն պարտադիր կերպով պետք է ասեր ժամարարը՝ դրանով իսկ վերջացնելով իր օրվա կարգավարությունը:

Սուրբ Աստուծ - երեքսրբեան

Այս մասին արդեն խոսվել է առավոտյան ժամերգության մեջ: Այն երգվում է՝ ըստ օրվա պատշաճի, սակայն պետք է ավելացնել, որ այս երգի մեղեղին ունի մի քանի տարբերակ: Խոսքը վերաբերում է երեկոյան ժամերգության ընթացքում երգվող «Սուրբ Աստվածին»: Այսպես կիրակնամտի համար կան Հարության և խաչի ծանր եղանակներ, իսկ կիրակի երեկոյի Համար գոյություն ունի այլ տարբերակ, որն ավելի սահուն է:

Ավանդությունը «Սուրբ Աստված» երգի հեղինակ է ճանաչում չովսեփ Արևմաթացուն:

«Սուրբ Աստվածածին» երգին Հաջորդում է մաղթանք («Փրկել զմեզ ի փորձութենէ») և ապա քարոզ («Վասն լսելի լինելոյ») և ապա՝ փոխ «Համբարձի զաշս իմ»:

(Մաղմոս Ճի 120 1-8):

Շարական Համբարձի

Կանոնի վերջին ուժերորդ բաղադրիչն է «Համբարձին»: Մաքենոցաց խրատը թելադրում է, որ «Համբարձի» շարականը, եթե չորս տուն լինի, ապա միջին տները պետք է կրկնել: Եթե հինգ տուն է՝ պետք է կրկնել վերջին տունը, իսկ եթե վեց տուն է կրկնելու հարկ չկա:

Ս. Էջմիածնի Մայրավանքի ավանդական սովորությունն այն է, որ երբ ՀՄԲ շարականը երեք կամ հինգ տուն է, ապա պետք է կրկնել առաջին տունը, որպեսզի փառքի տունը մնա Ավագ դասին, այսինքն՝ նրան, ում պատկանում է սկսվածքը:

Վեց տուն լինելու դեպքում ՀՄԲ երգվում է առանց կրկնության: Համբարձի շարականները լինում են նաև Հատուկ՝ այս կամ այն տոնի Համար: Կան նաև Համբարձի շարականներ, որոնք երգվում են որոշակի կարգով: Այս վերջիններս են.

Հարության,

Մարտիրոսաց,

Պահոց:

Հարության Համբարձիները նույն Հարության «Տէր Հերկնիցներն են», որոնք տարվա ընթացքում կրկնվում են երկու անգամ. նախ Հինանց շրջանում՝ սկսելով Զատկի օրվանից մինչև Համբարձման նախորդ օրը: Հայտնի է, որ այս շրջանում՝ շարաթ օրերին երգվում են Գալստյան Համբարձիներ, Դաշտագույքը Գողովը յաշխարհ...» չորս պատկեր, ուստի այդ օրերին չերգված «Հարության Տէր Հերկնիցները» վերջում երգվում են միասին՝ մի քանի պատկերներ միաժամանակ:

Հարության «Տէր Հերկնիցներից» կազմվել են նաև Հարության քաղվածոց օրնությունները՝ բոլոր ձայնեղանակներով, բացի Դեկտեմբերից՝ սրանք՝ իրրեն օրնություն երգվում են Զատկին Հաջորդող առաջին շարաթվա վեց օրերին, քանի որ յոթերորդ օրը Կրկնազատիկ է կամ նոր կիրակի, որն ունի իր Հատուկ կանոնը՝ «Նորոգեալ կղզիք», Տոնացոյցը թելադրում է. «Զաւագ օրնութիւնն Դեկտեմբերական գհետն ասա»: Այսպիսով, Ստ. Սյունեցու Հարության Ավագ օրնություններից Դեկտեմբերի 9-ի Յաղթականը սկսում է երգվել Կրկնազատիկ օրը, իբրև կցորդ՝ «Նորոգեալ կղզիքս օրնութեան»:

Ցուրաքանչյուր Հարության քաղվածոց օրնություն բաղկացած է վեց «Տէր Հերկնիցներից», որոնց ավելանում են չորս Տօնօրինական պատկերներ, որով կազմվում է տասը պատկեր ունեցող

օրհնություն:

Հարության օրհնություններն երկրորդ անգամ սկսում են երգվել՝ սկսած Հոգեգալստյան Հաջորդող կիրակի օրվանից, նրանց հետ՝ նաև «Հարության Համբարձիները» մինչև բուն Բարեկենդանի նախորդ կիրակին:

Այս Տոնացոյցի խրատը այս մասին.

«Զյարութեան Համբարձին աստի սկսեալ, ասա ի կիրակեան ի ձայնէն. և յորում կիրաէի այլ տօն պատահիցի, յորժամ ոչ ասիցէս զամբարձին յարութեան, ի մտի պահեա յորժամ նոյն ձայնիւն կիրակէ պատահիցի, թ. ասա Համբարձին, որպէս ցուցանէ քեզ տարբագին, (Տոնացոյց, 1906, էջ 107):

Մարտիրոսաց համբարձիներ

Մարտիրոսաց Համբարձիները ևս երգվում են՝ ըստ օրվա ձայնի: Եւ քանի որ ոչ բոլոր ձայները Հատուկ «Տէր Հերկնիցներ» ունեն, ուստի վերջինը կամ վերջիններից մեկը երգվում է իբրև Համբարձի:

Պահոց համբարձիների կարգը

Պահոց կամ ապաշխարության Համբարձիները ևս երգվում են՝ ըստ օրվա ձայնի, այն տարբերությամբ, որ սրանք ոչ թե «Տէր Հերկնիցներ» են, այլ պարզապես Համբարձիներ, որոնք բաղկացած են մեկ պատկերից՝ երեքական տներով, իսկ Աջ, Դաշտ և Գեղ ձայների Համբարձիներն երկուական պատկեր ունեն՝ երեքական տներով:

Եթե Հարության և Մարտիրոսաց քաղվածոց օրհնությունները հիմնականում կազմվում են «Տէր Հերկնիցներից», ապա «Պահոց քաղվածոց օրհնությունները» բացառապես կազմված են Ողորմաներից:

Համբարձի կիրակնամտից Սուրբ եւ Տէր Սուաշին ձայն (Ա2)

Այս Համբարձին, որը երգվում է ամբողջ տարին՝ շարաթ օրերին, բացի Հինանց և Մեծ պահոց շրջանից, բաղկացած է երեք մասից, այն է՝ երկու պատկեր Հատուկ «Մարտիրոսաց Համբարձի», մեկ պատկեր՝ «Հովհաննես Մկրտչի գլխաւոման Տէր Հերկնից» և երկու տուն Հավելված Աստվածածնի և Խաչի շարականներից:

Այս Համբարձիի կցորդ պատկերը «Երկնաքաղաքացին» է, որը սակայն Առաքելոց տոներին փոխվում է, և նրա փոխարեն երգվում

է «Ի քէն Հայցեմք» ԱԶ շարականը, որը բաղկացած է մեկ պատկերից՝ չորս տներով, որին իրրև հավելված կցվում է «Այսօր նոր ժողովուրդք» «Մեծացուսցեի» երկրորդ կամ երրորդ տունը՝ իրրև «Փառք և Այժմ և Միջտ»:

Հետաքրքիր է, որ Հին Տոնացույցը Զորավարաց տոնին «Ի քէն Հայցեմք» ի փոխարեն դնում է «Զինաւորն Քրիստոսի» շարականը, որը Ս. Սարգսի կանոնի մանկունքն է:

Ծանոթություն. Քառասնորդական պահոց շաբաթ և կիրակի օրերին, իրրև ՀՄԲ շարական, երգվում են Մեծ պահոց վեց կիրակիների օրնությունները Հետևյալ կերպ. շաբաթ երեկոյան երգվում են կիրակի օրերի Համար գրված օրնությունների երկու պատկերները՝ վեց կամ ութ տուն, որոնք նույն ձևով երգվում են նաև Հաջորդ կիրակի օրը՝ իրրև օրվա օրնություն։ Խսկ դրանց առաջին պատկերը՝ երեք կամ չորս տուն, երգվում են իրրև ճաշու շարական, իսկ երկրորդ պատկերները՝ որպես Համբարձի։ Այսպիսով Ներսես Շնորհալու Հորինած վեց օրնություններից յուրաքանչյուրը երգվում է նաև իրրև Համբարձի՝ շաբաթ և կիրակի օրերին, իսկ սուրբ պատարագին կիրակի օրը՝ որպես ճաշու շարական։

Նարունակելով կիրակնամտի ժամերգությունների մասին մեր խոսքը՝ ասենք, որ շաբաթ օրերին Համբարձի շարականին Հաջորդում է քարոզ՝ «Վասն խաղաղութեան», և ապա աղոթք՝ «Հայր գիտած» աղոթքը, որից Հետո ժամարարը Ավետարանը ձեռքին դուրս է գալիս խորանից, մոմակաների և բուրգառակիր սարկավագի ուղեկցությամբ։ ԱՄինչ փոխասացները քաղում են «Աստօրնեցք» սաղմոսը, սարկավագը բարձրաձայն ասում է «Խնդրեացք» քարոզը, ապա՝ դասերից «Կեցո տէր»-ը և երեք «Տեր Ողորմյա»՝ ձայնով։ Ժամարարն արտասանում է «Թագաւոր խաղաղութեան» աղոթքը, և «Հայր մեր»-ը և ապա արձակում՝ «Որհնեալ եղերուք»։

Կիրակամտի արձակման այս կարգը կրում է որոշ փոփոխություն Աստվածածնի, Խաչի, Եկեղեցու և լի օրերին։ Այսպես՝ Աստվածածնի և Հայունության տոներին վերջին քարոզը ասվում է «Սուրբ Աստուածածին»-ն, իսկ աղոթքը՝ «Ընկալ տէր»։

Խաչի տոնին, ինչպես նաև Մեծ Պահոց շրջանում՝ շաբաթ, կիրակի օրերին քարոզն է «Սուրբ Խաչիս», աղոթքը՝ «Պահապանեազեղ» Մեծ Պահոց օրերին՝ սակայն՝ առանց Ավետարանի և առանց շուրջառի։ Տարբեր է արձակման կարգը նաև Հասարակ օրերին։

Այսպես՝ «Հայր գիտած» աղոթքին հաջորդում է փոխ՝ «Որ բնակալն», մաղթանք՝ «Զբարձրեալն», աղոթքներ՝ «Յոյս կենաց», «Յիշեա տէր զպաշտոնեայս», «Բարերար և բազումողորմ Աստուած», «Հայր մեր» և «Որհնեալ եղերուք»։

Տերունի օրերին և Հարության կիրակիներին Համբարձի շարականներից Հետո ասվում է քարոզ՝ «Խնդրեացք», «Կեցո տէր» ձայնով, աղոթք և արձակում։

Եկեղեցու տոնին քարոզն է «Սուրբ եկեղեցեաւս», աղոթք՝ «Առ դրանս Սրբոյ եկեղեցւոյս»։

Ինչ վերաբերում է Մեծ Պահոց լի օրերին, Հայտնի է, որ Երեկոյան կատարվում է «Խաղաղականի» կարգ, որի մասին կիսում իր տեղում։

ՆԱԽԱՑՈՒԱԿ

Ըստ «Հայկազյան բառզրքի»՝ «Նախատոնակ» նշանակում է այս կամ այն տոնի սկզբնավորությունը, որ, բնականարար, կատարվում է նախորդ երեկոյան՝ ժամերգության արձակումից Հետո։ Այն մի տեսակ տոնի նախապատրաստությունն է։ Ինչպես ցույց է տալիս Տոնացույցը, այն սկզբում է ուղղակի «Հայր գիտած» աղոթքից Հետո։

Ըստ Հնագույն սովորության՝ Նախատոնակը կատարվում է ատյանում։ Հանդիսավոր իրադրությամբ։ Ահա Տոնացույցի խրատն այդ մասին։

«Եւ զեցցին միաբան քահանայքն» և ելցեն Խաչի և աւետարանաւ և ամենայն զարդուք ի դուրս ասելով շարական։ Այսօր Անսկզբնական ծնունդ իւր սարօքն»։

Սա Տեառնընդառաջի նախատոնակի հղումն էր՝ ըստ Տոնացույցի։

Կամ Աստվածածնի Ավետման տոնի մասին Տոնացույցը գրում է.

«Սուրբ Աստվածածնի Աւետեաց տօնն աստ եղաւ, որ կատարի յԱպրիլի եօթն։ Բայց յերեկոյին, որ է Ապրիլի վեց, յորում աւուր և պատահիցի, յետ աւուր պատշաճի՝ Նախատօնակ արա։ Շարական ԱԿ. «Խորհուրդն անձառ», իւր սարօքն։ Ձկնի Քըզ. Սուրբ Աստուածածինն։ Աղոթք. Ընկալ տէր»։

Նախատոնակն սկզբում է «Եւ եւս խաղաղութեան զՏէր աղախացցուք», «Որհնութիւն» և «Փառք» ով։

Կրկնակի խնկարկության կարգը պարտադիր է նախատոնակի ժամանակ, սա նշանակում է, որ «Հարցի շարականն» սկսելուց առաջ սարկավագը նորից մոտենում է Թափորապետին՝ ասելով. «Եւ

Եւս խաղաղութեան»:

Միւալ է, երբ Նախատոնակի ժամանակ՝ Հատկապես, Մայրավանքում վերջին տարիներին զգեստավորվում է Հանդիսապետ եպիսկոպոսը միայն, իսկ մնացած միաբաններն ատյան են դուրս գալիս փիլոններով։

Պետք է զգեստավորվեն, այսինքն՝ չուրջառ վերցնեն Նախատոնակի բոլոր մասնակիցները, ինչպես ասված է վերը վկայակոչված Տոնացույցի խրատում։

Թեև Նախատոնակը կատարվում է ատյանում, սակայն երգեցողությունը կատարվում է դաս առ դաս։ Երգվում է օրվա կամ տոնի Օրհնությունը, Հարցը, Մեծացուցեն, Ողորմյան և Տեր Հերկնիցը, որի վերջին երկու տները երգվում են իրու «Փառք... և Այժմ և միշտ»։

Կարելի է տարրեթել Նախատոնակի երկու տեսակ՝ Տերունի և Սրբոց։

Տերունի տոների Նախատոնակներին շարականների երգեցողությունից անմիջապես Հետո ասվում է ըստ պատշաճի քարոզ և աղոթք «Կեցո»-ի Հետ։

Սրբոց տոներին «Օրհնությունը յուր սարօքն» երգելուց Հետո Հանդիսապետը ձայնով ասում է «Քրիստոս Աստուած մեր» երեք տներից բաղկացած գեղեցիկ մաղթանքը, որին Հաջորդում է քարոզը՝ «Սուրբ ճգնաւորօքն», աղոթքը՝ «Որ ընտրեցեր» և կամ «Պատկիչ սրբոցը»։

Նախատոնակ ունեն բոլոր Տերունի տոները, բացառությամբ Խաչի, Եկեղեցի և Վարդապառի տոների, որոնց նախօրեին երեկոյան, իրու Համբարձի երգվում են տոնի կանոնի Օրհնության տները միայն։

Համաձայն Հին տոնացույցների՝ սրբոց տոներից միայն չորս Ավագ տոներն ունեն Նախատոնակ, սակայն Սիմեոնյան Տոնացույցը Հանձնարարում է նախատոնակ կատարել նաև առաջին լուսավորիչների՝ Սուրբ Թաղես և Բարդուղիմեսոս առաքյալների, Սուրբ Գրիգոր Լուսավորչի (երեք տոներին), Հոփիսիմյանց, Գայանյանց, Ղեռնյանց, Վարդանանց տոներին։ Որոշ վայրերում նախատոնակ է կատարվում նաև Սուրբ Սարգսի, Ս. Գևորգի, Ս. Հակոբի տոներին։

Նախատոնակի Հանդիսավոր կարգ կատարվում է նաև Հովհաննու Կարապետի տոներին, ինչպես և Հռենովարի վեցին։ Դրօրհ-

նեաց Հանդեսից անմիջապես Հետո, ըստ որում Տոնացույցը գրում է. «Որք եթե ի դուրս իցեն եկեալք, ի դառնալն...», «Եւ երթիցեն յեկեղեցին և ասացեն Նախատոնակ Յովհաննու Մկրտչին շարական Ան, Արեգականն»։

Նույնը տեսնում ենք նաև «Մննդյան ութօրեքին» Հաջորդող Հովհաննու Կարապետի ծննդյան տոնի առթիվ Տոնացույցի խրատում ինչպես՝ «Նախ» Տօն Մննդեան սրբոյն Յովհաննու Կարապետին։ Յերեկոյան Նախատոնակ. Արեգականն իւր սարօքն»։

Խրատք վասն երկրպագութեան եկեղեցւոյ

Ժամագրքերը երեկոյան ժամերգության վերջում մինչև Խաղաղականը զետեղում են վերոհիշյալ կարգը, որը բաղկացած է ՃիԱ (121) սաղմոսի ինը տներից, ինչպես նաև երկու տուն ՃԵ (85) սաղմոսից և ապա քարոզ «Սուրբ Եկեղեցեաւս» և աղոթք՝ «Առ զրանն սուրբ տաճարիս», փոխ՝ «Աղաղակեցէք», որից Հետո «Զփոխն լման ասա և փառք տուր» խրատը, քարոզ՝ «Օրհնեացուք» զամենակալն Աստուած», աղոթք՝ «Ի յարկի սրբութեան»։ Այս վերջին երկու աղոթքները «Օրհնեացուք» քարոզով մաս են կազմում Սուրբ պատարագի խորհրդին։

Եկեղեցու երկրպագության կարգը պարփակվում է՝ ըստ Ս. Էջմիածնի Մայրավանքի ընդունված սովորության, «Առ զրանն սուրբ Եկեղեցւոյ» աղոթքով։ Այս կարգը, այսօրվա սովորության Համաձայն, կատարվում է Մայրավանքում, երբ Ամենայն Հայոց վեհափառ Հայրապետը իշնում է մայր տաճար Հրաժեշտի առիթով և կամ վերադառնում է շրջագայությունից իջման Ս. Սեղանի առջև։ Որենք է, որ առաջին սաղմոսը «Ուրախ եղէ ես» սկսում է վեհափառ Հայրապետը, իսկ այս կարգի ավարտին ավագագույն միարաններից մեկն արտասանում է ողջերթի կամ բարի գալստյան խոսք, որից Հետո Վեհափառ Հայրապետը պատասխան խոսք է ասում՝ պատմելով իր շրջագայության կամ առաքելության վերաբերյալ տպագորություններ և ապա «Պահպանիչով» արձակում է ներկաներին։

Այս նույն կարգը վերաբերում է նաև թեմակալ առաջնորդներին, երբ նրանք ժամանում են իրենց պաշտոնատեղին։

Դեպի Մայր տաճար և կամ որևէ այլ Եկեղեցի Վեհափառին

կամ առաջնորդին ուղեկցող հոգևոր թափորը երգում է «Հրաշա-
փառ Աստուած» ԳՁ շարականը, իսկ տաճար մտնելիս՝ «Ուրախ
լեր սուրբ եկեղեցի» ԳՁ շարականը:

Այս կարգը միևնույն տեղում առկա է մեր հնատիպ ժա-
մագրքերում, ընդհուպ մինչև 17-րդ դարի տպագիր ժամագրքերը,
մի հանգամանք, որ ենթադրել է տալիս, որ այս կարգն ունի բավա-
կանին հին ծագում և կիրառություն:

ԽԱՂԱԿԱՍՆ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ

«Կարգաւորութիւն հասարակաց աղօթից Հայաստանեաց Ս.
Եկեղեցւոյ խաղաղական ժամուն. որ կատարի ի դէմս Հոգվոյն Աս-
տուծոյ...».

(Հայաստանյաց Ս. Եկեղեցու Խաղաղական ժամի հասարակաց
աղօթիքի կարգը, որ կատարվում է ի դեմս Հոգվոյն Աստուծոյ):

Խաղաղական ժամերգությունը ինչպես ցույց են տալիս հին
ժամագրքերը, սկսվում է «Օրհնեցից գտէր» սաղմոսով, որը բաղ-
կացած է ութ տներից և ապա ևս խաղաղություն, օրհնություն և
սաղմոս:

Ժամերգության անունն ինքը վկայում է, որ այն հանգստյան
վերջին ժամի պաշտոնն է (աղոթքը), այն խորհրդանշում է նաև
Քրիստոսի գերեզմանում մնալը և դժոխքում գտնվող Հոգիների վե-
րաբարձր գեպի խաղաղություն: «Խաղաղական ժամերգությունն»
այժմ սկսվում է տերունական աղօթքով և ապա՝ «Տէր Աստուած
փրկութեան իմոյ...» երկու տուն սաղմոսով: Վերջինս ցույց է տա-
լիս, որ կատարվում է գիշերվա հանգստյան կարգը: Անձնացին
գրում է նաև, որ չորս սաղմոս պետք է ասվի՝ «Ըստ քառանիւթեայ
բնութեանս», ոմանք էլ ասում են հինգ սաղմոս «Ըստ հինգ
զգայութեանց» Մաքրութեան... (367):

«Եւ ևս խաղաղութեան... և օրհնութիւն և փառքից հետո փոխ
«Ի կարդալ իմում» (Սաղմոս Դ, 4):

Այս փոխը կազմված է յոթ սաղմոսներից, որոնք են.

«Ի կարդալ իմում» Դ. 1-8:

«Տէր մի սրտմտութեամբ» Զ. 6, 1-16:

«Մինչև յե՞րբ» Ժ. 12, 1-6:

«Պահեա զիս» Ժ. 15, 1-11:

«Լուր Տէր» Ժ. 16, 1-16:

«Դատ արա ինձ Աստուած» ԱԲ. 42, 1-7:

«Աստուած յօգնել ինձ...» ԿԹ. 69, 1-6 և երկու տուն հավել-
ված: «Տուր զօրութիւն» Տեսցեն ատելիք իմ, որ է սաղմոս ՁԵ. 85,
15-16, որոնք «Խոնարհեցո» ամենօրյա կարդացվող սաղմոսի վեր-
ջին երկու տներն են: Հիշյալ փոխին հաջորդում է «Ենորդէեա մեզ
տէր» երգը: Վերջինս կազմվել է մի քանի սաղմոսներից, ինչպես
նաև եսայի մարգարեի Ը. (8) և Թ. (9) գլուխներից կատարված մի
քանի քաղվածքներից:

Երգը պետք է, որ բավարականին հին լինի (7-8-րդ դ.դ..), քանի որ
այն հիշում է Ստ. Սյունեցին իր մեկնության մեջ, 7-8 դդ. թեև Հովհ.
Օձնեցին (Ը դարում) այդ մասին լուս է: 10-րդ դարում այն հան-
գամանորեն մեկնել է Խ. Անձնացին «Յաղագս Երգոյն Զոր զկնի
Սաղմոսացդ Եղանակեն» (տե՛ս Էջ 379):

Կարելի է ենթադրել, որ «Ենորդէեա մեզ Տէր» երգը ժարգման-
վել է 5-րդ դարում՝ հուն ժամագրքից:

Ինչ վերաբերում է Անձնացու պատմած միջաղեպին, ըստ որում
այս երգը երգվել է Սևանա կղզում՝ վանքի միաբանների կողմից, ո-
րոնք այս երգը երգել են իրեն փառաբանություն: Սարակինուսների
նեղությունից ազատվելու համար: Մ. Օրմանյանը գրում է. «Չենք
կարծեր, թէ այն ատեն շարադրված լինի այս երգը, զի ըստ ձևոյն և
ըստ կազմութեան ավելի հին կերպի»:

Ըստ «Խրատ ժամատեղացի»՝ «Ենորդէեա մեզ» երգը Ավագ դա-
սինն է և երգվում է իմբրով: Ակզրից մինչև վերջ երգն ընթանում է
համաշափ կրկնվող եղանակով և փոխվում է միայն վերջին
երկուդում, այն է՝ «Եւ իշխան խաղաղութեան հայր հանդերձելոյ
յաւիտենին...»:

Մաղթանք «Ի մերձենալ երեկոյիս»:

Քարոզ «Գոհացարուք զՏեառնէ» (աշակերտի դաս):

Աղօթք «Տէր բարերար» (աշակերտի դաս):

(Հանգիստ «Պարզեատու բարեաց»):

Աղօթքի և քարոզի բովանդակությունը պարզ է՝ նախ գոհու-
թյուն, որ նա իր ողորմությամբ առաջնորդեց «Ի գործ տուննեան
և չնորդէեաց մեզ միաբան գալ հասանի ի հանգիստ գիշերիս... Ուս-
տի - Յամենայն սատանայական խոռվութեանց խաղաղացո զմիռս
մեր և զխորհուց ի գիշերիս յայսմիկ և յամենայն ժամանակի»:

(Քարոզ «Գոհացարուք զՏէառնէ»...)

Խ. Անձևացին մեկնել է այս քարոզն ու աղոթքը՝ բացատրելով յուրաքանչյուր պարբերություն առանձին-առանձին։ Հետաքրքիր է, որ Անձևացու մեկնության մեջ հիշյալ քարոզը սկզբում ունի «Միաբանությամբ ամենենքեան գոհացարուք զՏեառնէ..»։ (տես էջ 382-387)։ Տպագիր ժամագրքում այս քարոզը սկսում է պարզապես «Գոհացարուք զՏեառնէ» խոպերով։ Ինչպես տեսանք Անձևացու մոտ երկու բառ ավելի է։

Աղոթքին հաջորդում է փոխ՝ «Տէր լոյս իմ և կեանք իմ», (աղմ. իջ) (Ավագի դասինն է)։ Այս սաղմոսը հիշում է Շնորհալուց առաջ, իսկ թե ի՞նչ է երգվել նրանից հետո՝ մինչև Շնորհալին, մեզ ոչինչ հայտնի է, քանի որ այս փոխին հաջորդող «Նայեաց սիրով» ծայրակապային երգը Շնորհալու հորինած գոհարներից է, և այս մասին վկայությունները, բնականաբար, 12-րդ դարից հետո են։ Առաջինը մեկնիչներից Մովսես Երզնկացին է հիշում «Նայեաց սիրովի» մասին։

1284 թվականի Վենետիկի ձեռագիր ժամագիրքը հիշում է «Նայեաց սիրով»՝ իբրև Խաղաղականի երգ, ինչպես նաև նրան հաջորդող «Ի քէն Հայցեմքը»։ Կարելի է ենթադրել, որ մինչև «Նայեաց սիրով» երգի հորինումը և մուծվելը Խաղաղականի մեջ «Տէր լոյս իմ» սաղմոսից հետո եղել է որևէ ընթերցում։

«Յաղուհացն» յորժամ զՏէր լոյսն ասես, զաւուր գիրքն կարդա՛, եւ զկնի գրոցն քարոզ, Աղաչեսցուք, աղօթք՝ Շնորհատու բարեաց» – գրում է Թեղենյաց խրատը։

Նույնը տեսնում ենք նաև 1284 թվականի ձեռագիր ավետարանացուցի մեջ՝ «Ցորժամ զՏէր լոյսն ասես, զաւուր գիրքն կարդա՛»։

Խաղաղական ժամանակության մեջ հնում գոյություն ունեցող լնթերցումների մասին խոսվում է նաև մի շարք հին Տոնացուցներում, որոնք հիմնականում կրկնում են վերը հիշված խրատը։ «Տէր լոյս իմ» փոխին հաջորդում է Շնորհալու «Նայեաց սիրով» երգը, որի ծայրակապն է «Ներսեաի երգ»։ Այն ունի նաև երկու տուն Հավելված՝ 1) Հալածեա ի մէնջ՝ Խաչի, 2) «Բարեխօսեա վասն մեր Աստուածածնի»։

Երգի բոլոր տասը տներում Շնորհալին հայցում է խաղաղությամբ և անցկացնելու գիշերային Հանդիսաւը, որպեսզի «Ի գիշերաց առ քեզ կանխել ընդ Հրեղինացն օր Հնաբանել...»։

Կամ - «Մագեա մեզ Տէր ի գիշերի, զճառագայթն իմանալի»

Օթեա առ մեզ խաղարարար,
Զի ննջեսցուք անխոռվարար»։

Շնորհալու մի շարք երգերի նման «Նայեաց սիրով» շուրջ ութ դար վայելում է մեծ ժողովրդականություն և մինչև այսօր երգվում մեծ սիրով։ Բջ ձայնեղանակի վրա հորինված այս գեղեցիկ երգի մեղեղին գրեթե սկզբնական հարազատությամբ մեզ է հասել դժողակ դարերի հոլովով։ ավանդվելով բերներերան։

Այս երգին հաջորդում է «Տէր մի դարձուցաներ» մաղթանքը, ապա՝ քարոզ՝ «Աղաչեսցուք» (աշակերտ)։

Աղօթք «Շնորհատու բարեաց» (Ավագ)։

Այս աղօթքը հանգիստ չունի։ Հին ու նոր ժամագրքերում այս-տեղ հանդիպում է հետևյալ խրատը։

«Յաւուրս աղուհացից աւուր Ամբիծքն՝ իսկ յայլ աւուրս՝ Հայր մեր, որ յերկինս ես»։

Այս արտահայտությունը հնում «Խաղաղականի» ամենօրյա գործածության վառ ապացուցներից է։

Մեծ Պահոց Աղուհացի շրջանի օրերին իբրև Հսկումի սկզբնավորություն Խաղաղական ժամը ունի մի նոր մաս՝ կազմված փոխից և շարականից։ Փոխն է՝ (սաղմոս ՃԺԸ. 118), «Երանեալ են ամբիծքք»։ Ամենաերկար փոխերից մեկն է այս և կանոնի մեջ այն կազմում է երեք գուրդա՝ 196 տուն։ Այս փոխին հաջորդում է վեց տներից բաղկացած «Ի քէն Հայցեմք» Գջ երգը, որի առաջին երեք տները Շնորհալունն են։ Հորինված տվյալ պահի համար, իսկ հաջորդ երեք տները վերցվել են Խաչի, Հարության և Աստվածածնի քաղվածքներից։

«Ի քէն Հայցեմք» (աշակերտ) երգից հետո ժամագիրքը դնում է.

«Երեկոյան Ստեղիք Մեծի Պահոց սկսեալ ի չորրորդ շաբաթէ» նշված ստեղիների սկսելու պատիվը աշակերտի դասինն է, այն երգվում է առանց սկսվածքի՝ ատյանում։

Ահա այդ ստեղների կարգն ըստ ժամագրքի։

Դ. դշ. ե. դշ. զ. դշ. «Մրգուհի Մարիամ»,

ԴԿ. դ. եշ. ե. եշ. զ. եշ. «Առաքեալք Աստուծոյ»

ԴԿ. դ. բշ. ե. բշ. զ. բշ. «Երկնաւոր Հուոյ»,

ԴԿ. դ. դշ. ե. դշ. զ. դշ. «Երկնաւոր փեսայ» ԴՋ։

Հինգ պատկերներից բաղկացած այս ստեղիների գործածության մասին Տոնացույցը որևէ թելադրանք չունի: Հայտնի է, որ դրանք վերցվել են օրական հիշատակների պատշաճով, այսինքն՝ շաբաթվա ամեն մի օրը նվիրվում է որևէ մի տոնի, այսպես:

ԲՀ. «Հրեշտակաց»,

ԳՀ. «Յովհաննու Մկրտչի»,

ԴՀ. «Աստուածածնի»,

ԵՀ. «Առաքելոց»,

ՈՒՐ. «Խաչի»:

Համաձայն Արարչականի մեջ եղած հիշատակության՝ չորեքշաբթին իրրև սկիզբ դրվելը հուշում է այն մասին, որ Մեծ Պահոց շրջանում երգվող վերոհիշյալ ստեղիները սկսում են երգվել առաջին չորեքշաբթի օրվանից, թեև այժմյան կարգը հետևյալն է. սկսում է Միջինքից, չորրորդ չորեքշաբթի օրը, և երգվում է օրական մեկ տուն, իսկ վեցերորդ երկուշաբթի և երեքշաբթի օրերին երգվում է երկուական տուն, որպեսզի բոլոր տները երգվեն:

Ինչպես ստեղիների երգեցողության կարգն է պահանջում այս շրջանում ևս երգվող ստեղիները երգվում են ատյանում կամ առանձին կամ խմբով՝ առանց սկսվածքի: Խաղաղական ժամը փակվում է «Հոգուցն Հանգուցելոց» մաղթանքով, ապա «Վասն Հանգուցեալ» քարոզով (աշակերտի դաս) և «Քրիստոս որդի Աստուծոյ» աղոթքով (ավագ):

«Տէր ողորմեա» երգը ընդհանրապես երգվում է այն օրերին, երբ Խաղաղական և Հանգստյան ժամերգությունները միասնարար են կատարվում, իսկ երբ Խաղաղականն առանձին է կատարվում, «Տէր ողորմեա» երգի կատարումը ավագ երեցի կամքին է թողնվում:

Հանգստյան ժամերգություն

Կարգաւորութիւն Հասարակաց աղօթից Հայաստանեայց

Ս. Եկեղեցոյ Հանգստյան ժամուն որ կատարի ի գէմս

Հօր Աստուծոյ զի Պահպանղական աջով միաժմին պահեացէ զմեղ
ի խաւարային գիշերիս

(Հայաստանեայց Ս. Եկեղեցոյ Հանգստյան ժամի Հասարակաց աղօթքի կարգը, որ կատարվում է ի դեմս Հօր Աստուծու, որպեսզի իր միաժմին պահպանղական Աջով պահպանի մեզ խավարային գիշերվա մեջ)

Հանգստյան ժամը Հայաստանեայց Առաքելական և Եկեղեցու պաշտամունքային ժամերի մեջ թվով իններորդն է և վերջինը:

Մեզ Հասած ժամերգությունների մեկնություններում Խաղաղական և Հանգստյան բառերը հաճախ նույնացվում են: Անձեւացին Խաղաղական ժամերգությունը Հանգստյան է անվանում այսպես:

«Եւ արդ՝ Հանգստյան կոչի աղօթք, և Խաղաղական ասի, վասն զի օրինակ է իջանելոյն ի գուր գերեզմանին:

Եւ որպէս ի մահճ իջանելով Հանգչիմք յաշխատութեանց և խաղաղանմք խորհրդոց, զնմանութիւն բերեմք զմահուն Հանգստյան և զիսաղաղանալն ի զբաղմանց կենցաղոյս... (Էջ 365):

Վերոհիշյալ երկու ժամերգությունների նույնացումը կարելի տեսնել նաև «Հայկազյան բառպրքում»:

Խաղաղական. «Ժամերգութիւն Հանգստյան» որ յետ երեկոյան ժամուն յառաջ քան զեկեսցէն. Հանգստյան կոչի աղօթք և Խաղաղական ասի: Զիսաղաղականին աղօթքն յերեկոյին ժամն յարեն»:

Եվս երկուր միասին կոչվել են նաև «Հանգիստ քնոյ»:

Սրանք Հայաստանեայց եկեղեցու յոթ ժամերգությունների վրա գումարված Հավելվածական ժամեր են: Կարելի է ենթադրել նաև, որ այս երկուր Հնում եղել են մեկ ժամերգություն, սակայն կոչվել են Խաղաղական և Հանգստյան, և միայն հետագայում՝ ավելի ուշ, Հանգստյանն առանձնացվել է Խաղաղականից, ճոխացել և դարձել առանձին ժամերգություն: Այս մասին են վկայում նաև մի քանի ընդհանրություններ և կրկնություններ, որոնք առկա են երկու ժամերգություններում էլ:

Այսպես. Հանգստյան ժամի «Առաքեա» տէր զլոյս քռա սաղմոսից որոշ մասեր՝ «Աղաչեսցուք» քարոզը, նույնությամբ, ինչպես նաև այլ քաղաղրիչներ առկա են երկու ժամերգություններում էլ:

1284 Թվականի ժամագիրքը ձաշու երգերից հետո զնում է «Խաղաղականին» նայեաց սիրով» և «Զկնի եկեսցւոյն» ի քէն Հայցեմք»:

Հետաքրքիր է, որ Հանգստյան կարգը տերունի տոններին և տերունի նախատոնակներին կատարվում է իրրև Հսկումի արարողություն, այնինչ Խաղաղականը այդ օրերին լուսում է: Նույնը կարող ենք ասել նաև Արևագալի ժամի մասին: Վերջինս, ինչպես Հայտնի է, կատարվում է Մեծ Պահոց լի օրերին, Հատկապես չորեքշաբթի, ուրբաթ օրերին՝ առավել Հանդիսավորությամբ:

Հանգստյան ժամի և Գիշերայինի նշանակությունը գրեթե նույնն է. երկուսն էլ կատարվում են ի դժմս Հօր Աստուծոյ, սակայն եթե Գիշերայինով սկսում է եկեղեցական օրը և պաշտամունքային ժամերի կարգը, ապա Հանգստյանով եղբափակվում է օրը, և ավարտվում են պաշտամունքային ժամերը:

Հանգստյան ժամերգությունը սկսվում է Տերունի աղոթքով և ապա մի քանի տուն սաղմոսով, որ է՛ «Առաքեա տէր զլոյս քո», որն արտասանում է ժամօրհնող քահանան, իսկ սարկավագը շարունակում է «Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ առ Աստուած, որ ուրախ առնէ զմանկութիւն իմ» և հաջորդ երկու տները՝ «Խոստովան եղէց...» և «Արդ ընդէ՞ր տրտում ես անձն իմ...»:

Սրանք մեզ ծանոթ են Ս. Պատարագի սկզբից, երբ պատարագիչը սարկավագի ուղեկցությամբ բարձրանում է ավագ խորան: «Փառք և Այժմ և Միջու»-ին հաջորդում է «Եկեսցէ» երկար փոխը, որը կազմված է «Ամրիճքի» երեք գուրղաներից՝ (Սաղմոս ՃԺԸ, 118 41-55, 113-120, 169 170, Սաղմոս ԼԵ 35, 12-13, Ամբակում մարգարեի օրհնությունից 25-26, Սաղմոս Ղ. 90, 1-16, Սաղմոս ՃԺԲ 112, 1-5, Սաղմոս ՃԳ 103 1-7, երից մանկանց օրհնությունից 52, 56, որը հարցի փոխարեն է, այսինքն Սաղմոս ՃԾ 150. 1-6, Սիմեոնի երգը՝ Ղուկաս Բ 29, 32, Սաղմոս ՃԼէ 137. 7-8, Սաղմոս ՃԱԱ 141. 7-8 Աստվածամոր օրհնությունը՝ Ղուկ. Ա 37, 55, Սաղմոս ՃԵ 85. 15-16: Ընդամենը 92 տուն, առանց «Փառք Հօրի»):

«Եկեսցէ»-ի փոխը, ինչպես գրում է Մ. Օրմանյանը, կարելի է նկատել իրեն ընտիր քաղված օրվա ժամերգությունների փոխսերից: Փոխին հաջորդում է «Անձն իմ ի ձեռս քո է...» մաղթանքը, և ապա՝ քարոզ «Աղաչեսցուք ԿԱմենական Աստուած», որը բացարձակ կրկնությունն է Խաղաղականի քարոզի, այն տարրերությամբ, որ այստեղ վերջում ավելացված են՝ «ԶՀանգիստ գիշերիս...», «ԶՀրեշտակ խաղաղութեան...», «Զքաւութիւն և զթողութիւն» և այլն: Քարոզ, ըստ խրատի, աշակերտի դասինն է:

Աղոթք (Ավագ դաս) «Տէր Աստուած մեր», Հանգիստ՝ «Հրեշտակի խաղաղութեան...»:

Հին ու նոր ժամագրքերը այս աղոթքից հետո դնում են սաղմոս Դ՝ «Խաղաղութեամբ յայս և ի սոյն ննջեսցուք»՝ ինը տներից բաղկացած. եղանակավոր այս սաղմոսը երգվում է դաս առ դաս (սկսվածքը ավագինն է):

Սաղմոսին հաջորդում է ավետարան Յովհ. ԱԱմէն ամէն ասեմ

ձեզ եթէ ոչ Հատն ցորենոյ...»: Եվ ապա՝ քարոզ «Սուրբ խաչիս», որից առաջ բոլոր Հին ու նոր ժամագրքերը դնում են «Փառք քեզ Տէր Աստուած մեր» գեղեցիկ քարոզը և «Պահպանեա զմեզ»:

Քարոզն աշակերտի դասինն է, իսկ «Պահպանեա» աղոթքը՝ Ավագ դասինը:

Հայտնի է, որ «Խաղաղութեամբ յայս և ի սոյն» սաղմոսից առաջ երգվում է «Եկեսցէ տէր ի վերայ մեր» Բկ շարականը՝ երկու պատկեր՝ ըստ ապաշխարության կարգի և ապա «Աղաչանօք Աստուածածնին», որի երկրորդ տունը՝ «Մարիամ կոյս անարատն», երգվում է իրեն փառքի տուն, իսկ «Յորժամ յարեւլիցը»՝ իրեն «Այժմ և միշտ»:

Նարականի երգեցողության այս սովորությունը հավանաբար, ներմուծվել է ավելի ուշ շրջանում, քանի որ Ավետարան կարդալու սովորությունը ենթադրում է նաև շարականի երգեցողություն:

Հետաքրքիր է, որ 17 -րդ դարի տպագիր Աստենի ժամագրքերից մեկում Հանգստյան ժամի «Եկեսցէ» փոխից հետո մինչև «Անձն իմ ի ձեռս քո» մաղթանքը գրված է «Աստ ասի շարական նայեա սիրով...»:

Նույն ժամագիրը «Տէր Աստուած մեր» աղոթքի ավարտից անմիջապես հետո դնում է «Ի քէն Հայցեմք» երգը և ապա՝ սաղմոս Դ՝ «Խաղաղութեամբ յայս և ի սոյն»:

Այս նույն երևույթը նկատելի է նաև մի շարք Հին ձեռագիր ժամագրքերում ևս: Հավանական է, որ երբ Հանգստյանը իրեն առանձին ժամերգություն անջատվեց Խաղաղականից, անհրաժեշտություն զգացվեց «Նայեաց սիրովի» և «Կամ ի քէն Հայցեմքի» տեղ որևէ շարական մտցնել, քանի որ վերոհիշյալ երկու երգերն էլ կայուն կերպով հաստատվեցին Խաղաղականի մեջ:

Ահա այս անհրաժեշտությունից թելադրված՝ Հանգստյանի մեջ մուծվեց «Եկեսցէ Տէր ի վերայ մեր» Բկ շարականը, որ, ինչպես հայտնի է, Ապաշխարության Բկ քաղվածոց օրհնության՝ «Յամենայն ժամի», վերջին երեք պատկերներն են: Այդ երգը, իսիստ պատշաճում է «Եկեսցէ» փոխին և տվյալ պահին: Այս իսկ պատճառով այն մուծվել է Հանգստյանի այս մասում՝ սաղմոսից առաջ: Այս երգը ոչ մի ժամագրքում չի դրվում, ոչ էլ այս մասին որևէ ակնարկ կա: Ըստ Օրմանյանի՝ այն երգվում է Հանգստյան կարգը երկարացնելու նպատակով:

Հանգստյան ժամը «Պահպանեա» աղոթքից հետո ունի մի

երկրորդ մաս և, որը դարձյալ սկսվում է «Հայր մեր»-ով, ապա՝ Մաղթանք՝ «Անկանիմ առաջի քո»:

Մաղթանքից հետո բոլոր հին ժամագրքերը դնում են Նարեկացու Մատյանից երկու հատված՝ թան ԺԲ. (12) «Ընկալ քաղցրութեամբ» և թան ԽԱ (41) «Որդի Աստուծոյ»: Ավելի ոչ այստեղ դրվել է նաև թան ՂԳ (93) «Աստուած յաւիտենականը»:

Առձեռն ժամագրքերում վերջին տասնամյակներում հրատարակված վերոհիշյալ երեք գլուխներին ավելացվել է նաև Մատյանի թան Զ (80) «Եւ արդ ի վերայ այսքանեայց» ը: Այս հատվածը, որը ձոնված է Աստվածամորը և «Ընկալ քաղցրութեամբ»-ը՝ եղանակավորված ելքուպական ձայնանիշներով, հրատարակվել է Անթիվասի կաթողիկոսարանի տպարանում:

Վերոհիշյալ երկու հատվածները երգվում են խմբով, իսկ «Որդի Աստուծոյ» և «Անտուած յաւիտենականը» ատյանում արտասանում է Հոգևորականներից որևէ մեկը:

Նարեկացու Մատյանի այս հատվածները, ե՞րբ են արդյոք մուտք գործել Հանգստյան ժամի մեջ և ու՞մ կարգադրությամբ, դժվար է ասել, քանի որ ձեռագիր ժամագրքերը մինչև 15-16-րդ դարերը չունեն որևէ հատված Նարեկացուց, բայց 17-18-րդ դարերի Հնագույն տպագիր ժամագրքերը, ինչպես արդեն ասվեց, ունեն վերոհիշյալ ԺԲ և ԽԱ գլուխները միևնույն տեղում:

Մատյանի հատվածի ընթերցումից կամ երգեցողությունից հետո ժամագրքը դնում է ներսես Շնորհալու «Հաւատով խոստովանիմ» անձնական աղոթքը՝ բաղկացած 24 տներից, այն ունի հետևյալ վերնագիրը.

ԱԴՕԹՔ

Իրաքանչիւրոյ անձանց հաւատացելոց Ի Քրիստոս

Հոգեշահ ու ջերմեռանդ այս աղօթքը շուրջ 800 տարի շարունակ եղել և մնում է Հայ Հավատացյալի ամենաշատ սիրած աղոթքներից մեկը: Այն թարգմանվել է բազմաթիվ լեզուներով ու հրատարակվել:

Մայր Աթոռ Ս. էջմիածնում, երբ Հակումի ժամերգությանը ներկա է լինում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, նրան է վերապահվում այս աղոթքի առաջին և վերջին տները ասելու պատիվը, իսկ մնացած տները արտասանում են միաբաններն ու սաները:

ՏԵՐ ՈՂՈՐՄԵԱ

Սովորություն է, ինչպես Մայր Աթոռում, այնպես էլ Հայաստանյաց բոլոր եկեղեցիներում «Հավատով խոստովանիմ» աղոթքից հետո ծնկաչոք և աղերսագին երգել «Տէր ողորմեա» երգը: Սա համարվում է մեր եկեղեցու վերջին հավելվածներից մեկը, որն ինչպես հայտնի է, երգվում է նաև ս. Պատարագի վերջնամասում՝ «Ի սուրբ, ի սուրբ»-ից անմիջապես հետո: Այս երգի բնագիր հեղինակը երջանկահիշատակ Սիմեոն Երևանցի կաթողիկոսն է (1763-1780): Ըստ Լեոյի «Հայոց պատմության»՝ այս երգը երգվել է այսպես կոչված «Թասման» ժամին՝ թշնամիների հարձակում, երաշտ, մորեխն և այլ բնական աղետների ժամանակի: «Հայ ժողովրդի դարավոր տառապանքները, դարավոր արտասուլքներն են լալահառաչ այս պարզ երգի տողերում», - գրում է Լեոն :

«Տէր ողորմեայի» վերջավորությունն է «Սուրբ Աստվածածնի բարեկիսուությամբ և կամ Սուրբ և անմահ պատարագի միջնորդությամբ», և ապա՝ «Ընկալ Տէր և Ողորմեա»:

Մաղթանք՝ «Վասն սրբություն անարատի մօր քո և կուսի, Տէր ընկալ զաղաշանս մեր և կեցո զմեզ»:

Քարոզ (աշակերտի դաս) «Սուրբ զԱստուածածինն»:

Աղօթք «Ընկալ, Տէր, զաղաշանս մեր...»:

Այս մաղթանքը, քարոզն ու աղոթքը, ինչպես հայտնի է Աստվածածնին են:

Հանգստյան կամ «Եկեսցէ»-ի կարգը շարունակվում է: Դարձյալ Տերունի աղօթք և փակման մի մաղթանք, որը շատ նման է մաշու ժամի (պատարագի սկզբում ասվող) «զՍազմոսերգութիւնս» մաղթանքին:

Մաղթանք «Ճշանգութեան աղօթն և զաղաշանս...»:

Ժամերգությունն ավարտվում է «Փառք քեզ, Տէր Աստուած մեր» երգ-աղօթքով քարոզը, որը երգվում է ատյանում ավագ երեցի կողմից, յուրաքանչյուր տան վերջում դպիրները երգում են «Ամէն»:

Գեղեցկահյուս այս աղոթքը շատ հին է՝ հավանաբար թարգմանված Հունարենից և ապա խմբագրված հինգերորդ դարում, ինչպես և ոյս զուարթ» հայտնի երգը:

Երգ-աղօթքի տողերից դժվար չէ եղրակացնել, որ այն Հորինվել է վանական միջավայրում:

«Տէր Աստուած մեր, պահեա զառաջնորդս և զեղրայրութիւնս մեր ամրող և անխոռվ ի կամս ողորմութեան քո...»:

Երգն ունի գեղեցիկ մեղեղի, որը հիշեցնում է ս. պատարագի վերջին՝ «Որ օր Հնես զայնոսիկ» Հովհան Ռոկերանի Հորինած առթքի մեղեղին:

Հանգատյան ժամերգությունը կամ Հակման կարգը, բացի քառասնորդական պահոց շրջանից, կատարվում է նաև մեծ տոների նախօրեին, ինչպես զրում է Հին ժամագրքերից մեղը.

«Հսկունք լինին ի գիշերիս մեծ տօնիցն սաղմոսիք և ընթերցմամբ զրոց, և դնի սրբութիւնն ի վերայ բազմոցի սեղանին, «Այս վերտառությանը կարելի է Հանդիպել Տոնացույցի կամ օրացույցի մեջ՝ Մազկազարդին, մեծ ուրբաթու, Զատիկի, նոր կիւրակէ, Հոգեգալուստ, Վարդապառ, Վերափոխման, Խաչվերացի և Աստուածայտնութեան տոներին»:

Նույն խրատը տեսնում ենք նաև Սիմեոնյան Տոնացույցում. «Աստուածայտնութեան գիշերին Հսկումն է սաղմոսիք և պաշտամամրդք»:

Պաշտամամրդք, ինչ խոսք, նշանակում է Հսկումի արարողություն, որ է «Եկեսցէի» կարգը:

Բացի վերը հիշված տոներից, Հսկումի կարգ պետք է կատարվի նաև կաթողիկոսական օծման, եպիսկոպոսական ձեռնադրության և մանավանդ Արքալոյս Միւռոնի օրհնության նախօրդող երեկոյան՝ ժամերգությունից հետո:

Հսկումի այս կարգի մատուցման ժամանակ Հանդիսավոր կերպով կատարվում է նաև Հաջորդ Հանդիսավոր օրվա գիշերային ժամերգությունը՝ սկզբից մինչև օրհնության շարականի պահը:

Այս կարգը կոչվում է Հսկումի կարգ կամ Գիշերապաշտօն:

Հավելված

Նպատակահարմար գոտանք աշխատության վերջում դնել «Կարգ ժամասացության խրատը»՝ ըստ Ս. Էջմիածնի 1862թ. տպագրված Տոնացույցի հրահանգի:

Ծանոթություն. Ավագ երեցու դասը, այն դասն է, որ նույն օրն, ըստ աւուր ձայնին կարգ է կատարում, իսկ աշակերտի դասն է Հետեվող, որ միւս օրը լինում է Ավագ երիցին դաս շարունակ՝ օր ըստ օրի միմեանց յաջորդելով:

Ինչպես նաև մի շարք ժամակարգությանց մեկնություններ՝ կատարված Ստեփանոս Սյունեցու, Հովհան Օձնեցու, Խոսրով Անձացու և այլոց կողմից:

ԿԱՐԳ ԺԱՄԱՍԱՑՈՒԹԵԱՆ

Ըստ հրահանգի Տօնացույցի տպելոյ ի

Ս. Էջմիածնի 1862 ամի:

Ա ԳԻՇԵՐԱՅԻՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

Աւագ երիցու դաս ¹¹ > Հայր մեր.

Տէր եթէ զըրթունա. Օրհնեալ Համագոյ:

Աշակերտի դաս. Տէր զի բազում. (Ի Հանդիսաւոր աւուրս յԱտեան ասի միաբան ձայնիւ):

Աւագ. Փառք Զօր. Ցիշեաց. Զարթիք:

Աշակ. Զարթուցեալքս:

Աւագ. Աշխարհ ամենայն. Առաւօտ լուսոյ. զՔէն գոհանամք. Կանոնագուուխք. Հանգստեան Շարականք: Սաղմոս Աւետարան: Այսօր անճառ, Աստուած անեղ, Նորոգող:

Աշակ. Երգ Արարիչ. Վասն ի վերուստ. Վասն ի գիշերի. Վասն ուղղելոյ:

Վասն գտանելոյ:

Աւագ. Տէր տունջեան. Ի գիշերի եւ ի տունջեան. Տէր երկնի եւ երկրի.

Գոհանամք զՔէն. Թագաւոր յաւիտեան. Ալէլուք. Մկուուածք Հետեւակ Շարականաց:

Աշակ. Մկուուածք Օրհնութեան Շարականաց:

Բ. ԱՐԱԿՈՑԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

Աշակ. Օրհնեալ ես Տէր Աստուած փոխի եւ Հարցի Շարականաց սկսուածք:

Քարոզ Եկեալքս ամենեքեան:

Աւագ. Մեծացուսցէ փոխի Մեծացուսցէ Շարականի սկսուածք Ս. ԶԱՄՈՒԱՏԱԾԻՆ. Ընկեալ Տէր. Դու ես թագաւոր. Եղիցի անուն Տեառն.

Աշակ. Վասն Ս. տեղուսոյ. Արի Տէր:

Աւագ. Արի եւ մի մերժեր.

Աշակ. Թագաւորեսցէ.

Աւագ. Աւետարան. ամենակեցոյց.

Աշակ. Զուարճացեալքս.

¹¹ Աւագ երիցու դասն այն դասն է, որ նոյն օրն ըստ պառք ճապահին կարգ է կատարում, իսկ աշակերտի դասն հետեւող, որ միւս օրը լինում է Աւագ երիցու դաս շարունակ օր ըստ օրի միմեանց յաջորդելով:

Աւագ. Ողորմեա փոխի եւ Ողորմեա Շարականի սկսուածք. Երկըրպագեմք քարոզ.

Աշակ. Օրհնեցէք զՏէր փոխի եւ Տէր յերկնից Շարականի սկսուածք. Փառք ի բարձունա.

Աւագ. Եւ յամենայն ժամ. Զյարութիւն փրկչին.

Աշակ. Ասասցուք ամենեքեան, կամ Աստուած մեծ, կամ Առաջնորդ եղեն, կամ Զօդնութիւն. կամ Մայր սուրբ. կամ Փառաւորեսցուք:

Աւագ. Գոհանամք զքէն. Սուրբ Աստուած. Վասն լսելի. Գիրք Սաղմու Եղիցի անուն տեսառն օրհնեալ:

Աշակ. Նորաստեղծեալ կամ Արարչական. Տուր մեզ Տէր:

Աշակ. Խնդրեսցուք Հաւատով.

Աւագ. Կեցո Տէր.

Աշակ. Քում ամենազօր կամ Թագաւոր խաղաղութեան. կամ Առդրան Սուրբ Տաճարիս.

Աւագ. Մանկունք փոխի և Մանկունք Շարականի սկսուածք. Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի. Սիրեցի զի լուիցէ Բանից իմոց փոխերի սկսուածքը.

Աշակ. Սուրբ ես Տէր.

Աշակ. Սուրբ ճգնաւորաւքն.

Աւագ. Որ ընտրեցեր կամ պսակիչ:

Աշակ. Աղաչեսցուք զամենակալն:

Աւագ. Ծգնեա մեզ:

Աշակ. Տէր ամենակալ. Եկեալքս ի խոտովանութիւն.

Աւագ. Տէր Աստուած փրկութեան մերոյ:

Գ. ԱՐԵՒԱԳԱԼԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

Աշակ. Եղիցի անուն Տեսառն:

Աւագ. Յարեւելից երգի սկսուածք եւ Յարեւելից քարոզ.

Աշակ. «Յարեւելից մինչ ի մուտըս աղօթք».

Աւագ. Աղաղակեցէք փոխի սկսուածք. Ճգնաւորք երգի սկսուածք. Ս. ճգնաւորք քարոզ. Սուրբ ես Տէր աղոթք.

Աշակ. Աստուած. Աստուած իմ փոխի սկսուածք. Լոյս արարիչ երգի սկսուածք. Անեղանելիդ յորդորակի սկսուածք, քարոզ Փառաւորեսցուք եւ Զառաւոտու աղօթմ:

Աւագ. Տէր Հովուեսցէ փոխի սկսուածք. Ճանապարհ երգի սկսուածք.

Քարոզ Աղաչեսցուք զամենակալն. Առաջնորդ կենաց կամ Օրհնեալ ես տէր աղոթք:

Դ. ՃԱՆՈՒ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

Աշակ. Ողորմեա ինձ Աստուած

Աւագ. Օրհնեմք զքեզ Հայր անսկիզբն.

Աշակ. Եւ յամենայն ժամու աղաչանք իմ.

Աւագ. Միաբան ամենեքեան.

Աշակ. Որ ի քրորէական. Տէր Աստուած օրհնեալ. Խնդրեսցուք.

Աւագ. Առաջնորդեա

Աշակ. Տէր Հովուեսցէ փոխի սկսուածք.

Աւագ. Քարոզ Գոհարանեղով.

Աշակ. Խաղաղութեամք քով. Բ. Ողորմեա փոխի սկսուածք. Խաւրեցաւ.

Յամենայն ժամու աղաչանք. Արթուն մտօք.

Աւագ. Զգեցո մեզ Տէր Աստուած. Տէր մի յիշեր. Վասն Հիւանդաց.

Աշակ. Փարատեա, Երանի որ խորհի փոխի սկսուածք. Խնդրեսցուք Հաւատով.

Աւագ. Հայր գթութեանց: Գ Ողորմեա փոխի սկսուածք. Զարչարակցեալ.

Աշակ. Յամենայն ժամու աղաչանք իմ.

Աւագ. Սուրբ սրտի. Երգ. Խաւապետին.

Աշակ. Տէր զօրութեանց. Տէր մի մատներ. Աղաչեսցուք. Սիրեցի փոխի սկսուածք.

Աւագ. Անկեալ առաջի քո. Շարական Հանգստեան. (յաւուրս ուտեաց).

Աշակ. Ժամամտուտ.

Աւագ. Ճաշու փոխ: Շարական.

Աշակ. Գիրք (յաւուրս ուտեաց).

Աւագ. Աւետարան. Հաւատամք.

Աշակ. Եւ եւ Հաւատով.

Աւագ. Տէր մեր եւ փրկիչ:

Ե. ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

Աշակ. Հասեալքս ի ժամ երեկոյիս. քարոզ. Հասեալքս ի ժամ. աղօթքն:

Աւագ. Մեսեղիքի սկսուածք. Ուղիղ Եղիցին.

Աշակ. Ասասցուք, կամ Աղաչեսցուք՝ կամ Մայր սուրբ.

Աւագ. Հուր ձայնից. **Ս.** Աստուած. Վասն լսելի լինելոյ: Համբարձի փոխի եւ Շարականի սկսուածք.

Աւագ. Վասն խաղաղութեան.

Աշակ. Հայր գթած. Որ բնակեալ կամ Աստ օրհնեցէք. Զրարժրեալն զՔիստոս: Եւ մեք միաբան.

Աւագ. Յոյս կենաց.

Աշակ. Ցիշեա Տէր զպաշտօնեայս. Խնդրեսցուք. կամ **Ս.** Խաչիս. կամ **Ս.** Եկեղեցեաւս.

Աւագ. Քում ամննազօր. կամ Թագաւոր խաղաղութեան. կամ Պահպանեա. կամ ի մէջ Տաճարիս:

Աւագ. Գիրք Աւետարան.

Աշակ. Ամրիք Հանգստեան Շարական Սաղմոսն եւ Աւետարան:

Աւագ. Շարական Աստուածածնի. Խաչի. Սաղմոս եւ Աւետարան. եւս Նախապտօնակի Շարականաց սկսուածք:

2. ԽԱՂԱՂԱԿԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

Աւագ. Ի կարդալ իմում փոխի սկսուածք. Շնորհեա մեզ Տէր.

Աշակ. Գուացարուք. Տէր բարերար.

Աւագ. Նայեաց միրով.

Աշակ. Աղաչեացուք.

Աւագ. Շնորհատու բարեաց.

Աշակ. Երանեալ են ամրիք. Բաժին իմ. Արարի իրաւունս, փոխի սկսուածք. Ի քէն Հայցեմք. ստեղի Շարական Երկնաւոր Հօտ ընտրեալ. Վասն Հանգուցեալ. Քրիստոս որդի:

ՀԱՆԳՍՏԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

Աւագ. Առաքեա Տէր զլոյս քո.

Աշակ. Եկեսցէ փոխի սկսուածք: Աղաչեացուք քարոզ.

Աւագ. Տէր Աստուած. Խաղաղութեամբ յայս. Աւետարան.

Աշակ. Ընկալ քաղցրութեամբ կամ Աստուած յաւիտենական կամ Որդի Աստուծոյ:

Աւագ. Հաւատով խոստովանիմքի սկսուածք:

Աշակ. Ս. զԱստուածածինն:

Աւագ. Ընկալ Տէր. Փառք քեզ Տէր Աստուած մեր¹²:

¹² Թէ սկսուածքի եւ թէ արծակման Դայր մեր աղօթքն նոյնպէս եւ մատքանը վերաբերին երիցագոյն քահանային կամ ժամ օրենողին:

Մեկնություններ և այլ խրատներ

«Յիշեսցուք ի գիշերի» մեկնությունը՝
ըստ Գրիգոր Տաթևացու

Սուրբ Ներսես Շնորհալու գիշերային ժամերգության Համար հուսած երգը չորս մասերից է կազմված:

Առաջին մասն այսպես է սկսվում. «Յիշեսցուք ի գիշերի զանուն Քո Տէր»: Հանդերյան աշխարհի Համեմատությամբ այս կյանքը գիշեր է Համարվում: Սա շարաթվա վեց օրերի պես վեց տներից է կազմված, նաև այս կյանքի տևողությունը վեց դար է՝ սկսած Ադամից մինչև վախճանը:

Արեգակը ևս վեց կենդանակերպերով է խոնարհվում և վեցով բարձրանում: Նաև մարդն իր բոլոր գործողություններում՝ և՛ չար, և՛ բարի, ունի Հնարավորություն շարժկելու վեց ուղղություններով, կերեւ, ներքեւ, աջ, ձախ, ետ ու առաջ:

Երկրորդ մասը՝ «Զարթիքը», կազմված է տասը տներից, և այն տասը կույսերի անունից է ասվում, ովքեր գերեզմանում ննջեցին մարմնով, բայց հոգու կայանում Հանգան հոգով:

Երրորդ մասի երեք տները՝ «Զարթիք ընդէր ննջես»-ը, կրում է ինչպես Քրիստոսի, այնպես էլ ողջ մարդկության Հարության խորհուրդը: Քանի որ Հարությունը Երրորդության զորությամբ է լինում, մենք էլ երեք տներով Հավիտյան փառք ենք տալիս Սուրբ Երրորդությանը:

Չորրորդ մասը՝ «Զարթուցյալքը» հինգ տներից է կազմված, որպեսզի հինգ զգայարաններով քնից արթնանանք: Խակ Հարության օրը, Աստծուն փառարանելու Համար պիտի բոլոր զգայարաններով Հառնենք:

Եվ ընդհանուրը կազմում է քսանչորս տուն՝ օրվա քսանչորս ժամերի պահպանության Համար: Այս նաև Հանդերյան կյանքի քսանչորս երեցների խորհուրդը ունի, ինչպես նաև տասներկու առաքյալների և տասներկու մարգարեների խորհուրդը:

«Զարթուցեալք» քարոզը

Ապա սարկավագը առաջ գալով քարոզում է՝ զգուշացնելով բոլոր Հավաքվածներին, ովքեր երկնային Հրեշտակների նմանու-

թյամք փառավորիչ են կարգված. լինել երկուղած, հավատով լի, աներկմիտ սրտով Տիրոջից քավություն խնդրել, գոհանալ ստացած երախտիքների համար և հայցել, որպեսզի առաջիկայում, ըստ Տիրոջ կամքի, կրոնավորել և արժանանալ խոստացած հավիտենական բարիքներին ու աղոթքով Աստծուց Հոգու և մարմնի համար բազմապիսի շնորհներ խնդրել:

«Տէ՛ր ողորմեա» ասելու կարգը

Քարոզից հետո, եթե ապաշխարության օր է, հարյուր «Տէ՛ր ողորմեա» է ասվում՝ Տերունական առակի հարյուր ոչխարի խորհրդով (Ղուկ. ԺԵ 3-7): Եվ ինչպես որ այն հովիվը գտավ այդ հարյուրից մեկ մոլորդած ոչխարին և իր բարեկամների ու դրացիների հետ ուրախացավ, այնպես էլ մենք հարյուր «Տէ՛ր ողորմեա» ենք ասում, որպեսզի մեղքով մոլորդածներիս Տերը գտնի և դարձյալ դասի իննսունիննի հետ, որոնք մոլորդած չեն:

Իսկ մարտիրոսաց տոնին հիսուն «Տէ՛ր ողորմեա» է ասվում, որովհետև հիսունը հոբեյանական թիվ է և ազատությունն է խորհրդանշում: Մարտիրոսները իրենց երկրային կյանքը նահատակությամբ ավարտելուց հետո ազատվեցին ալեկոծ աշխարհից՝ մարմնական կրքերից, չար բռնակալներից ու սատանայական փորձություններից և, դժողակ նեղությունների հարվածներից վախճանվելով, բարձրացան երկնակամարը, խառնվեցին Հրեշտակների գնդերին ու հասան Քրիստոսին և արժանացան հավիտենական հանգստին: Դրա համար էլ մենք հիսուն «Տէ՛ր, ողորմեա» ենք ասում, որպեսզի Աստված մեզ նրանց պսակին արժանացնի:

Իսկ Տերունական տոնին, ի դեմս Սուլբ երրորդության, մեր Հոգու, մարմնի և մտքի մաքրության համար ասում ենք երեք «Տէ՛ր, ողորմեա», քանի որ Տերունի օրերին միջնորդի կարուություն չենք ունենում, այլ անմիջապես Աստծուն ենք աղերսում:

«Զքէն Գոհանամք» աղոթքը

Այնուհետև հաջորդում է «զքէն գոհանամք» քահանայական աղոթքը գոհության հետ միասին, որը նշանակում է, թե արթնանալով մարմնավոր քնից, այսինքն՝ մեղքերի ծանրությունից, գոհանում ենք Քեզանից: Ո՞վ Աստված, որ մեզ այս ժամին ես հասցրել, և այժմ մենք ամենազգաւատ արթնությամբ, Քո՝ Հզոր

Տիրոջդ, առջև ենք կանգնած:

Ապա Տիրոջից Հայցում ենք ողորմություն Արարջին երկրպագուությամբ հոգովածների համար, որպեսզի տերը նրանց քաղցրությամբ նայի և խաղաղության Հրեշտակին առաքի՝ որպես օգնական և պահապան նրանց անձերին:

Աղոթքից հետո ասվում է՝ «Օրհնեալ Տէ՛ր մեր Յիառու Քրիստոս ամէն: Ալէլուիսա. ալէլուիսա» արտահայտությունը հետևալ նշանակությամբ. նախ քանի որ օրհնությամբ ենք սկսել, պետք է օրհնությամբ էլ ավարտենք: Նաև մեր բոլոր աղոթքները Քրիստոսին ենք նվիրաբերում, որպեսզի նա էլ Հորն ընծայի, ապա հաջորդում են յոթ գուրղաներից կազմված սաղմուների կանոնները, որը նշանակում է այս կյանքը հանդերձալի հետ միասին:

Օրհնության երգը

Տասը պատվիրանների օրինակով (քանի որ տասը թիվը ազատության խորհրդանշն է) տերունական և մարտիրոսաց տոներին օրհնության տասը պատկեր շարականներն ենք երգում, որովհետև վերջիններս ազատվեցին աշխարհի նեղություններից:

Պահքի ժամանակ օրհնություն չի ասվում, որովհետև ապաշխատության օրեր են: Այդ օրերին նաև չի խնկարկվում, քանի որ մեղքերից գարշահուտ ենք դարձել:

Երբ Աստված իսրայելցիններին եղիպտոսի գերությունից ազատեց և անապատ հանեց, Մարիամը՝ Աւարոնի քույրը, թմրուկով հորդորում էր ժողովրդին՝ ասելով՝

«Օրհնեսցո՞ք զՏէ՛ր, զի փառօք է փառաւորեալ» (Օրհնեալ Տիրոջը, քանզի նա փառօք է փառաւորված) (Եկ ԺԵ 20): Նույնպես և մենք ամեն օր Աստծուն նույն օրհնությունն ենք մատուցում, որովհետև և մեզ, այն է՝ նոր Խսրայելին, ազատեց իմանալի փարավոնից, այսինքն՝ ժժոխքից ու կուամոլությունից և ապահով պահեց զանգան մեղքերից ու դուրս բերեց երկնքի իմանալի անապատը, ուր չարն ու վիշտը չեն բնակվում»:

Տերունի օրերին՝ Օրհնության ավարտից հետո, մենք առանց միջնորդի ենք փառավորում Տիրոջը:

Իսկ մարտիրոսների տոներին Սուլբ Աստվածածնի միջնորդությամբ մաղթանք ենք վերառաքում առ Աստված՝ համապատասխան քարոզներով ու աղոթքներով հանգերձ:

Սարկավագը քարոզով Հորդորում է ժողովրդին, թե՝ «Օրհնեց՝ զՏէ՛ր ամենայն ազինք, գովեցէ՛ք զ նա ամենայն ժողովարդը,

զի գորասցի ողորմություն նորա ի վերայ մեր» (Օրհնեցե՛ք Տիրոջը, բռլո՛ր ազգեր, գովեցե՛ք նրան, բոլո՛ր ժողովուրդներ: Թող նրա ողորմությունը հաստատվի մեզ վրա) (Մաղմ. ձժԶ 1, 2):

Քահանան, լինելով Քրիստոսի օրինակը, միջնորդ է Աստծու և մարդկանց միջն և վերցնելով ժողովրդի աղոթքներն ու նվերները՝ Աստծուն է ընծայում: Եվ Աստված իր առաստ գանձերից բազմապատիկ ողորմություններ է շնորհում՝ ըստ հետևյալ խոսքի՝ «Խնդրեցե՛ք և կտրվի ձեզ» (Մատթ. է 7):

Հաջորդող քարոզները ուսուցանում են մեղքերի թողություն խնդրել, որպեսզի խոտան չգտնվենք պատասխանատվության օրը, և մեր առաքինության պտուղները ունայն և ապարդյուն չլինեն: Նաև ուղղել հոգևոր ընթացքը դեպի երկնային Քաղաքը և գտնել շնորհ ու ողորմություն Բարերար Տիրոջից:

Մովսեսը և Հենուն լրտեսներ ուղարկեցին, որպեսզի հայտնին Խրայելի որդիներին բարու մասին, և նրանք բարու տենչմամբ Հաղթեցին Հակառակորդ չարին: Լրտեսներն էլ գնացին, տեսան, ապա եկան ու պատմեցին Խրայելի որդիներին Ավետյաց երկրի Հողի արգասավորության, պարարտության և թշնամիների հետ սպասվելիք պատերազմի մասին:

Նույնպես և առաքյալները՝ ճշմարիտ Խրայելի սրբերի գնդերը, իրենց Տիրոջ զորությամբ Հաղթեցին բանսարկուին և նույնը սովորեցրին ավազանից ծնված որդիներին: Ինչպես թշնամու մեքենայությունների հմուտ գիտակը՝ Պողոս առաքյալն է գրում՝ «Քանզի անտեղյակ չենք նրա խորհուրդներին» (Բ Կորն. Բ 11): Նույնն են պատգամում նաև սրբերի աստվածարանությունը, ճգնողների վարքը, իմաստունների խուքերը, Տիրոջ սպառնալիքները և Հորդորները ավետյաց անվախճան կյանքի մասին:

Ստեփանոս Սլունեցի «Թագաւոր յաւիտեան»

Ինչպես որ Աստված է Հավիտենական Թագավորը, նույնպես և սրբերը, որ Քրիստոսի չարչարանքներն իրենց անձերում կրեցին, Քրիստոսի հետ Հավիտյան թագավորելու են, ըստ առաքյալի խոսքի՝ «Եթէ իր չարչարանքներին կցորդ ենք, Հաղորդակից ենք լինելու և իր փառքին» (Հռոմ. Ը 17): Իսկ մեկ այլ տեղ գրված է՝ «Եթէ Համբերենք, նրա հետ էլ պիտի թագաւորենք» (Բ Տիմ. Բ 12):

Ապա ընթերցում ենք սրբերի հիշատակությունը, ովքեր նահատակվեցին և թագավորում են այնտեղ նրա հետ: Որպեսզի մենք էլ

նրանցը ցանկանանք և նրանց փառքին մասնակից լինենք, նրանց բարեխոս դարձնենք մեզ համար և նրանցից օրինակ վերցնենք: Նրանք, ովքեր Ավետյաց երկրի ականատեսը եղան և մեզ էլ Հորդորում են այն ճանապարհով գնալ, որով իրենք ընթացան ու անսխալ ժամանեցին նախատեսված վայրը:

«Թագաւորք»-ները մաղթանքներ են, որպեսզի կարողանանք տանջանքների մեջ ապրել, իսկ սրբերին ուղղված աղաչանքները նրա համար են, որպեսզի մենք ևս արժանանանք նրանց սպասավելիք հատուցմանը:

«ԱԼԵԼՈՒԻՒ»

Իսկ հարության և տերունական տոններին «Ալէլուիա»-ներով հրեշտակներին ենք երգակից լինում, որպես թե ավետիս ենք մատուցում փրկված ժողովրդին՝ պատմելով Քրիստոսի փրկագործության մասին, որ նա արեց մարդկային, ցեղի համար:

Որովհետև այդ օրերին բարեխոսների և մաղթանքների կարիքը, այլև սերովիրեական երգերը, և մարդկանց ու հրեշտակների բարերանությունները միացվում են մեկմեկու, և «Ալէլուիա»-ների վերջին տներում գոհություն և փառարանություն և երկրպագություն է վերառաքվում բարիքներ Տվողին: «Ալէլուիա»-ն թարգմանվում է՝ «Գովեցեք Տիրոջը»:

Եվ այսքանով ավարտվում է Գիշերային ժամերգությունը: Սրանցից հետո անդրադառնալու ենք Հաջորդին, որը «Հարց»-ն է, այսինքն՝ «Երեք մանուկների» երգը:

«ՀԱՐՑ»

«Հարցը», իր հետ կարգված աղոթքներով, ուղղված է Միաձին Որդուն: Որովհետև, երբ երեք մանուկներին նետեցին Հնոցի հրի մեջ՝ նարուգողնոսոր արքայի կանգնեցրած պատկերին չերկապագելու համար, այնժամ Բանն Աստված իջավ Հնոցի մեջ և երեք մանուկներին փրկեց կրակով այրվելուց: Իսկ մանուկները, երբ տեսան, որ ողջ են մնացել հրից, սկսեցին գոհարանել Աստծուն: Նրանց օրինակով մենք ամեն առավոտ «Հարցն» ենք երգում: Հայցելով Տիրոջից, որ ինչպես նրանց փրկեց այրվելուց, այնպես էլ մեզ փրկի մեղքերի կրակներից, որոնք միշտ տոչորում ու այրում են մեր

մարմիններն ու Հոգիները, ինչպես որ հաջորդ քարոզն է ասում՝

«Աղախեցուք զՄիածին Որդին Աստուծոյ, զՏէրն մեր Յիսուս Քրիստոս, որ էջ փառօք Հօր ի մէջ Հնոցին, և փրկեաց զերիս մանկունսն ի քաղղեացոց անտի: Լուսաւոր և սուրբ պահեացէ զմիսո մեր, զի մի՛ երբէք խարիցուք մեք ի մեղաց և ի ցանկութենէ աշխարհ»:

«Աղախենք Աստծու Միածին Որդուն՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսին, որ Հոր փառքով Հնոցի մեջ իջավ և այստեղ փրկեց քաղղեացի երեք մանուկներին: Լուսավոր և սուրբ թող պահի մեր մտքերը, որ երբեք չխարպինք մեղքերից և աշխարհի ցանկություններից»:

«Մեծացուացէք»

«Հարցը»-ը Աղամի, «Ողորմեա»-ն՝ որպես ապաշխարություն Եվգի, իսկ «Մեծացուացէք»-ն, որը գտնվում է այս երկուսի միջև, ի դեմս Աստվածածին է ասվում, որովհետև վերջինս եղավ նրանց դատապարտությունների լուծարողը, և Աստվածածինց նախամորը Հարության ավետիս է առաքվում Հողաստեղծ Աղամի կենդանության մասին:

Հարց. - Ինչու՞ ենք «Հարց» ից հետո «Մեծացուացէք»-ն ասում:

Պատասխան. - «Մեծացուացէք» -ն Սուրբ Կույս Մարիամ Աստվածածինն է ասել, և «Հարց»-ից հետո է զետեղված այն բանի համար, որ, երբ Քրիստոս իջավ Հնոցի մեջ, այդ երևումն անմարմին էր, իսկ Աստվածածնով Հայտնությունը՝ մարմնով:

Ուստի «Մեծացուացէք»-ն պատշաճ է «Հարց»-ից հետո երգել, քանի որ Բանի Հնոց իջնելը օրինակն էր, իսկ մարդեղությունը՝ ճշմարտությունը, և ճշմարտությունը Հարկավոր է օրինակին մոտ դնել:

«Մեծացուացէն» պատմում է ամբողջ տնօրինության խորհուրդը: Քրիստոսի Հարության մասին խոսելիս անհրաժեշտ է Հիշատակել նաև Նրա ծնունդն ու գերեզմանը: Որովհետև եթե Տերը ծնված չլիներ, ապա չէր խաչվի և թաղվի: Իսկ եթե թաղված չլիներ, ապա Հարություն էլ չէր առնի, և մենք էլ չէինք փրկվի:

Այս ամենի համար անախտ ու կուսական Ծնունդը Հանձն առավ' կամավոր խաչն ու թաղումը և Հարություն առավ, որի համար էլ «Մեծացուացէք» ենք ասում:

Ապա և նոյն իրեն՝ Սուրբ Կույսին բարեխոս ենք անում Աստծու առջև, ինչպես երևում է քարոզից և աղոթքներից:

«Ողորմեա»

Հարց - Ինչու՞ ենք «Ողորմեա»-ն Ավետարանն ընթերցելուց հետո երգում:

Պատասխան - «Ողորմեա»-ն ապաշխարություն է, քանի որ Դավիթը 50-րդ սաղմուց մեղանչելուց հետո ասաց: Եվ մենք, քանի դեռ աշխարհում ենք, և Հոգիներս մարմիններիս մեջ են, կարող է մեղանչենք:

Դարձյալ «Ողորմեա»-ն, ինչպես նաև «Հարցը», մեղքերի համար Աղամի զղման խոստովանությունն է: «Ողորմեա» -ն նաև մաղթանք է առաջին կամար: Սա ենք երգում և ապաշխարությամբ մեր մեղքերը քավում և ապա՝ սրբությամբ ու արդարությամբ պաշտում Տիրոջը: Դրա համար «Տէր յերկնից»-ը «Ողորմեա»-ից հետո կարգվեց, որպեսզի մեղքերի թողություն ստանալուց հետո սկսենք ուրախությամբ բարձրածայն օրհնել Աստծուն:

Ծնկի գալը Կործանարար մեղքերի համար է: Իսկ կուրծքը բախելը և ողբալը հատուկ է կանանց՝ պատերազմների ժամանակ:

«Տէր յերկնից»

Եթե «Ողորմեա»-ն նշանակում է, որ ողորմությամբ արդարացրեց ու փրկեց, ապա «Տէր յերկնիցը» Հրեշտակների օրհնությունն է Տիրոջ համբարձման ժամանակ:

«Տէր յերկնից» -ը բարձրածայն երգելը Հրեշտակների հետ երգեցողությունն է խորհրդանշում:

Հարց - Ինչու՞ «Օրհնեցեք Տիրոջ»-ը ասելիս նախ՝ Հրեշտակներին է դիմում՝ «Օրհնեցէք զնա ամենայն Հրեշտակը նորա» և ապա՝ մարդկանց:

Պատասխան - Որովհետև լինելիությամբ նրանք են անդրանիկները, հետևաբար պարտավոր են նաև օրհներգելիս առաջնը լինել:

Երկրորդ՝ քանի որ առավել են չնորհներով ու գիտությամբ, ուրեմն պարտավոր են նաև չնորհներ մատուցող և ուսուցանող լինել: Այսպես է նաև Եկեղեցում: Սարկավագը, Սուրբ Հոգուց իշխանություն ստանալով, օրինակ է ծառայում դպիրներին ու բոլորին Հորդորում օրհնել Աստծուն: Նախ՝ ավագներն են սկսում, հետո՝ Հաջորդաբար մյուսները շարունակում են:

Հարց - Ինչու՞ ենք «Տէր յերկնից» սաղմուց երգում:

Պատասխան - Վեց պատճառներով: Առաջին՝ եթե «Ողորմե-

ան» ապաշխարության, ապա սա օրհնության խորհուրդն ունի: Անհրաժեշտ է նախ ապաշխարել մեղքերից, ապա սրբությամբ օրհնել Աստծուն:

Երկրորդ՝ աղոթքը հետևյալ սահմանումն ունի. նախ՝ պետք է օրհնել, ապա՝ խնդրել, իսկ այնուհետև՝ գոհանալ: Որը և կատարվեց «Հարց» -ով, «Ողորմեա» -ով՝ և «Տէր յերկնից» -ով:

Երրորդ՝ քանի որ օրհնությունը «Հարց» -ով ենք սկսել, ապա «Տէր յերկնից» -ով պիտի ավարտենք:

Չորրորդ՝ սկզբում «Հարց» -ով ենք դիմում Մի Աստվածությանը հետո «Տէր յերկնից» -ով ի դեմս Երրորդության ավարտում: Որովհետև այս երեք սաղմուներից առաջինը Հորն է ուղղված, Երկրորդը օրհնություն է Որդուն, իսկ երրորդը՝ սրբությամբ օրհնություն Սուրբ Հոգուն:

Հինգերորդ՝ նահատակներից սկսած՝ նրանք, ովքեր մեր գլխավորներն են, մինչև ստորին արարածները աստիճանական կարգով էլ, նույն կարգով երկնային բոլոր իմանալի գլխավոր արարածներից սկսած՝ հրավիրում ենք միաձայն ու միարան խոստովանության և օրհներգության երկնքի և երկրի Արարջին:

Վեցերորդ՝ «Հարց» -ի երգը նաև Բանի էջքն է նշանակում, որը խորհրդով ասացին մարգարեներն ու նահապետները, իսկ «Մեծացուցէ» -ն մարմնավոր երևումն է Աստվածածին ծնողից:

Իսկ «Օրհնեցէ՝ գՏէր յերկնից. օրհնեցէ՝ զնա ի բարձանց» (Օրհնեցե՛ք Տիրողը երկնքից, Օրհնեցեք նրան բարձունքներից) (Սաղմ. ձՆԸ 1) ասելով՝ Եկեղեցին հրակցվում է Հրեշտակների դասերի հետ Տիրոջն օրհնաբանելիս: Հատ Փրկչի Խոսքի՝ «Ով իր անձը բարձրացնում է, կիսոնարհվի. և ով խոնարհեցնում է իր անձը, կրարձրանա» (Մատթ. ԽԳ 12): Որովհետև մաքավորը խոնարհվելիս ասաց. «Աստված, ների՛ր ինձ՝ մեղավորիս», որի հետ պարակցված արարածներս օրհնում ենք Արարջին:

Եվ երեքփոխյան սաղմոսով հրամայվում է օրհնել Սուրբ Երրորդությանը: Առաջին փոխը հրահանգում է օրհնել Հորը՝ հրանյութ դասերի հետ մեկտեղ ամբողջ արարչագործության և արարածների խնամակալության և կարգավորության համար:

Երկրորդ փոխը՝ օրհնել նրա Որդուն՝ Ծոցածին Բանին, որի համար Եկեղեցին, որ հաստատվեց Քրիստոսով, կառուցվեց սրբով՝ առաքյալների և մարգարեների հիմքերի վրա, որոնց հիմքը

Հիսուս Քրիստոսն է, ասում է. «Օրհնեցէ՝ գՏէր յօրհնութիւն նոր, օրհնութիւն նմա յեկեղեցիս սրբոց: Աւրախ եղեւ Խարայէլ յԱրարիշ իւր, որդիք Սիոնի ցնծասցեն ի Թագաւորն իւրեանց» (Օրհնե՛ցք Տիրողը նոր օրհնությամբ, սրբերի ժողովում է օրհնությունը Նրա: Խարայեն ուրախացավ իր Արարչով, Սիոնի որդիները թող ցնծան իրենց Թագավորով) (Սաղմ. ձՆԹ 1-2): Հիսուս Քրիստոսին Հաճելի է սուրբ ավագանի մկրտությամբ մաքրված իր ժողովուրդը: Իսկ սրբերը պարծենում են նրա փառքով ու Սուրբ Հոգու պարգևներով, որ ընդունեցին:

Քրիստոս Երկսայրի սուրբ տվեց նրանց ձեռքը, և Հավատացյալները Քրիստոսի շնորհով և Սուրբ Հոգու գորությամբ վրեժ լուծեցին գլերից՝ կապելով բանսարկու սատանային՝ մեղսաներ թագավորին, և ամրարիշտների Հատուցման օրը պիտի դատեն՝ ըստ Սուրբ Գրքի:

Իսկ երրորդ փոխը սովորեցնում է զանազան հորինվածքներով օրհնաբանել Պարգևաբաշխ Սուրբ Հոգուն, որի լցոնց Եկեղեցին զանազան շնորհներով, որի համար երրորդ փոխում վեց տուն է Հատկացվում: Ընդհանուր այս երեքփոխյան սաղմոսում տասներկու օրհնություններ են ասվում՝ ըստ առաքյալների թվի, ովքեր Սուրբ Հոգուց իշխանություն ստացան Եկեղեցու գլխավորները լինելու: Որի համար ասում է. «Ի ձայն գոհության ամենայն Հոգի, օրհնեցէ՝ գՏէր: Փառք Հօր և Որդույ և Հոգույն Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յախտեանս յախտենից. Ամէն» (Գոհության ձայնով, բոլո՛ր Հոգիներ, օրհնեցե՛ք Տիրողը: Փառք Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն, այժմ և միշտ և Հավիտյանս Հավիտենից. ամեն) (Սաղմ. ձԾ 6), և գոհությամբ սաղմոսն ավարտում է:

Այս ամենից հետո երգում ենք «Փառք ի բարձունս», որ ասացին Հրեշտակները Քրիստոսի ծննդյան ժամին (Ղուկ. Բ 14):

«Փառք ի բարձունս»

«Բառք ի բարձունս» երգը Տիրոջ ծնունդն աղդարարող Հրեշտակների խոսքն է: «Փառք Աստծուն բարձունքներում և երկորի վրա, խաղաղություն և Հաճություն մարդկանց մեջ» (Ղուկ. Բ 14):

Այսպես էր Եկեղեցին ասում մինչ Նիկիայի Տիեզերական սուրբ ժողովը: Եվ ժողովում, կիրակի առավոտյան միարան ու միախորհուրդը Հայրապետները կցեցին «Օրհնութիւն Քեզ ի բարձունս...» ից մինչև «Բարձրեալ ես, Դու միայն Տէր մեր Ցիսուս Քրիստոս»

Հատվածը, և դա այդպես մնաց մինչև Կոստանդնուպոլիսի սուրբ ժողովը:

Իսկ Կոստանդնուպոլիսի սուրբ ժողովում ավելացվեց Հոգեմարտի՝ Մակեդոնի դեմ ուղղված Հետևյալ Հատվածը՝ «Տէր և Հոգի Սուրբ որ ի փառ Աստուած ընդ Հօր. ամեն», մինչև «Օրհնեալ Տէր՝ ուսո՛ ինձ զարդարութիւնս Քո»:

Այնուհետև Եփեսոսի սուրբ ժողովում սաղմոսներից և մարդարեական խոսքերից Հետևյալ մասը ևս ավելացվեց՝ «Տէր ապավեն եղեր մեր ազգէ յազգ» մինչև «Մագեա՛ զողորմութիւնս Քո, որք ճանաչեն զՔեզ, Տէր», այսինքն՝ մինչև վերջ, և սրանով է ամրողանում երգը:

«Փառք ի բարձունս»-ի

Մեկնաբարունը ըստ Պողոս Տարոնացու

Եզակի անվամբ Տիրոջ օրհնելուց հետո, ճայնակցելով Հրեշտակների դասին, գովարանվում է մարմնացյալ Բանը՝ «Փառք ի բարձունս Աստուծոյ» ասելով (Փառք Աստծուն բարձունքներում):

Որդու Համար ասվում է. «Օրհնեալ եկեալ անուամբ Տեառն» (Օրհնեալ է Տիրոջ անունով եկողը):

Ամենակալ Հոր Համար ասվում է՝ «Փառաւորեալ Հայր Սուրբ»: Իսկ Որդու Համար՝ «Տէր Աստուած Գառն Աստուծոյ»:

Ապա Սուրբ Հոգուն՝ «Տէր և Հոգի Սուրբ» որ ի փառ Աստուած. ընդ Հօր» «Տե՛ր և Սուրբ Հոգի Աստված, որ փառավորվում է Հոր հետ»:

Այնուհետև Սուրբ Երրորդությանը զիմելով՝ ասվում է՝ «Արժանի՛ արա Տէր զօրս զայս խաղաղութեամբ, և առանց մեղաց պահե՛ա զմեզ» «Արժանացրու՛, Տեր, այս օրը խաղաղությամբ անցկացնել, և առանց մեղքերի պահի՛ր մեզ»:

Եվ ասելով՝ «Օրհնեալ ես Տէ՛ր Աստուած Հարցն մերոց», ուղղվում է Երեք անձերի Հավիտենական Միությանը «Օրհնյալ ես մեր Հայրերի Տեր Աստված»:

Ապա Հորը դիմելով ասվում է՝ «Օրհնեալ Տէր՝ ուսո՛ ինձ զարդարութիւնս Քո, Տէր ապաւէն եղեր մեր ազգէ յազգ» «Օրհնյալ Տեր սովորեցրու ինձ Քո արդարությունը, Տեր մեզ ապավեն եղիր սերնդեսերունդ»:

«Ի Քէն է Տէր՝ աղբիւր կենաց» (Տեր, Քննանից է բխում Կեն-

դանության աղբյուրը), այսինքն՝ Հորից է բխում Սուրբ Հոգին:

«Եվ լուսով երեսաց Քոց տեսանեմք զլոյս» «Թո երեսի լուսով տեսնում ենք լույսը»: Հորից ծագած լույսով, Որդու լուսափայլ տնօրինությամբ տեսանք աստվածիտության լույսը: Այսինքն՝ Որդով ենք տեսնում լույսը:

Այնուհետև մաղթանք Սուրբ Երրորդությանը՝ «Մագեա՛ զողորմութիւնս Քո, որք ճանաչեն զՔեզ, Տէր» (Մագեցրու՛ «Քո ողորմությունը նրանց Համար, ովքեր ճանաչում են Քեզ, Տեր»):

Այս ամենից Հետո ասվում է «Առավոտյան երգը» խաչի դիմաց, որպես թե Հայտնապես խոստովանություն Խայլալին: Եվ ապա Հաջորդում են քարոզ, աղոթք, խնդրանքներ և գոհություն:

Առավոտյան երգ

Առավոտյան երգում, որ օրվա խորհուրդն ունի, գոհություն է վեր առաքվում Ամենակալ Հորը, Ով այսպիսի սքանչելիքներով պահպանեց ու բարձրացրեց մարդկային ցեղը և արժանացրեց ամենաՀաղթությանը և պահում է իր սուրբ Եկեղեցին մինչև իր Որդու երկրորդ գալուստը:

Առավոտը Քրիստոսն է, որովհետև մինչև Միածնի գալուստը գիշեր էր: Իսկ Քրիստոսի գալստյամբ մեզ Համար առավոտ բացվեց, որի Համար ցնծացինք և ուրախացանք: Այժմ խայտալով՝ աղաչում ենք Փրկչին, որպեսզի գալիք առավոտյան՝ այս աշխարհի գիշերից Հետո ազատվենք տառապանքներից և, մահվանից Հարություն առնելով ու գեափի վեր թևելով, ընդառաջ ենենք Քրիստոսին: Եվ այսպես ամեն ժամ Տիրոջ հետ լինենք՝ վայեկելով անվախճան Առավոտը, այսինքն՝ միշտ Քրիստոսին տեսնենք:

Ուստի քահանայության Համար առաքվածները վեր են առաքում ժողովրդի աղոթքները առ Աստված՝ Հաստատակամ լինելու Համար Նրա պատվիրանների մեջ և վայեկելու առաքելական Հաղորդության շնորհները, այս է՝ այս կյանքում լինել մաքուր տաճար միասնական Սուրբ Երրորդության Համար և արժանապայել երգերով ու սուրբ խորհրդով փառավորել Աստծու Միածն Որդուն: Առավոտյան երգը խաչին է ցնծայգում:

«Սուրբ Աստված»

Այսպիսի խորհուրդներից Հետո, որքան էլ նախօրոք ասածները բարձրագույն լինեն, Համարձակվելով վերին զվարձությունների

հետ, չենք ձայնում ի դեմս Սուրբ Երրորդությանը, այլ միայն ի դեմս Միածնի՝ Աստծու Որդու, Ով Հոր և Սուրբ Հոգու հետ հավիտենականությունից առաջ կար:

Վերջին ժամանակներում մարդկանց փրկության համար մարդանալով՝ սուրբ Կուպակից մեզ համար խաչվեց և թաղվեց, երրորդ օրը հարություն առավ և երկինք վերացավ ու նստեց Հոր՝ իր Ծնողի աջ կողմում:

Մովսեսը, այս ամենը մարդարեական հոգով կանխազգալով, հրամայեց երեկոյան ոչխար զոհել, որը Քրիստոսի մաշվան ժամն էր: Այնուհետև, ըստ օրենքի, քահանաները գառ էին զոհում առավոտյան և երեկոյան:

Այսպիսով «Երեքսրբյան»-ը Քրիստոսին է նվիրված՝ ըստ Ավետարանի վկայությանը՝ «Եսային այս ասաց, որովհետև տեսավ նրա փառքը և խոսեց նրա մասին» (Հովհ. ԺԲ 41):

Պետք է ասել, որ «Երեքսրբյան»-ը երկու մասերից է կազմված: Առաջինը՝ «Սուրբ Աստուած, Սուրբ և Հոգոր, Սուրբ և անմահ», իսկ երկրորդ մասը տնօրինական հավելված է, որոնք հիմնականում տասն են:

Հարց - Ո՞վ ասաց «Սուրբ Աստուած»-ը:

Պատասխան - Հովսեփ Արիմաթացին: Ըստ Հոռմի Նեքտարիոս Հայրապետի, երբ Տերը մահացավ խաչի վրա, Հովսեփ Արիմաթացին խնդրեց Պիղատոսից Տիրոջ մարմինը և գնաց, որ իջեցնի խաչից: Եվ տեսավ, որ անկարելի է Տիրոջ մարմինը իջեցնել խաչից, որովհետև խոցված տեղերը փայլատակում էին: Երբ փորձեց բնեռները դուրս քաշել, մարմնից կրակ ցոլաց, որից Հովսեփը ահարեկվեց և ետ կանգնեց ու ձեռքերը վեր բարձրացնելով՝ աշով ու դողով սկսեց աղոթել: «Սուրբ Աստուած, Սուրբ և Հոգոր, Սուրբ և անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ»:

Սկզբում երբ ասաց՝ «Սուրբ Աստված», այսինքն՝ «Ես Քեզ լոկ մարդ էի կարծում, Դու Սուրբ ես», ընկավ մի բներդ: Այնուհետև ասաց՝ «Սուրբ և Հոգոր»: Այսինքն՝ «Ես Քեզ տկար կարծեցի, Դու Հոգոր ես», որից հետո ընկավ երկրորդ բներդ: Եվ դարձեալ ասաց՝ «Սուրբ և Անմահ», այսինքն՝ «Ես Քեզ մահկանացու կարծեցի» Դու անմահ ես»: Այս խոսքերը երեք անգամ ասելուց հետո ընկնում են բոլոր բնեռները, և Սուրբ Մարմինը իջնում է Հովսեփի բազուկների վրա: Նա էլ, ըստ օրենքի, պատեց մարմինը ու դրեց գերեզմանի մեջ:

Սովորատ պատմագիրը գրում է, երբ Մեծն Խճնատիոս Աստվածազգեացը տեսնում է երկնային զորքերին և լուս նրանցից «Սուրբ Աստուած»-ը Անտիռի եկեղեցում, կարգ է սահմանում, որպեսզի ամեն օր առավոտյան և երեկոյան «Սուրբ Աստուած, որ խաչեցար» խոսքերն ասվեն:

Եվ Եսայի մարդարեն տեսավ Քրիստոսին աթոռի վրա նստած, որը խաչն էր, և լսեց «Երեքսրբյանը» (Եսայի Զ 3), որը մեզ վկայում է Հովհաննես ավետարանիչը՝ ասելով, թե այս ասաց Եսային, որովհետև տեսավ նրա փառքը և խոսեց նրա մասին (տե՛ս Հովհ. ԺԲ 41): Նրան վերջին օրերին խաչված տեսանք, որը և երգում ենք սրբասացությունում:

Սուեկիանուը Եսայու «Երեքսրբյան»-ը Որդու համար տեսավ (տե՛ս Գործք, է 54):

Սուրբ Աթանասը «Պատարագամատուցում» գրում է՝ «Սուրբ, Սուրբ, Սուրբ Տէր զօրութեանց, լի են երկինք և երկիր փառօք Քո»:

Նաև Հովհաննես Ուկերերանը կարգեց ամեն օր երեք անգամ «Սուրբը» ասել:

Եփեսոսի ժողովում սուրբ Կյուրեղ Ակեքսանդրացի Հայրապետն ընդդեմ Նեստորի ասաց «Միածնին» ժամանուուր և «Սուրբ Աստուած, որ խաչեցար» սրբասացությունը: Եվ նույն ժողովում ասվեց «Փառք ի բարձունս» -ը, ուրը երեք անգամ է ասվում: «Օթհնեալ Տէր, ուսո ինձ զարդարութիւնս Քո»: Կիրակի օրերին երեք անգամ կրկնում ենք՝ «Ոչ դադարեցից օրհնել Քեզ Քրիստոս Փրկիչ աշխարհի»: Այս պատճառով, ըստ սուրբ Կյուրեղի սահմանած կարգի, ասում ենք «Սուրբ Աստուած» ի դեմս Որդու:

Նաև Պետրոս Անտիռացին և Տիմոթեոս Ակեքսանդրացին Հուստինիանու կայսեր հրամանով հաստատեցին «Սուրբ Աստուած, որ խաչեցար» ասելը: Ասորիները նույնպես մինչեւ այսօր «Սուրբ Աստուած, որ խաչեցար» են ասում:

Մեկնություն

Թեպետև հրեաները Քեզ լոկ որպես մարդ սպանեցին, Դու՝ Սուրբ Աստված ես և ոչ սոսկ մարդ, որ մարդացար սուրբ Կյուսից: Թեպետ Քո կամքով տկարացար և Քեզ Հանձնեցիր խաչողների ձեռքը, Ամենազոր ես, որ Հաղթեցիր բանսարկուին: Թեպետ մարմնով մեռար և գերեզմանի մեջ գրվեցիր Սուրբ, Անմահ ու Ա-

նապական Աստված ես, որ անմահացրիր մեզ Քո մարմնանալով: Դու՛, որ Քո կամքով խաչվեցիր մեզ Համար, նույն սիրով ողորմիր մեզ:

Երեք անգամ ասելով՝ «Սուրբ, Սուրբ, Սուրբ և Հզոր», Հոր և Սուրբ Հոգու կամքի միությունն ենք Հայտնում Որդու խաչվելու կապակցությամբ: Իսկ ասելով՝ «Սուրբ և անմահ, որ վասն մեր խաչեցար, ողորմիր», Հասկանում ենք, որ Հոր և Սուրբ Հոգու կամքով, աշխարհին կյանք տրվեց:

Իսկ երեք անգամ «Խաչեցար» ասելով՝ ամրանում ենք Հրեղեն պարսպով, որը պատում է եկեղեցին: Եվ փոխանակ գառների զոհարերության՝ ըստ Հին օրենքի, որ մատուցվում էին ամեն առավոտ և երեկո, այժմ եկեղեցին մատուցում է իր շուրջերի պտուղը՝ խոստովանելով Փրկչի չարչարանքները:

Այսպես ամեն օր Հիշում ենք Նրա երախտիքները, որ մեզ Համար խաչվեց, քանի որ խաչը Քրիստոսի փառքն ու պսակն է և քրիստոնյաների պարծանքը և ոչ թե նախատինքը: Ըստ Սողոմոնի՝ «Նայեցք արքայի պսակին, որ նրանով պսակվեց»: Նաև Ինքն է ասում՝ «Հայր, փառավորի՛ր Քո Որդուն» (Հմմտ. Հովկ. ԺԲ, 28), և ձայն լսում երկնքից՝ «Փառավորեցի» (Հմմտ. Հովկ. ԺԲ, 28): Խաչը ի նկատի ունենալով: Առաքյալը ասում է՝ «Անակայն քա'վ լիցի, որ ես պարծենամ այլ բանով, քան միայն մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչով» (Գաղատ. Զ, 14):

Այս ամենը նախապես իմանալով՝ Սուրբ և Առաքելական եկեղեցին ասում է. «Սուրբ Աստուած, Սուրբ և Հզօր, Սուրբ և Անմահ, որ խաչեցար վասն մեր ողորմեա մեզ»:

Իսկ սրբասացությանը անմիջապես Հաջորդող «Փառավորյալ»-ը Թովմաս առաջյալն ասաց Աստվածածնի վերափոխման ժամանակ:

Հարց - Ինչու՞ ենք «Սուրբ Աստուած» -ը գլխարաց ասում:

Պատասխան - Ոչ միայն գլուխը չպետք է ծածկել, այլև Հարկավոր է ձեռքերը վեր բարձրացնել Հովսեփ Արիմաթացու օրինակով: Նույն կերպ պետք է վարվել նաև «Հայր մեր» ասելիս և սրբություններին նայելիս, ըստ Հետեւյալ խոսքի. «Ամեն տղամարդ, երբ աղոթքի կանգնի կամ մարգարեանա և գլուխը ծածկած պահի, անպատվում է իր գլուխը» (Ա Կորն. ԺԱ, 4): Ավետարանի ընթերցման ժամանակ դարձյալ պետք է գլխարաց լինել:

Գլխարաց պետք է լինել նաև, երբ քահանան աղոթում է կամ պատարագում, երբ սարկավագը քարոզում է, խնկարկում կամ ընթերցում: Սա ունի այն խորհուրդը, որ Մածկագետի Համար մեր ամեն ինչը բացահայտ է:

Դարձալ սրանով Հայտնում ենք, որ մեր միտքը ու Հոգին սուրբ ենք պահում Տիրոջ առջև: Ինչպես Քրիստոսը խաչի վրա էր, այնպես էլ Նրա օրինակով մենք գլխարաց տարածում ենք մեր ձեռքերը:

Սակայն կանայք չպետք է բացեն իրենց գլուխները, այլ ընդհակառակը՝ եկեղեցում պետք է ծածկեն՝ ըստ Հետեւյալ խոսքի. «Եվ ամեն կին, երբ աղոթքի կանգնի կամ մարգարեանա գլխարաց, անպատվում է իր գլուխը» (Ա Կորն. ԺԱ, 5):

Իսկ արեղաները աղոթելիս իրենց գլուխը չեն բացում, որովհետև արեղայությունը կրոնավորություն է, և կրոնավորը պարտավոր է ծածկել իր բոլոր զգայարանները: Արեղան իր գլուխը բացում է միայն պատարագելիս:

Ճաշու երրորդ ժամ

Պորրորդ ժամերգությունը, որը նաև ճաշու Առաջին Ողորմյա է կոչվում, Սուրբ Հոգուն է ուղղված և կատարվում է երրորդ ժամին, որովհետև նա այդ ժամին իջավ առաջյալների վրա:

Այս ժամին սահմանված է ընդհանրական աղոթք նաև նախահայր Աղամի գործած Հանցանքի, ինչպես և նույն ժամին մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի խաչի վրա կրած չարչարանքներով կատարված բժշկության Համար, որովհետև «Ինչպես Աղամով բոլորը մեռնում են, նույնպես և Քրիստոսով ամենքը պիտի կենդանանան» (Ա Կորն. ԺԵ, 22): յուրաքանչյուրը ըստ իր կարգի»:

Այս ժամին Տերը ստեղծեց Աղամին ու Հոգի փշելով՝ շնորհներ պարգևեց նրան: Նաև մարդու՝ առաջին անգամ մեղքերով պատվելը նույնպես երրորդ ժամին եղավ օժի՛ Եվային տված մահարեր խրատով: Եվան էլ, բանսարկուի խոսքերից Հրապուրվելով ու խրավելով, ցանկացավ ճաշակել արգելված պտուղը, որով և զրկվեց Սուրբ Հոգու շնորհներից: Իսկ էմանուելը, մեր կերպարանքով մեր մեղքերի ծանրությամբ բեռնավորված, նույն ժամին գնաց կառափնատեղի և խաչը բարձրացավ, որպեսզի բարձրացնի ընկածներին:

Որ ժամին հանցանք գործեց առաջին Աղամը և հանցանքից հետո մնաց զրախտում, նույն ժամին և նույնքան ժամանակ էլ Քրիստոս չարչարվեց խաչի վրա՝ բժշկելու համար Աղամի վերքերը: Ըստ Մարկոս ավետարանից՝ Քրիստոսը երրորդ ժամին հրեաների կողմից կապվեց և այս ժամին խաչին թևեռվեց. «Երրորդ ժամն էր, երբ Աստծու Միաձին Որդուն խաչեցին» (Հմմտ. Մարկ. ԺԵ, 25):

Եվ բնեոված խաչին՝ ոտքերը և ձեռքերը առաքինաբար տարածեց՝ բանսարկուի չար խորհրդով մոլորված նախաստեղծների՝ դեպի մահաբեր ժառը Հանդուգն ընթացքի համար: Նաև իր մաքրագործող չարչարանքներով հանցանքների ձեռագիր կտակը խափանեց և բնության ապականությունը խաղաղեցրեց, որ այն ժամանակ օժի սնուցած պտուղից դդրդաց:

Այս ամենից իմանում ենք, որ ժամը ժամի փոխարեն հատուցեց, չար ժամի զիմաց բարին կարգեց և զրանով մեր մեղքերը բժշկեց, ըստ Հորի այն խոսքի, թե՝ «Բազեն թմերը տարածելով կանգնում է օդում՝ անշարժ դիտելով հարավի կողմը»՝ հափշտակելու մեզ մահվանից դեպի կանք (Հոր ԼԹ, 26): Ողբ մարգարեական աչքով նախապես տեսավ երանելի Դանիել՝ երրորդ ժամին բացելով իր տան արևելյան կողմի պատուհանները և նայելով երուսաղեմի կողմը՝ աղոթում էր գերությունից ազատվելու համար: Տեսնելով Աստծու Միաձին Որդուն՝ նրան, Ով երրորդ ժամին, բազուկները խաչի վրա տարածելով, գերիների ստվար հավաք արեց (տե՛ս Դանիել Զ 10):

Հետևապես ընկած առաջին մարդը վերքերի բժշկությունն այս ժամին ստացավ:

Սուրբ Հոգու շնորհները. Մատքեռու Դպիր

Վերնատուն իշնելով՝ Սուրբ Հոգին վեց տեսակի շնորհներով օժտեց Տիրող առաքյալներին.

Նախ՝ մեղքերից մաքրեց նրանց:

Երկրորդ՝ լուսավորեց նրանց մտքերը, որպեսզի Աստվածաշունչ մատյանն առանց ուսանելու ու ընթեցելու կատարելապես իմանան:

Երրորդ՝ որպեսզի ամենուրեք հրաշքներ գործեն. մեռելներին հարություն տան, կաղերին բժշկեն: Ինչպես և պատմում է Ղուկաս ավետարանիցը ի ճնե կաղ մարդու մասին, որին երբ սուրբ Պետրոս

առաքյալը ասաց՝ «Հանուն նազովրեցի Հիսուս Քրիստոսի վե՛ր կաց ու քայլի՛ր» (Գործք Գ 6), իսկույն վեր կացավ ու քայլեց: Քայլում էր ու վագում, օրհնում Աստծուն: Ուրիշ բազում հրաշքներ էլ գործվեցին առաքյալների միջոցով: Ղուկասը մեկ ուրիշ տեղում վկայում է. «Եվ առաքյալների ձեռքով բազում նշաններ ու զարմանալի գործեր էին լինում ժողովրդի մեջ» (Գործք Ե 12):

Չորրորդ՝ առանց լսելու և ուսանելու խոսում էին բոլոր ազգերի լեզուներով՝ «Եվ բոլորը լցվեցին Սուրբ Հոգով ու սկսեցին խոսել ուրիշ լեզուներով, ինչպես որ Սուրբ Հոգին նրանց խոսել էր տալիս» (Գործք Բ 4):

Հինգերորդ՝ անխօնելի սիրով միացան Քրիստոսին, և սա հայտնի է նրանից, որ անտանելի չարչարանքներ էին կրում նրա անվան համար ու չէին հրաժարվում նրա սիրուց, ինչպես որ առաքյալն է ասում. «Ալրդ, ո՞վ պիտի բաժանի մեզ Քրիստոսի սիրուց. նեղությունները, թե՝ անձկությունը, վտանգները, թե՝ չարչարանքները... չեն կարող բաժանել մեզ այդ սիրուց, որ կա մեր Տեր Քրիստոս Հիսուսով» (տե՛ս Հոռոմ. Ը 35, 39):

Նրանք, ովքեր Քրիստոսի չարչարանքների ժամանակ թիողեցին նրան ու փախան, Սուրբ Հոգին ընդունելուց հետո զորավոր եղան չարչարանքներում, բանտերում գանահարվելիս և այլուր:

Վեցերորդ՝ անվախ ու աներկյուղ էին քարոզելիս և համարձակ ու անվեհեր՝ թագավորների ու բռնակալների հետ խոսելիս: Այսպիսով առաքյալների վրա բազում պարգևներ հեղվեցին, իսկ նրանց միջոցով էլ մեր՝ հավատացյալներիս վրա:

Խաղաղական ժամերգություն

Այնուհետև սկսվում է Խաղաղական ժամերգությունը, որը ութերորդ ժամերգությունն է և նվիրված է Սուրբ Հոգուն: Այն հաջորդում է Երեկոյան ժամերգությանը և կատարվում է արեգակի մայր մտնելուց հետո:

Այս ժամին օրհնում ենք Աստծուն, որովհետև այս ժամին՝ Քրիստոսն աղոթեց Գեթսեմանիի պարտեզում, և նրանից արյան քրտինք հեղվեց, և այս ժամին դրվեց գերեզման, ու այս նույն ժամին՝ հարությունից հետո, անցնելով փակ դռների միջով, եկավ աշակերտների մոտ ու նրանց ողջույն տվեց:

«Խաղաղական» ժամին ասվում է. «Ի կարդալ իմում լուար ինձ, Աստուած, լսու արդարութեան» (Երբ ձայն տվի, իմ արդարության համար լսեցիր ինձ, Աստված») (Սաղմ. Դ 1): Բազմատեսակ սաղմուններով փրկություն է մաղթում Հոգիներին ու միաձայն խնդրում երկնային խաղաղություն գիշերվա համար, որպեսզի պահպանի ու ամրացնի չարի երևացող ու աներևույթ զորություններից, որ շրջում են խավարի մեջ, ինչպես ասվում է՝ «Որի մեջ շրջում են բոլոր գաղաններն անտառի» (Սաղմ. Ճ 20):

Երբ Քրիստոս Հոգով դժոխք իջավ, Հոգիների համար խաղաղություն եղավ: Այդ պատճառով աղոթքը «Խաղաղական» կոչվեց, ինչպես որ խոսքի սկզբում է ասում. «Ի նեղութենէ ինձ անդորր արարեր» (Նեղության մեջ ինձ անդորր տվիր) (Սաղմ Դ 2):

Խաղաղականը չոթ փոխեր ունի, որոնք ասվում են յոթ մաշացու մեղքերից սրբազործվելու համար, որոնք յոթ զգայարաններով գործեցինք և խնդրում ենք, որպեսզի դրանք մաքուր պահի և պահպանի չարից, որպեսզի անմեղ մնանք: Մրանից հետո երգում ենք «Ծնորհեա՛ մեզ Տէր»-ը:

ՅԻՒՂԱԲԵՐԻՑԻ ԿԱՐԳԸ ՊԱՑՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Պատմական ակնարկ՝ ըստ Հոգեմնորհ Տէր Խաժակ Մ. Վարդապետ Բարսամյանի, այժմ Արքեպիսկոպոս և առաջնորդ Ամերիկայի Միացյալ Նահանգների:

Սույն ակնարկը հանձնարարվում է իբրև օժանդակ աղյուս Յիւղաբերիցի կարգի մասին:

- | | |
|-------------------------------|---|
| գ) 145 : 10, 1 | - |
| 2. Իւղաբերից Աւետարան | - |
| երգ՝ զկնի Իւղաբերից Աւետարանի | - |
| 3. Քարոզ եւ Աղօթք | - |
| V. Սաղմոս 50 | + |
| Շարական (Ողորմեա) | + |
| Քարոզ | + |
| Մաղթանք | + |
| VII. Սաղմոսք 148-150 | + |
| Շարական (Տէր յերկնից) | + |

VII. Օրհնութիւն առաւօտու (Փառք ի բարձունս)

- | | |
|--------------|---|
| Մաղթանք | + |
| Առաւօտու երգ | + |
| Քարոզ | + |
| Աղօթք | + |

VIII. Երեքսրբեան (Սուրբ Աստուած)

- | | |
|---------------------|---|
| Մաղթանք | + |
| Քարոզ | + |
| Մաղթանք | + |
| Սաղմոս 112 | + |
| Աւետարան բժշկութեան | - |
| Շարական | + |
| Քարոզ | + |
| Աղօթք | + |

Ըստ վերեւ տրուած ուրուագծի՝ յստակ կերպով կարելի է տեսնել թէ ներկայ Իւղաբերից կարգը Կիրակի առավօտեան ժամերգության մէջ ինքնին առանձին միոյթ մը կը կազմէ: Սակայն նախապէս, Առաւօտեան ժամը եւ Իւղաբերից կարգը կը կատարուէին անջատարար, ինչպէս Արեւելեան Եկեղեցիներու ծխագիտութեան յայտնի մասնագէտ Պրոֆ. Եռուն Մաթէոսը լաւագոյն կերպով կ'ապացուցանէ: Ըստ յարգելի բանասէրին բացատրութեան՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ Իւղաբերից կարգը կը համապատասխանէ Համայնքային Եկեղեցիներու Կիրակնօրեայ «Յարութեան Հակման արարողութեան» (Cathedral Vigil of the Resurrection): Այս արարողութեան նկարագրութեան կը հանդիպինք Եթերիայի, Աւտագնացութիւն ի Սուրբ Տեղիս եւ Առաքելական Սահմանադրութեանց (Constitutiones Apostolorum) մէջ:

Կիրակնօրեայ «Յարութեան-Հակման» արարողութեան կապակցութեամբ Եթերիայի եւ Առաքելական Սահմանադրութեանց զոյգ վկայութիւնները կը հստակեցնեն Հայաստանեայց Եկեղեցւոյ Իւղաբերից կարգի ծագման աւանդութիւնը:

Եթերիան՝ Հավանաբար Սպանացի մայրապետ, Զորրորդ դարու վերջաւորութեան (շորջ 381-384 թուականներուն) կը ճամրորդէ Եղիպտոս, Սուրբ Երկիր, Փոքր Ասիա եւ Կ. Պոլիա: Ան իր ուղեգործութիւնները գրի կառնէ: Եթերիա իր ուղեգործութեան առաջին մասին

մէջ Սուլը Գրական տարբեր տեղերու եւ երեւոյթներու մասին կը պատմէ: Ապա, յաջորդ մասին մէջ, ան այս անգամ ծիսական նիւթերու շուրջ կը գրէ, մանաւանդ Երուսաղէմի մէջ կատարուած արարողութիւններու մասին շատ կարեւոր բացատրութիւններ կու տայ: Այս բացատրութեանց մէջ կը Հանդիպինք Հետեւեալ հատուածին, որ Երուսաղէմի Սուլը Յարութեան Տաճարին մէջ Կիրակիններու «Յարութեան-Հսկման» արարողութեան Հետ սերտ առնչութիւն ունի:

«Եօթներորդ օրը՝ Տէրունական օրը...

Անմիջապէս առաջին հաւախօսին, եւ այդ ժամուն եպիսկոպոս կուգայ եւ կ'երթայ դէպի քարայրը՝ Յարութեան Տաճարին մէջ: Դուները ամբողջ կը բացուին, եւ բոլոր ժողովուրդը Յարութեան Տաճարը կը մտնէ, որ արդէն կանթեղներով լուսաւորուած է:

Երբ բոլորը ներսն են, քահանաներէն մին սաղմոս մը կը սկսի եւ միւսները կը պատախաննեն, եւ որուն կը Հետեւի աղօթք մը:

Ապա սարկաւագներէն մին սաղմոս մը կը սկսի, եւ ուրիշ աղօթք մը: Յետոյ Եկեղեցականներէն մին երրորդ սաղմոս մը կ'ըսէ, երրորդ աղօթք մը եւ Հաւաքական յիշատակութիւն կ'ըլլայ:

Այս երեք սաղմոսներէն եւ աղօթքներէն ետք անոնք, Յարութեան տաճարին քարայրին մէջ բուրգաներ կը բերեն, այնպէս որ ամբողջ Տաճարը խունկի բույրով կը լեցուի:

Ապա եպիսկոպոսը, գաւիթին մէջ կեցած կ'առնէ Աւետարանը եւ դէպի դուռը կ'երթայ, ուրկէ կը կարդայ Տիրոջ Յարութեան նկարագրութիւնը:

Ընթերցման սկիզբը ժողովուրդը կու լայ եւ կ'ողբայ այն բոլոր տառապանքի համար, որ մեր Տէրը կրեց»:

Այս նկարագրութեան համաձայն, ամէն կիրակի առաւօտ կանուխ, Յարութեան յիշատակութեան արարողութիւն մը կար ճիշտ այն վայրը ուր՝ Յարութեան դէպը պատահեցաւ, այսինքն Երուսաղէմի Սուլը Յարութեան Տաճարին մեջ: Այս Հսկումը, որ հաւախօսին կը սկսէր, Հետեւեալ Հիմնական տարրերէ կը բաղկանար.

1. Երեք սաղմոսներ:

2. Ամէն մէկ սաղմոսին աղօթք մը կը Հետեւէր եւ ամենավերջինը Հաւաքական յիշատակութիւն կ'ըլլար:

3. Խնկարկութիւն:

4. Աւետարանի ընթերցում:

Կիրակնօրեայ Հսկման այս արարողութեան ժամը կը համապատասխանէ այն պահին, երբ երեք իւղաբեր կիներ Քրիստոսի գեղագմանը ըստ այցելեցին: Անոր մարմինը օծելու համար, ըստ Հրէից սովորութեան «բերին զխունկս զոր պատրաստեցին»: Փրօֆ. Մաթէոսի այս պատճառով Փրօֆ. Մաթէոսը Կիրակնօրեայ «Յարութեան - Հսկման» արարողութեան խնկարկութիւնը կը նոյնացնէ այն դէպին Հետ, երբ իւղաբեր երեք կիներ Քրիստոսի գեղագմանը այցելեցին: Անոր մարմինը օծելու համար, ըստ Հրէից սովորութեան «բերին զխունկս զոր պատրաստեցին»: Փրօֆ. Մաթէոսի այս բացատրութիւնը Համոզիչ կը դառնայ, երբ նկատի կ'առնենք Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ «Յարութեան-Հսկման» այս արարողութեան վերնագիրը, որ է «Կարդ Իւղաբերից»: Իւղաբեր կիներն էին, որոնք առաջինը Հրեշտակէն ստացան Քրիստոսի Յարութեան աւետիսար. «Զի՞ խնդրէք զկենդանին ընդ մեռնալս. չէ աստ, այլ յարեաւ...»: Նմանապէս երեք սաղմոսներու արտասանութիւնը, նախքան Աւետարանի ընթերցումը, կը խորհրդանշեն գեղագմանի մէջ Քրիստոսի երեք օրերը:

Այս արարողութեան բարձրակէտը Աւետարանի ընթերցումն է: Եթերիայի ուղեւորութիւնը ցոյց կու տայ, թէ Աւետարանի ընթերցումը միմիայն Յարութեան դէպը չի պատմեր, այլ նաև կը խօսի Քրիստոսի չարչարանքին մասին, քանի, ըստ Եթերիայի «Ընթերցման սկիզբը ամբոխը կուլայ այն բոլոր նեղութեանց համար, որ կրեց մեր Տէրը»: Այս բացատրութիւնը ընդունելի կրնայ ըլլալ եթե նկատի ունենանք Հայ Եկեղեցւոյ աւանդութիւնը, ուր Իւղաբերից կարգի չորս Աւետարաններում երեքը (Մարկոս, Ղուկաս եւ Յովհաննէս) Քրիստոսի թէ թաղման եւ թէ Յարութեան դէպերը կը պատմեն:

Մեր երկրորդ վկայութիւնը կըստացուի Առաքելական Սահմանադրութիւնէն, որ Եկեղեցական օրէնքներու հաւաքածոյ մըն է, խմբագրուած Անտիոքի շրջանին մէջ Զորրորդ դարու վերջերը: Առաք. Սահմ.-ը Կիրակնօրեայ «Յարութեան-Հսկման» արարողութիւնը Հետեւեալ ձեւով կը բացատրէ.

«Եւ Տիրով Յարութեան օրը, որ է Տէրունական օր, միատեղ եղէք առանել ժրաշխանութեամբ, փառաւորելու համար զԱստուած իմանալու Յարութեան փրկարար խօսքը, որուն համար յոտնկայս երիցս կ'աղօթենք ի յիշատակ Անոր համար, որ երեք օրէն յարութիւն առաւ»:

Առաքելական Սահմանադրութեան վերոյիշեալ Հատուածին եւ Եթերիայի ուղեգրության մէջ գտնուած Կիրակնօրեայ Յարութեան արարողութեան բացատրութեանց մէջ նկատելի մօտիկ նմանությունները կը տեսնուին: Առաքելական Սահմանադրութեան յիշեալ Հատուածին առաջին տողը Տիրոջ օրուան մասին (Կիրակի) կ'ակնարկէ, երբ այս արարողութիւնը կը կատարուի: Ուրեմն կը համապատասխանէ Եթերիայի բացատրութեան: Եթերիայի նման Առաքելական Սահմանադրության մէջ տրուած այս հսկման արարողութեան էական մասը Յարութեան Աւետարանի ընթերցումն է: Եթերիայի երեք սաղմուներուն եւ անոնց յաջորդող երեք աղօթքներուն փոխան միայն երեք աղօթքներ կան: Կրնանք ենթադրել, թէ Առաքելական Սահմանադրութեան երեք աղօթքները կը համապատասխանեն Եթերիայի երեք սաղմուներուն եւ անոնց հստեւող երեք աղօթքներուն:

Մինչև Հոս տեսանք, թէ Չորրորդ դարու երկու աղբիւրները (Եթերիայի ուղեգրութիւնը եւ Առաքելական Սահմանադրութիւն) Կիրակիներու «Յարութեան-Հսկման» արարողութեան մը մասին կը խօսին: Այս արարողութիւնը կը բաղկանայ սաղմուներէ, աղօթքներէ, խնկարկութենէ եւ Աւետարանի ընթերցումէ: Հսկման այս արարողութեան կորիզը Քրիստոսի Յարութիւնն է, որ կը յիշատակուի Կիրակի Հաւախօսին բոլոր Հաւատացեալներու մասնակցութեամբ:

Եթերիայի ուղեգրութեան եւ Առաքելական Սահմանադրութեան յիշեալ Հատուածներու քննութիւնը ցոյց կուտայ, թէ բացատրուած արարողութիւնը Համայնքային եկեղեցւոյ Հսկում է (Cathedral Vigil): Այս արարողութիւնը Համայնքային (Cathedral Office), որ կանխապէս վանքերու մէջ տեղի կ'ունենար միայն վանականներու մասնակցութեամբ:

Համայնքային եկեղեցիներու ժամակարգութիւնները Հանդիսաւոր արարողական նկարագիր ունէին: Այս արարողութեանց սաղմուները օրուան ժամերուն Համեմատ, մասնաւոր զատուած

սաղմուններ էին, որոնք կ'երգուէին: Համայնքային եկեղեցիներու պաշտամանց կը մասնակցէին Հաւատացեալներ, սարկաւագներ, քահանաներ եւ եպիսկոպոսներ, այսինքն՝ ամբողջ տեղական Համայնքը:

Վանական եկեղեցիներու արարողութիւններու հիմնական տարրը՝ խումբ մը սաղմուններու արտասանութիւնը եւ անոնց վրայ կատարուած խորհրդածութիւնն էր:

Հետեւարար վանական պաշտամունքները մտածողական կամ խորհրդածական էին, եւ սաղմունները սկիզբէն սկսելով թուային կարգով կ'արտասանուէին:

Այս յօդուածին մէջ ուսումնասիրութեան ենթակայ Կիրակնօրեայ «Յարութեան - Հսկման» արարողութիւնը, Համայնքային եկեղեցական արարողութիւնն մըն է:

«Յարութեան-Հսկման» այս արարողութիւնը, որ ծագում առաւ Երուսաղեմի մէջ, տարածուեցաւ դէպի Արեւելք ու Արեւմուտք: Արեւելեան եկեղեցիներէն միայն Հայ և Բիւզանդական եկեղեցիները այս արարողութեան սկզբնական նկարագիրը պահեցին:

Հայկական աւանդութեան մէջ Կիրակնօրեայ «Յարութեան - Հսկման», այս արարողութեան ակնարկութեան առաջին անգամ ըլլալով կը Հանդիպինք Յովհաննէս Օձնեցիի Կանոններուն եւ «Յաղագս կարգաց եկեղեցւոյ» գրութեան մէջ: Հայաստանեայց եկեղեցւոյ 8-րդ դարու ամէնանշանաւոր կաթողիկոսներէն Օձնեցիի վկայութեան Համաձայն, Հայ եկեղեցւոյ Խողարերից կարգը, որ Կիրակի առաւօտները կը կատարուի, կը բաղկանայ.

1. Երեք սաղմուններէ - 43:26, 53:4, 145 :10
2. Յարութեան Աւետարանի ընթերցումէ.

Նույնպիսի ակնարկութեան նաեւ կը Հանդիպինք Ստեփանոս Սիւնեցիի (շուրջ 680 - 735) «Ժամակարգութեան մեկնութեան մէջ: Օձնեցիի վկայութեան առաւել, Սիւնեցին կը յիշէ Քարոզ մը, որ Աւետարանի ընթերցման կը յաջորդէ:

Տասներորդ դարէն Խոսրով Անձեւացիի «Ժամակարգութեան մեկնութիւնը» եւս Խողարերից կարգի նոյն տարրերուն մասին կը խօսի, որոնք արդէն Օձնեցիին եւ Սիւնեցիին գրութեանց մէջ ներկայ էին: Աւետարանին յաջորդող քարոզէն ետք Անձեւացին կը յիշէ նաեւ Մաղթանք մը:

Ուրեմն, Համաձայն երեք Հին Հայկական աղբիւրներու (Օձնեցի, Սիւնեցի, Անձեւացի) կրնանք Հետեւեալ տախտակը ներկայացնել.

Ցովհաննէս Օձնեցի	Ստեփաննոս Սիւնեցի	Առարով Անձեւացի
1. Երեք սաղմոսք	Երեք սաղմոսք	Երեք սաղմոսք
2. Խնկարկութիւն	Խնկարկութիւն	Խնկարկութիւն
3. Աւետ. ընթերցում	Աւետ. ընթերցում	Աւետ. ընթերցում
4. Քարոզ	Քարոզ	
5. Մաղթանք		

Իւղաբերից կարգի կապակցութեամբ վերեւ ներկայացուած երեք Հայկական աղբիւրներու վկայութիւնները կը Համապատասխանեն Եթերիայի և Առաքելական Սահմանադրութեան մէջ գոնուող Կիրակնօրեայ «Յարութեան - Հսկման» արարողութեան բացատրութեանց, ուր կան երեք սաղմոսներ, խնկարկութիւն եւ Աւետարանի ընթերցում:

Իւղաբերից կարգի մասին Հայկական Հին աղբիւրները քննելէ ետք, այժմ տեսնենք Հայ Եկեղեցւոյ մէջ նոյն արարողութեան ներկայի սովորութիւնը:

Կ. Պուսոյ Հոգելոյս Պատրիարք, Ամէն. Տ. Մաղաքիա Արքեպս. Օրմաննեան եւ ուրիշներ կարծեցին, թէ Իւղաբերից կարգը կսկսի «Կիրակնաւուր Քարոզով» («Վասն սուրբ տեղույս շինութեան...») եւ անոր Հետեւող աղոթքով («Դու ես Թագաւոր յաւիտեանս յաւիտենից»): Սակայն, ըստ Հայ Եկեղեցւոյ ներկայ սովորութեան, Իւղաբերից կարգը պէտք է սկսի «Երգ Իւղաբերից Աւետարանի» («Եղիցի անուն Տեառն Օրհնեալ - Սղ. 112, 1-3») երգեցողութեամբ: Կիրակնաւուր Քարոզը կը պատկանի Կիրակնօրեայ Առաւոտեան ժամին: Այս քարոզը Իւղաբերից կարգի մաս չի կազմեր:

Երկրորդ սաղմոսի («Արի Տէր օգննեա մեզ - Սղ. 43:27») երգեցողութեան սկիզբը քահանան սարկաւագին եւ երկու մոմակիրներու Հետ ներս ավանդատուն կ'երթայ, ուր կը սպասէ մինչեւ Սղ. 43 : 24-ի («Արի եւ մի մերժեր...») երգեցողութեան վերջանալուն: Երրորդ սաղմոսի («Թագաւորեացէ Տէր յաւիտեան - Սղ. 145: 10, 1») երգեցողության սկիզբին, աւանդատան դուրը կը բացուի եւ քահանան շուրջառով զգեստաւորուած եւ Իւղաբերից Աւետարանը ձեռքին, թափօրով դուրս կ'ելլէ: Թափօրին առջեւէն սարկաւագը կը քալէ բուրքառով: Անոր կը Հետեւին երկու մոմակիրները եւ քահանան: Թափօրը գէպի խորան կը յառաջանայ, ուրիէ քահանան կ'սկսի կարդալ Իւղաբերից Աւետարանը: Իւղաբերից կարգի Համար չորս Աւետարանի ընթերցումներ նշանակուած են, առնուած չորս

Աւետարաններէ: Սակայն ամէն Կիրակի, Իւղաբերից կարգի Համար միայն մէկ Աւետարան կը կարդացուի ըստ օրուան ձայնին: Խնչպէս նախապէս յիշեցինք, չորս Աւետարաններէն երեք (Մարկոս, Ղուկաս և Յովհաննէս) Քրիստոսի թէ թաղման և թէ յարութեան դէպքերը կը պատմնեն: Աւետարանի ընթերցման կը Հետեւի «Երգ զկնի Իւղաբերից Աւետարանի», որմէ ետք սարկաւագը կ'ըսէ («Զուարծացեալքս» քարոզը, եւ ապա քահանան կ'արտասանէ «Ամենակեցոյց ճշմարիտ...» աղօթքը: Աղօթքէն ետք քահանան նոյն թափօրով (սարկաւագ եւ երկու մոմակիրներ) կ'երթայ դէպի աւանդատուն:

Ուրեմն, ըստ տրուած բացատրութեան, Հայ Եկեղեցւոյ ներկայ Իւղաբերից կարգը կը բաղկանայ Հետեւեալ տարրերէ.

1. Երեք սաղմոսներ.

ա. Սղ. 112:1-3 «Եղիցի անուն տեսառն...» (Եւ Գառարանութիւն)

բ. Սղ. 43: 27, 24 «Ալրի Տէր օգնեաս...»

գ. Սղ. 145:10, 1 «Թագաւորեացէ...»

2. Աւետարանի ընթերցում.

(Եւ «Երգ՝ զկնի Իւղաբերից Աւետարանի»).

3. Քարոզ եւ Աղօթք.

Ֆիշեալ տարրերուն եւ Եթերիայի ու Առաքելական Սահմանադրութեան մէջ յիշուածներուն միջեւ Բաւական մօտիկ առնչութիւն կը տեսնուի: Հետեւաբար կրնանք եղբակացնել, թէ Հայ Եկեղեցւոյ ներկայ Իւղաբերից կարգը կը կատարուի նոյն ձեւով, ինչպես տեղի կ'ունենար Զորրորդ դարուն Երուսաղէմի մէջ:

Դարերու ընթացքին Հայ Եկեղեցւոյ չուրհալի Հայրերը Իւղաբերից կարգին մէջ Հետեւեալ տարրերը աւելցուցին.

1. «Երգ՝ զկնի Իւղաբերից Աւետարանի».

2. Քարոզ եւ Աղօթք.

Առաջինը Իւղաբերից կարգին մէջ ներկայացուեցաւ շուրջ 10-րդ դարուն, քանի 7-րդ եւ 8-րդ դարերուն Իւղաբերից մաս կազմեցին:

Այս կարծ ուսումնասիրությիւնը փորձ մըն է Իւղաբերից կարգին պատմականը ներկայացնել եւ այս գեղեցիկ արարողութեան իմաստի բացատրութիւնը տալ: Եկեղեցական պաշտամունքի պատմականը շատ կարեւոր է: Եկեղեցւոյ պատմութեան եւ ավանդութեանց ուսումնասիրությիւնը մեզ կ'առաջնորդեն ոչ միայն լաւ

ըմբռնելու եկեղեցական պաշտամունքները, այլ նաեւ մեզի կարելիութիւն կուտան Քրիստոնէական նախկին ծիսական աւանդութիւնները դարձնելու գործնական օղակը մեր ներկայի աւանդութեան: Աւանդութիւնը միայն անցեալ չէ, այլ նաեւ եկեղեցւոյ բաղադրիչը:

Հոգեշնորհ Խաժակ ծայր. վրդ. Պարսամեան

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Փ. Բուզանդ, Պատմություն Հայոց, Երևան, 1968 թ.:**
2. **Ղազար Փարպեցի, Պատմություն Հայոց, Երևան, 1982 թ.:**
3. **Չովիաննես Դրասխանակերտցի, Պատմություն Հայոց, Սոսկվա, 1883 թ.:**
4. **Խոսրով Անծեացի, Մեկնություն Ժամակարգության, Օրթաքեոյ տպ. Պ. Արարավան, 1840 թ.:**
5. **Չովիաննես Օծնեցի, Հաղածո կարգաց Եկեղեցվո.:**
6. **Սիմեոն Երևանցի, Տոնացույց, Կաղարշապատ, 1908 թ.**
7. **Ժամագիրը, Անթիլիաս, Պեյրութ, 1969 թ.**
8. **Մ. Օրմանյան, Հայոց Եկեղեցին, Պեյրութ, 1960 թ.:**
9. **Սահակ ծ. Վորդ. Ամատունի, Հայոց ժամակարգությունները 5-րդ դարում, Արարատ ամս., 1902 հունվար:**
10. **Մ. Օրմանյան, Ծիսագիտություն, Երուսաղեմ, 1977 թ.:**
11. **Նորայր Արքեպս. Պողարյան, Ծիսագիտություն, Նյու Յորք, 1990 թ.:**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	Ներածութիւն	5
2.	Գրականության տեսություն	9
3.	Սրբազն պատարագամատոյց հայոց.....	11
4.	ՂԱՅԱՍՏԱՆՅԱՅԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՇԱՍՄՈՒՆՔՅԻՆ ԺԱՄԵՐԸ	13
5.	ԺԱՄԱԳԻՐԸ.....	14
6.	Յրաժարիմքի կարգը	16
7.	ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	17
8.	ԳԻՇԵՐԱՅԻՆ ԺԱՄԵՐԳՈՒՅՅՈՒՆ	21
9.	ԿԱՍՈՒ ԵՎ ԿԱՆԱՄԱԳՐՈՒԽ	27
10.	ԿԱՍՈՒԱԳԼՈՒԽ	28
11.	«Պաշտօն» և նրա տեսակմերը	30
12.	Ավետարանների ընթերցման կարգը	31
13.	Մաղթանը	42
14.	Քարոզ-Աղօթք	45
15.	Ալելուք և «թագաւորք»	48
16.	Կարգաւորություն	57
17.	Հարցի շարականներ	58
18.	«Եկեալք» քարոզը և «Մեծացուցէ» շարականները	66
19.	Իւղաբերիցի կարգը	72
20.	«Ողորմեա» սաղմոս և շարական	74
21.	Քարոզ «Երկրպագենք Քեզ Տեր Աստուած մեր»	77
22.	Տեր յերկմից սաղմոս և շարական	78
23.	Փառք ի բարձունս	79
24.	Քարոզ և Աղօթք	85
25.	Սուլք Աստուած կամ «Երեքսրբեան»	88
26.	Անդաստանի կարգը	93
27.	Կարգ Արեւագալի	95
28.	Խրատ Արեւագալին	99
29.	ճաշու ժամ	100
30.	ճաշու 3-րդ ժամ	100
31.	ճաշու 6-րդ ժամ	102
32.	ճաշու 9-րդ ժամ	103

33.	Շարականք համզատեան տէրունեաց եւ մարտիրոսաց ըստ ուր ծայնից	103
34.	Երեկոյան ժամերգություն	104
35.	Նախատոնակ	113
36.	Խրատը վասն Երկրպագութեան Եկեղեցւոյ	115
37.	Խաղաղական ժամերգություն	116
38.	Խանջատյան ժամերգություն	120
39.	Աղօթք Իւղաբանչիւրոյ անծանց հաւատացելոց ի Զրիստոս	124
40.	Խավելված	126
41.	Կարգ ժամասացության	127
42.	Մեկնություններ և այլ խրատներ	131
43.	Իւղաբերիցի կարգը - Պատմական ակնարկ	148

ՊԱԼՅԱՆ ԽՈՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ

**ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆՔ
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՅԱ ԱՌԱՋԵԼԱԿԱՆ
Ս. ԵԿԵՂԵՑՈՒ**

Խմբագիր՝ Դ. Գ. Մարգարյան
Տեխն. Խմբ.՝ Վ. Զ. Բղոյան

Դամակարգչային շարվածքը Դամեստ Ուկերյանի
Կազմի և համակարգչային ծևավորումը Տիգրան Ապիկյանի

Ստորագրված է տպագրության 12.12.05 թ:

Չափսը 60x84 : Թուղթը՝ օֆսեթ:

Դրատ. 8,0 մամուլ, տպագր. 10,0 մամուլ=9, 3 պայմ. մամուլ:

Տպաքանակ՝ 500: Պատվեր՝ 20

Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

Երևանի համալսարանի տպարան, Երևան, Աբովյան 52